

Հայաստանի Հանրապետություն
Գիտությունների ազգային ակադեմիա
Շիրակի հայագիտական հետազոտությունների կենտրոն

ԳԻՏԱԿԱՆ ԱՇԽԱՏՈՒԹՅՈՒՆՆԵՐ

2 (25)
2 0 2 2

Գյումրի 2022

«Գիտական աշխատություններ» հոդվածների պարբերական ժողովածուն
հիմնադրվել է 1998թ. ՀՀ գիտությունների ազգային ակադեմիայի Շիրակի հայագիտական
հետազոտությունների կենտրոնի գիտական խորհրդի որոշմամբ (15.01.1998):

Ընդգրկված է ՀՀ ԿԳՄՄՆ ԲՈԿ-ի կողմից ընդունված պարբերականների ցանկում:

ISSN 1829-4316
DOI: 10.52971/18294316

Գլխավոր խմբագիր՝ քանասիրական գիտությունների դոկտոր
Ս.Ա. ՀԱՅՐԱՊԵՏՅԱՆ

Խմբագրական խորհուրդ՝ Ակոպով Արկադի (պատասխանատու քարտուղար, ՀՀ),
Բազեյան Կարինե (ՀՀ), Բայյան Կարեն (ՌԴ), Գրիգորյան (Հայկազուն) Աշոտ (ՀՀ),
Դեննդեր Կումար (Հնդկաստան), Խաչատրյան Լալիկ (ՀՀ), Խոսրոնա Անահիտ (ԱՄՆ),
Կոնոբր Ռուսլան (ՌԴ), Հայրապետյան Արմեն (ՀՀ), Հարությունյան Հասմիկ (ՀՀ), Հուսևո
Ֆատիմետ (ՌԴ), Ղազարյան Գևորգ (Հունաստան), Մահե Ժան-Պիեր (Ֆրանսիա),
Պետրոսյան Սարգիս (ՀՀ), Կավրելիշվիլի Ռոին (Վրաստան), Կրյուչկով Իգոր (ՌԴ),
Մկոյան Արտաշես (ՀՀ), Մաղլովսկի Միխայ (Լեհաստան), Ցականյան Ռուսլան (ՀՀ):

ԳԱԱ ՇՀՀ ԿԵՆՏՐՈՆԻ «ԳԻՏԱԿԱՆ ԱՇԽԱՏՈՒՆԵՐԻ ԿԵՆՏՐՈՆ»

NN 1 (25) / հայագիտություն և հասարակական գիտություններ // ՀՀ Գիտությունների ազգային
ակադեմիա, Շիրակի հայագիտական հետազոտությունների կենտրոն: Խմբ. խորհուրդ՝ Ս.
Հայրապետյան և այլք.- Գյումրի, «Ռ. Ավետիսյան» ԱԶ, 2022. – 244 էջ:

Խմբագրության հասցեն՝ 3101, ՀՀ, Գյումրի, Վ. Սարգսյան 5ա
հեռ.՝ +374 /312/6 94 77, +374/94/411-228
էլ. հասցե՝ scient.works@shirakcenter.sci.am
կայքէջ՝ www. shirakcenter.sci.am

ISSN 1829-4316
DOI: 10.52971/18294316

© ՀՀ ԳԱԱ Շիրակի հայագիտական հետազոտությունների կենտրոն 2022

Республика Армения
Национальная академия наук
Ширакский центр арменоведческих исследований

НАУЧНЫЕ ТРУДЫ

ВЫПУСК
2 (25)
EDITION

SCIENTIFIC WORKS

Shirak Centre of Armenological Studies
National Academy of Sciences
Republic of Armenia

Гюмри 2022 Gyumri

*“Научные труды” основан в 1989г. решением ученого совета Ширакского центра арменоведческих исследований НАН РА (15.01.1998)
Входит в перечень периодических изданий, утвержденных ВАК-ом МОНКС РА.*

*The periodical collection of “Scientific Works” was established in 1998 by the decision of the scientific board of Shirak’s Center of Armenological Studies of NAS of RA (15.01.1998).
The periodical is indexed in the list of SCC MESCS RA.*

*ISSN 1829 - 4316
DOI: 10.52971/18294316*

Главный редактор: доктор филологических наук **АЙРАПЕТЯН С. А.**
Редакционная коллегия: Айрапетян Армен (РА), Акопов Аркади (ответственный секретарь, РА), Арутюнян Асмик (РА), Базеян Карине (РА), Бальян Карен (РФ), Григорян (Айказун) Ашот (РА), Девендер Кумар (Индия), Каврелишвили Роин (Грузия), Казарян Геворг (Греция), Кандор Руслан (РФ), Маэ Жан-Пиер (Франция), Крючков Игорь (РФ), Мкоян Арташес (РА), Петросян Саргис (РА), Садловский Михал (Польша), Хачатрян Лалик (РА), Хосроева Анаит (США), Хуако Фатимет (РФ), Цаканян Руслан (РА)

“Научные труды” Ширакского центра арменоведческих исследований НАН РА
NN 1 (25) арменоведение и общественные науки// Национальная академия наук РА, Ширакский центр арменоведческих исследований/Ред. совет: С.Айрапетян и др. - Гюмри, ЧП “Р.Аветисян”, 2022.- 244с.

Editor-in –chief: Doctor of Philological Sciences **HAYRAPETYAN S. A.**
Editorial board: Akopov Arkadi (Responsible Secretary, RA), Balyan Karen (RF), Bazeyan Karine (RA), Devender Kumar (India), Ghazaryan Gevorg (Greece), Grigoryan (Haykazun) Ashot (RA), Kandor Ruslan (RF), Kavrelishvili Roin (Georgia), Khachatryan Lalik (RA), Khosroeva Anahit (USA), Khuako Fatimet (RF), Kryuchkov Igor (RF), Hayrapetyan Armen (RA), Harutyunyan Hasmik (RA), Mahé Jan-Pier (France), Mkoyan Artashrs (RA), Petrosyan Sargis (RA), Sadlowski Michal (Poland), Tsakanyan Ruslan (RA).

“Scientific Works” Shirak’s Center of Armenological Studies of NAS RA
NN 1 (25) Armenology and Social Sciences // National Academy of Sciences RA, Shirak Center for Armenological Studies/ Ed. Board:S.Hayrapetyan and others.-Gyumri, "R.Avetisyan PE", 2022,-244p.

*Адрес редакции: 3101, РА, Гюмри, ул. В. Саргсяна 5а
Address: 3101, 5 а, V. Sargsyan Street, Gyumri, RA
тел./tel.: +374 /312/6 94 77, +374/94/411-228
E-mail: scient.works@shirakcenter.sci.am
hppt: www. shirakcenter.sci.am*

ISSN 1829-4316
DOI: 10.52971/18294316

@ Ширакский центр арменоведческих исследований НАН РА, 2022
@ Shirak Center for Armenological Studies of NAS RA, 2022

Գ Ր Ա Վ Ա Ն Ա Գ Ի Տ Ո Ւ Թ Յ Ո Ւ Ն
ЛИТЕРАТУРОВЕДЕНИЕ
L I T E R A R Y S T U D I E S

ՀՏԴ՝ 82.02/.09

DOI: 10.52971/18294316-2022.25.2-5

ԵՂԻՇԵ ՉԱՐԵՆՑԻ ԳԼԽԱՎՈՐ ՄԱՆԸ՝ ԳՅՈՒՄՐԵՑԻ ՄԿՐՏԻՉ ԱՐՄԵՆ
«Հոկտեմբեր» (Գյումրի) և «Նոյեմբեր» (Երևան) գրական
խմբակցությունների գործունեությունը

Դավիթ Գասպարյան

ՀՀ ԳԱԱ պատմության ինստիտուտ

Բանալի բառեր՝ Երևան, Գյումրի, Եղիշե Չարենց, Մկրտիչ Արմեն, Ակսել Բակունց, Գուրգեն Մահարի, «Հոկտեմբեր» խմբակցություն, «Նոյեմբեր» խմբակցություն, պրոլետարական գրողներ, սխեմատիզմ:

Ներկայացվում են 1920-1930-ական թթ. գրական կյանքը Գյումրիում և Երևանում, Մ.Արմենի եռանդուն գործունեությունը Չարենցի կողքին: 1920-1930-ական թթ. Չարենցը բացում էր նորագույն գրականության ճանապարհը: Դա հեշտ չէր, նրա դիմաց Հայաստանի պրոլետարական գրողների ասոցիացիան էր, որ գրականության կուսակցականացման ճանապարհով ձգտում էր առաջատար դիրքի՝ հեգեմոնիայի: Չարենցը և համախոհները՝ Արմեն, Մահարի, Բակունց և մյուսները, մերկապարանոց սխեմատիզմին հակադրում էին կենսական բարձր գրականությունը: Այդ ճանապարհին բացառիկ կարևոր նշանակություն ունեն Արմենի երկու հոդվածները և այլ նյութեր, որոնք առանցքային դեր ունեցան ժամանակի գեղարվեստական գրականության ձևավորման ճանապարհին: Այդ հոդվածների տեսական դրույթներով գրվեցին Արմենի «Երևան» վեպը, «Հեղնար աղբյուր» վիպակը և բազմաթիվ այլ գործեր: Այդ հոդվածները նաև որպես մեղադրանք ուղղվեցին նրանց դեմ. հետևեցին հալածանքները՝ Չարենցը մեռավ բանտում, Բակունցին գնդակահարեցին, Մահարուն և Արմենին արքայազններ:

Նախաբան. 1920-ական թթ. առաջին տարիները գրական-մշակութային վերակառուցման բուռն շրջան էր¹: 1922-ի հունիսին ձևավորված «Երեք»-ի խմբակցության արագ քայքայումից հետո արդեն ստեղծվել էին հակընդդեմ ուժեր. մի կողմում Չարենցն էր, մյուս կողմում պրոլետարական հորջորջված գրամոլների մի ամբողջ բանակ: Այս պայքարին կողքից հետևում էր ուղեկից գրողների մի մեծ խումբ: Ահա ուժերի այս հարաբերակցության պայմաններում Գյումրու երիտասարդ գրողները պետք է կատարեին իրենց ընտրությունը:

Մկրտիչ Արմենը, ըստ ամենայնի, Չարենցի հայտնաբերած, շահած-պահած գրողն է, ում հատակից բարձրացրել, գնահատել և ում առաջ գրական ճանապարհ է բացել՝ ամեն տարի տպագրելով մի քանի գիրք (այդ թվում նաև թարգմանական) և ամեն կերպ պահելով գրական ճիշտ դիրքերում:

Մկրտիչ Արմենը (Մկրտիչ Գրիգորի Հարությունյան-Ալիքյան, 1906-1972) գրական քայլերն արել է յոթուկես տարեկանից՝ 1914-ին, Առաջին համաշխարհային սկսվելու գույժի ազդեցությամբ: Գրել է գաղտնի, գրածները թաքուն հավաքել է «Գաղտնաբան» ինքնաշեն տետրերի մեջ: 1920-ին տպագրվել է արական գիմնագիայի խմորատիպ թերթում, հռչակվել է որպես բանաստեղծ: Օգտագործել է «Հյուլե, Սաուպ, Ալագան»² ծածկանունները:

Գյումրու գրական կենտրոնը Օնիկ Ղազարյանի գրախանութն էր, որ նաև քաղաքի մտավորականության հավաքատեղին էր: Այս գրախանութի ցուցափեղկին է տեսել Չարենցի «Կապուտաշյա հայրենիք» գրքույկը: Այստեղ վաճառում էին «Կայծեր» դասագիրքը, իսկ ընթերցողական պահանջը՝ «Երգարան»-ներ, Սալի-Քյարամ, Աղվան-Օսան, Լեյլի-Մեջնուն, Աշուղ Ղարիբ, Շահ-Սանամ... Քաղաքի գրական նշանավոր դեմքը «Տծվժիկ»-ի հեղինակ Ատրպետն էր՝ իր բազմաթիվ վեպերով և «Երկեր»-ի տասնհատորյակով: Հաջորդում էին Մոճոռյանը, Գրիգոր քահանա Մանդակունին՝ իր «Զգվանքներ» գրքով (Թիֆլիս, 1911, կա Չարենցի անձնական գրադարանում), Գևորգ Ասատուրը, որի «Ագրայիլ» գիրքը վաճառելու համար գրավաճառը հեղինակից գնում է հատը տասը միլիոնով: Դեմք էր «Ալեքսանդրապոլի գրական երիտասարդության [վաղամեղիկ] պարծանքը՝ Մայաթ-Նովայի համալսարանական աշակերտ» Հովհաննես Տերենցը՝ Տեր-Մարտիրոսյանը»: Կային նաև Տերյանի դպրոցի ներկայացուցիչներ՝ Գևորգ Աֆրիկյան, Արտաշես Տեր-Մարտիրոսյան, Իսահակ Իսահակյան... Ապագա գրողը կարդում էր, ինչ պատահի, ինչ ձեռքն ընկնի:

1920-ականների սկզբի Գյումրին որբանոցների քաղաք էր, այստեղ ձևավորվում էր որբերի գրականությունը, որի ցայտուն ներկայացուցիչներն էին Գյումրու ամերիկյան որբանոցի նախկին սաներ Մահարին, Ն. Զարյանը, Մահարու եղբայր Խորեն Ռադիոն (հայտնի նաև որպես Խորեն Ռադիման), աստիճանաբար ասպարեզ պետք է մտնեին նորերը: Ինքը՝ Արմենը ևս, 1922-ին ստիպված է լինում թակել Կազաչի Պոստի դռները և միջնորդությամբ դառնալ ամերիկյան որբանոցի հերթական սկաուտ № 89. «Իսկ

¹ Արմեն Մ. -1971:

² Նույն տեղում, էջ 20:

Կազաչի Պոստում ես նորից նետվեցի մի քանի տարով հետ: Այստեղ կարծես խորհրդային իշխանության հետքն անգամ չկար: <...>: Կազաչի Պոստը մի ամբողջ քաղաք էր»³:

Պահեստի հաշվապահներ դարձած Մահարին՝ առատ մազերի խրճով, հսկայական քթով, Զարյանը՝ դեմքի «պաթետիկ-հաստատական արտահայտությամբ»⁴, Արմենի համար արդեն համարյա դասականներ էին:

«Ինչպես Հայաստանում և Անդրկովկասի հայկական շրջաններում, այնպես էլ Կազաչի Պոստում «Երեքի» դեկլարացիան առաջացրեց անսովոր հուզում, բորբոքեց կրքեր, տեղիք տվեց բազում վիճաբանությունների»: Մահարու միջոցով ձեռք են բերում և կարդում Չարենցի «Դանթեական առասպել»-ը, ռադիոպոեմները, «Սումա»-ն, «Ամբոխները խելագարված»-ը. «Բայց մի՞ թե կարելի է ասել «կարդացինք»: Մենք լափեցինք, <...> կուլ տվեցինք դրանք: Կազաչի Պոստի գրական երեկոյթներում սկսեցին հնչել Չարենցի բոցաշունչ խոսքերը: <...>: Չարենցը, ուրեմն, մեր բանաստեղծն էր, մեր բողոքը, մեր պայքարը»⁵: Մահարու միջոցով նրանց են հասնում Երեքի «Բյուլետենները» (իրենք՝ ինքն ու Խորենը, դրա օրինակով կազմում են իրենց «Երկուսի» բյուլետենը և հոշակվում), «Մուրճ» ամսագրի համարները, դեկլարացիային նվիրված Չարենցի հոդվածաշարը. «Այլևս կասկած չկար, դրսում սկսվել էր գրական մեծ գործ»⁶: 1923-ի փետրվարին Արմենը հրաժեշտ է տալիս Կազաչի Պոստին: Տեսադաշտում Եղիշե Չարենցն էր, որ «...փոխադրվեց Թիֆլիս <...> և սկսեց խմբագրել «Մարտակոչ» թերթի գրական բաժինը: Այստեղից էլ Ա. Մյասնիկյանի նախաձեռնությամբ 1924 թվի ամռան վերջին նա մեկնեց արտասահմանյան ճանապարհորդության, որը տևեց տասն ամիս: <...>: Նրա փոխարեն «Մարտակոչի» գրական բաժինը խմբագրում էր Հայաստանի պրոլետարական գրողների միության հիմնադիր, այդ միությունից վշտացած և հեռացած Ազատ Վշտունին»⁷ (այս հատվածում հեղինակը թույլ է տվել վրիպումներ՝ Չարենցը արտասահման է մեկնել ոչ թե ամռանը, այլ նոյեմբերի 21-ին և մնացել է ոչ թե տասը ամիս, այլ յոթ ամիս տասը օր -Դ.Գ.):

Մահարին ու Զարյանը մեկնում են Երևան՝ գրական գործունեության. Զարյանն ընդունվում է համալսարան, դառնում ՀՊԳԱ-ի անդամ, ընտրվում քարտուղար, գտնում է իր միակ ու վերջնական ուղին: Մահարին ևս դառնում է այդ միության անդամ, բայց «Տիտանիկ» (1924) ժողովածուի համար նրան վտարում են: Նրա գրական ուղին այդուհետև անցնում է բարդ ու վտանգավոր կեռամաններով, երբ առիթների դեպքում, որոնք անպակաս էին, նրան կարող էին հրել դեպի անդունդը: Բայց անախորժությունները դեռ նոր էին, և նա փոխում է բնակության վայրը. Երևանից մեկնում է Թիֆլիս, ապա վերադառնում Գյումրի: Զարյանն ու Ալազանը գրություն են հասցեագրում Արմենին՝ առաջարկելով տեղում կազմակերպել գրական խմբակ: Խմբակը պետք է լիներ բանվորական, ուստի ինքն ու Խորենը Ալազանի օրինակով դառնում են գրաշար-բանվոր: Խմբակի ստեղծմանը նպաստում է նաև «Բանվոր»-ի խմբագիր Աշոտ Հախումյանը (Ա.Նորեկ):

³ Արմեն Մ. -1971, էջեր 31, 32:

⁴ Նույն տեղում, էջ 34:

⁵ Նույն տեղում, էջեր 36-37:

⁶ Նույն տեղում, էջ 40:

⁷ Նույն տեղում, էջեր 50, 57:

Նախագահ է ընտրվում ինքը՝ Արմենը: Անդամակցելու դիմումներով որբաշխարհից ներկայանում են Տարոնցին ու Մարմենը: Տեղավորվում են «Բանվոր»-ի խմբագրության երեք սենյակներից մեկում: Այս օրերին Արմենը կարդում է 1922 թվականի վերջին Մյանսիկյանի տպագրած հոդվածը «Մուրճ» ամսագրի առաջին համարի մասին, ինչն էլ մեկընդմիջտ ճշտում է նրա գրական ուղին⁸. «...կարդացի կախարդվածի պես: <...> ես հստակորեն տեսա, որ իմ դեմ չկար հեռանկարը փակող պատնեշը, այնտեղ ձգված էր մի լայն ճանապարհ դեպի գրականության ապագան: Մարտունու հոդվածը միանգամից պատասխան տվեց իմ բոլոր հարցերին: <...> այդ հոդվածը ոչ միայն բովանդակություն տվեց մեր խմբակի աշխատանքներին՝ Լենինականում, այլև առիթ դարձավ «Լենինականի բանվորա-գյուղացիական գրողների «Հոկտեմբեր» միության» ստեղծմանը»⁹:

ՀՊԳԱ-ից վտարված Մահարու վերադարձը նոր շունչ է հաղորդում Գյումրու գրական կյանքին: Ճշտվել էին նաև գնահատականները. «Դա պոեզիա չէ,- ասում է Գուրգենը,- սխալ ճամփով են քշում Ալազանը, Վանանդեցին ու Դաբաղյանը: Նույնիսկ Նաիրին սկսել է փչանալ: Իսկ ինչպե՛ս էր գրում [մեջ է բերում «Է՛յ, դու հեռացել ես...» բանաստեղծությունից հատված]:

1924 թ. ապրիլի 25-ին «Խորհրդային Հայաստան» օրաթերթը (այսուհետև՝ ԽՀ) տպագրում է «Չափածո հրապարակախոսը և նրա հրապարակախոս պաշտպանը» հոդվածը՝ հետևյալ ենթավերնագրով՝ «Լենինականի բանվորա-գյուղացիական գրողների միության կողմից», ինչն էլ ուշադրություն է գրավում: «Չափածո հրապարակախոսը» Ալազանն էր, որ պոեզիան վերածել էր քարոզի, և այդ գրությամբ էլ բացահայտվում է գրական նոր կազմակերպությունը. «Դա դեկլարացիա չէր սովորական իմաստով: <...> Շեշտն այնտեղ դրված էր գեղարվեստականության վրա: Չի կարելի չափածո տողերով հրապարակախոսություն անել և անունը դնել գրականություն»: Վերջում՝ «Լենինականի բանվորա-գյուղացիական գրողների միություն» անջատված ճյուղ Երևանի ասոցիացիայի...»¹⁰: Այդ պատճառով ՀՊԳԱ-ի «Պրոլետգրող» (1925) մեկօրյա թերթի առաջնորդող ծավալուն հոդվածն ուղղվում է իրենց դեմ:

Իսկ երբ Շիրակի ջրանցքի վարչությունը «Բանվոր»-ի խմբագիր Աշոտ Հախումյանի միջոցով գումար է տրամադրում, որով հրատարակվում են Մահարու, Արմենի, Մարյանի և Մարմենի գրքերը, սա արդեն շարժում է ՀՊԳԱ-ի նախանձը:

Գրական ուժերը համախմբելու ժամանակներ էին: «Հոկտեմբեր»-ից Մարմենն աննկատ անցնում է ՀՊԳԱ-ի կողմը, անգամ հռչակում ՀՊԳԱ-ի մասնաճյուղ հիմնելու մասին և դառնում նրանց ներկայացուցիչը՝ «Բանվոր»-ի խմբագիր Աշոտ Հախումյանի հետ մեկտեղ:

Պարսկաստանից եկած Գեղամ Մարյանին ուսուցչությունից հետ են բերում գրական աշխարհ. նախկինում բանաստեղծություններ գրած ու տպագրած հեղինակին համոզում են. «Իսկ, ներեցեք, ընկեր Բաղդասարյան, հիմա չէի՞ք ուզենա գրել: <...> Իսկ

⁸ Մարտունի Ա. -1922, Պրոլետարական գրականությանը նվիրված «Մուրճ» ամսագրի նո. 1-ի առթիվ «Խորհրդային Հայաստան», 1, 2 դեկտեմբեր, թիվ 267, 268:

⁹ Արմեն Մ. -1971, էջեր 65-66:

¹⁰ Նույն տեղում, էջ 79:

չէիք ուզենա մտնել մեր գրական կազմակերպության մեջ, ընկեր Բաղդասարյան»։ Մահարին նրան անբաղաճացնում և Բաղդասարյանից մկրատում է Սարյան գրական անունը¹¹։

Ոչ միայն գրական ուժեր համախմբելու, այլև գրական խմբակներ ստեղծելու ժամանակներ էին։ Աբովն այդ ժամանակ վարում էր ԽՀ-ի գրական բաժինը. լարված հարաբերությունների մեջ լինելով ՀՊԳՄ-ի հետ՝ նրանց դեմ տպագրում էր Գյումրուց ուղարկված նյութերը։ Աբովն իր հերթին հենակետ էր որոնում՝ ցանկանալով դառնալ այս նոր խմբի առաջնորդը։ Այդ նպատակով մեկնում է Գյումրի՝ բանակցությունների, բայց ապարդյուն։

Նորաստեղծ գրական կազմակերպություններն ամեն ինչ անում են իրենց վրա ուշադրություն հրավիրելու համար։ Այդպիսի մի ձեռնարկ էր Քաղուսգլխավարչության թատրոնում Հայ բանվորագյուղացիական գրողների «Հոկտեմբեր» միության կազմակերպած դիվերտիսմենտը, այլ կերպ՝ թամաշան՝ զանազան գայթակղիչ, բայց անիրագործելի գովազդներով՝ միայն թե հանդիսական ապահովվի։ Տոմսերը սպառվում են, միջոցառումն անցնում է հաջողությամբ։

Մինչ այդ «Հոկտեմբեր»-ը՝ հանձին Մահարու, դուրս էր եկել ՀՊԳՄ-ի շարքերից, ինչի կապակցությամբ ապրիլի 26-ին ԽՀ-ն տպագրում է ՀՊԳՄ-ի հայտարարությունը, ըստ որի՝ Գյումրու բանվոր-գյուղացիական գրական կազմակերպությունը այլևս իր մասը չէ։

ՀՊԳՄ-ի գործուղումով Վանանդեցին մեկնում է Գյումրի և Երիտասկումբում կազմակերպում տեղի գրական կազմակերպության ջարդը, վերջում, Արմենին ճաշարան հրավիրելով և քյաբաբ հյուրասիրելով, համոզում է միանալ իրենց։ Ապարդյուն. «Իսկ, - անկեղծորեն զարմացավ Վանանդեցին՝ առանց վիրավորվելու։- Համ քյաբաբը կերար, համ միությունը չէ՞ ս քայքայե»¹²։

1924 թ. դեկտեմբերի 5-ին «Բանվոր»-ում (թիվ 341) տպագրած «Պ. Հ. Գ. Լենինականի խմբակցությունը» թղթակցության մեջ Մկրտիչ Արմենը հայտնում է, որ նոյեմբերի 12-ին Բանվորական ակումբում տեղի է ունեցել նորաստեղծ կազմակերպության հիմնադիր ժողովը։ Գաղափարը կյանքի կոչելու է մղել ժողովի մասնակից «կազմակերպող ընկերը»։ «Ժողովը բաց անելով՝ ընկերը ծանոթացրեց այն խնդիրների հետ, որոնք դրված են մեր առաջ և առաջարկեց հանդես գալ Լենինականի խմբակցությամբ՝ օժանդակելու պրոլետարական կուլտուրայի մեծ գործին»։ Յոթ անհայտ անուն դառնում են անդամ, որոնց նախագահ է ընտրվում Արմենը։ Հաջորդ օրը բանվոր-կուլտերիտական միջավայրից ավելանում է ևս 12 դիմում։ Մա այն խմբակցությունն էր, որ առանձնանալով պետք է ստանար «Հոկտեմբեր» անունը, հետո արդեն Չարենցի հովանու ներքո դառնար «Նոյեմբեր»։

1925 թ. ապրիլի 12-ին Մահարու ջանքերով Գյումրիում հիմնադրվում է ազիտ-թատրոն¹³։ Առաջին ներկայացումը՝ «Թամաշա»։ Հաղորդվում է նաև, որ «Բանվոր»-ի

¹¹ Արմեն Մ. -1971, էջեր 84-85։

¹² Արմեն Մ. -1971, էջ 116։

¹³ Տե՛ս «Բանվոր», 12, 26 ապրիլ, թիվ 372, 374։

խմբագրությանը կից ստեղծվելու է «Շիրջրանցքի անկյուն» (կազմակերպիչներ՝ Մահարի և Արմեն)¹⁴:

Մայիսի 22-ին Արմենը տեղեկացնում է, որ Գյումրիում կազմավորվել է Հայ բանվորա-գյուղացիական գրողների միություն: Կազմակերպական աշխատանքների սկիզբը՝ ապրիլից: Ներկայացնում են կատարված աշխատանքներն ու հրատարակված - հրատարակվելիք գրքերի ցուցակները¹⁵:

1925 թ. հունիսի 21-ին մեծ հանդիսավորությամբ բացվում է սոցիալիստական շինարարության առաջնեկը՝ Շիրակի ջրանցքը՝ էլեկտրակայանով հանդերձ, և դառնում գրական ներշնչանքների աղբյուր (շինարարությունն սկսվել էր 1922-ի հոկտեմբերի 29-ին): Պոեմներ են գրում Մահարին, Արմենը, Մարյանը, Սարմենը, Հակոբյանը, բանաստեղծություններ՝ Ալազանը, Աբովը: Ն. Զարյանն իր նոր ժողովածուն վերնագրում է «Ջրանցքի կապույտ երկրում» (1926): Հանդես են գալիս Դեմիրճյանը՝ «Ընկեր Շիր. ջրանցքը»¹⁶, Վեսպերը՝ «Շիրակի դաշտերով»¹⁷ և ուրիշներ: Շիրակի ջրանցքին նվիրված գեղարվեստական արձարձումներն արտացոլված են Սոկրատ Խանոյանի «Գրական աշխարհից»¹⁸ և Արմենի «Անցյալն ու ներկան»¹⁹ հոդվածներում: Ավելացնենք նաև Ատրպետի «Շիրակի ջրանցքը» հոդվածաշարը²⁰:

«Բանվոր»-ի խմբագրությանը կից՝ Մահարուն և Արմենին հատկացվում է մի սենյակ՝ կազմակերպելու *ջրանցքի անկյուն*: «Ջրանցքային պոեզիան» (Արմեն) երիտասարդ խորհրդային գրողների առաջին փորձությունն էր. «Ուստի և իսկական հեղեղի տպավորություն թողեց մարդկանց և, առաջին հերթին, մեր «հակառակորդների» [ՀՊԳԱ-ի] վրա, երբ մի երկու ամսում մեր միությունն [«Հոկտեմբեր»] իրար էտևից հրապարակ հանեց Մահարու, իմ, Գեղամ Սարյանի, Սարմենի հինգ գրքույկները, որոնցից յուրաքանչյուրի վրա գրված էր մեր միության անունը և դրված էր գրքույկի հերթական համարը»²¹:

Այս ամենը տեսնելով՝ ՀՊԳԱ-ն Վանանդեցուն ուղարկում է Գյումրի՝ բանակցելու «Հոկտեմբեր»-ականների հետ, միանալու իրենց: Դաշինքը չի կայանում: «Հոկտեմբեր» խմբակցության մամուլի «հովանավորը» ԽՀ-ի գրական բաժնում աշխատող Աբովն էր, որ «Երեք»-ից հետո որևէ խմբավորման չէր միացել և հաշիվներ ուներ ՀՊԳԱ-ի հետ, նա էլ է հայտնվում Գյումրիում՝ ստանձնելու խմբի ղեկավարությունը, բայց ապարդյուն, ցանկությունը չի իրականանում:

Տպագրվում է Մահարու «Ինչո՞ւ անջատվեցինք» հոդվածը, որի մեջ հիմնավորում է ՀՊԳԱ-ից առանձնանալու դրդապատճառը և շրջադարձը դեպի Չարենցը: Խիստ քննադատության է ենթարկում ՀՊԳԱ-ի գործունեությունը, որը «...չնայած բա-

¹⁴ Տե՛ս «Բանվոր», 12, 26 ապրիլ, թիվ 372, 374:

¹⁵ Տե՛ս «Մարտակոչ», 13 հունիս, թիվ 133:

¹⁶ Տե՛ս «Խորհրդային Հայաստան», 12. 06, թիվ 159:

¹⁷ Տե՛ս «Լուսարաց» -1927, թիվ 1:

¹⁸ Տե՛ս «Մարտակոչ», նույնը:

¹⁹ Տե՛ս «Խորհրդային Հայաստան» -1925, թիվ 141:

²⁰ Ատրպետ -1925:

²¹ Արմեն Մ. -1971, էջ 83:

գում վերակազմություններին և վերավերակազմություններին, մնաց նույն կաստայական և ինքնու խմբակցությունը: Մենք անջատված ենք: <...>:

Իր հիմնադրման օրից Երևանի խմբակը հալածեց Ե. Չարենցին, որի սայթաքումները «պրոլետգրողներ» արժեն, ասենք Չարենցին հալածելը «պրոլետարական» մենաշնորհ է եղել, նրան հալածել և հալածում են և՛ Թիֆլիսում, և՛ Մոսկվայում, և՛ Վիեննայի (չգարմանաք) աբբայական «Հանդես ամսօրյա»-ի էջերում» [նկատի ունի «Բազմավեպ»-ի 1923, թիվ 12-ում Վարդան Հացունու քննադատական հոդվածը –Դ.Գ.]²²:

«Ներքե՛ք, պրոլետգրողների կողմից հալածված Չարենցին Բաքվի ասոցիացիան համարում է Խորհրդային ֆեդերացիայի մեծ պրոլետպոետ. ապա դու մի Հայկունուն հարցրու, <...>, Հայկունու մասին՝ Չարենցին, Չարենցի մասին՝ Վշտունուն!!!»²³:

Այս նախադրյալներով Մահարին հիմնավորում է Գյումրու գրական խմբակցության անջատումը Երևանի ՀՊԳԱ-ից. «Ահա թե ինչու մենք գտանք, որ գրական մի նոր շարժում պիտի ստեղծել...», և հրապարակայնորեն հռչակում է «Հայ բանվոր և գյուղացի գրողների «Հոկտեմբեր» միության» գոյության մասին. «Երկու ամիս է, ինչ գոյություն ունի մեր միությունը, նա հայտարարում է, որ համագործակցում է ոչ միայն Աբովին և Չարենցին, այլև մեր բոլոր բան. և գյուղ. թղթակիցներին...»²⁴:

ՀՊԳԱ նախագահ Ալազանը և քարտուղար Ն. Չարյանը հանդես են գալիս «Մեր պատասխանը» պարզաբանումով (գրվել է հուլիսի 8-ին). «Մահարին հարց է տալիս. «Ինչո՞ւ անջատվեցինք» <...>: «Երիտասարդ «բանվորա-գյուղացիական» բանաստեղծը «մոռացել» է, որ ինքը ոչ թե անջատված, այլ հեռացված է Խ. Հ. Պրոլետգրողների միությունից դեռևս 1924-ի ամռանը: Այդ մասին ժամանակին հայտարարված է «Խ. Հ.»-ում, ու հատուկ արձանագրություն կա Խ. Հ. Պրոլետգրողների Միության մատյանում: Ահա այն. – Խ. Հ. Պրոլետգրողների Միության ընդհանուր ժողովը միության շարքերից վտարում է Գ. Մահարուն՝ որպես բոսյակային ինտելիգենցիայի ու բացարձակ ռեակցիոն տրամադրությունների երգչի (նկատի ունենալով նրա «Տիտանիկ» կոչված բանաստեղծությունների ժողովածուն) և որպես միության անբարեխիղճ ու անդիսցիպլինար անդամի»: Էլ ո՞ւր մնաց «Ինչո՞ւ անջատվեցինք»-ը:

<...>: Մահարին անվայել շոգոքորթությամբ ցավ է հայտնում, որ Չարենցին պրոլետգրողները հալածում են: Ավելորդ սրտացավություն: Չարենցը մեզ հետ շատ մտերիմ հարաբերությունների մեջ է»²⁵:

Ահա այս իրադրության մեջ է, որ Չարենցի բացակայությամբ՝ նրա ուղևորության օրերին, թերթում հայտարարվում է. «Հայ բանվոր և գյուղացի գրողների «Հոկտեմբեր» միությունը պոետ Եղիշե Չարենցին ընտրեց միության պատվավոր նախագահ»: Դրանով ասված էր ամեն ինչ. մենք Չարենցի հետ էինք»²⁶:

1925 թ. հուլիսի 31-ին Թիֆլիսից դեպի Երևան ճանապարհին՝ Լենինականի երկաթգծի կայարանում, հինգրոպեանոց դադարի ընթացքում Չարենցը հանդիպում է

²² Տե՛ս «Հանդես ամսօրյա -1924, թիվ 1-2, -1925, թիվ 5-6:

²³ «Խորհրդային Հայաստան» -1925, թիվ 152:

²⁴ Նույնը:

²⁵ «Խորհրդային Հայաստան» -1925, թիվ 164:

²⁶ Արմեն Մ. -1971, էջ 118:

տեղի երիտասարդ գրողներին: Տրամադրությունը կայտառ էր, հագին՝ կանաչագույն կոստյում, գլխին՝ լայնեզր գլխարկ, շուրթերին՝ սիրո պես անմեղ հեզմանք՝ մի՞թե սա է Երկիր Նաիրին: Դիմավորողները՝ Գ. Մահարի, Մ. Արմեն, Գ. Սարյան, Ս. Տարնոցի, Մարմեն...

Ասում է՝ «Սկսելու ենք մեծ գրական կյանք»:

Արմենը շարունակում է. «Մի քանի օրից Չարենցը եկավ Լենինական: Հենց նույն օրը, ցերեկով, Քաղլուսգլխավարի թատրոնում կայացավ նրա դասախոսությունն իր արտասահմանյան ճանապարհորդության մասին»²⁷: Զեկուցումից հետո Մահարին հրավիրում է իրենց տուն՝ ճաշի: Բնական է, որ պիտի խոսեին առաջիկա խնդիրների մասին: Նույն օրն էլ Չարենցը վերադառնում է Երևան:

Չարենցն անցնում է «Նոյեմբեր» միության կազմակերպական աշխատանքներին: Նրա կողքին ամենավստահելիները Մահարին ու Արմենն էին:

Չարենցը՝ Արմենի աչքերով. «Մանրիկ մարդ է՝ ոչ առատ զանգուր մազերով, զարմանալի խոհուն և իմաստալի աչքերով, մանկակա՞ն, թե՞ կանացի թարմ շրթունքներով և մեծ քթով: Նրա մազերը բաց-շագանակագույն են, մաշկը՝ սպիտակ, և նա, եվրոպական կոստյումով, թողնում է ինչ-որ եվրասիական տպավորություն: <...> բեմի վրա կանգնած՝ իր մի քիչ ճղճղացող ձայնով խոսում էր մեզ հետ՝ սովորական զրույց անողի պես: <...>: Նրա քայլվածքը մի տեսակ ծուռ-ծուռ է: Թվում է, թե նրա մի ոտքը մի քիչ թույլ է և ստիպված է շտապել մյուսի ետևից:

Չարենցը գրականության մարդ էր ոտից-գլուխ, իր ամբողջ էությանը: Նրան անհնար էր պատկերացնել գրականությունից դուրս: Մարդը կարող է պոզայի վերածել ծխախոտ ծխելը, բայց ոչ՝ հաց ուտելը: Գրականությունը Չարենցի համար հանապազօրյա հաց էր: <...>: Նա դրեց իր եվրոպական շյապան, վերցրեց ասիական թազբեհը, որից չէր բաժանվում համարյա երբեք... <...>:

- Դու դառուլ-զուռնա սիրո՞ւմ ես, նա հուզո՞ւմ է քեզ, Չարենց:

- Ոչ,- ասաց նա անմիջապես, առանց մի վայրկյան անգամ մտածելու:

Իհարկե, նա չէր կարող սիրել մեր արդեն պրիմիտիվ այդ երաժշտական գործիքները, հուզվել դրանց նվագով: Նա գիտեր բարձր երաժշտություն և կատարելագործված գործիքներ, սիրում էր հաճախել կլասիկ երաժշտության համերգներ, իսկ Բեթհովենի նկարը միշտ կախված էր նրա գրասեղանի մոտ:<...>:

Չարենցն իր փոխհարաբերությունների մեջ մարդկանց հետ արտակարգ կերպով շփշփտակ էր, չունեի ո՛չ դիվանագիտություն, ո՛չ, այսպես ասած, նրբանկատություն: <...>: Ես իմ գրական ողջ կյանքում, դրանից առաջ թե հետո, չեմ տեսել ավելի հոգատար ու սրտացավ գրական բարեկամ, «քնքուշ» ուսուցիչ ու խմբագիր, քան Չարենցն էր: <...>:

Չարենցի բնակարանը թե՛ Նալբանդյան-Կնունյանց փողոցի անկյունում, թե՛ հյուրանոցում և թե՛, մանավանդ, Լենինի պողոտայի և Սպանդարյան փողոցի անկյունում, մեր ինտելիգենցիայի և մասնավորապես գրականության ու արվեստի մարդկանց հավաքատեղին էր, սալոնը: Այնտեղ կարելի էր տեսնել համարյա մեր բոլոր այն ժամա-

²⁷ Արմեն Մ. -1971, էջեր 125-126:

նակակիցներին, որոնց անուններով այսօր պարծենում է մեր ժողովուրդը: <...>: Չարենցն անչափ հաճելի մարդ էր՝ պարզ, հասարակ, շուտ մտերմացող և մարդկանց իրեն հետ շուտ մտերմացնող: <...>:

Տալիս էինք նրան, օրինակ, մեր գրած որևէ նոր բանաստեղծությունը: Նա ազահ հետաքրքրությամբ ուղղակի խլում էր մեր ձեռքից, լուռ կարդում: Ուշադիր հետևում էինք: Օրորում էր գլուխը: Չհավանեց... Ապա նորից էր աչքի անցկացնում՝ համոզվելու համար, որ չի սխալվել: Եվ սկսում էր... «Ա՛յ տղա, ես ի՞նչ զիբիլ ես գրել»... Կարդում էր մեր առանձնապես ձախողված որևէ տողը, կրկնում էր երկրորդ անգամ, երրորդ, զգվանքի արտահայտությունը դեմքին, մինչև որ լվեր անցնեին մեր մարմնով, և մենք աղերսանքով նայում էինք նրան՝ «խնայիր, բավական է»: <...>: Բայց դրա դիմաց, որքա՛ն էր ուրախանում Չարենցը մեր ամեն մի հաջողությամբ, գովում՝ չվախենալով չափազանցություններից²⁸:

Այսպիսով, ըստ Արմենի, մինչև «Նոյեմբեր» դառնալը, «Հոկտեմբեր»-ի ներկայացուցիչները Գյումրիում կազմակերպում են տեղի գրական կյանքը: «Բանվոր»-ի խմբագրությանը կից ստեղծում են «Ստեղծիր» անունով վաղաժամ քայքայված խմբակ, հրավիրում գրական երեկոներ, տպագրում գրքեր և ուշադրության արժանանում «...թատրոնում կազմակերպվում է թամաշա: Առաջին բաժին՝ Նեո-դիվերտիսմենտ: Երկրորդ բաժին՝ «Խաբսի-Կապսի ջրանցքը»»²⁹:

«Հոկտեմբեր» միությունը հայտարարում է, որ «...կազմակերպում է պրոլետ-գրականության շարք գրքերի էժան վաճառքով: Բացի վաճառքից լինելու են ներկայացումներ և դիսպուտներ: <...> կազմակերպում է հետհոկտեմբերյան հայ գրականության թանգարան...»³⁰: Սպասումները մեծ էին, պայքարը՝ թե՛: Այս ընթացքում Գյումրուց Երևան՝ Չարենցի մոտ է տեղափոխվում Մահարին:

Չարենցի հետ առաջին ծանոթությունից հետո Արմենը նրանից 11-էջանոց նամակ է ստանում: «Չարենցը իր խոսքը պահեց, և շուտով ես նրանից ստացա մի մեծ նամակ՝ տասնմեկ էջի վրա: Առաջին իսկ տողերը թունդ հանեցին իմ հոգին: Նա հավանել էր իմ բանաստեղծությունները: <...>: Բայց դրա փոխարեն դառն էր ինձ համար նամակի երկրորդ կեսը, ավելի ճիշտ՝ երեք քառորդը: Չարենցն ինձ հայտնում էր, որ տեղեկություն ունի Վանանդեցուն գրած իմ նամակի մասին: <...>: Սակայն ինձ մի լավ քրտնեցնելուց հետո նա ասում էր նաև պաշտպանական խոսքեր. «Բայց ես քեզ չեմ մեղադրում, սիրելի Արմեն: Մեղավորը գրական այն մթնոլորտն է, որը հարկավոր է դարձնում այդպիսի նամակներ գրելը: Եվ եթե, իրոք, ուզենան քո հարցը դնել և քեզ պատժել կոմերիսմիության գծով, ապա ես կպահաջեմ, որ ինձ ևս դատեն քեզ հետ միասին, որովհետև գրական մթնոլորտի հարցում մեղավոր ենք մենք բոլորս...»³¹:

Արմենը նամակից մեջբերումներ է անում, միաժամանակ հայտարարում, թե՛ չի պահպանվել. եթե չի պահպանվել, ապա հիշողությամբ իր մեջբերումները անվավեր

²⁸ Արմեն Մ. -1971, էջեր 185, 186-187:

²⁹ Նույն տեղում, էջ 90:

³⁰ «Խորհրդային Հայաստան», 1925, թիվ 169:

³¹ Արմեն Մ. -1971, էջ 129:

են. քանի որ տարիների հեռվից նամակը հիշողությամբ ուղղակի մեջ բերելը հնարավոր չէ, ուստի պետք է ենթադրել. եթե Արմենը չի ոչնչացրել, հնարավոր է, որ այն կա, և դեռ պետք է որոնել նրա թղթերում:

Մի երկու ամիս Արմենն աշխատում է որպես ԽՉ-ի լրատու: Մեպտեմբերի սկզբին Մահարին նրան է ուղարկում «Նոյեմբեր» միության ղեկավարացիան ու պլատֆորմը՝ «ուշադիր կարդալ և հավանության ղեկավարում ստորագրել»³²: Այդ փաստաթղթերը լույս են տեսնում ԽՉ-ի սեպտեմբերի 13-ի համարում:

Այս ընթացքում ընտանիքը պահելու հոգսը Արմենին ստիպում է ցուցակագրվել՝ մեկնելու Մեդրի ուսուցչության, անգամ ստանում է կանխավճար: Դեպի Մեդրի ճանապարհն անցնում էր Երևանով, ուր հանդիպում է Չարենցին, Մահարուն, և հանդիպումը դառնում է ճակատագրական. «Դու ոչ մի տեղ չես գնա», - հրամայաբար պահանջում է Չարենցը, նույն օրը աշխատանքի է տեղավորում պատկոմական շտաբի պետ Ստեփան Մանուկյանի մոտ, Զանգվի ձորում Մահարու և նվագաձուների մասնակցությամբ «...նշանավորում Արմենի Երևան փոխադրվելը <...>: Բարի գալուստ Արմենին»³³: Այստեղ է, որ Արմենը գլխի է ընկնում իր հետ կատարված բախտորոշ հրաշքի մասին. «Ես միության մեջ շնորհակալությամբ եմ նայում Չարենցին, որ ինձ պահեց Երևանում: Ես ինչպե՞ս կարող էի չմնալ Երևանում...Այդ միտքը հիմա ինձ թվում է վայրենի անհեթեթություն»³⁴:

Կարինե Քոթանջյանի եղբոր՝ Աշոտի միջոցով Չարենցը փոխհատուցում է նաև Արմենի ստացած կանխավճարը, նրան բնակվելու անկյուն տրամադրում Սպանդարյան փողոցում՝ Գրիշա Ադամյանի բացակայությամբ ժամանակավորապես իրեն անցած կացարանում (կինն այդ ժամանակ Լենինգրադում էր), թախտի վրա առաջարկում է քնել Արմենին, իսկ ինքը անկողինը փռում է հատակին: Հարմարվում են: Ավելի ուշ Արմենը տուն է վարձակալում նույն փողոցում:

Հանձին Արմենի՝ Չարենցին հետաքրքրում էր նոր մարդը՝ «...իր կյանքով, կենցաղով ու հոգեբանությամբ... Իսկ ես՝ հնի բեռը մեջքիս»: Արմենը շարունակում է. «Շուտով ես նկատեցի, որ Չարենցն ամենայն լրջությամբ ուսումնասիրում է ինձ՝ որպես նոր մարդու՝ իր նոր հոգեբանությամբ, համարելով իրեն, նույնպես ամենայն լրջությամբ, անհամեմատ հին մարդ»³⁵:

Արմենն իր «Կոմսոմոլիա» ժողովածուի մեջ սպագրում է «Էպիկաներ»՝ բալլադանման գործեր, Չարենցը գնահատում է դրանց նոր ձևը, մինչդեռ հեղինակը խոստովանում է, որ օգտվել է հենց իր՝ Չարենցի մշակած ձևերից: Իսկ Չարենցի դրվատանքին արժանացած «Գազային երագ»-ը...«Գազային երագ»-ի ինքնատիպության առյուծի բաժինը իմը չէր, այլ գերմանացի գրող Ադոլֆ Հիլֆերդինգի ակնարկինը, որի գեղարվեստական վերարտադրումն էր իմ պոեմը»³⁶:

³² Արմեն Մ. -1971, էջ 130:

³³ Նույն տեղում, էջեր 134, 135, 141, 147:

³⁴ Նույն տեղում, էջ 145:

³⁵ Արմեն Մ. -1971, էջ 170:

³⁶ Նույն տեղում, էջ 188:

Չարենցն ամեն կերպ օգնում է տպագրվելու մամուլում, ապա նաև հրատարակելու գրքերը: Արմենին ծանոթացնելիս ներկայացնում է որպես իրեն փոխարինողի, ասում՝ «գենիալի տղա է», և ավելացնում. «Ճիշտ այդպես էլ Դավիթ Բուրյունկն է ծանոթացրել Մայակովսկուն ուրիշների հետ»³⁷:

Դու մեր մեջ ամենից կրտսերն ես
Եվ մոխիրի վրա մեր անցյալի
Ուռճանում է քո մեջ ապագայի սերմը՝
Մեր դպրության գալիքը պանծալի³⁸:

Նաև այս մեկը.

Մկրտիչ Արմեն, դու լավ իմացի,
Որքան էլ չափես կյանքի ափերը,
Չկա քեզ ուղի այս ուղուց բացի,
Եվ հայրենիքն է քո Նոյեմբերը³⁹:

Սվեյլի ուշ՝ 1968-ին, «Չարենց» բանաստեղծությամբ Արմենն արձագանքեց այս տողերին, բայց ո՛չ թե Չարենցն է, այլ ի՛նքը.

Ես գիտեմ, սպասում էիք ինձ,
Սպասում՝ համոզված և համառ,
Եվ եկա ես դրա համար:
Պահանջի նման հասավ ինձ
Սպասումն աննկուն իմ ցեղի.
Ժողովուրդ՝ ինձանով հղի:
Արծվի պես ճնեցիր դու ինձ
Եվ ասիր՝ «եղիր վարուժան,
Քեզ ոչ վարդ, ոչ արցունք, ոչ շուշան:
Այնպիսի խոսքերով երգիր ինձ,
Որ Ձենով Օհանի թվան,
Հերիք է՝ ինչ շուրջս նվան:
Հաղթության իմ երզը երգիր ինձ,
Այն արա, ինչ ոչ ոք չարեց.
Եվ եղիր Եղիշե Չարենց»⁴⁰:

Ուրեմն՝ Արմենն անգամ հույս է փայփայել, որ պետք է լինի Չարենց: Մոլորյա՛լ հոգի, որի արտահայտությունն է այս՝ ոչ միայն իմաստով, այլև անգամ քերականորեն անլիարժեք բանաստեղծությունը («Ժողովուրդ՝ ինձանով հղի». չափազա՛նց է, «Ձենով Օհանի թվան»): Ահա թե ինչ է նշանակում չափն անցնել...

Իսկ մայրաքաղաքում հաստատվելուց հետո մնացածն արդեն Արմենի ծանոթությունն է երևանյան կյանքին ու կենցաղին. Ղանթարը՝ արևելյան ծածկած շուկան,

³⁷ Արմեն Մ. -1971, էջեր 150, 154, 155, 173:

³⁸ Նույն տեղում, էջ 175:

³⁹ Նույն տեղում, էջ 176:

⁴⁰ Նույն տեղում, էջ 612:

Աբովյան փողոցը, Գետառի շրջակայքի հին թաղերը, գրական առօրյան, խմբագրությունները, պանդոկները, մարդիկ...

Երևանյան տեսարան. «Պուրակի դիմաց, փոքրիկ հրապարակից այն կողմ, կանգնած էր «Պրոլետար» կինոյի միհարկանի ցածրիկ շենքը: Դրա վրա գտնվում էր աշտարակի հեռավոր նմանություն ունեցող մի ցածրիկ գմբեթ, և դրա ճակատին ամրացված էր քաղաքի ժամացույցը՝ ջարդված ապակիով: Ես նայեցի այն կողմ: Եթե, ինչպես քաղաքացիներն են սրախոտում, ագռավներ չէին կանգնել սլաքների վրա, խախտել դրանք, ապա ուրեմն իմ գնալու ժամանակն էր»⁴¹: Սա այն դեպքն է, երբ, ըստ Կոստան Զարյանի, եթե ագռավները ծրտում էին հրապարակի ժամացույցի սլաքների վրա, խախտվում էր դրանց դասավորությունը, և հայոց պատմությունը մի 100 կամ 200 տարով հետ էր ընկնում...

Երևանյան մեկ այլ տեսարան. «Կեսգիշերին մոտ էր: Դեռ նոր էինք հասել Պետրոսյանի դռանը, երբ վճիտ ջրի նման հոսեց սրինգի նվագը: Դա կույր սրնգահար Ստոն էր, որի մասին գրել է Վահան Տերյանը <...>: Չարենցը մոտեցավ, տվեց նրան մի խոշոր թղթադրամ՝ նախապես անվանելով իրեն, այլապես Ստոն դրամ չէր վերցնի, նա դրամի համար չէր նվագում, այլ իր համար: Լուռ կանգ առավ՝ երեխայի ցավակցոտ հետաքրքրությամբ նայելով սրնգահարի դատարկ ակնակապիճներին»⁴²:

Ալազանը վկայում է. ««Նոյեմբեր»-ի հիմնադրվելուց անմիջապես հետո նրա և ասոցիացիայի միջև սկիզբ առավ սուր պայքար, որը հաճախ հասնում էր ծայրահեղությունների: Ասոցիացիան «Նոյեմբեր» միությանը համարում էր մանրբուրժուական գրական խմբակցություն, իսկ «Նոյեմբեր»-ն իր հերթին նրան համարում էր «ձախ» վարչաբարական, ջերմոցային գրական կազմակերպություն:

Պայքարի այս օրերին էր, ահա, որ Մոսկվայից Երևան վերադարձավ Ազատ Վշտունին և սկսեց ակտիվորեն մասնակցել ասոցիացիայի աշխատանքներին: Նա մեզ հավատացնում էր, որ խոսել է ՌՖՊՊ-ի [РАПП - Российская ассоциация пролетарских писателей] ղեկավարների հետ, և նրանք «Նոյեմբեր» միությունը չեն ճանաչում որպես պրոլետարական գրական կազմակերպության»⁴³:

«Նոյեմբեր»-ի Գորիսից Երևան տեղափոխվելուց հետո՝ 1926 թվականին, նրան միանում է Ակսել Բակունցը: Արմենի հիշողությամբ, ըստ Չարենցի՝ «Համարյա բոլոր «պոչվեննի» գրողները մտնում են «Նոյեմբերի» մեջ...»⁴⁴, որի դեմ ՀՊԳՄ-ի պայքարը շարունակվում է մինչև 1937 թվականի արյունոտ վերջաբանը, բայց այս ընթացքում «Նոյեմբեր»-ականները փայլատակում են իրենց գրական առողջ գործունեությամբ: Բավական է հիշել նրանց գեղարվեստական ստեղծագործությունները, ինչպես նաև այդ գեղարվեստի ճանապարհը բացող առանձին հրապարակումներ: Ահա այս տեսակետից առանձնահատուկ են Արմենի երկու»⁴⁵ աղմկահարույց հոդվածները:

⁴¹ Արմեն Մ. -1971, էջ 133:

⁴² Նույն տեղում, էջ 141:

⁴³ Ալազան Վ. -1967, էջ 50:

⁴⁴ Չարենց Ե. - IV, էջ 158:

⁴⁵ Տե՛ս «Գրական թերթ» -1933, թիվ 7:

Դրանցից մեկով՝ «Ինչպես են գրվում վեպերը», սկսվում է բանավեճ ստեղծագործական խնդիրների շուրջ: Իր «Երևան» վեպի օրինակով նա քննարկում է գեղարվեստական մեթոդի հարցեր և պաշտպանում համադրականության տեսակետը՝ արծարծելով «միասնական ստեղծագործական մեթոդի», «մոնումենտալիզմի», «սինթետիզմի», «ենթագիտակցության», «ասոցիատիվ մտապատկերների», շարադրանքի «տարածական», «ծավալային» բազմապլանայնության «կենսական նշանակություն» ունեցող հարցեր. «Իմ կարծիքով հարկավոր է սինթետիզացիայի ենթարկել այն ողջ արժեքավորը, որ բերել են իրենց հետ բոլոր գրական շկոլաները: Նույնիսկ նրանցից ամենաընդունելին մեզ համար՝ ռեալիզմը, առանձին վերցրած, այլևս *հետամնաց ձև է գրականության զարգացման համար*: Այն, ինչ կարելի է տալ մի ուժեղ սիմվոլով, սիմվոլիկայով, հաճախ ռեալիստական գրականության մեջ վերածվում է բազմաթերթ նեյնիմի: <...>: *Ռեալիզմը պետք է զարգացնել և խորացնել: <...> վերածել նրան գերռեալիզմի, պրոլետարական ռեալիզմի, դիալեկտիկական-մատերիալիստական ռեալիզմի: <...>*: Պա՞րզ է արդյոք վերևում ասածներից, որ ստեղծագործական մեթոդի խնդիրը նաև աշխարհայացքի խնդիր է, և որ մեթոդն ու աշխարհայացքը կազմում են անքակտելի միասնություն: <...>: Պայքարելով *մոնումենտալ-սինթետիկ* երկի համար՝ պրոլետարական գրականությունը պիտի գտնի մի նոր ձև՝ երկը կառուցելու համար: Իմ կարծիքով այդ ձևը հնարավոր է գտնել միայն այն դեպքում, եթե մենք հրաժարվենք գոյություն ունեցող բոլոր գրական շկոլաներից՝ ներառյալ նաև ժամանակակից ռեալիզմը: Լուծումը կտա մեզ *սինթետիկ մեթոդը*»⁴⁶: Վերջում ավելացնում է, որ այս և այլ հարցերի է նվիրված իր ձեռնարկած «Պրոլետարական գրականության ստեղծագործական սկզբունքներ» աշխատությունը:

Թերթի հաջորդ համարներում ծավալված բանավեճը, որին մասնակցում է Խորեն Սարգսյանը, հանդես են գալիս և ուրիշներ, ուղղվում է Արմենի հոդվածի դրույթների դեմ⁴⁷, որոնք գրական խիզախ պահանջ էին սխեմատիզմի այդ մտավոր նեղվածքում, պրոլետարական բթամտության այդ հոտած գրական ճահճում:

Տեսական այս դրույթների լավագույն արտահայտությունը Չարենցի պոեզիան է և իր «Երևան» վեպը, կամ, ինչպես ինքն էր բնորոշում, «Էպոպեան» (Մոսկվա, 1931), որը ՀԿ(Բ)Կ Կենտկոմի 1933 թ. նոյեմբերի 14-ի որոշմամբ Չարենցի «Գիրք ճանապարհի» ժողովածուի հետ մեկտեղ արգելվեց:

Մկրտիչ Արմենի «Չարենցի և հարակից խնդիրների մասին» հոդվածը՝ Չարենցի 20-ամյա գրական գործունեության տեսական ամփոփման փորձ էր, որ ժամանակի պաշտոնական քննադատությունը և, առաջին հերթին, ՀՊԳՄ-ականները ուղղեցին նրանց դեմ որպես քաղաքական մեղադրանք:

Այդ հարցերի վերաբերյալ Ստալինն ասել էր. «...բովանդակությամբ՝ պրոլետարական, ձևով՝ ազգային, այսպիսին է այն համամարդկային կուլտուրան, դեպի որն ընթանում է սոցիալիզմը: Պրոլետարական կուլտուրան չի վերացնում ազգային կուլտուրան, այլ ձև է տալիս նրան»⁴⁸: Խոսվում է նաև «ազգերի կոնսոլիդացիայի» մասին:

⁴⁶ Տե՛ս «Գրական թերթ» -1932, թիվ 7:

⁴⁷ Տե՛ս «Գրական թերթ» -1933, թիվ 8:

⁴⁸ Ստալին Ի. -1926, էջեր 257-258:

Արմենի տեսական նախադրյալները պայմանավորված են այս դրույթներով:

Նույն համարում տպագրվում են Չուբարի «Չախջախել խմբակայնությունն ու նացիոնալ-դեմոկրատական տենդենցները» և Վանանդեցու «Լեզենդա «ազգային» և «միջազգային» ձևի մասին» հոդվածները, որոնք նացիոնալիզմի վտանգավոր մեղադրանքներով ուղղված են Արմենի հոդվածի դեմ:

Արմենի հոդվածը բաժանված է ենթամասերի՝ «1. Քննադատության մասին», «2. Ինչո՞վ է Չարենցն արժեքավոր», «3. Ազգայնականը և ազգայինը», «4. Գրական տենդենցներն այսօր»: Մի ամբողջ գրական խմբակցության անունից Արմենն ընդդեմ Վանանդեցու պրոլետարական գաղափարական համահարթեցման և Չարենցի գրական ճանապարհի իմաստավորմամբ պաշտպանում է ազգային առանձնահատկությունների խտացման դրույթը:

Գրում է. «Չարենցի գրական-հասարակական գործունեության քսանամյակի առնչությամբ մեր քննադատությունը բնականաբար պետք է հատուկ ուշադրություն դարձնեք Չարենցի ստեղծագործության և հարակից այլ խնդիրների վրա: Սակայն մեր քննադատությունը, որ տառապում է հանցավոր ամլությամբ, մինչև այժմ դեռ հրապարակ չի քաշել ոչ մի խնդիր և ոչ մի հարց՝ կապված այս քսանամյակի հետ: Կարծեք թե մեր գրականությունը ունի մի քանի տասնյակ Չարենցներ, որոնցից մեկին,- ի՞նչ կա որ,- կարելի է անտեսել»:

Սյուուհետև. «Չարենցի մեծագույն արժեքը և խոշոր ծառայությունը մեր կուլտուրային այն է, որ նա *հանդիսանում է մեր ազգային կուլտուրայի ստեղծման առաջավոր հարվածայինը*: <...>: Կանգնած լինելով *ցարական գաղութից ազգային հանրապետության վերածվող Խորհրդային Հայաստանի շեմքին*՝ նա իր ստեղծագործությունները կապեց այն հեղափոխական պրոցեսի հետ, որը կոչվում է «ազգությունների զարգացման ընդհանուր պրոցես» (Մտալին): <...> ...պրոլետարական միջազգային կուլտուրան ստեղծվում է ազգային կուլտուրաների ստեղծման ճանապարհով և *միայն դրանով*: <...>...երևութական ինտերնացիոնալիզմով [տարվածները] Չարենցի ստեղծագործության մեջ ավելի և ավելի նկատվող *ազգային հասկանիչների* խտացումը համարել են ազգայնականություն: Չարենցի ուղին դա շարունակ եղել է *ազգային հասկանիչների կոնսոլիդացիայի ուղին*՝ իր երկերում...<...>...*միջազգային գրող* լինելու միակ ուղին *ազգային գրող* լինելն է, *միջազգային կուլտուրա ստեղծելու միակ ուղին՝ ազգային կուլտուրա ստեղծելը*»: Ըստ նրա՝ պետք է «ընթանալ ազգային կուլտուրայի կոնսոլիդացիայի ուղիով». Չարենցի «ստեղծագործությունը զարգացել է «ազգային ձևի շարունակական խտացմամբ ու բյուրեղացմամբ»:

«Չարենցի ֆուտուրիզմը, նրա մայակովսկիականությունը պետք է բնորոշել ոչ թե իբրև քմահաճ ընտրություն նրա կողմից, այլ իբրև նորմալ ընտրություն ազգային միֆին հակադրվելու համար»:

Ըստ ամենայնի, Չարենցի օրինակով Մ.Արմենը պաշտպանում է «Նոյեմբեր»-ականների ընտրած ազգային ինքնորոշման ճանապարհը՝ յուրովի շարունակելով Մյանսիկյանի 1922 թ. դեկտեմբերի սկզբին ԽՀ-ում տպագրած ծրագրային հոդվածի դրույթները:

Ըստ Արմենի՝ սխալ է Ն. Զարյանը, «որ դեռ կանգնած է *անազգային* ձևով պրոլետարական գրականության դիրքերի վրա»:

Չուբար. «Մ. Արմենի հողվածը նշանակալից է նրանով, որ նա փորձում է ձևակերպել որոշ գրուպայի սկզբունքային տենդենցները: Արմենի ստորագրությամբ լույս տեսնող այս դոկումենտն արտահայտում է նացիոնալ-դեմոկրատիզմի ազդեցության փաստը հեղինակի վրա»:

Այս պայմաններում 1933 թ. ապրիլի 28-ին Չարենցը գրում է «Բաց նամակ Խ.Հ.Գ.Մ. Կազմկոմիտեին և «Գր.[ական] թերթի» խմբագրությանը», որը մնում է անտիպ⁴⁹: Առաջին անգամ տպագրվել է «Գրականության մասին» ժողովածուի մեջ⁵⁰: Ուղղված է Արմենի հողվածի հետ թերթի նույն համարում ՀԽԳՄ-ի կազմկոմիտեի նախագահ, ԽՉ-ի խմբագիր Չուբարի էլույթի դեմ: Թերթի նույն համարում տպագրված են նաև Վանանդեցու «Լեզենդա «ազգային» և «միջազգային» ձևի մասին» և անստորագիր «Պայքար երկու ճակատով» հողվածները:

Չարենցի հողվածի սկիզբը. «Մկրտիչ Արմենի «Չարենցի և հարակից խնդիրների մասին» հողվածի առթիվ «Գրական թերթ»-ի միննույն համարում տպված հողվածները թողին ինձ վրա ծայր աստիճանի ճնշող տպավորություն»: Խոսում է իր և խմբի դեմ ուղղված ծանր մեղադրանքների մասին, ասես, լինեն քաղաքական հանցագործներ: Արմենի հողվածի դեմ ուղղված հիմնական մեղադրանքը՝ իբր Արմենը առաջնայինը «համարում է *ազգային ձևը* – և ոչ թե պրոլետարական բովանդակությունը: <...> ընկ. Արմենը միանգամայն որոշակի կերպով է դնում ազգային ձևի խնդիրը իբրև միջոցի»: Ըստ Չարենցի՝ Արմենը տվել է «ազգային ձևի (գրականության մեջ) համարյա սպառնիչ բնորոշումը: <...> *ազգային ձևը* գրականության մեջ հանգում է ոչ այլ ինչի, եթե ոչ *բովանդակության ռեալիստական, կոնկրետ դրսևորման...*»: «Ավելի պարզ ասած՝ *ազգային ձևը* գրականության մեջ ոչ այլ ինչ է նշանակում, եթե ոչ՝ բովանդակության այնպիսի դրսևորում, երբ հեղինակի լեզուն, ոճը, նկարագրած մարդկանց և վայրերի ընդհանուր կոլորիտը ադեկվատ է տվյալ ազգային միջավայրին, բնորոշում է տվյալ ազգային միջավայրի բոլոր այն հատկանշական կողմերը, որոնք բնորոշ են *միմիայն այդ ազգային միջավայրի համար և իբրև ձև տարբերվում են բովանդակությամբ նման բոլոր այլ միջավայրերից*»:

Ազգային ձևի բացակայությամբ է Չարենցը պատճառաբանում Վշտունու արևելյան պոեմների, Ալազանի, Զարյանի, մյուս պրոլետ-գրողների գրական ձախտորոշումը: Չուբարը, ըստ նրա, դառնում է ՀՊԳՄ-ի «իսկական *ռեանշիստական տրամադրությունների*» արտահայտիչ: «Չուբարը մեզ դարձնում է ազգային ինքնանպատակ ձևի քարոզիչներ, իբրև թե մենք պահանջում ենք ազգային ձև՝ *ի՞նչ բովանդակությամբ ուզում է լինի...* <...>: *Դուք ազգային ձևը մեխանիկորեն հակադրում, բաժանում եք բովանդակությունից...*»:

Չուբարին այսպես՝ որպես կողմնակալ գրական ղեկավար, որպես քաղաքականապես անպատրաստ մեկը հռչակելով՝ շարունակում է. «...ժամանակն է, որ մեր գրա-

⁴⁹ ԳԱԹ, ՉՖ, ՀԱԱ, ֆ. 91, ց. 3, գ. 5373):

⁵⁰ Չարենց Ե -1957, էջ 128-156:Արաստպվել է Չարենց Ե. -1967, հ. VI, էջ 216-243:

կան ղեկավարությունը, մի կողմ դնելով խորհրդային տարբեր գրողների նկատմամբ երկու չափ և երկու կշիռ գործադրելու հանցավոր պրակտիկան, ծավալուն քննադատություն սկսի այդ տենդենցների դեմ...»:

Հետևում է թերթի նույն համարում Անանուն հողվածագրի գաղափարական բարձրարվեստ ոչնչացումը՝ որպես «ամենատիպիկ ռևանշիստ»: Ժխտվում է նրա այն դրույթը, թե «Նոյեմբեր»-ը եղել է սպեցիֆիկյան կազմակերպություն և լուծվել է ՀՊԳԱ-ի մեջ. «Պրոլետարական գրողների «Նոյեմբեր» միությունը ո՛չ թե լուծվեց Ասոցիացիայի մեջ, այլ հատուկ համագումարում միացավ նրա հետ, <...>, ...կազմվեց այդ երկուսից մի երրորդ միություն, որ պաշտոնապես կոչվում է Հայաստանի Պրոլետգրողների Միություն»:

Եզրահանգում. Վերջում անդրադառնալով իր գրական գործունեության 20-ամյա հոբելյանին՝ Չարենցն արժանապատվորեն գրում է. «Գիտե՞ք ինչ, սիրելի ընկերներ, եկեք չնշե՛նք այդ «հոբելյանը»: Որովհետև, առաջինը, ներկայումս մենք բոլորս ավելի մեծ և կարևոր գործերով ենք զբաղված, քան այս կամ այն գրողի «հոբելյանն» է: Երկրորդ՝ ինչո՞ւ անպայման նշել գրողի գործունեության 20-ամյակը, և ոչ, ասենք, 30-ամյակը, կամ 40-ամյակը: Բայց, եթե ճիշտը կուզեք, այս երկու արգումենտներն էլ, ինչպես ասում են, «հե՛ջ»: Այս երկու արգումենտներն էլ ես բերեցի հենց այնպես, քաղաքավարության համար: Իսկ իմ իսկական արգումենտացիան հետևյալն է:-

Յուրաքանչյուր հոբելյան ոչ այլ ինչ է, եթե ոչ հարգանքի և վստահության արտահայտություն դեպի տվյալ անձնավորության ոչ միայն անցյալ վաստակները, այլև ներկա և ապագա: Ուրեմն, այս ամբողջից հետո, էլ ավելորդ չէ՞ խոսել անգամ այդ մասին: Ավելի լավ չէ՞ գրական ղեկավարություն ստանձնած ընկերների կողմից մի «փոքր» ավելի զգույշ, ավելի պատասխանատու, ավելի հարգալից վերաբերմունք դեպի խորհրդային գրողը,- քան մի «մեծ» «հոբելյան»՝ առանց այդ վերաբերմունքի»⁵¹:

ГЛАВНЫЙ УЧЕНИК ЕГИШЕ ЧАРЕНЦА – МКРТЫЧ АРМЕН ИЗ ГЮМРИ.

Деятельность литературных фракций «Октябрь» (Гюмри) и «Ноябрь» (Ереван)

Гаспарян Д. В.

Ключевые слова: Ереван, Гюмри, Егише Чаренц, Мкртич Армен, Аксель Бакунц, Гурген Махари, фракция «Октябрь», фракция «Ноябрь», пролетарские писатели, схема.

Представлена литературная жизнь в Гюмри и Ереване 1920-1930 годов, активная деятельность М. Армена с Е. Чаренцем, две исключительно важные статьи Армена: "Как пишутся романы", "О вопросах, связанных с Чаренцем".

⁵¹ Չարենց Ե. -1967, VI, էջեր 216-243:

1920-1930-е годы Чаренц проложил путь современной литературе. Это было нелегко. Перед ним стояла Ассоциация пролетарских писателей Армении, стремившаяся к гегемонии через партийность литературы. Чаренц, как и Армен, Махари, Бакунц и другие, противопоставлял качественную литературу голой схематике. Две вышеупомянутые статьи Армена и другие материалы, сыгравшие ключевую роль в формировании художественной литературы того времени, имеют в этом отношении исключительное значение. Роман Армана «Ереван», роман «Эгнар Ахбюр» и многие другие произведения написаны с теоретическими положениями этих статей. Эти статьи также использовались в качестве обвинений против тех, кого преследовали: Чаренц умер в тюрьме, Бакунц был расстрелян, Махари и Армен были сосланы.

**MKRTICH ARMEN- YEGHISHE CHARENTS' OUTSTANDING
STUDENT FROM GYUMRI
"October" (Gyumri) and "November" (Yerevan) Literary Factions Activities
Gasparyan D. V.**

Key words: *Yerevan, Gyumri, Yeghishe Charents, Mkrtich Armen, Aksel Bakunts, Gurgен Mahari, "October" faction, "November" faction, proletarian writers, schematic.*

The paper presents the literary life in Gyumri and Yerevan of 1920-1930s, Armen's energetic activity next to Charents, Armen's two exceptionally important articles: "How Novels are Written", "On Charent's Related Issues".

In the 1920-1930s Charents paved the way for modern literature. It was not easy. In front of him was the Association of Proletarian Writers of Armenia, which sought hegemony through the partisanship of literature. Charents like Armen, Mahari, Bakunts and others opposed the high-quality literature to the naked schematic. The two above-mentioned articles by Armen and other materials, which played a key role in the formation of the fiction of the time, are of exceptional importance in that way. Armen's novels "Yerevan", "Heghnar Aghbyur" and many others were written with the theoretical theses. Charents died in prison, Bakunts was shot, Mahari and Armen were exiled.

Գրականություն

1. Ալազան Վ. -1967, «Հուշեր», Երևան:
2. Ասրադու -1925: «Ծիրակի ջրանցքը»:
3. Արմեն Մ. -1971, «Երկեր», Երևան, հ. IV:
4. «Բանվոր» -1922, 12, 26 ապրիլ, թիվ 372, 374:
5. ԳԱԹ ՉԳ (Գրականության և արվեստի թանգարան, Չարենցի ֆոնդ), ՀԱԱ, ֆ. 91, ց. 3, գ. 5373):
6. «Գրական թերթ» -1932, 30 ապրիլ, թիվ 7:
7. «Գրական թերթ» -1933, 21 ապրիլ, թիվ 7:
8. «Գրական թերթ» -1933, 10 մայիս, թիվ 8:
9. «Լուսաբաց» -1927, թիվ 1:
10. «Խորհրդային Հայաստան» -1925, 12. 06, թիվ 159:
11. «Խորհրդային Հայաստան» -1925, թիվ 141:

12. «Խորհրդային Հայաստան» -1925, հունիս, թիվ 152:
13. «Խորհրդային Հայաստան», 1925, 26 հունիս, թիվ 169:
14. «Հանդես ամսօրյա -1924, թիվ 1-2, -1925, թիվ 5-6:
15. «Մարտակոչ», 13 հունիս, թիվ 133:
16. **Մարտունի Ա.** -1922, Պրոլետարական գրականությանը նվիրված «Մուրճ» ամսագրի նո.1-ի առթիվ (տե՛ս «Խորհրդային Հայաստան», 1, 2 դեկտեմբեր, թիվ 267, 268):
17. **Չարենց Ե.** -1957, «Գրականության մասին», Երևան:
18. **Չարենց Ե.** -1967, «Երկերի ժողովածու», Երևան, հ. VI:
19. **Ստալին Ի.** -1926, «Լենինիզմի հարցերի շուրջ», Երևան:

Ընդունվել է՝ 14. 09. 2022.
Գրախոսվել է՝ 15. 10. 2022
Հանձնվել է տպ.՝ 28. 11. 2022

Տեղեկություններ հեղինակի մասին

Դավիթ ԳԱՍՊԱՐՅԱՆ՝ բանասիրական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր, ՀՀ ԳԱԱ պատմության ինստիտուտի նորագույն շրջանի պատմության բաժնի առաջատար գիտաշխատող, էլ. հասցե՝ grakanagetgasparyan@mail.ru

Գ Ր Ա Վ Ա Ն Ա Գ Ի Տ Ո Ւ Թ Յ Ո Ւ Ն
ЛИТЕРАТУРОВЕДЕНИЕ
L I T E R A R Y S T U D I E S

ՀՏԴ՝ 82.02/.09

DOI: 10.52971/18294316-2022.25.2-23

ԵՂԻՉԵ ՉԱՐԵՆՑԻ «ԵՍ ԵՎ ԻԼՅԻՉԸ» ՊՈԵՄԻ
ԱՐԴԻ ԺԱՄԱՆԱԿՆԵՐԻ ՄԵԿ ԸՆԹԵՐՅՈՒՄ

Արա Չարզարյան

ՀՀ գիտությունների ազգային ակադեմիայի գրականության ինստիտուտ

Բանալի բառեր՝ *Չարենց, Լենին, Ուելս, ապագա, ճանապարհորդություն, Երևան, Մոսկվա, կոմունիզմ, ֆուտուրիզմ, ֆանտաստիկա:*

Եղիշե Չարենցի ստեղծագործական ժառանգությունում քիչ չեն Լենինի մասին ստեղծագործությունները: Իր թեմատիկ և ստեղծագործական առանձնահատկություններով յուրահատուկ է հատկապես «Ես և Իլլիչը» ստեղծագործությունը, որում Չարենցը դեպի ապագայի աշխարհ ճանապարհորդություն է սկսում Լենինի հետ: Ստեղծագործության համար ազդակ հանդիսացել է Ուելսի «Ժամանակի մեքենա» գիտաֆանտաստիկ վեպը: «Ես և Իլլիչը» ստեղծագործությունում Չարենցն անդրադառնում է նաև ֆրանսիացի աստղագետ, փիլիսոփա Կամիլ Ֆլամարիոնի գաղափարներին: Կառուցվում է ուրույն ստեղծագործություն, որում ներկայացվում է ապագայի աշխարհը, Երևանն ու այդ ամենի միջով անցնող Չարենցի մտքումներն ու զարմանքները: Չարենցն ապագայի աշխարհն այդ շրջանում տեսնում էր Լենինով, որն իր համար գերակա դիրք զբաղեցնող նախատիպ էր և անհատ:

Նախաբան. Եղիշե Չարենցը Լենինին տեսել է 1921 թվականի դեկտեմբերին: Այդ մասին Դանիել Դգնունու հետ զրույցներում պատմել է¹ հենց ինքը՝ բանաստեղծը: Չարենցի ինքնակենսագրական պատմությունը փաստում է, որ Լենինի հետ մտերիմ ոչ մի շփում նա չի ունեցել, այլ տեսել է հեռվից՝ համագումարի ժամանակ: Սակայն Չարենցը լավ ծանոթ էր Լենին մարդու քաղաքացիական պայքարին, նրա գաղափարախոսու-

¹ Չարենց Ե. –1961, էջ 264:

թյանն ու գործունեությանը: Եվ Չարենցի դեպքում այդքանն արդեն իսկ բավական էր իր համար ինչ–որ բացառիկ անհատին որպես նախատիպ ընտրելու և նրան իր գեղարվեստական ստեղծագործություններում օգտագործելու համար: Իր կյանքի ինչ–որ շրջանում Չարենցը Լենինի նկատմամբ ուներ յուրահատուկ պաշտամունք: Դա են վկայում հուշերն ու պատմությունները այն մասին, որ տարբեր շրջաններում Չարենցը հետաքրքրված էր Լենինով և չէր դադարում զրույցներ ունենալուց այդ թեմայի շուրջ: Դրանից զատ հետաքրքրական է նաև այն, որ Չարենցը հնարավորության դեպքում փորձում էր նաև լինել այն վայրերում, որտեղ ժամանակին ապրել կամ եղել էր իր համար պաշտելի անձնավորությունը: Մասնավորապես նմանատիպ հետաքրքիր զուգահեռներ կան Չարենցի և Պուշկինի հետ կապված, որոնք ներկայացրել է Վահագն Դավթյանը. «...1929 թ. աշնանը Չարենցը շուրջ երկու ամիս անցկացրեց Պուշկինի ստեղծագործության օրրանում՝ Լենինի գրադարանում, և այնտեղ ապրեց իր ստեղծագործական կյանքի ամենամեծ թռիչքներից, ամենաբուռն և արդյունավետ շրջաններից մեկը»²:

Նմանատիպ շատ տեղեկություններ կան կապված Չարենցի ու իր համար պաշտելի անհատների հետ: Բնականաբար բացառություն չէր կարող կազմել հատկապես Լենինը, որին, ըստ Ալմաստ Զաքարյանի, Չարենցը մինչև 1925 թվականը պաշտում էր: Մակայն հետագա մի շարք ստեղծագործություններում Չարենցը դարձյալ անդրադառնում է Լենինին: Մասնավորապես, 1936 թ., «Կոմիտասի հիշատակին» պոեմի ԽԳ ութնյակից սկսած, Չարենցը դարձյալ գովերգում է Լենինին: Վերջինիս կենսագրությանն առնչվող ինչ–որ վայր այցելության մասին մանրամասներ հայտնում է հենց բանաստեղծը: Մասնավորապես 1926–1929 թթ. թվագրությամբ գրված «Հատվածներ չգրված պոեմից» պոեմի 4–րդ՝ «Լիրիքական շեղում» գլխում Չարենցը գրում է Կապրի կղզի այցելության մասին.

Եվ երբ կանգ առանք մենք կղզու մոտ՝

–Այստեղ ապրել է Լենինն, ասաց–

Լենինը–լա՛վն էր,–ասաց հետո

Ու ժպտաց հստակ աչքերով իր³.....:

Չարենցն այստեղ նկարագրում է Իտալիայում իր ճանապարհորդության ժամանակ դեպի Կապրի այցելության մասին: Կապրի այցելության մտադրության մասին հիշատակում է նաև պոեմում: Կապրի կղզում մի շրջան ապրել է Լենինը: Չարենցի Կապրի այցելության մասին իր հուշերում գրում է նաև դաշնակցական գործիչ Վահան Նավասարդյանը, որ Իտալիայում հանդիպել է Չարենցին. «...Չգրված պոեմի չորս գրուխներից հատվածներ բերելով, ուր անխնա հատվածներ կան Դաշնակցության դեմ, հեղինակը այդ հատվածներից չորրորդում խոսում է իր կատարած ճամփորդության մասին Նեպոլից դեպի իտալական Կապրի կղզին, ուր մի ժամանակ ապրել է Լենինը⁴»:

Ամփոփելով Չարենց–Լենին «հանդիպումների շարքը»՝ հարկ է խոսել նաև Լենինի մահվանը Չարենցի արձագանքի մասին: Մա հատկապես շատ հետաքրքիր է՝ հաշվի առնելով այն փաստը, որ Չարենցը յուրահատուկ էր արձագանքում իր համար սիրելի

² Դավթյան Վ. –1974, N 22:

³ Չարենց Ե. –1968, էջ 66:

⁴ Նավասարդյան Վ. –1962, էջ 23:

մարդկանց վախճանին, և յուրաքանչյուր մարդու դեպքում դրա բանաստեղծական, ինչպես նաև կյանքում իրական արձագանքը ստացվում էր տարօրինակ: Բացառություն չէր նաև Լենինը, քանի որ մինչև մահը, երբ նա առողջական լուրջ խնդիրներ ուներ, Չարենցն ամեն օր հետաքրքրվում էր⁵ Լենինի վիճակով: Լենինի նկատմամբ Չարենցի անձնական յուրահատուկ վերաբերմունքից գատնապես այդ ժամանակաշրջանը լցված էր Լենինով, և ժամանակաշրջանի գրողները իրենց ստեղծագործություններում ինքնակամ ու պարտադրանքով պարտավոր էին երգեր ձուլել «Մեծ առաջնորդին»: Բացառություն չէր նաև Չարենցը, սակայն Չարենցի մոտ Լենինին ձուլված գործերը ունեին հետաքրքիր դիտանկյուն: Մասնավորապես, այդ գործերի շարքում բացառիկ է Չարենցի «Ես և Իլլիչը» պոեմը, որի սյուժեն հետաքրքրական ու խորքային շերտեր ունի:

1923 թվականին Թիֆլիսում գրված պոեմի մասին կա պահպանված Չարենցի նամակը՝ ուղղված Մամիկոն Գևորգյանին: Նամակում Չարենցը մանրամասներ է հայտնում հատկապես պոեմի սկզբի փոփոխության մասին, որից և տեղեկանում ենք, թե ինչպիսին է եղել պոեմի մուտքի նախնական տարբերակը. *«Հիմա ես ուզում եմ մի անէական փոփոխություն մտցնել նրանում, – հետևյալը. Պոեմի սկզբից հանել «Է՛յ, դո՛ւք, որ գալու եք էզուց» մինչև «Դեպի ժամանակը!» տողերը, не включительно, այսինքն՝ բաց թողնել սկզբից այդ տողերը և պոեմն սկսել հիշյալ տողերից՝...»:*

Նամակի շարունակությունում նշում է պոեմի մուտքի հենց այն տարբերակը, որ արդեն իսկ կա տպագրված Չարենցի ստեղծագործությունների ակադեմիական հրատարակության մեջ: Նամակում նշված պոեմի սկզբնական տարբերակի մուտքն արդեն իսկ ազդարարում է պոեմի գաղափարական հենքերից մեկը. «Լենինը պիտի գա ապագայից և լինելու է հավերժ»: Ստեղծագործության հենց սկզբում Չարենցը ընդգծում է պոեմի սյուժետային դետալներից մեկը, ինչպես նաև ակնարկում է պոեմի ստեղծման շարժառիթներից մեկի՝ Հերբերտ Ուելսի մասին. *«Մի էպիզոդ իմ ճանապարհորդությունից՝ կատարված Ուելսի ժամանակի մեքենայով դեպի 2500 թ՝...»:*

Չարենցի անձնական գրադարանում կա պահպանված⁸ Ուելսի «Մարդկության համառոտ պատմություն» գրքի ռուսերեն հրատարակությունը, որը նա գնել է 1924 թ.: Սա Ուելսից պահպանված նրա միակ գիրքն է: Չի կարելի բացառել, որ Չարենցն իր անձնական գրադարանում ունեցել է նաև Ուելսի «Ժամանակի մեքենա» գիտաֆանտաստիկ վեպը, որից և բխում է «Ես և Իլլիչը» պոեմը: Շատ հնարավոր է նաև, որ Չարենցը կարդացել է 1900 թվականին «Ռուսաստան» ամսագրում լույս տեսած Վ. Տոմաշևսկու թարգմանությունը, որում վեպի վերնագիրը ներկայացված է այսպես՝ «Դեպի դարերի խորքը»:

Ֆանտաստիկայում ու գիտաֆանտաստիկայում Ուելսի վեպը մտցրեց ժամանակի մեջ ժամանակի մեքենայով ճանապարհորդելու ուելսյան մոտիվը: Վեպում ներկայացվում է ապագայի աշխարհը, սոցիալական անհավասարությունն ու մարդկության դեգրադացիան: Ներկայացվում են գիտական զարգացումն ու մարդկային տեսակի փոփո-

⁵ Չարենց Ե. –1961, էջ 67:

⁶ Չարենց Ե. –1967, էջ 402:

⁷ Չարենց Ե. –1964, էջ 154:

⁸ Չարենց Ե. –2022, էջ 477:

խությունը: Ինչ խոսք, Ուելսն ամեն ինչ ճիշտ է ներկայացրել: Չարենցի «Ես և Իլլիչը» երգիծական ազիտ-ստեղծագործության ազդակ հանդիսացել է Ուելսի վեպը, սակայն ինչո՞ւ է Չարենցը ճանապարհորդում հենց Լենինի հետ: Հերբերտ Ուելսը երեք անգամ այցելել է Ռուսաստան՝ 1914, 1920 և 1934 թվականներին: Իր երկրորդ՝ 1920 թվականի այցելության ժամանակ Ուելսը հանդիպել և գրուցել է Լենինի հետ: Հոկտեմբերի 6-ին տեղի ունեցած իրենց հանդիպման և գրույցի մասին Ուելսը գրել է իր «Ռուսաստանը մշուշի մեջ» գրքում: Այդ հանդիպման մասին մանրամասներ հայտնել է նաև ժամանակի անգլիական և ռուսական մամուլը⁹, և շատ հնարավոր է, որ Չարենցը կարդացել է ժամանակի մամուլում Ուելս-Լենին հանդիպման մասին ինչ-որ հոդված: Եվ այս տեղեկություններից հետո արդեն իսկ հասկանալի է դառնում, թե ինչու է Չարենցն իր ճանապարհորդությունը իրականացնում Լենինի հետ միասին, և ինչու է ստեղծագործության մեջ ազդարարվում Ուելս-Չարենց-Լենին եռամիասնական համակարգը, որոնցից երկուսը հանդես են գալիս միայն սկզբում և պոեմի ավարտում, իսկ Չարենցը դառնում է այդ ճանապարհորդության հիմնական, գլխավոր կերպարը: Այստեղ Լենինը կարծես դառնում է միայն գործիք՝ Չարենցին ապագայի աշխարհում տեսնելու համար, քանի որ ստեղծագործության կենտրոնական կերպարը Չարենցն է, և աշխարհագրական, մարդկային այն երևույթները, որոնք բանաստեղծը տեսնում է իր տիեզերական ճանապարհորդության ընթացքում, հետաքրքիր են առաջին հերթին հենց Չարենցի համար: Պոեմը գրված է ֆուտուրիզմի մանիֆեստի տառին համապատասխան և կրում է ուելսյան բանաձևն իր ամբողջ կատարելությամբ: Պոեմի հատկապես սկիզբն ու ամբողջական ընթացքը հարմարեցված են ժամանակի մեքենայով օդում ընթացող մարդու սրտի աշխատանքին, տրամադրությանն ու պատկերները կտրուկ, արագ տեսնելու դիպաշարային տրամաբանությանը:

Ես անշարժ եմ:

Հնում է սիրտս:

Թևում է դեպի ինձ¹⁰:

2500 թվական ընթացող Չարենցի համար դարերի խորք գնալը և՛ նման է արթնացման՝ դարերի խորքից՝ երկարատև քնից հետո, և՛ նման է դարերի խորք գնալու տրամաբանությանը: Ընդգծվում է տիեզերական համակարգը, մոլորակներն ու համաստեղությունները, և այդ ճանապարհորդությունը կամ ժամանակի մեջ դեպի ապագա տեղափոխությունն իրականացվում է տիեզերքով: Նախասկզբային մոլորակային մոտիվը կա հենց Ուելսի վեպում և Չարենցը՝ որպես ժամանակի մեքենայով սկսնակ ճանապարհորդ, հետևում է Ուելսի համակարգին: Պոեմի սկզբում նախ ներկայացվում է մեքենայով շարժման մեջ գտնվող Չարենցը, որը տեսնում է տիեզերական համակարգը, մոլորակներն ու վերևում տեղի ունեցող այն բոլոր իրադարձությունները, որոնք հասու չեն ներքևում գտնվող մարդկանց: Առաջին կանգառը լինում է Մոսկվան, որտեղ էլ հենց հանդիպում ենք ապագայի աշխարհում խորհրդային կարգերի ընկալմանը: Մոսկվայի՝ որպես աշխարհի կենտրոնի գաղափարը Չարենցի մոտ դուրս է գալիս հենց «Ես և Իլլիչը» պոեմից և հետագայում տարածվելու է նաև «Լենինն ու Ալին» պոեմի վրա, որը

⁹ <https://www.rbth.com/history/328081-surprised-by-russia-wells>

¹⁰ **Չարենց Ե.** –1964, էջ 156:

գրվել է մեր քննարկման նյութ հանդիսացող պոեմից մեկ տարի անց՝ 1924 թվականի նոյեմբերի 24-ին Տրապիզոնում: Հենց այդտեղ է երկրորդ անգամ և վերջնականապես հաստատվում Չարենցի մոտ Մոսկվան՝ որպես աշխարհի կենտրոն:

Աշխարհի կենտրոնը–Մոսկո՛վն է:

Մոսկովը Մեկկայից էլ հի՛ն է:

Մոսկովից մեծ քաղաք–չի՛ք:

–Քանի որ Մոսկովի միջին:

Ապրում է ինքը–Լենինը¹¹:

«Լենինն ու Ալին» պոեմում Մեքքայի հիշատակումը ևս մասնակի տանում է դեպի Չարենցի անձնական գրադարանում պահվող Ուելսի վերոնշյալ գիրքը: Գրքի «Матемед и ислам» գլխում խոսվում է Մեքքայի, իսլամական հավատքի, դրա ներկայացուցիչների համար պաշտամունքի առարկա դարձած այլ մանրամասների մասին: Այս դեպքում ևս գիրքն ու ընթերցանությունը Չարենցի համար գաղափարական ու ստեղծագործական նոր ճանապարհ են բացել:

Մոսկվա հասնելով՝ Չարենցը սկսում է գրուցել և խնդրել, որ իրեն տանեն Всесоюзная Чрезвычайная Комисия: Եվ հենց այդ կետում են զարմանքն ու կասկածը Չարենցի: Ապագայի աշխարհում ծիծաղելի է դառնում «բոլշևիկ» բառի արտասանությունը: Կարելի է մեկնաբանել այսպես, որ Չարենցի ապրած ժամանակաշրջանում անհնարին էր չիմանալ այդ ամենի մասին: Մա ժամանակների բևեռացման մեջ անհնարիությանն ուղղված արձագանք է նաև: Մակայն զարմանքի հետ մեկտեղ կա նաև կասկած, որ միգուցե ապագայի աշխարհում արդեն իսկ չիմանան խորհրդային համակարգի մասին: Ապագայի աշխարհում հնի և նորի հակադրություն ևս կա, սակայն Չարենցը հստակ ընդգծում է, որ հինը այլևս չկա, բնականաբար, այդ շրջանում հին ասվածը նախքան հեղափոխության և խորհրդային պետության կազմավորման շրջանն էր: Իսկ 2500 թվականին կոմունիզմի իշխանությունը տարածվում է ամբողջ աշխարհում: Թեքնև այսպես է տեսնում Չարենցը, երբ մի փոքրիկ երկխոսության ժամանակ հաստատվում է, որ աշխարհում տիրում է կոմունիստական համակարգը:

Վարը–

Աշխարհը–

Կոմուն է ընդհանուր¹²:

Այս ամենից անմիջապես հետո Չարենցը մեջբերում է այդ ժամանակ դեռ ողջ ֆրանսիացի աշխարհահռչակ աստղագետ, փիլիսոփա Կամիլ Ֆլամարիոնի անունն ու ընդգծում, որ այդպես էր գուշակել նա: Չարենցի կողմից Ֆլամարիոնի անվան ընդգրկումն այս պոեմում նույնպես պատահական չէ. ֆրանսիացի աստղագետն այդ շրջանում ամենահայտնի գիտնականներից մեկն էր: Որպեսզի Լենին–Չարենց անմահության ճանապարհորդության տրամաբանությունը կարողանանք գտնել, հարկ է մեջբերումներ անել Ֆլամարիոնի աստղագիտական–փիլիսոփայական հայացքներից: Թեև Չարենցի անձնական գրադարանում պահպանված չեն Ֆլամարիոնի գրքերից, սակայն

¹¹ Չարենց Ե. –1963, էջ 206:

¹² Նույն տեղում, էջ 161:

հաշվի առնելով պոեմի գաղափարական թելն ու նրանում Ֆլամարիոնի անվան հիշատակումը, կարելի է ենթադրել, որ Չարենցը միանշանակ կարդացել է նրա աշխատություններից առնվազն մեկը: Ֆլամարիոնը չվախեցավ աստղագիտական խնդիրները ֆիզիոլոգիական և մտավոր խնդիրներին համատեղել իր տիեզերափիլիսոփայական գրվածքներում: Նա քննարկեց հարցեր Տիեզերքի անսահմանության և դրանում անսահման կյանքի հնարավորության մասին: Այստեղից էլ Ֆլամարիոնի որոշ գրվածքների փիլիսոփայական և առաջին հայացքից նույնիսկ միստիկ երանգավորումը, որը շատ պրոֆեսիոնալ աստղագետների հեռացրեց նրանից: Միննույն ժամանակ, Ֆլամարիոնը, որոնք էլ այս հարցերի պատասխանը, կրկին հույսեր էր կապում հենց Տիեզերքի՝ Բնության անսահման հարստության, հատկությունների բազմազանության հետ: Նա այս ամենի մեջ փնտրում էր անհայտ, բայց միննույն ժամանակ բնական ուժերի դրսևորում: Նրա երևակայության թռիչքը առաջացնում է Երկրի վրա մահացած մարդկանց անմահ հոգիների հնարավոր վերաբնակեցման պատկերը ոչ թե դրախտ, դժոխք, այլ ուրիշ մոլորակներ, օրինակ՝ Մարս: Զարմանալի չէ, որ Ֆլամարիոնի խորհրդային քննադատներից մեկն ասել է, որ նրա դրախտը լավ կահավորված աստղադիտարան է: Ուրեմն Չարենցը պոեմում դնում է նաև երկրի վրա մահացած մարդկանց հոգիների մեկ այլ մոլորակում ապրելու Ֆլամարիոնի գաղափարը: Դա հստակ երևում է նաև առաջին ակնառու տրամաբանական դիտարկմամբ, որքան էլ ինքն ու Լենինը ճանապարհորդում են դեպի ապագա, սակայն ճանապարհորդության հետ մեկտեղ կա նաև դարերի երկար ձգվող ընթացքը, և պոեմում ինչ-որ պահի տպավորություն է, որ թե՛ նրանք են գնում դեպի ապագա, թե՛ հոգիներն են ինչ-որ տեղից շարժվել դեպի պայմանական ներկա՝ 2500 թվական: Մասնավորապես Չարենցի՝ հոգի լինելն է վկայում պոեմի սկզբում ինքն իր մարմնի ծանրությունը որպես հով, քամի ընկալելու տողերը.

Իջնում եմ:

Թռչում եմ:

Ես թեթև եմ¹³:

Կամ այս հատվածը.

–Շնչում եմ:

Թեթև եմ:

Ես կամ¹⁴:

Այս տողերը գալիս են փաստելու, որ Չարենցը դեպի ապագա էր շարժվում ինչ-որ տեղից և այդ տեղից շարժվում է տեսնելու 2500 թվականի աշխարհը, որն այդքան էլ երանելի ու ցանկալի չէ: Եվ ի վերջո Ֆլամարիոնի գաղափարախոսության առկայությունն այս ստեղծագործությունում գալիս է ցույց տալու հենց պոեմի նախնական՝ չփոփոխված տարբերակի պահպանված օրինակը, որի հենց սկիզբը խոսում է երկրի վրա մահացած մարդկանց անմահ հոգիների հնարավոր վերաբնակեցման պատկերի մասին, որ այդ վայրը ինչ-որ դրախտային մոլորակ է.

¹³ **Չարենց Ե.** –1963, էջ 155:

¹⁴ Նույն տեղում, էջ 156:

Է՛յ

Պո՛ւք,

Որ գալու եք էգուց:

Տեսնում եմ ձեզ էսօր:

Իմ դեմ է ահա ձեր եղևը:

Էլեկտրական դրախտը:

Տեսնում եմ ձեր հոգին,

Ձեր բախտը ¹⁵:

Թե ինչո՞ւ է Չարենցը ցանկացել և փոխել պոեմի մուտքի այս սկզբնական տարբերակը, չենք կարող ասել: Համենայն դեպս դա կարող էր կապված լինել նաև Ֆլամարիոնի գաղափարների նկատմամբ խորհրդային միջավայրում ոչ լավ արձագանքի հետ, սակայն մյուս կողմից նա թողել է ֆրանսիացի գիտնականի անունը, որն իրավիճակն ավելի է խճճում: Սակայն հստակորեն տեսնում ենք, որ Ուելսի հետ մեկտեղ՝ Չարենցը պոեմը կառուցել է նաև Ֆլամարիոնի գաղափարախոսություններից մեկի հիման վրա: Ի վերջո, այդ շրջանում Ֆլամարիոնի գաղափարախոսություններն այնքան էին տարածված, որ այդ թեմաներով ստեղծագործում էին նաև ռուս բանաստեղծները: Այստեղ հարկ է նշել արծաթե դարի ամենակարկառուն բանաստեղծներից մեկի՝ Նիկոլայ Գումիլյովի այս քառատողը, որը կրում է Ֆլամարիոնի Վեներայի հետ կապված ուսումնասիրության արդյունքը: Ուսումնասիրելով Արեգակի սկավառակի վրայով Վեներայի անցման բոլոր դիտարկումները՝ Ֆլամարիոնը եզրակացրեց, որ նույնիսկ այս խորհրդավոր մոլորակի պտտման ժամանակահատվածը դեռևս չի կարող հուսալիորեն հաստատվել, և Վեներայի վրա կա նաև գունային ընկալումների և տարբերությունների խնդիր: Հենց այս ուսումնասիրությունը Գումիլյովին մղում է Վեներայի բնապատկերները տեսնել այլ գույներով.

Հեռավոր Վեներայի աստղի վրա,

Արևը կրակոտ է և ոսկեգույն:

Վեներայի վրա, ախ, Վեներայի վրա

Ծառերը կապույտ տերևներ ունեն ¹⁶..:

Վեներային թողնելով հանգիստ՝ Չարենցը շարունակում է ժամանակի մեջ իր ճանապարհը: Եվ անգամ պոեմում, որտեղ թվում է՝ կենտրոնական կերպարը պիտի որ Լենինը լինի, Չարենցը դարձյալ մոլորակի կենտրոնում կանգնեցնում է իրեն և չի զլանում հերթական անգամ խոսել իր բացառիկ հանճարի և, որ ամենակարևորն է, ժամանակավրեպ չլինելու մասին: Երբ հանդիպում է ու ասում է իր անունը, ապագայի մարդիկ ճանաչում են Չարենցին.

Ազգանունս–Չարենց է,

Իսկ Չարենցը,

Պուք

Հասկանո՞ւմ եք...

¹⁵ Չարենց Ե. –1963, էջ 356:

¹⁶ Թարգմանությունն արվել է իմ կողմից (հեղ.):

Խա-խա-խա-խա-խա...-

Ծիծաղում է:

Ուրախ է¹⁷:

Ապա հաջորդում են գիտատեխնիկական հայտնագործությունների մասին հատվածները, որում Չարենցը մնում է ուելյան գաղափարախոսությանը հավատարիմ ու ներկայացնում է ապագայի նոր աշխարհն իր գիտատեխնիկական բոլոր հայտնագործություններով և նորամուծություններով հանդերձ: Հարկ է նշել, որ այդ շրջանում փորձ էր արվում երևակայությամբ պատկերել ամենը, ապագան ու գիտության զարգացումը, սակայն ներկան՝ Չարենցի դեպքում ապագայի աչքով էրբ տեսնում ենք, ստացվում է, որ այդ ամենը կատարվում էր ճիշտ: Քանի որ օդում թռչող մեքենաներն արդեն իրականություն են, տիեզերքում թռչող գունդը ևս իրականություն է, և մեզ համար այս ամենի մեջ զարմանալի ոչինչ չկա: Հարկ է զարմանալ միայն, թե ինչպես է այդ ամենը այդքան ճշգրիտ մարգարեական մտքից տեքստ դարձել գրողների կողմից:

Չարենցի ժամանակի մեքենան, պտտելով աշխարհի տարբեր անկյունները, ի վերջո հասնում է նաև Երևան: Ընդգծվում է Երևանի՝ արդեն իսկ քաղաք դառնալն ու Չարենցի ցանկությունը, որ դրված է Երևանին վերաբերող շքեղ կերպարանափոխության հիմքում: Նա, 30-ականների կառուցվող Երևանը տեսնելով, նշում էր, որ երանի նրանց, ովքեր տասնամյակներ հետո կտեսնեն այն: Պոեմի այս հատվածում Չարենցը զետեղում է իր ցանկությունն ու ընդգծում նաև Երևանում իր՝ ժամանակավրեպ չլինելու հարցը.

Ասում եմ անունս:

Գուցե հիշեն....

-Չարենց

-Չարենց

-Չարենց¹⁸:

Ուելսի վեպում կա նաև Եգիպտական կոլորիտ: Եգիպտոսի մասին գրված է նաև Հերբերտ Ուելսի «Մարդկության համառոտ պատմություն» գրքում, որը կար Չարենցի անձնական գրադարանում: Վերոնշյալ գրքի 67 գլուխներում գրված է մարդկության պատմության խոշոր իրողությունների մասին Քրիստոսի ծննդից և հասնում է մինչև 1922 թվականը: Գրքում խոսվում է նաև Եգիպտոսի մասին: Եգիպտական կոլորիտը կա նաև Ուելսի մյուս՝ «Ժամանակի մեքենա» վեպում, որտեղ հեղինակը, որը վեպում ներկայանում է առաջին դեմքով, ինչպես Չարենցն իր պոեմում, իր ժամանակի մեքենան կանգնեցնում է Սֆինքսի մոտ, ապա թաքցնում է նաև Սֆինքսի մեջ: Եգիպտական կոլորիտ բերում է նաև Չարենցը, սակայն դա արդեն Երևանում:

Էն ի նչ բուրգեր են ապակի¹⁹...:

Այս կետից սկսած, էրբ Չարենցը Երևանում է, նախքան Լենինին տեսնելը նա սկսում է տազնապել: Նախ բառերից նկատվում է նրա շնչակտուր վազքը: Այդ կոլորի-

¹⁷ **Չարենց Ե.** –1964, էջ 158:

¹⁸ Նույն տեղում, էջ 163:

¹⁹ Նույն տեղում, էջ 164:

տը կար պոեմի սկզբում, և երբ նրա մեքենան վերջապես կանգ առավ: Նկատվում է տագնապ, կարծես թե նրա ճանապարհորդության ժամանակը լրանում է, մոտենում է իր մահը, որի մասին և ակնարկում է ինքը: Եվ փախուստը նրան բերում է դեպի հրապարակ, որտեղ էլ տեղի է ունենում հանդիպումը Լենինի հետ: Հետաքրքիր պատահականությամբ Մերկուրովի ձեռամբ քանդակված Լենինի քանդակը Հանրապետության հրապարակում դրվել է 1940 թվականին: Եվ Լենինին տեսնելով՝ այն մարդկանց, որոնց հետ չէր կարողանում խոսել, և որոնք խուլ էին, արդեն հիմա կարողանում է հավաքել իր շուրջը և պատմել Լենինի մասին: Պոեմում Լենինի «ուրվականը» նախ տեսնում ենք միայն վերնագրում, ապա վերջում, որով ճանապարհորդությունը ստանում է տրամաբանական ավարտ: Դարերի խորքում ընթացող ճանապարհորդությունը ազդարարում է 2500 թվականին Լենինի և Կոմունիզմի գոյությունը: Այս գաղափարական փոքր կետերը խորհրդային շրջանում կարող էին դառնալ պոեմի հաստատուն գաղափարախոսություն, և տպավորություն ստեղծվեր, որ ամբողջ պոեմը կառուցված է հենց սրա շուրջ, սակայն ժամանակներն այլ են հիմա, և Լենինին տասնամյակների խորքից կարող ենք անդրադառնալ այլ կերպ: Պոեմում հետաքրքիր զուգահեռներ է տարվում նաև Լենին-Չարենց, Մոսկվա-Երևան գույգերի միջև: Եթե «Լենինն ու Ալին» պոեմում սահմանվում է, որ աշխարհի կենտրոնը Մոսկվան է, քանի որ այնտեղ ապրում է Լենինը, հետևաբար պոեմում դեպի ապագա գնացող ճանապարհորդության առաջին ու կարևոր կանգառը Մոսկվան է, սակայն որքան էլ տարօրինակ էր, Չարենցը Լենինին այնտեղ չի հանդիպում: Նա Լենինին տեսնում է Երևանում, և դրանով կարծես թե սահմանվում է, որ ապագայի աշխարհում Մոսկվա-Երևան ուղղությունները կարևոր են, իսկ Լենինը լինելու է ամենուր:

Որքան էլ զարմանալի է, Չարենցի «Ես և Լենինը» ստեղծագործությունն իր ֆանտաստիկ աշխարհով, ազդեցություններով ու ներսում պատկերված մտացածին աշխարհով տարբերվում է Լենինին ձուլված Չարենցի մյուս պոեմներից: «Լենինն ու Ալին» պոեմում ներկայացված էր Թուրքիայի կողմից Լենինի մահվան բոթի շատ ծանր արձագանքը: Մինչդեռ «Ես և Լենինը» պոեմի հիմքում բացառապես Չարենցի ֆանտաստիկ աշխարհն է, չնայած նրանում առկա է նաև մի շարք գրքերի ու հեղինակների ազդեցությունը: Այնուամենայնիվ, այս ամենով հանդերձ, Չարենցի ստեղծագործական ներկայանակում Լենինին ձուլված ստեղծագործությունները արտահայտում են բանաստեղծի բացառիկ վերաբերմունքը Լենինին: Չարենցը մինչև կյանքի վերջ Լենինին ընդունում էր որպես իր համար ամենարբազան երևույթներից մեկը: Դա է վկայում բանաստեղծն ինքը՝ Աղասի Խանջյանին գրված նամակում. *«Երդվում եմ Լենինի անվամբ, որ ամենարբազան բանն է իմ իդեական աշխարհում (համոզված եմ, որ սրա դեմ չեն կարող առարկել անգամ իմ ամենատխերիս թշնամիները)–երդվում եմ ահա Լենինի սրբազան անվամբ, որ նա²⁰.....»:*

Եզրահանգում. Լենինի նախատիպի գեղարվեստականացման համատեքստում մեզ համար յուրահատուկ է Չարենցի հատկապես «Ես և Իլլիչը» ստեղծագործությունը, որը գեղարվեստական արժեքով, իրոք, զիջում է հանճարեղ բանաստեղծի շատ գործե-

²⁰ Չարենց Ե. –1996, էջ 279:

րին, սակայն թեմատիկ նորարարությամբ և ստեղծագործությունում առկա գաղափարական հետաքրքիր լուծումներով արժանի է ուրույն տեղ ունենալու Չարենցի՝ Լենինին վերաբերող ստեղծագործությունների ցանկում:

ОБ ОДНОМ СОВРЕМЕННОМ ПРОЧТЕНИИ ПОЭМЫ ЕГИШЕ ЧАРЕНЦА «Я И ИЛЬИЧ»

Заргарян А.

Ключевые слова: *Чаренц, Ленин, Уэллс, будущее, путешествие, Ереван, Москва, коммунизм, футуризм, фантастика.*

В творческом наследии, оставленном Егише Чаренцем, немало произведений о Ленине. Особенно уникально по своим тематическим и творческим особенностям произведение «Я и Ильич», в котором Чаренц вместе с Лениным начинает путешествие в мир будущего. Вдохновением для создания послужил фантастический роман Уэллса «Машина времени». В произведении «Я и Ильич» Чаренц также обращается к идеологиям французского астронома и философа Камиля Фламариона. Выстраивается уникальное произведение, в котором представлен мир будущего, Ереван и проходящие через все это мысли и удивления Чаренца. В то время Чаренц видел мир будущего с Лениным, который для него был прототипом и личностью, занимающей вышестоящее положение.

ONE CONTEMPORARY READING OF THE POEM "ME AND ILYICH" BY YEGHISHE CHARENTS

Zargaryan A.

Key words: *Charents, Lenin, Wells, future, travel, Yerevan, Moscow, communism, futurism, fantasy.*

In the creative heritage left by Yeghishe Charents, there are several works about Lenin. Especially the work "Me and Ilyich" is unique with its thematic and creative features, in which Charents starts a journey to the world of the future with Lenin. The inspiration for the creation was the science fiction novel "Time Machine" by Wells. In the work "Me and Ilyich" Charents also refers to the ideologies of the French astronomer and philosopher Camille Flammarion. A unique work is being created, in which the world of the future, Yerevan and the thoughts and surprises of Charents passing through it all are presented. In that period, Charents imagined the world of the future with Lenin, who was a prototype and an individual occupying a superior position for him.

Գ ր ա կ ա ն ո լ թ յ ո Ւ Ն

1. **Աբով Գ. –1923**, «Դանակը քլին», Մոսկվա, «Մոսկվա» հրատ, 54 էջ:
2. **Գավթյան Վ. –1974**, «Ազատության հանճարը», «Գրական թերթ», N 22:
3. **Հովհաննիսյան Ե. –1961**, «Հիշողություններ Եղիշե Չարենցի մասին», Հայպետհրատ, 391 էջ:
4. **Նավասարդյան Վ. –1962**, «Չարենց. Հուշեր և խորհրդածություններ», Թեհրանի հրատ., 163 էջ:
5. **Չարենց Ե. –1963**, «Երկեր», հ. 2, ՀՄՍՀ ԳԱ հրատ., 397 էջ:
6. **Չարենց Ե. –1964**, «Երկեր», հ. 3, ՀՄՍՀ ԳԱ հրատ., 373 էջ:
7. **Չարենց Ե. –1968**, «Երկեր», հ. 4, ՀՄՍՀ ԳԱ հրատ., 624 էջ:
8. **Չարենց Ե. –1967**, «Երկեր», հ. 6, ՀՄՍՀ ԳԱ հրատ, 602 էջ:
9. **Չարենց Ե. –1983**, «Անտիպ և չհավարված երկեր», ՀՄՍՀ ԳԱ հրատ., 711 էջ:
10. **Չարենց Ե. –1996**, «Նորահայտ էջեր», ԵՀ հրատ., 636 էջ:
11. **Չարենց Ե. –2022**, «Անձնական գրադարան», 477 էջ:
12. **URL** <https://www.rbth.com/history/328081-surprised-by-russia-wells>
13. **URL** <https://media.am/hy/critique/2018/02/26/9366/>

Ընդունվել է՝ 30. 08. 2022
Գրախոսվել է՝ 23. 09. 2022
Հանձնվել է տպ.՝ 28. 11. 2022

Տեղեկություններ հեղինակի մասին

Արա ԶԱՐԳԱՐՅԱՆ՝ հայցորդ, ՀՀ ԳԱԱ Մ. Աբեղյանի անվան գրականության
ինստիտուտի կրտսեր գիտաշխատող, էլ. հասցե՝ zargaryanara1994@gmail.com:

ԳՈՒՆԱՅԻՆ ՄԱԿԴԻՐՆԵՐԸ ԵՂ. ՉԱՐԵՆՑԻ ՉԱՓԱԾՈՑԻ ԼԵԶՎՈՒՄ

Գայանե Ավետիսյան

Շիրակի Մ.Նալբանդյանի անվան պետական համալսարան

Բանալի բառեր՝ գունային մակդիրներ, պատկերավորություն, փոխաբերություն, ոճական արժեք, խոսքային բազմազանություն, գեղարվեստական ժառանգություն, չափաձո, լեզվաոճական առանձնահատկություն, ուղենշային դեր:

Սույն հրապարակմամբ նպատակ ունենք ներկայացնելու գունային մակդիրների պատկերավորման առանձնահատկությունները հայ գրականության նորագույն շրջանի ուղենշային դերի՝ Եղ. Չարենցի չափաձոյի լեզվում՝ կարևորելով գրողի կողմից գործածված մակդիրների իմաստային խորությունն ու բազմազանությունը, նկարագրվող երևույթի բնորոշ կողմերն արտահայտելու հմտությունը: Քննարկվող թեման արդիական և հետաքրքիր է ինչպես մեծանուն բանաստեղծի՝ իբրև անհատ ստեղծագործողի, այնպես էլ արևելահայ գրական լեզվի գեղարվեստական տարբերակի ոճական հնարավորությունների քննարկման տեսակետից: Եղ. Չարենցի պոեզիայի պատկերավորման համակարգում մեծ տեղ զբաղեցնող գունային մակդիրների կիրառությունը խոսքի գեղարվեստականությունն ապահովող պատկերավորման հզոր միջոց է:

Նախաբան. Եղ. Չարենցը գեղարվեստական խոշոր անհատականություն է, որի բանաստեղծական խոսքը, ոճական հնարանքների բազմազանությունն ու լեզվական բարձր արվեստը խոր ազդեցություն են թողել հայ գրական լեզվի զարգացման ընթացքի վրա¹: Գ. Գլազովը Չարենցի մասին գրում է. «Չարենցն ուներ մի երջանկություն, որը մեզանից ամեն մեկը չէ, որ ունի: Որպես մեծագույն քաղաքացիական զգացողության բա-

¹ Մարության Ա. -1979, էջ 4:

նաստեղծ՝ նա գտավ ծիածանի ութերորդ գույնը: Մեզանից ամեն մեկը կցանկանար գտնել այդ գույնը: Բայց դա կապված է մեծագույն ռիսկի հետ, քանի որ այդ գույնը կարող է ապրել միայն հոգու և մտքի էներգիայի հաշվին, լրիվ ինքնանվիրման և անզիջողության հաշվին»²: Բազմազան գույներով ծիածանը սրբացվում է չարենցյան պոեզիայում, որի մեջ բանաստեղծը իր ազգի գույնն է փնտրում և հյուսում: Փոփոխվող գույների համադրության մեջ ծիածանը դառնում է մեծ գրողի հոգու, հույզերի ու խոհերի արտացոլանքը:

Այդ առումով՝ նրա վաղ շրջանի ստեղծագործություններում լայն կիրառություն ունի գույնով բնորոշվող մակդիրների գործածությունը: Հանդիպում ենք միննույն մակդիրի տարբեր գործածությունների, որոնք առաջ են բերում խոսքի բազմազանություն և գունեղություն՝ միաժամանակ ընդգծելով մեծանուն բանաստեղծի հոգեկան ապրումներն ու հույզերը: Օրինակ՝ *կապույտ աղջիկ, կապույտ երագ, կապույտ կարոտ, կապույտ մորմոք, կարմիր ժպիտ, կարմիր նժույզներ, կարմիր հմայք, ոսկի մշուշ, ոսկի մատներ, ոսկի հուր, ոսկի ամառ, դեղին թախիծ, դեղին մահ, դեղին բանակ, դեղին հրեշ* և այլն:

Ինչպե՞ս երգեմ, չգիտեմ *կարմիր հմայքը* քո այս,

Ինչպե՞ս ասեմ աշխարհին, որ աշխարհում արդեն կաս... ԵԶ -1984, էջ 270

Քամին,

Աշնան քամին

Թոցնում է *դեղին նժույզները* իրա:

ԵԶ -1984, էջ 312

Կարմիր նժույզները թռչում են սրընթաց,

Կարմիր նժույզները՝ բաշերը փրփուր:

ԵԶ -1984, էջ 272

Երբեմն Չարենցը գունային մակդիրների առանձին տեսակների կիրառությամբ ստեղծում է զանազան տրամադրություններ՝ նպաստելով նույն արմատով կազմված հունանիշ տարբեր մակդիրների կիրառությանը:

Ու թախիծը- խեղդող, ճնշող,-

Խառնված *ոսկեման հրին*:

ԵԶ -1984, էջ 312

Ոչ մի հրաշք էլ ետ չի բերի

Անցած արևի *հուրը ոսկեգույն*:

ԵԶ -1984, էջ 238

Չարենցի բանաստեղծական լեզվին բնորոշ են նաև փոխաբերական մակդիրների լայն կիրառությունը, որոնք լեզվին առանձին գեղեցկություն են հաղորդում: Այսպես՝ բնութագրվող առարկայի և փոխաբերական իմաստով գործածված մակդիրի միջև ինչ-որ համեմատելի կամ նման եզրեր է գտնում՝ գործածելով դրանք առարկայի նկարագրությունը ցայտուն ու տպավորիչ դարձնելու համար:

Մոմա, օ՛, Մոմա, օրհնվի թող այն

Վայրկյանը *կարմիր աշխարհում* այս չար:

ԵԶ -1984, էջ 65

Եվ գինին այստեղ ծորում է առատ,

Եվ հարբում ենք մենք *կարմիր խնջույքում*:

ԵԶ -1984, էջ 32

² Նույն տեղում, էջ 83:

Այս դեպքում *կարմիր* բնութագրումը դառնում է բանաստեղծի հոգին պարու-
րած ըմբոստ տրամադրությունների դրսևորման ինքնատիպ ձևը:

Խոսքի արտահայտչականության և պատկերավորության նպատակով Չարենցը
երբեմն գործածում է բնութագրվող առարկային իմաստով միանգամայն հակադիր
մակդիրներ, որոնցով նկարագրվող առարկաներն օժտում է բոլորովին նոր երանգնե-
րով ու նոր հասկություններով:

Եվ խավարի մեջ *կարմիր ու կարմիր*

Գնդակներ էին թռչում ու շաչում:

ԵՉ -1984, էջ 31

Պատկերավորման առանձնահատկություն է և այն, որ չարենցյան լեզվում գու-
նային մակդիրների կիրառության մի առանձնահատկություն կարելի է համարել նույն
ածականի և՛ մակդիրի, և՛ ձևի պարագայի շարահյուսական կիրառությամբ ներկայաց-
նելը: Այդպիսի գունային մակդիրների առատ գործածությամբ բանաստեղծը անհրա-
ժեշտ ռճական երանգավորում է ստեղծել «Մարի, էգ թռչուն», «Վերադարձ», «Ամբոխնե-
րը խելագարված» և այլ հայտնի չափածո ստեղծագործություններում:

Ե. Չարենցը մեր բանաստեղծական լեզվի մեջ մտցրեց այնպիսի նոր արտահայ-
տություններ ու մակդիրային նոր կապակցություններ, որոնք ինքնատիպություն են
հաղորդում ասելիքին: Այս պարագայում զանազան գունային մակդիրները Չարենցի
լեզվում ձեռք են բերում ռճական նուրբ արժեք, որոնք առանձնահատուկ խոսքային մի-
ջավայր են ստեղծում ընթերցողի համար:

Այսպես՝ «Ծիածան» բանաստեղծական շարքի երգերում գոյանում է նաիրյան
թախճի ու գույների նրբին մի շերտ, որտեղ սերը աստղային քրոջ կերպարով ճախրում
է երկրի կապույտում, և որը տիեզերական, եթերային տեսիլք է ու պատրանք.

Կապույտ աղջիկ, ազաթի ու կաթի պես հոգեթով,

Լուսամփոփի պես աղջիկ ...

ԵՉ -1984, էջ 253

Կապույտի մեջ, կապույտի մեջ- արևի ոսկին

-Քնի՛ր, քնի՛ր, *կապույտ աղջիկ*, չզարթնես ծեփին...

ԵՉ -1984, էջ 255

Շարքի բանաստեղծություններում աղջկա անկենդան պատկերը կամաց-կա-
մաց հառնում է աշխարհի գույների ու երանգների մեջ, դառնում կապույտ, ոսկի, մա-
նուշակագույն³:

Ամբողջ բանաստեղծություններ են կառուցված կապույտի վրա: Այսպես՝

Կապույտը-հոգու աղոթանքն է, քո՛ւյր,

Կապույտը-թախիժ,

Կապույտը- թափանցիկ, մաքուր

Ու հստակ ու ջինջ:

ԵՉ -1984, էջ 254

Չարենցի բանաստեղծական շարքում կապույտն ու ոսկին դառնում են հեռունե-
րում մնացած տրտում հուշ, որը պիտի դառնա *մի խամրած մշուշ մանուշակագույն*:

Շաղթահարելով հավերժական կապույտին ձգտող դեզերումները՝ Չարենցը հե-
ղափոխության օրըստօրե խորացող իրադարձությունների մթնոլորտում փոխում է իր
պատկերավորման գունային աշխարհը: Կապույտը զիջում է կարմրին, գունատ աղջկա

³ ԶԸ -1979, էջ 66:

փոխարեն՝ ամազոնուհին, վիատ տրամադրության փոխարեն ընդգծվում է գորեղը: Ծի-
ածանի սառը, տխուր ստվերներն աստիճանաբար տեղի են տալիս լույսի և ջերմության
առջև.

Նոր կարոտս հիմա *հուր է կարմիր ու հրդեհ,*

Նոր է հմայքը, որով դու ուզում ես կախարդել: ԵՉ -1962, էջ 155

Կարմիրը՝ որպես Չարենցի գունային համակարգում հեղափոխության ուժն
արտահայտող միջոց, դառնում հեղաշրջումների, կյանքի նորոգման խորհրդանիշ.

Կարմիր նժույզները թռչում են սրընթաց,

Կարմիր նժույզները բաշերը փրփուր: ԵՉ -1984, էջ 272

Եկել- երկաթե երգ եմ ասում.

Ես-*կարմիր պոետ*-Եղիշե Չարենց: ԵՉ -1984, էջ 78

Մեծանուն բանաստեղծն իր ժողովրդի հեղափոխական կամքն ու խանդավա-
ռությունն արտահայտում է *կարմիրով* գունավորված պատկերների միջոցով:

Եվ ո՞վ, ո՞վ կասի՝

Նետել է արդյոք մեկը աշխարհում

Այսօրվա *կարմիր*՝ *կարմիր ձեր երթին*

Ողջուն ավելի, առնական, արի,

Քան ողջունը քո, երկիր արնաքամ,

Կարմիր Նաիրի:

ԵՉ -1984, էջ 80

Ըստ Ավդալբեգյանի՝ Չարենցի ստեղծագործությանը առանձնահատուկ երանգ
է հաղորդում նրա բնապատկերային շեշտը, որի հենքում առավել ապշեցուցիչը հայ
բնաշխարհի գունային առկայությունն է, երանգապակը, որը նրան տարբերում է մեր
մյուս բանաստեղծներից: Չարենցի պոեզիան շռայլում է անխառն գունային շարքով.
կարմիրը՝ բորբ, կապույտը՝ ջինջ, դեղինը՝ ոսկի⁴:

Ու վառվում է *կապույտում արևի ոսկին*. . . ԵՉ -1962, էջ 60

Ու ճախրում է նա մի *ոսկի թիթեռ,*

Իսկ *երկինքը* կա-ու *կապույտ* է դեռ: ԵՉ -1962, էջ 61

Չարենցի պոեզիան ունի ընդգծված ազգային գունավորում, նույն կապույտի,
ոսկու, մանուշակագույնի՝ բնաշխարհի երանգներն ու դրանցով պայմանավորված միջ-
նադարյան մանրանկարչության գունային ավանդները.

-Իսաչը վանքի, երգը զանգի-*կապույտում* վերջին,

Զարթնի՛ր, զարթնի՛ր, *կապույտ աղջիկ*, ու նայի՛ր խաչին: ԵՉ -1962, էջ 54

Արևն իջավ- մոտ է ծիրին,

Փառք *հրաշեկ երկնավորին*. . .

ԵՉ -1962, էջ 117

Անփոփում. Եղ. Չարենցը անսահման մեծ նորություն բերեց հայ գրականու-
թյան պատմության մեջ: Նա ընդլայնեց հայ գեղարվեստական մտածողության տեսա-
դաշտը, պատկերային համակարգը, իր ապրած կյանքի ու իրեն վիճակված ժամանակի
մեջ տեսավ անցյալը, ներկան ու գալիքը: Գունային բազմազանության միջոցով հարս-

⁴ Ավդալբեգյան Մ. -1979, էջ 267:

տաքրեց գեղարվեստական խոսքը և համադրեց հայ ու համաշխարհային գեղարվեստական ժառանգությունը:

Չարենցի քանաստեղծական խոսքը՝ ոճական հնարանքների բազմազանությունը ու լեզվական բարձր արվեստով, խոր ազդեցություն է թողել ոչ միայն հետշարենցյան քանաստեղծների, այլև հայ նոր գրական լեզվի զարգացման ընթացքի վրա:

ХАРАКТЕРИСТИКА ЦВЕТНЫХ ЭПИТЕТОВ В ПОЭТИЧЕСКОМ ЯЗЫКЕ ЕГИШЕ ЧАРЕНЦА

Аветисян Г.

Ключевые слова: *цветовые эпитеты, иллюстрация, метафора, стилистическое значение, словесное разнообразие, художественное наследие, стих, языковая особенность, лицо ориентира.*

В данной публикации представляются особенности изображения цветных эпитетов в языке стихов Чаренца, знаковой фигуры новейшего периода армянской литературы, подчеркнув семантическую глубину и разнообразие используемых писателем эпитетов, способность выражать характерные стороны описываемого явления. В рамках исследования мы отнесли к таким употребляемым Чаренцем эпитетам, которые совпадают с данной речевой средой, текстуальными условиями.

Обсуждаемая тема актуальна и интересна как с точки зрения обсуждения стилистических возможностей великого поэта Егише Чаренца как индивидуального творца, так и художественной версии литературного языка. Использование цветных эпитетов как средства изображения художественной природы речи занимает большое место в системе иллюстрации Е. Чаренца.

CHARACTERISTICS OF COLOUR EPITHETS IN THE POETIC LANGUAGE OF YEGHISHE CHARENTS

Avetisyan G.

Key words: *colour epithets, illustration, metaphor, stylistic value, verbal diversity, artistic heritage, verse, linguistic feature, guiding face.*

In this publication, we aim at presenting the features of the depiction of colour epithets in the language of Yeghishe Charents verse, the landmark figure of the latest period of Armenian literature, emphasizing the semantic depth and diversity of the epithets used by the writer, the ability to express the characteristic aspects of the described phenomenon. Within the framework of the research, we referred to such epithets used by Yeghishe Charents, which match the given verbal environment, the original conditions.

The topic discussed is actual and interesting both from the point of view of discussing the stylistic possibilities of the great poet Yeghishe Charents as an individual creator and the artistic version of the literary language. The use of colour epithets as a means of depicting the artistic nature of speech occupies a large place in Y. Charents' system of illustration.

Գ ր ա կ ա ն ո թ յ ո ն

1. **Մարության Ա. -1979**, Ե. Չարենցի չափածոյի լեզուն և ոճը, Երևան, «Մովեստական գրող», 200 էջ:
2. **ԶԸ -1979**, Չարենցյան ընթերցումներ, 4, Երևան, ԵՀ հրատ., 83 էջ:
3. **Աղայան Ե. -1976**, Բանաստեղծական պատկերի դիալեկտիկան, Բանաստեղծը և արդիականու - թյունը, Երևան, 66 էջ:
4. **Ավդալբեգյան Մ. -1979**, Չարենցը և հայ հին գրականությունը, Չարենցյան ընթերցումներ, Երևան, ԵՀ հրատ., 267 էջ:
5. **Թամրայան Հր., Գասպարյան Դ., Քալանթարյան Ժ. -2000**, Հայ գրականություն, 10-րդ դասարանի դասագիրք, Երևան, «Լույս» հրատ., 198 էջ:
6. **Չարենց Ե. -1962**, Երկերի ժողովածու, հ. 4, Երևան, ԵՀ հրատ., 117 էջ:
7. **Չարենց Ե. -1984**, Երկերի ժողովածու, Երևան, ԵՀ հրատ., 752 էջ:

Ընդունվել է՝ 23.08.2022
Գրախոսվել է՝ 12.09.2022
Հանձնվել է տպ.՝ 28.11.2022

Տեղեկություններ հեղինակի մասին

Գայանե ԱՎԵՏԻՍՅԱՆ՝ մանկավարժական գիտությունների թեկնածու, Ծիրակի պետական համալսարանի գրադարան-ուսումնագիտական խորհրդատվությունների և ՏՏ կենտրոնի առաջատար մասնագետ, էլ. հասցե՝ gayaneavetisyan2@gmail.com

ՇԻՐԱԿԻ ՄԻ ՀՐԱՇԱՊԱՏՈՒՄ ՀԵՔԻԱԹԻ ՏԵՂԸ
«ԿԱԽԱՐԴԱԿԱՆ ՄԱՏԱՆԻ» ՏԻՊԻ ՀԵՔԻԱԹԱԽՄԲՈՒՄ¹

Մարինե Խենյան

ՀՀ ԳԱԱ հնագիտության և ազգագրության ինստիտուտ

Բանալի բառեր՝ *հրաշապատում հեքիաթ, սյուժե, տիպ, հեքիաթախումբ, կախարդական մատանի, տաբու, անդրաշխարհ, հերոս, օգնականներ:*

Սույն ուսումնասիրության համար հիմք ենք ընդունել Շիրակի տարածաշրջանի «Ջամիուլադի հեքիաթը»՝ համադրելով Հայաստանի տարբեր տարածաշրջանների և իտալական, ճապոնական, պարսկական, ռուսական, բուլղարական, վրացական, դրդական ու այլ ժողովուրդների միևնույն՝ «Կախարդական մատանին» ATU 560 տիպի հեքիաթների հետ: Այս հրաշապատում հեքիաթը, միջազգային դասակարգմամբ հեքիաթների հետ ունենալով հիմնական սյուժետային կաղապարը, աչքի է ընկնում առանձնահատուկ մոտիվային դրվագներով:

Նախաբան. ՀՀ ԳԱԱ հնագիտության և ազգագրության ինստիտուտի բանահյուսական արխիվում (ՀԱԻԲԱ) պահվում է բանահավաք Բարխուդար Ղազիյանի՝ 1973 թվականին Լենինականում գրառած «Ջամիուլադի հեքիաթը»², որը դասվում է Հանս-Յորգ Ութերի՝ հեքիաթների տիպերի միջազգային դասակարգմամբ «Կախարդական առարկաներ» հեքիաթախմբի «Կախարդական մատանի»՝ ATU 560 տիպին: Ըստ այդ տիպի՝ աղքատ տղան գնում է շուն, կատու և օձ՝ նրանց կյանքը հալածանքներից փրկելու նպատակով: Փոխարենը նա օձերի թագավորից ստանում է կախարդական մատանի

¹ Հետազոտությունը իրականացվել է ՀՀ Գիտության կոմիտեի ֆինանսական աջակցությամբ՝ 21T-6B027 ծածկագրով «Շիրակի հայոց բանահյուսական մշակույթը» գիտական թեմայի շրջանակներում:

² ՀԱԻԲԱ, FFX -1973: 6649,01-6681,00:

(կամ քար), որը կկատարեր նրա բոլոր ցանկությունները (մի գիշերվա մեջ պալատ կառուցել, ապակե կամուրջ զցել և այլն): Տղան ամուսնանում է արքայադստեր հետ, որը սիրեկանի օգնությամբ գողանում է մատանին, պալատն իր և սիրեկանի հետ տեղափոխում հեռավոր կղզի, և տղան նորից հայտնվում է աղքատության մեջ: Երախտագետ շունը և կատուն մկան օգնությամբ կարողանում են հետ վերցնել մատանին, վերադարձի ճանապարհին այն կորցնում են ծովում, ձուկը վերադարձնում է այն, և տղան վերականգնում է իր ունեցվածքն ու դիրքը³:

Կախարդական մատանին (քարը) անդրաշխարհից հեքիաթի հերոսին՝ տարբեր գործող անձանց կողմից փոխանցված հրաշագործ առարկա է՝ նախատեսված նրան օգնելու համար: Մատանին փոխանցող օղակն անպայման պետք է կապված լինի ստորերկրյա աշխարհի հետ: Հիմնականում այդ օղակը, ըստ ժողովրդական պատկերացումների, Տիեզերական ծառի ստորին մասում տեղակայված օձն է, ձուկը կամ ուղին, որոնք ակնհայտորեն հերոսի մեռած նախնու հոգին են մարմնավորում: Որոշ դեպքերում մատանին փոխանցող օղակ կարող է լինել լեռան վրա բնակվող պառավը կամ ջրի ակունքի մոտ հերոսին հանդիպած դերվիշը:

Հրաշապատում հեքիաթներում կախարդական մատանին անխափան օգտագործելու համար սովորաբար նրա վրա հմայական արգելք է դրվում (տաբու), որովհետև անդրաշխարհի ուժերի կողմից այն մշտապես հսկողության տակ է և հարմար առիթի դեպքում մի քանի անգամ հայտնվում է անդրաշխարհում: Այն հերոսին է վերադարձվում երախտագետ կենդանիների օգնությամբ միայն, որոնք տեղակայված են Տիեզերական ծառի միջնամասում (շուն, կատու). բացառություն է կազմում ծառի ստորին մասին մոտ կանգնած մուկը:

Խնդրո առարկան ավելի հստակ ներկայացնելու համար կատարել ենք գործողությունների և իրողությունների հետևյալ բաժանումը. ա) հերոսի կարգավիճակը և ժառանգության առկայությունը, բ) հավատարիմ կենդանիների ձեռքբերումը, գ) մատանու ձեռքբերումը, դ) մատանու գործառույթները, ե) տաբուի առկայությունը, խախտումը և մատանու հափշտակվելը, զ) մատանու գտնվելը, է) մատանու երկրորդ անգամ կորչելը, ը) մատանին հերոսին վերադարձնելը:

Գործողությունների մեր ընտրած հաջորդականությունը և իրողությունների առկայությունը քննության առնվող հեքիաթներում կարող է փոփոխության ենթարկվել: Ինչպես օրինակ՝ Շիրակի հեքիաթում գլխավոր հերոսը ձեռք է բերում ոչ թե կախարդական մատանի, այլ՝ ավաստ քար, իսկ հավատարիմ կենդանիները՝ շունը և կատուն, հերոսի ընտանիքի հին բարեկամներն են: Ամեն դեպքում, այս տիպը ներկայացնող ցանկացած հեքիաթ ունի սյուժետային կուռ կառուցվածք՝ չնայած Հանս Յորգ Ութերի սխեմայի հետ ունեցած նկատելի, ինչպես նաև՝ աննշան շեղումների:

1. Հերոսի կարգավիճակը և ժառանգության առկայությունը

Ինչպես Շիրակի տարածաշրջանի հետազոտվող հեքիաթում, այս տիպը ներկայացնող որոշ հեքիաթներում նույնպես, գլխավոր հերոսը մեծ մասամբ աղքատ ծնողների, միայնակ մոր զավակ է կամ միայնակ պառավի թոռ: Ուսումնասիրված հեքիաթ-

³ Uther -2011, pp. 328-329.

ներից բացառություն են կազմում հայկական «Քոսեն ու թագավորի տղեն»⁴, վրացական «Արքայազնը և կանանց թագուհին»⁵ հեքիաթները, որոնց գլխավոր հերոսը արքայազն է և բուլղարական «Անգին քարը»⁶ հեքիաթը, որի գլխավոր հերոսը ծեր հովիվ է:

Շիրակի հեքիաթում աղքատ հովվի ընտանիքը հազիվ է իր ապրուստը հոգում: Մի օր, երբ հայրը հիվանդանում է, գլխավոր հերոսն է տանում ոչխարներին արածեցնելու, և այդ ժամանակվանից էլ ծավալվում են հերոսի գործողությունները՝ ընդհուպ իր առջև դրված խնդրի իրագործումը:

Եթե շիրակյան հեքիաթում գլխավոր հերոսի գործողությունները ծավալվում են ինքնըստինքյան, ապա Իտալո Կավլինոյի մշակած իտալական «Կախարդական մատանին» հեքիաթում աղքատ երիտասարդը, տեսնելով, որ չի կարողանում իր և մոր համար ապրուստ վաստակել, որոշում է. «Գնամ, մայրիկ, աշխարհը պտտեմ, փնտրեմ իմ երջանկությունը: Կտեսնես, քեզ համար էլ ուրախ օրեր կգան»⁷: Ի տարբերություն իտալական հեքիաթի՝ քննության առնված հեքիաթների մեծ մասում աղքատ հերոսը մասնագիտություն ունի (փայտավաճառ, հովիվ, նախրապան, հորթարած, ծովագնաց, հողագործ և այլն) կամ ժառանգություն է ստացել և կարողանում է քիչ թե շատ իր ապրուստը հոգալ:

Ընդհանրապես հրաշապատում հեքիաթներում գլխավոր հերոսի համար վճռորոշ դեր է խաղում հորից ժառանգություն ստանալը (հրաշագործ առարկաներ, հող, փող, կենդանիներ և այլն): Դրդական «Ոսկե մատանին» հեքիաթում հերոսը հորից 9 ոսկի է ժառանգում⁸, իսկ ռուսական միևնույն «Կախարդական մատանին» վերնագրով հեքիաթներից մեկում՝ 200 ռուբլի⁹, մյուսում՝ 300 ռուբլի¹⁰: Հայ ժողովրդական «Քոսեն ու թագավորի տղեն» հեքիաթում թագավորն ավագ որդուն որպես ժառանգություն է թողնում ողջ թագավորությունը, իսկ կրտսերին՝ մի աքաղաղ և մի կատու¹¹: Այս առումով ուշագրավ է Լոռու «Չոփչին» հեքիաթը, որտեղ հերոսի հավատարիմ կենդանիները՝ շունը և կատուն, նրան են անցնում ժառանգաբար¹²: Թե ինչ հիմունքներով են գլխավոր հերոսի հավատարիմ կենդանիները՝ շունը, կատուն և աքաղաղն իր քառասուն հավերով, շիրակյան հեքիաթում ձեռք բերվում, հեքիաթի համատեքստից չի հասկացվում:

2. Հավատարիմ կենդանիների ձեռքբերումը

Շունը և կատուն վաղնջական ժամանակներից ընտելացվել են մարդու կողմից, և պատահական չէ, որ այս հեքիաթախմբում որպես հերոսի օգնականներ հիմնականում նրանք են հանդես գալիս: Ինչպես նշվեց վերևում, հեքիաթախմբի շիրակյան տար-

⁴ ՀԺՀ II -1959, էջ 363:

⁵ ГНС II -1988. с. 72.

⁶ СЕН IV -1988

⁷ Italian Folktales 1980. p. 129.

⁸ Կիրգիզական հեքիաթներ -1978, էջ 166:

⁹ Афанасьев А. -1985. с. 36.

¹⁰ Նույն տեղում, էջ 33:

¹¹ ՀԺՀ II -1959, էջ 363:

¹² Գևորգյան Թ. -1999, հ. 20, էջեր 47-49:

բերակում շունը և կատուն ի սկզբանե ապրում են գլխավոր հերոսի հետ միննույն հարկի տակ:

Իտալական հեքիաթում հերոսին շուն ու կատու է նվիրում լեռան ստորոտին ապրող պառավը: Լեռը հանդես է գալիս որպես Տիեզերական ծառի ձևափոխություն¹³: Անդրաշխարհի պառավի կապն այսրաշխարհի հետ իրականացվում է լեռան միջոցով. ստեղծվում են համապատասխան պայմաններ, որպեսզի հերոսի մեռած նախնու հոգին, ի դեմս անդրաշխարհի պառավի, օգնի նրան:

Այս տիպին դասվող հեքիաթների մեծ մասում, թե՛ հայկական, թե՛ այլ ժողովուրդների, գլխավոր հերոսն իր վաստակած կամ ժառանգություն ստացած վերջին գրոշները տալիս է և հալածանքներից փրկում շանը, կատվին և օձին, որոնք տարբեր ձևերով երախտահատույց են լինում իրենց փրկարարին: Հայ ժողովրդական չորս հեքիաթում՝ «Չոփչին»¹⁴, «Լուվոթունը մըննա ինգլի չի»¹⁵, «Մատնիկի ակն»¹⁶, «Կատվու թալիֆ»¹⁷, ճապոնական «Շունը, կատուն և մատանին»¹⁸, Պամիրի ժողովուրդների «Կախարդական մատանին»¹⁹ հեքիաթները հավատարիմ կենդանիներ ձեռք բերելու տեսանկյունից նույնությամբ համապատասխանում են ATU 560 տիպին: Կան հեքիաթներ, որոնցում խախտվում է այս եռամիասնությունը՝ կենդանիներից օձը փոխարինելով ոգնիով (Իջևանի տարածաշրջանի «Կախարդական մատանին»²⁰ հեքիաթում), մողեսով՝ բուլղարական «Անգին քարը»²¹ և մկով՝ վրացական «Արքայազնը և կանանց թագուհին»²² հեքիաթներում: Ոգնին, մողեսը և մուկը նույնպես, ինչպես օձը, տեղակայված են Տիեզերական ծառի ստորին մասում, այսինքն՝ նրանք էլ են ստորերկրյա աշխարհից հեքիաթի գլխավոր հերոսին փոխանցում հրաշագործ առարկան:

Հավատարիմ կենդանիների ձեռքբերման եռամիասնությունը կենդանիների քանակի և տեսակի առումով խախտվում է, ինչպես նշեցինք վերևում, հեքիաթախմբի շիրակյան տարբերակում, «Օցի հուլը» հեքիաթում²³, ինչպես նաև իտալական, դրդական, ռուսական վերոնշյալ հեքիաթներում:

3. Մատանու ձեռքբերումը

Քննության առնվող տիպի հեքիաթների սյուժեի առանցքային գործողությունը գլխավոր հերոսի կողմից մատանու կամ հրաշագործ քարի ձեռքբերումն է: Իշխանության խորհրդանիշ մատանին²⁴, ըստ հեքիաթների տիպերի միջազգային դասակարգ-

¹³ Топоров В. -1987а. с. 311.

¹⁴ Կարս -2013, № 20, էջեր 141-145:

¹⁵ ՀԺՀ VII -1979, էջեր 93-98:

¹⁶ Սրվանձոյանց Գ. -1978, էջեր 449-451:

¹⁷ Գրիգորյան Ռ. -1983, էջեր 82-84:

¹⁸ ЯHC -1991. с.с. 166-168.

¹⁹ СНП -1976, с.с. 283-293.

²⁰ Խենյան Է. -2008, էջեր 78-79:

²¹ СHE IV -1988.

²² ГHC II -1988. с. 72.

²³ ՀԺՀ VIII, էջեր 348-354:

²⁴ Տե՛ս Փրеззер -1986. с.171:

ման²⁵, հալածանքներից և այրվելուց փրկված երախտագետ օձի խորհրդով նրա հայրը՝ Օձերի թագավորը, տալիս է հերոսին: Երախտագետ օձի մոտիվը (հայկական «Չոփչին», «Կատվու թալիֆ»), «Լուվոթունը մըննա ինգյիլ չի», «Մատնիկի ակն», Պամիրի ժողովուրդների «Կախարդական մատանին», ճապոնական «Շունը կատուն և մատանին», ռուսական «Կախարդական մատանին») նույնանում է հայկական «Կախարդական մատանին» հեքիաթի ոգնու, բուլղարական «Անգին քարը» հեքիաթի մոդեպի մոտիվների հետ: Այս մոտիվն ունեցող հեքիաթներում ուշագրավ են արքայազն-օձ-արքայազն (հայկական), արքայադուստր-օձ-արքայադուստր (ռուսական), վիշապ-օձ-շնաձուկ (ճապոնական) կերպարանափոխությունները:

Ինպես արդեն նշել ենք, ըստ հեքիաթների տիպերի միջազգային դասակարգման, հրաշագործ մատանին կամ քարը գլխավոր հերոսն օձերի թագավորից ստանում է ի նշան երախտագիտության՝ որդուն հալածանքներից փրկելու համար: Այլ է պատկերը քննության ենթարկվող շիրակյան տարբերակում և Սասունի «Նախրճու դղեն» հեքիաթում²⁶: Երկրորդ հեքիաթում հերոսի ճանապարհին հանդիպում են սև և կարմիր երկու կովող վիշապ: Նա սպանում է սև վիշապին և փրկում կարմիր վիշապին: Վիշապների թագավորը հերոսին իր բերանի ակն է տալիս: Շիրակյան տարբերակում՝ գլխավոր հերոսի ճանապարհին հանդիպում են կարմիր և սև միմյանց գուրգուրող օձեր. «Ջամփուլադի սիրտը չտարավ, թե. «Էս սև, մունդառ օձն ինչ է, որ փաթաթվի էս գեղեցիկ օձին»: Խփեց: Պետք է դիպներ, ուրեմն, սև օձին, դիպավ կարմիր՝ սիրուն օձին: Օձերը թե՛ փախան, թե՛ սասուկեցին, չիմացվեց, հետո կիմացվի, բայց Ջամփուլադի սիրտը տրորվեց»²⁷: Այնուհետև հեքիաթի գործողությունները ծավալվում են այնպես, որ օձերի թագավորը հերոսի ազնվության և ճշմարտախոսության համար (հերոսը նույնությամբ ներկայացնում է թագուհու՝ կարմիր օձի դավաճանությունը) նրան պարգևատրում է իր լեզվի տակի ալմաստ քարով: Երկու հեքիաթում էլ խորհրդանշական են վիշապների և օձերի կարմիր ու սև գույները: Սևին՝ չարին ոչնչացնելու համար գլխավոր հերոսը պարգևատրվում է կախարդական քարով:

Մի շարք հեքիաթներում (թե՛ հայկական, թե՛ այլ ժողովուրդների) կախարդական մատանու կամ քարի ձեռքբերումը շեղվում է Հանս-Յորգ Ութերի սխեմայից: Այսպես օրինակ՝ հայկական «Օցի հուլը» հեքիաթում²⁸ հերոսի երախտագետ կենդանիները ձկան փորոտիքից են գտնում կախարդական քարը և հանձնում իրենց տիրոջը: Իսկ Լոռու «Չոփչին» հեքիաթում²⁹ նվիրատուն անտառում ընկած կոճղն է, որի տակ հերոսը մի թանկագին քար է գտնում: Ուշագրավ է, որ այս երկու հեքիաթում էլ կախարդական քարը «հուլ» է անվանվում, այսինքն՝ թանկագին քար, որ իբր օձն է խաղացնում: Այստեղից էլ պարզ երևում է, որ, ճիշտ է, օձը չի անմիջական նվիրատուն, բայց անդրաշխարհից օձի միջոցով է քարը հայտնվել այսրաշխարհում:

²⁵ Տե՛ս Uther -2011. p. 328

²⁶ Խաչատրյան Ռ. -1999, էջեր 89-90 :

²⁷ ՀԱԻԲԱ, FFX-1973: 6649:

²⁸ ՀԺՀ VIII, էջեր 348-354:

²⁹ Գևորգյան Ռ. -1999, հ. 20, էջեր 47-49:

Իտալական՝ Իտալո Կավլինոյի մշակած հեքիաթում լեռան ստորոտում ապրող պառավն է գլխավոր հերոսին, ի նշան երախտագիտության, կախարդական մատանի նվիրում, որը տեսքով շատ հասարակ էր երևում: Իսկ պարսկական «Մոդոմոնի մատանին» հեքիաթում³⁰ նվիրատուն գետի ակունքի մոտ ապրող դերվիշն է, որը հրաշագործ մատանին հերոսին է տալիս անշահախնդիր, ինչը վկայում է այն մասին, որ դերվիշը հերոսի մեռած նախնու մարմնավորված հոգին է: Թե՛ իտալական հեքիաթում, թե՛ պարսկականում կախարդական մատանին փոխանցող օղակը անդրաշխարհն այս աշխարհի հետ միացնող լեռն է և գետի ակունքը:

4. Մատանու (քարի) գործառույթները

Մատանու (քարի) գործառույթը այս տիպի բոլոր հեքիաթներում նույնն է՝ կատարել այն կրողի ցանկությունները, տարբերությունը այն ձեռք բերելու, կրելու և օգտագործելու կերպի մեջ է: Ուսումնասիրված հեքիաթներում հրաշագործ մատանին լինում է ոսկյա, թանկարժեք ակով՝ պտտվող կամ անշարժ, երբեմն՝ առանց ակի: Որոշ հեքիաթներում այն առաջին հայացքից հասարակ է թվում կամ ժանգոտված է: Հիմնականում մատանին պահվում է լեզվի տակ կամ կրում են մատին, երբեմն պահվում են բաժակի, սափորի կամ արկղիկի մեջ, սնդուկում, պահարանում կամ ձեղնահարկում:

Հրաշագործ մատանին օգտագործելու և հերոսի ցանկությունները կատարելու եղանակները տարբեր են.

- Հերոսը մատից հանում է մատանին, դնում ափի մեջ և ասում ցանկությունը, մատանին ասում է՝ փակի՛ր այքերդ, ինքը հագնվում հերոսի մատին և կատարում ցանկությունը (դրդզական «Ոսկե մատանին»):
- Մատանին ձեռքի մի ափից մյուսը զցելու դեպքում հերոսի առաջ հայտնվում են երեք հարյուր կտրիճ ու հարյուր յոթանասուն դյուցազուն և հարցնում նրան՝ «Ի՞նչ կիրամայես անել»: Նրանք մի գիշերվա մեջ կատարում են հերոսի ցանկությունները (ռուսական «Կախարդական մատանին», № 190):
- Մատանին ձեռքի մի ափից մյուսը զցելու դեպքում հերոսի առաջ հայտնվում են տասներկու կտրիճներ և կատարում տիրոջ ցանկությունը (ռուսական «Կախարդական մատանին», № 191):
- Քարը երեք անգամ խփելով գետնին՝ ասում են ցանկությունը, և քարը անմիջապես կատարում է (բուլղարական «Անգին քարը»):
- Մատանին կատարում էր տիրոջ բոլոր ցանկությունները (ճապոնական «Շունը, կատուն և մատանին»):
- Մատանին մատին դնելուց և այն շփելուց հայտնվում է 4 ստրուկ և կատարում տիրոջ ցանկությունները (պարսկական «Մոդոմոնի մատանին»):
- Մատանին պահվում է սնդուկում, ցանկությունը կատարելու համար, այն պետք է հանել սնդուկից, տանել աղբյուրի մոտ և ասել. «Օ՛, աշխարհի տիրակալ, ես ուզում եմ...» (Պամիրի ժողովուրդների «Կախարդական մատանին»):
- Մատին հագցրած մատանին պտտելու դեպքում այն կատարում է ցանկացած ցանկություն (իտալական «Կախարդական մատանին»):

³⁰ ПС -1958, с.с. 119-122.

- Մատանին պահում են լեզվի տակ: Որևէ բան ցանկանալիս լեզվի տակից հանում են, լիզում, անմիջապես դուրս են գալիս երկու արաբ և մի ակնթարթում կատարում տիրոջ ցանկությունը (Կարսի «Չոփչին»):
- Մատանին լեզվի տակից հանում են և ասում ցանկությունը. մատանին այն կատարում է (Արցախի «Լուսնությունը մրննա ինգյիլ չի», «Իջևանի «Կախարդական մատանին»):
- Հերոսը քարը դնում է թաշկինակի վրա և ասում. «Բաց սև քարս»: Դուրս են թռչում երկու արաբ և կատարում քարի տիրոջ ցանկությունները («Բաց սև քարս»³¹):
- Մատանու ակը պտտելիս երկու արաբ են դուրս գալիս և կատարում տիրոջ ցանկությունը («Մատնիկի ակն»):
- Թանկագին քարը հերոսի ձեռքին լեզու է առնում և ասում, որ կկատարի նրա ցանկությունը (Լոռու «Օցի հուլը»):
- Մատանու ակը աջ պտտելիս հայտնվում են քառասուն արաբ և կատարում ցանկությունը, ձախ պտտելիս համբարձվում են («Կատվու թալիֆ»):
- Ակը բերանը զցելու դեպքում հերոսի ցանկությունը կատարվում է («Նախըճու դղեն»):
- Ոչ ոք հերոսին չի ասում՝ ինչպես օգտագործի քարը: Նա ինքն է ասում «Հուլ ջան, հուլ, խնդրում եմ...», և քարը կատարում է նրա ցանկացածը (Լոռու «Չոփչին»):
- Ժանգոտած մատանին մատը դնելիս երկու արաբ են դուրս գալիս և կատարում հերոսի ցանկությունը (Այրարատի «Քոսեն ու թագավորի տղեն»):

Ինչպես տեսնում ենք թվարկված օրինակներից, հրաշագործ մատանին (քարը) կա՛մ ինքն է անխոս կամ լեզու առնելով կատարում տիրոջ ցանկությունները, կա՛մ նրանից դուրս են թռչում անդրաշխարհի հոգիներ և խոնարհաբար կատարում տիրոջ հրամանները:

Շիրակյան հեքիաթում գլխավոր հերոսը. «Հանում է եղ... իրա լեզվի անթիքեն, բուր մատով սեղմում է, նրա դեմ կայնում են, ուրեմն, քառասուն հատ քաջ»³²: Ալմաստ քարից դուրս եկած քառասուն քաջերը կատարում են տիրոջ ցանկությունը:

5. Տարուի առկայությունը, խախտումը և մատանու հափշտակելը

Անդրաշխարհի ուժերը այս տիպի հեքիաթների մեծ մասում հրաշագործ առարկայի օգտագործման վրա հմայական արգելք (տաբու) են դնում, որը խախտելու պարագայում հերոսը կկորցնի այն:

Կավիհնոյի հեքիաթում պառավը երիտասարդի մատին է հագցնում առաջին հայացքից հասարակ թվացող մատանին և ասում. «Այս մատանին գին չունի, եթե ինչ-որ բան ցանկանաս, պտտի՛ր այն մատիդ շուրջը, և այն կկատարվի, միայն տես, չկորցնես այն, թե չէ կկործանվես»³³:

Եթե իտալական, դրոզական, ռուսական և վրացական վերոնշյալ հեքիաթներում հերոսի դավաճան կինն է գողանում մատանին և անձամբ օգտագործում նրա զո-

³¹ ԷԱԺԲ -1901, էջեր 395-400:

³² ՀԱԻԲԱ, FFX -1973: 6663:

³³ Italian Folktales -1980. p. 129.

րությունը, որոշ հեքիաթներում կինը հոր (թագավոր, վեզիր) կամ սիրեկանի թելադրանքով է գողանում և հանձնում նրանց: Քիչ չեն հեքիաթները, որոնցում մատանին խաբեությամբ են գողանում: Ինչպես օրինակ՝ բուլղարական հեքիաթում ծեր հովվի հարևանն է գողանում, ճապոնականում՝ հարուստ ձիավաճառը, պարսկականում՝ փաղիշահը, Պամիրի ժողովուրդների հեքիաթում՝ թագավորը՝ պառավի միջոցով, հայկական «Մատնիկի ակն», «Կատվու թալիֆ» և «Քոսեն ու թագավորի տղեն» հեքիաթներում՝ ակնավաճառ հրեան, Իջևանի «Կախարդական մատանին» հեքիաթում՝ մի ոմն նախանձ աղջիկ:

Մատանին գողանալու արդյունքում հերոսի պալատը խաբեբայի հետ տեղափոխվում էր յոթ սարից այն կողմ, յոթ ծովերի, Սև ծովի, Կարմիր ծովի, Մևանա ծովի կղզին կամ Դանուբից կամ ինչ-որ գետից այն կողմ: Հերոսը հայտնվում էր նախկին կարգավիճակում: Որոշ հեքիաթներում թագավորը նրան զցում էր հորը կամ բանտարկում քարե սյան մեջ, իսկ Պամիրի ժողովուրդների «Կախարդական մատանին հեքիաթում հերոսը նույնիսկ մահանում է: Այսինքն՝ և՛ հերոսի պալատը՝ մատանու հետ, և՛ հերոսը՝ առանց մատանի, հայտնվում են հանդերձյալ աշխարհում կամ դրա մուտքի մոտ:

Շիրակյան տարբերակում թագավորի աղջկա նախկին սիրեկանն է մի իննսունամյա պառավի միջոցով խաբեությամբ ձեռք բերում արևաստ քարը, հրամայում է կտրիճներին՝ Ջամփուլաղի պալատը իր կնոջ հետ և ամեն ինչով տեղափոխել անմարդաբնակ կղզի, իսկ նրան զցել հորը, որ սովից մեռնի: Տաբուի առկայության մասին այս հեքիաթում չի հիշատակվում:

6. Մատանու գտնվելը

Այս տիպի հեքիաթների մեծ մասում երախտագետ կատուն ու շունն են հիմնականում ուղևորվում մատանու որոնումներին: Չնայած շան ու կատվի միջև եղած մշտական հակամարտությանը՝ երախտագիտության զգացումը նրանց դրդում է համագործակցության: Ճանապարհը դեպի անդրաշխարհ ծովով է, լճով կամ գետով: Շունը լողալ գիտի, իսկ կատուն՝ ոչ: Կատուն այդ ճանապարհին անցնում է շան մեջքին նստած: Նրանք, տեղակայված լինելով Տիեզերական ծառի միջնամասում, չէին կարող ձեռք գցել անդրաշխարհ վերադարձած մատանին: Այս պարագայում օգնության է հասնում Տիեզերական ծառի ստորին մասում գտնվող մուկը: Մուկը կատարում է կատվի պատվերը՝ փոխարենը իր, իր ձագերի կամ իր թագավորության ազատությունը ստանալով: Իհարկե կատուն է մկանը հուշում՝ ինչպես ձեռք բերի մատանին (քարը):

Դարձյալ անդրադառնանք շիրակյան հեքիաթին. հերոսի հավատարիմ կենդանիները՝ շունը և կատուն, աքաղաղի միջոցով իմանում են իրենց տիրոջ տեղը, իմանում են արևաստ քարի հափշտակման մասին և ուղևորվում այն փնտրելու: Ինչպես հեքիաթախմբի գրեթե բոլոր հեքիաթներում, այս հեքիաթում նույնպես շունը և կատուն արևաստ քարը հետ են ստանում մկան միջոցով:

7. Մատանու երկրորդ անգամ կորչելը

Այս տիպի ուսումնասիրված գրեթե բոլոր հեքիաթներում հրաշագործ մատանին կորչում է երկրորդ անգամ: Դա նշանակում է, որ անդրաշխարհից այսրաշխարհ փոխանցված հրաշագործ առարկան ստորերկրյա ուժերի կողմից մշտական հսկողու-

թյան տակ է, և հանգամանքներն այնպես են դասավորվում, որ մատանին վերադարձվի անդրաշխարհ: Հեքիաթի գլխավոր հերոսի մեռած նախնու հոգին այս անգամ ձկան կերպարանքով է հասնում օգնության: Հետոյարձի ճանապարհին շան կամ կատվի բերանից մատանին ընկնում է ծովի, լճի կամ գետի մեջ: Եթե ձուկն այն կուլ չտա, ապա այն կհայտնվի անդրաշխարհում:

Իտալական հեքիաթում շունը նախանձում է կատվին, չէ՞ որ կատուն էր կարողացել հետ վերցնել մատանին: Շունը պահանջում է, որ կատուն իրեն տա մատանին, թե չէ նրան չի անցկացնի գետը: Շան ու կատվի վեճի ժամանակ մատանին ընկնում է գետը: Մի ձուկ այն կուլ է տալիս: Շունը բռնում է ձկանը, և ձկան հետ վերադառնում են տիրոջ մոտ:

Արդական հեքիաթում հետոյարձի ճանապարհին մատանին կատվի բերանից է ընկնում է լճի մեջ, որովհետև սև ագռավը կտցահարում է կատվին: Լճափին կատուն որսում է ձկների թագուհուն և որպես փրկագին պահանջում գտնել կորցրած մատանին: Ձկների թագուհու հրամանով մի իմաստուն ձուկ ասում է, որ մատանին կուլ է տվել խարակաձուկը: Խարակաձկանը հանձնում են կատվին, և նրա փորից հանում են մատանին: Ռուսական հեքիաթում մատանին կուլ է տալիս թառափը, վրացականում՝ լոքոն, իսկ հայկական հեքիաթներում պարզապես մի ձուկ է կուլ տալիս մատանին, և շունն ու կատուն ձկան փորից են հանում հրաշագործ առարկան:

Հեքիաթախմբի շիրակյան տարբերակում շունը և կատուն մտապահում են, թե հատկապես որ ձուկն է կուլ տվել ավմաստ քարը: Ձկնորսների մոտ նստած՝ սպասում են և թոցնում են հենց ավմաստը կուլ տվող ձկանը:

8. Մատանու վերադարձնելը հերոսին

Շիրակյան հեքիաթում, ինչպես նաև ATU 560 տիպի բոլոր հեքիաթներում, հափշտակված մատանին վերադարձվում է տիրոջը: Հեքիաթի գլխավոր հերոսը վերականգնում է իր ունեցվածքը և հիմնականում պատժում չարագործներին: Եթե Շիրակի, Կավվինոյի «Կախարդական մատանին», ղրղզական «Ոսկե մատանին» և սլավոնական առաջին «Կախարդական մատանին» հեքիաթներում հերոսը պատժում է խորամանկ ու դավաճան կնոջը, սլավոնական երկրորդ «Կախարդական մատանին» և Իջևանի տարածաշրջանի «Կախարդական մատանին» հեքիաթներում հերոսը ներում է չարագործներին, և շարունակում են ապրել երջանիկ:

Եզրահանգում. Ուսումնասիրությունը ցույց է տալիս, որ ATU 560 տիպի «Կախարդական մատանին» հեքիաթախմբին պատկանող Շիրակի տարածաշրջանի «Ձամփուլադի հեքիաթը» հայ ժողովրդական, ինչպես նաև աշխարհի տարբեր ժողովուրդների նմանատիպ հրաշապատում հեքիաթների հետ ունենալով ընդհանրություններ՝ առանձնանում է մոտիվային որոշ դրվագներով և սյուժետային կառուցվածքով, որոնք պայմանավորված են բանահյուսական նյութի փոխներթափանցումներով և տարածաշրջանի առանձնահատկություններով: Հեքիաթի գլխավոր հերոսի գործողություններն ընթանում են այնկողմնային աշխարհի չար և բարի ուժերի ուղեկցությամբ՝ նպաստելով կամ խոչընդոտելով դրանց: Հեքիաթի սյուժեում առանցքային նշանակու-

թյուն ունի հրաշագործ առարկայի ձեռքբերումը, հափշտակումը չար ուժերի կողմից, հավատարիմ կենդանիների միջոցով այն գտնելը և հերոսին վերադարձնելը:

МЕСТО ОДНОЙ ВОЛШЕБНОЙ СКАЗКИ ШИРАКА В ГРУППЕ СКАЗОК ТИПА «ВОЛШЕБНОЕ КОЛЬЦО»

Хемчян М. Г.

Ключевые слова: *волшебная сказка, сюжет, тип, группа сказок, волшебное кольцо, табу, потусторонний мир, герой, помощники.*

Предмет исследования – волшебная сказка региона Ширак «Сказка Джампулада», которая относится к группе сказок типа ATU 560 «Волшебное кольцо» по международной классификации Ганса-Йорга Утера. Действия и реалии сказки (статус героя и наличие наследства, приобретение преданных животных и волшебного предмета, наличие табу, похищение волшебного предмета со стороны злых сил и его возвращение герою) исследованы в контексте армянских народных, а также итальянских, японских, персидских, русских, болгарских, грузинских, киргизских однотипных сказок.

Скрупулезное исследование сказок показывает, что ширакский вариант, имеющий определенные совпадения с другими сказками группы, выделяется своеобразной структурой сюжета и некоторыми мотивами, обусловленными взаимными проникновениями фольклорного материала и характерные региону диалектными особенностями.

THE PLACE OF A SHIRAK MAGIC FOLKTALE IN THE “MAGIC RING” FOLKTALE TYPE GROUP

Khemchyan M. H.

Key words: *fairy tale, plot, type, folktale type groups, magic ring, taboo, underworld, character, assistants.*

The subject of the study is the Shirak region magic folktale "The Tale of Jampulad", which belongs to the ATU 560 "The Magic Ring" folktale type group according to the international classification of Hans-Jörg Uther. The actions and realities of the folktale (the status of the character and the presence of an inheritance, the acquisition of faithful animals and a magical item, the presence of taboos, the theft of a magical item by evil forces and its return to the character) are studied in the context of Armenian, as well as Italian, Japanese, Persian, Russian, Bulgarian, Georgian, Kyrgyz folktales of the same type.

A scrupulous study of the tales shows that the Shirak version, which has certain similarities with other tales of the group, is distinguished by a peculiar plot structure and some motifs due to the mutual penetration of folklore material and dialectal features typical for the region.

Գրականություն

1. **Գրիգորյան Ռ. -1983**, Հայ ազգագրություն և բանահյուսություն, հ. 14, Գեղարքունիք, Երևան, ՀՄՍՀ ԳԱ հրատ.:
2. **Գևորգյան Ռ. -1999**, Հայ ազգագրություն և բանահյուսություն, հ. 20, Լոռի, Երևան, ՀՀ ԳԱԱ «Գիտություն» հրատ.:
3. **ԷԱԺԲ -1901**, Էմինյան ազգագրական ժողովածու, հատոր Բ, Մոսկվա, Վարդապետյան:
4. **Խաչատրյան Ռ. -1999**, Հայ ազգագրություն և բանահյուսություն, հ. 19, Թալին, Երևան, ՀՀ ԳԱԱ «Գիտություն» հրատ.:
5. **Խեմչյան Է. -2008**, Հայ ազգագրություն և բանահյուսություն, հ. 25, Իջևան (Զորովոր), Երևան, ՀՀ ԳԱԱ «Գիտություն» հրատ.:
6. **Կարս -2013**, Կարս. հայոց բանահյուսական մշակույթը, Հարությունյան Ս. Բ., Վարդանյան Ս. Ա., Խեմչյան Է. Հ., Ղեկեղյան Լ. Խ., Խեմչյան Ս. Հ. (կազմողներ), Երևան, ՀՀ ԳԱԱ «Գիտություն» հրատ.:
7. **Կիրգիզական հեքիաթներ -1978**, Կիրգիզական հեքիաթներ, «Սովետական գրող» հրատ., Երևան:
8. **ՀԱԻԲԱ, FFX -1973**, ՀՀ ԳԱԱ հնագիտության և ազգագրության ինստիտուտի բանահյուսական արխիվ:
9. **ՀԺՀ II -1959**, Հայ ժողովրդական հեքիաթներ, հ. II, Այրարատ, կազմող՝ Նազինյան Ա., Երևան, ՀՄՍՌ ԳԱ հրատ.:
10. **ՀԺՀ VII, -1979**, Հայ ժողովրդական հեքիաթներ, հ. VII, Արցախ-Սյունիք, կազմողներ՝ Նազինյան Ա., Առաքելյան Ս., Երևան, ՀՄՍՀ ԳԱ հրատ.:
11. **ՀԺՀ VIII -1977**, Հայ ժողովրդական հեքիաթներ, հ. VIII, Գուգարք (Լոռի), կազմողներ՝ Նազինյան Ա., Գրիգորյան Ռ., Երևան, ՀՄՍՀ ԳԱ հրատ.
12. **Սրվանձալյան Գ. -1978**, Երկեր, հ. 1, Երևան, ՀՄՍՀ ԳԱ հրատ.:
13. **Афанасьев А. -1985**. Народные русские сказки в 3 томах. Том 2, Издание подготовили Л. Г. Бараг, Н. В. Новиков, Москва, изд-во «Наука».
14. **ГНС II -1988**. Грузинские народные сказки. Сост., вступит, статья, примеч. и типолог. анализ сюжетов Т. Д. Курдованидзе. Кн. 2. Москва. Изд. «Наука».
15. **ПС -1958**. Персидские сказки, Составитель Османов В. Изд. восточной литературы, Москва.
16. **СНЕ IV -198**. Сказки народов Европы, т. IV, Сказки, сост. А. Л. Налепин, Москва, изд-во «Детская литература».
17. **СНП -1976**. Сказки народов Памира, Сост. и коммент. А. Л. Грюнберга и И. М. Стеблин-Каменского. Предисловие А. Н. Болдырева. М. изд. «Наука».
18. **Топоров В. -1987а**. Гора // Мифы народов мира, т. I, Москва, Изд-во «Советская энциклопедия».
19. **Фрезер -1986**, Золотая ветвь. Исследование магии и религии, Москва, Изд-во политической литературы.
20. **ЯНС -1991**. Японские народные сказки, Составитель: В. Н. Маркова, изд. «Наука», Москва.
21. **Italian Folktales -1980**. Selected and Retold by Italo Calvino. Orlando, Florida.
22. **Uther H.-J. -2011**. The types of international folktales: A Classification and Bibliography Based on the System of Antti Aarne and Stith Thompson, part I, Animal Tales, Tales of Magic, Religious Tales. and Realistic Tales, with an Introduction, Helsinki, Academia Scientiarum Fennica.

Ընդունվել է՝ 30. 08. 2022
Գրախոսվել է՝ 19. 09. 2022
Հանձնվել է տպ.՝ 28. 11. 2022

Տեղեկություններ հեղինակի մասին

Մարինե Խեմչյան՝ բանասիրական գիտությունների թեկնածու,
ՀՀ ԳԱԱ հնագիտության և ազգագրության ինստիտուտի ավագ գիտաշխատող,
Էլ. հասցե՝ mkhemchyan@yandex.ru

Բ Ա Ն Ա Յ Յ Ո Ւ Ս Ո Ւ Թ Յ Ո Ւ Ն
Ф О Л Ь К Л О Р И С Т И К А
F O L K L O R I S T I C S

ՀՏԴ՝ 398

DOI: 10.52971/18294316-2022.25.2-51

ՇԻՐԱԿԻ ԱՐԴԻ ԵՐԳԻԾԱԿԱՆ ԲԱՆԱՀՅՈՒՄՈՒԹՅՈՒՆԸ

Ռոզա Հովհաննիսյան

ՀՀ ԳԱԱ Շիրակի հայագիտական հետազոտությունների կենտրոն

Բանալի բառեր՝ երգիծանք, հուճոճ, պատում, հուճոճի մրցույթ, զվարճախոս, լեզվամտածողություն, աշխարհընկալում, գյուտ, հանկարծաստեղծություն, կենսասիրություն:

Շիրակի երգիծական բանահյուսությունն առավելապես դրսևորվում է բանավոր երգաստեղծության հետևյալ ժանրերում՝ տեղական գրույցներ, անեկդոտներ, ժողովրդական խաղիկներ, կշտամբանքի խոսքեր, մակա-նուններ, առած-ասացվածքներ և այլն: Շիրակի մարզում բանահյուսական տեքստը զերգանցապես դրսևորվում է ծեսի, սովորույթի ու ավանդույթի համատեքստում՝ պատումի տարաբնույթ ձևերով ու ազգաբանական շերտերի ընդգրկմամբ: Շիրակի երգիծական բանահյուսության նմուշների քննությանը կարելի է հավաստել, որ Գյումրի քաղաքն իր հոգևոր ծննդաբանության ու լեզվամտածողության մեջ ամփոփում է Ալաշկերտից, Ներքին Բասենից, Կարինից ու Կարսից վերաբնակեցվածների քաղաքային տիպի բանահյուսությունն ու հուճոճը: Շիրակի երգիծական բանահյուսության նմուշներում առկա են հանկարծաստեղծության տարրն ու ինքնաստեղծման տաղանդը:

Նախաբան. Դեռևս 19-րդ դարավերջից գրի առնված Շիրակի երգիծական բանահյուսության նմուշներն ու սրախոսությունները, կարճառոտ պատմությունները, որոնք մեծ տարածում են գտել Շիրակի մարզում, մասնավորապես՝ Գյումրիում, դարձել են տարբեր հավաքների բաղկացուցիչը: Թեև «անեկդոտ» եզրը հունական ծագում ունի և նշանակում է չիրապարակված, այնուհանդերձ դարձել է քաղաքի բնութագրականներից: Հուճոճի, ծիծաղահարույց պատմությունների ու մանրապատումների (ըստ գյում-

րեցիների՝ «մազալու պատմությունների») ծագումնաբանությունը բացատրվում է ն՝ տեղացիների անսահման կենսասիրությամբ, և՛ այն իրողությամբ, որ այս քաղաք էին գալիս թե՛ հայկական, թե՛ Մերձավոր Արևելքի բնակավայրերից առևտրականներ ու միջնորդներ, որոնք բերում էին իրենց տեղավայրերի մանրապատումները, զվարթախառը պատմությունները և պատմում երկար գիշերների ընթացքում՝ այսպես առիթ տալով ուշագրավ մրցության, հատկապես երբ ասպարեզ էին մտնում նաև տեղացի կատակաբաններն ու կազմակերպում ուշագրավ «մեջլիս»: Հաճախ այդ պատմությունները ներկայացվում էին ժողովրդական թատերախաղերի ձևով, երբ հանդես էին գալիս պատմող-կատակաբաններ, միանգամից ներկայացնում մի քանի «գործող անձերի»: 19-րդ դարասկզբին բոլորի կողմից սիրված թափառաշրջիկ դերասաններից մեկը (Կոլյա անունով) քաղաքային շուկայում «բեմ» էր պատրաստում և ներկայացնում տեղացի «երգիծաբանների» պատումները, կենցաղային-զվարճալի պատմություններ գյումրեցի մեծատոհմիկ կանանց կյանքից: Անեկդոտներ ու մանրապատումներ պատմում էին քաղաքային այգում, բաղնիքներում, շուկաներում, անգամ եկեղեցու բակում: Շատ հաճախ այդ պատումներն ունեին իրական հիմք ու նախատիպեր, որոնց դերերում հանդես էին գալիս տեղացիներից շատերը: Սրամիտ պատմություններ հորինվում էին մինչև իսկ ողբերգական իրադարձությունների առիթով ու ժամանակ՝ այդպես դիմակայելով ողբերգությանն ու ծաղկեցնելով կենսասիրությունը:

Գյումրի քաղաքը Հայաստանի միակ քաղաքն էր, որտեղ խորհրդային իշխանության տարիներին ստեղծվեց առաջին ոչ պետական թատրոնը՝ «Հումորի տուն» անվամբ: Գյումրեցին հումորի մեջ իրեն զգում է, ինչպես իր տանը. վկայություն նրա, որ հումորն ու երգիծանքն այստեղ հասցված են գեղարվեստական որոշակի մակարդակի:

1980-ականների սկզբներից Գյումրիում Արամայիս Սահակյանի («Ուզնի» հանդեսի գլխավոր խմբագիր) նախաձեռնությամբ կազմակերպվել են *Սպրիլմեկյան հումորի երեկոներ*: Շատերը Գյումրին համեմատել են բուլղարական Գոբբովո քաղաքի հետ՝ Գյումրին ծիծաղի հայաստանյան մայրաքաղաք կոչելով:

Հայտնի կատակաբանները փոխայցելությամբ այստեղ հումորի մրցույթներ են անցկացրել: Քաղաքի կենսառիթմը ասես հրավիրում է ընկղմվելու իր սև ու կարմիր տուֆե վերարկուի խորհրդավոր ծալքերում և հումորի ոսպնյակով նայելու քաղաքի անցուղարձին ու մարդկային ֆենոմենին:

Շիրակի մարզի ազգաբնակչության կենսախինդ ոգին, որ նրա ներկայանալի բրենդն է, պատմամշակութային ճանապարհ է անցել: Հումորն ու երգիծանքը մշակութային բաղադրիչներ են, որոնցում արտահայտվում են շիրակցիների աշխարհընկալման լավատեսությունն ու կենսափիլիսոփայությունը: Աշխարհը պայծառացնող զվարթախոհությունն ստեղծում է նաև լեզվական համարժեք: Այսօր էլ այն կրում, պահում-պահպանում է նոր սերունդը:

Կենսականության մի վկայություն է «Կատակում են գյումրեցիները» շաբաթաթերթի լույսընծայումը /2017թ. /: Անեկդոտներից զատ՝ այս երգիծաթերթում հրապարակվում են հեղինակային ծաղրանկարներ ու զվարճալի պատմություններ: Կատակաբանները կարծես «կյանքի գծերը» փորձում են իրենց պատումների կամ նարատիվների

մեջ, որտեղ «հերոսները» դրության կոմիզմից հասնում են արարքի, վարմունքի, հարաբերությունների կոմիզմի: Չարմանալիորեն զվարճալի պատմությունները հայտնվեցին նաև Գյումրու շենքերի պատերին, որոնք խթանեցին զբոսաշրջիկների հետաքրքրությունը քաղաքի հանդեպ:

Շիրակցու հումորը նաև դիմադարձություն է. հումոր անողն իր զգացողությունների մեջ երբեմն դրսևորում է աշխարհի կառուցվածքը բեկելու կամ բարեփոխելու միտում: Շիրակցին ոչ թե խոսում է հումորի մասին, այլ ապրում է հումորը, ինքնաբուխ հորդում է հումորը՝ որպես գոյաբանական վիճակի արտահայտություն: Նրա հումորը հաճախ այլախոսիկ է, գաղտնագրված. բողոքը, ըմբոստությունն ու սերը հումորի «փամփուշտով» են: Բնորոշ է գրոտեսկային, երբեմն ինքնառչնչացնող հումորը:

Երկրաշարժից հետո ինքնաբերաբար ստեղծված հումորային տեքստերը սոցիալական բողոք էին, վիշտը գաղտնագրելու հնարանք («Ժաշկից առաջ տունն էինք մնացել, ժաշկից հետո դուսը մնացինք», -բնակչուհիներից մեկի խոսքը): Փլատակների տակ մնացած մարդիկ անգամ հումորով էին վերաբերվում ստեղծված էքստրեմալ իրավիճակին:

Երգիծանքը կամ հումորը մարդկային արժևորման, գնահատման ձև է: Նույն իրողությունը կարող է տարբեր, անգամ հակառակ իմաստավորումներով ներկայացվել: Դրա համար էլ հնարավոր են լինում մարդկային գնահատականների նույնիսկ անհնարին թվացող համադրումներ, ինչպես, ասենք¹ կենսական նույն իրադրության համաժամանակյա իմաստավորումը որպես ողբերգական և երգիծական: Երգիծանքն ընկալման ու գնահատման սուբյեկտիվ-անհատական ակտ է:

Չափազանցումը որպեսզի լինի երգիծական, չպիտի ինքնանպատակ լինի, այլ միայն պատկերավորման միջոց: Երգիծելիի նույնիսկ ծայրահեղ չափազանցվածության դեպքում երգիծանքը պետք է համոզիչ լինի և՛ գեղարվեստորեն, և՛ գաղափարական նպատակադրմամբ: Ելակետը միշտ պետք է լինեն մարդկայնորեն բարձր արժեքները:

Երգիծանքը՝ որպես գեղագիտական կատեգորիա, ի վերջո, հանդուրժող (հումոր) կամ սկզբունքորեն մերժող (սատիրա, սարկազմ) քննադատության ձև է:

Եթե անեկդոտներն ու մանրապատումները ծնունդ էին առնում իրականությունից եկող սպավորություններից, այս կամ այն արատավոր երևույթը ծաղրելու անհրաժեշտությունից, սրամիտ խոսքն այստեղ ծնունդ էր առնում մեծ կենսաճանաչողությունից, ի բնե գյումրեցիներին հատուկ շրջահայացությունից, փիլիսոփայելու բնածին հակումներից: Գյումրեցիների սրամիտ խոսքերն ունեն իրենց բնավայրային բնավորությունը, տիպը, տեսակը, ծագումնաբանությունը, անգամ կառուցման մեթոդաբանությունը: Եթե հայկական շատ բնակավայրերում անեկդոտի առանցքում ծիծաղելի ինտրիգն է դառնում առաջնայինը, ապա Գյումրու անեկդոտներում «հերոսների» բնավորություններն ու վարքագծերն են իրենց վրա առնում սյուժեի զարգացումը: Մրամտություններն ու սրախոսություններն այստեղ երբեմն ձեռք են բերում աֆորիզմային արժեք, խտացվածություն ու իմաստ:

¹ Николаев Д. –1962. с. 38.

Գյումրեցին մինչև իսկ ինքն իր երգիծանքից պաշտպանված չէ, և ինքնաերգիծանքը աշխարհը կենսասիրությամբ ընկալելու բնատուր շնորհ է:

Մեծ Վարպետը՝ Ավ. Իսահակյանը, գրում է. «Արփաչայի եղածն ի՛նչ է,- բայց ինչքան մեծ է գյումրեցիների համար: Արփաչայը շատ փոքր, խեղճ գետ է, մերկ ափերով, հազիվ մի-երկու խղճուկ ուռիներ: Բայց արի գյումրեցուց հարցրու- աշխարհի ամենալավ գետն է չքնաղ ափերով:

Գյումրեցին նայում է Արփաչային և տեսնում է մի ուրիշ Արփաչայ, որ չկա, տեսնում է իր ցանկացածը, փափագած Արփաչայը, իր երազն է տեսնում: Գյումրեցին ֆանտազյոր է. տեսնում է այն, ինչ չկա իրականում: Ստեղծագործ է հին գյումրեցին – նա վերակառուցում է իրերը, երևույթները: Նա տեսնում է աշխարհն իր գեղեցկացնող կամ տգեղացնող, մեծացնող կամ փոքրացնող երևակայության մեջ: Նա բանաստեղծ է. իր երազը, իր տենչը իր ճշմարտությունն է և իր իրականությունը»²:

Ճշտել, թե կատակաբան-զվարճախոսը ինչն է երգիծում, նշանակում է ճշտել նրա ազատությունների (աշխարհայացքային, բարոյահոգեբանական) սահմանը: Միայն թե այստեղ կա էական մի նրբություն, որ չպետք է անտեսել: Վ. Պրոպր ճշմարտացիորեն նկատել է, որ երգիծողը դիմում է լուրջ ռիսկի. եթե նրա երգիծանքը չհամոզի, ապա անայսման կշրջվի իր դեմ:

Ամեն դեպքում որքան որ հարաբերական ու պայմանական են անհատական և հասարակական արժեքների ընկալումները, նույնքան էլ պայմանական ու հարաբերական են և՛ անհատականին, և՛ հասարակականին վերաբերողի մեջ երգիծելիի համար թույլատրելին: Ահա թե ինչու երբեք չի կարելի բացառել երգիծականացման և դրա ընկալման անհամաձայնությունները:

Արդեն ընդձեցինք, որ երգիծանքին բնորոշ առանձնահատկություններից են նաև խոսքի մեջ գյուտի հանկարծակիությունը և չափազանցումը, որին մեծապես տիրապետում էին քաղաքի հայտնի զվարճախոսները, ինչպես ասում են՝ ներսի ու դրսի անուն ունեցող տղերքը՝ Պոլոզ Մուկուչն ու Ծիտրո Ալեքը, Ջղեր Խաչիկը ու Չոփուտ Սուրենը և շատ ուրիշներ (Պոլոզ Մուկուչին մի առիթով հարցնում են՝ ընչի՞ քոլոր գյումրեցիք էրկու անուն ունին, պատասխանում է՝ մենք բացի մարդու դուսր աշելուց, նեսն էլ կաշենք):

Ծնվել է արհեստավորի ընտանիքում: Եղել է Ավետիք Իսահակյանի դասընկերը: «Պոլոզ» է կոչվել բարձրահասակ լինելու պատճառով: Նրա անվան հետ են կապել հայկական միջավայրում ստեղծված շատ առակներ և սրախոսություններ, որոնք մինչ այդ վերագրվում էին օտար առակախոսների: Այս առումով Պոլոզ Մուկուչը ինչ-որ չափով նպաստել է հայ բանավոր երգիծանքի ազգայնացմանը:

Ժամանակակիցները պատմում են, որ ուրախ-զվարթ բնավորություն ունեք: Չափազանց սրամիտ մարդ էր, սակայն կատակներն անում էր լուրջ դեմքով, և ինքը չէր ծիծաղում, իսկ դիմացիները ծիծաղից ուշաթափվում էին:

Անդրադառնանք մի քանի մականունների ստեղծման պատմությանը:

² Վարդանյան Գ. - 2018, էջ 180:

Արդար Մանուկը, որն իր մականունն ստացել էր Մբ Ամենափրկիչ եկեղեցու խաչն ի գագաթ հանելու համար, *Գյուման Կարոն* (հույս էր բոլորի համար), *Չանգի Խաչոն* (Ալեքսանդրովսկու անկյունում խանութ ուներ), *Գախեթի Մուկուշը* (գինու պահեստ ուներ), *Այհայ Խաչատուրը* (սարթ մարդ էր, փողոցով անցնելիս կանայք ոտքի էին կանգնում: Մի անգամ հարսներից մեկը տեղից չի բարձրանում, զարմանքով ասում է՝ այհա՛յ, էս ո՞ւմ հարսն է, որ օտքի չի կանգնի: 14 փողոցը նրա անունով ցայսօր էլ ժողովուրդը կոչում է Այհայի դար): *Սելավի Ակոն*, ապրում էր Չորի թաղում. մի օր Գյումրիում սելավ է ելել, Ակոյի կնկան ու էրեխին ջուրը օրոցքով քշել տարել է: Պատմում են՝ գուլար, կպտովիր ու կսեր՝ թուխսը ձագով են կորցրել: Գերեզմանի քարին էլ գրած է՝ Սելավի Ակո: *Գաթաձի Կարոն*, ֆուռ են ունեցել, կպատմեին՝ ընպես զաթա են թխել, աբրեշումի նման բերնիդ մեջը կհալիր: *Ղասաբ Համոն* (Պիճիկյան). կովին հեռվից նայեք, ճիշտ կսեր՝ քանի կիլո կեղնի: *Ղարիբ Կարոն*, ոսկերիչ էր, ծնվել էր Էրզրումում, տեղափոխվել Կարս, ապա՝ Ալեքսանդրապոլ: Քանի որ ուրիշ քաղաքից էր եկել, ըզպես էլ դարիբ մնաց, չձուլվեց էս քաղքին: Պատվախնդիր ու հպարտ *Երկան Ալեքը*, *Կոնկի Գիրքորը* (կառապան), խանութպան *Ճերմակ Համոն*՝ Ճերմակ երեսով ու Ճերմակ խալաթով, և էլի շատ ուրիշներ: Նրանց շուրջ ամեն պահի ու ակնթարթի իմաստավորմամբ ոտաց վրա ստեղծվում էին տեղական գրույցներ, հումորային չափածո երգեր, երբեմն էլ հեթիաթի սկսվածքով.

*Էղել է, օր էղել է,
Ճերմակ Համոն խելքռել է,
Ես ի՞նչ էնես՝ խելքռել է,
Դու ի՞նչ էնես՝ խելքռել է,
Կնիկը տունը մոլորել է...*

Կան մականուններ, որոնք տրվում էին ամբողջ տոհմին ու գերդաստանին. Տիպական մի անձի տրվող բնութագրումն ընդհանրական էր դառնում գերդաստանի համար, այսպես, *Անարժան Հարուստենք* (ըստ ժողովրդի՝ էդ հարստությանն արժանի չէին, քանի որ քրտինքով չէին աշխատել. գտել էին), *Միլիոն Մանեթենք* (մե մանեթով հաց են ծախել. մանեթ-մանեթ՝ միլիոն մանեթ), *Բոբլիկենք* (թոռը պատմում է՝ պապս իր հարսանիքին սարքած սեղանների վրա ուրախությունից բոբլիկ ոտներով էնպե՛ս է պարել, որ ոչ մի ափսե տեղից չի շարժվել. դրա համար էլ մերոնց *Բոբլիկենք* են ասել)³:

Դրամփյանների նշանավոր տոհմն այսօր էլ մեծ պատիվ ու հարգանք ունի միֆական պուժեններով լեցուն Գյումրի քաղաքում: Ասում են՝ Սուրբ Ամենափրկիչ եկեղեցու կառուցման հանգանակությանը նրանք սեղանին ոսկով մի խոշոր գումար են «դրմփացրել», այս դեպքից հետո էլ ստացել են գերդաստանի մականունը:

Եղատովների հայտնի գերդաստանի շառավիղ Գոհար Եղատյանը պատմում է, որ իր նախնիները երգում էին են: «Հովհաննես պապս, ամենագետ Եղատովի՝ Հարությունի եղբայրը, Ալեքպոլում շատ հայտնի արհեստավոր է եղել՝ ոսկեձեռ վարպետ, փականագործ ու շինարար: Նախկինում գյումրեցի արհեստավորները սպիտակ կաշվից գոգնոց են կրել: Պապս լաբլաբու քիշմիշ, Բաղդադի խուրմա, յուղ է լցրել գր-

³ Գյումրի -2009, էջեր 260-261:

պանները, տուն բերել՝ լավ նայել է ընտանիքին: Հետի աշխատողները մտածել են, թե ինչ մակնուն «կպցնեն» նրան: Օրինակ՝ ինչո՞ւ «Ճենճոտենց» չանվանեն: Արհեստավորներից մեկն էլ առաջարկել է. «Չէ՛, արեք «Եղջատենց» կոչենք, Հովհաննեսը եղ շատ կսիրե, տունը եղ շատ կտանի»: Էդպես էլ մնացել է, և մեր գերդաստանի Պետրոսյան ազգանունը դարձել է Եղջատով:

Գերդաստանի հայտնի անձի՝ Հարություն Եղջատյանի մասին զարմուհին պատմում է. «Ես նրան կենդանության օրոք չեմ տեսել: Ինչ գիտեմ՝ հայրիկիս պատմածից եմ մտապահել: Աշխատել է զագսի վարիչ: Ամեն ինչից տեղյակ է եղել. ո՞վ ամուսնանալու տղա կամ աղջիկ ունի, ո՞ւմ բանակ ճամփելու ժամանակն է և այլն: Իր բացառիկ հիշողությամբ՝ ամբողջ արխիվը մտքում է կուտակել: Մա մեր գերդաստանի շնորհն է: Հիմա, երբ մեկը մի քիչ տեղեկացված է լինում, զարմանքով հարց են տալիս. «Ա՛յ մարդ, հո Եղջատովը չե՞ս»: Այսինքն՝ բանիմացությունը բնութագրելու թեևավոր խոսք է դարձել⁴:

Թափանիվի պես օրը ցերեկով Գյումրի քաղաքում պտտվում է բանավոր ասքր, առտնին հարաբերությունները գեղարվեստական միջավայր են դառնում, սովորական մարդիկ՝ ֆիգուրներ, բանավոր հյուսվածքն իր մեջ է առնում մինչև իսկ քաղաքի հրապարակ դուրս եկած պարզ ու շիտակ խենթախոսներին, որովհետև գյումրեցին գիտե սիրել ու փայփայել նաև իր խելառին. հոգու փշուրն անգամ իր համար արժեք ունի...

Այս քաղաքում անեկդոտն ու զվարճախոսությունը գիրկընդխառն են. Մյուսժեներում թիրախը երբեք հիմարությունը չէ, այլ խելացի խորամանկությունը, մտքի աճպարարությունը՝ խորքում միշտ մնալով ազնիվ: Երբեմն անեկդոտը կառուցում են տրամաբանական խախտման վրա: Տեղի է ունենում պատահական հատկանիշներով սխալական ճանաչում կամ պատահական հասցեագրումով զործողություններ: Չափազանցություններն ու խոսքի ուռճացումը, ինքն իր շուրջ անեկդոտային միջավայր ու զրույց հյուսելը մնում են շիրակցու նախասիրությունների դաշտում: Խոսքն այնպես է կառուցում, որ տեքստը նույնիսկ իր համար անսպասելի է: Փոքր սյուժեների մեջ անգամ գտնում է զարմանալին՝ թվացյալ աննշան իրողությունները դարձնելով մագալու բան: Այսպես՝ *Գմփրո Օնիկը* /Ղարագոզյան/, որը շատ գեր մարդ էր, մեռնելուց առաջ ասել է. «Դարդս մեռնելը չէ, ըսա՛՛ քաղաքը ֆորմից չընկնի»: Հորինումի տարերքով բռնված՝ նույն զրույցը, անեկդոտը ամեն անգամ գյումրեցիները կարող են պատմել նոր տարբերակով: Այսպես՝ *Բաթում Մարտիրոսը* կյանքի մեջ մենակ Բաթում է գնացել: Ով ինչ կխոսեր, ինքը Բաթումից կպատմեր:

Գյումրու հումորն արտահայտվում է նաև երգային ժանրում. ստեղծվել են երգիծական բնույթ ունեցող ժողովրդական, աշուղական երգեր:

Հումորի կենսականությունը. Շիրակի մարզը՝ իր սիրտ Գյումրիով, քաղաք-հոգեվիճակ է: Բնակիչները օժտված են կենսասիրությամբ, որ գերում ու վեհացնում է հոգին, նվիրում զվարթախոսության վայելք:

Քաղաքի կենսախինդ ոգին, որը նրա ներկայանալի բրենդն է, այսօր պահում-պահպանում է նոր սերունդը, և հումորն ու երգիծանքը այն մշակութային բաղադրիչ-

⁴ Գյումրի -2009, էջ 219:

ներն են, որոնցում արտահայտվում է գյումրեցիների աշխարհընկալման լավատեսությունն ու կենսափիլիսոփայությունը:

Մենք խոսում ենք մուսաներին գրկախառնված այս քաղաքի հետ՝ ապրելով այնտեղ, ներշնչված անցնելով նրա միջով, նայելով նրան ու ծիծաղելով նրա հետ: Գյումրեցին հումորի մեջ իրեն զգում է, ինչպես իր տանը:

Գյումրեցու հումորը այլախոսիկ է, գաղտնագրված, բողոք է, ըմբոստություն ու սեր հումորի միջոցով: Թեմայի փորձագետները տվել են հումորի տեսակների դասակարգում, որոնցից գյումրեցիներին ավելի հատուկ են երգիծական հումորը, գրոտեսկային հումորը, երբեմն ինքնառնչացնող հումորը /օրինակ՝ *էշ էկել եմ, հայվան կերթամ*, առավելապես՝ միացնող հումորը:

Գյումրեցու հյուրեղ հումորային տեքստերն ու պատումները աչքի են ընկնում խոսքի պատկերավորման տարբեր միջոցներով՝ ինքնակա և ինքնաբուխ. «ըմբես կխոսան, ինչխոր ձեթը կաթե ճրագը»: Մինչև իսկ հիշոց-հայիոյանքները բանաստեղծական փոքրիկ հորինումներ են հիշեցնում՝ հաճախ բարձրացող աստիճանավորման հնարով: Օրինակ՝ *ես քեզի վարող-վաստկողի գլխու քարին, դռշի վարդին, սրտի սալին, խունկ-խեճակին, ճարպ-ճրագին...*:

Կշտամբանքի խոսքերն անգամ հումորային երանգ ունեն. «Փուշ կուլ տված օշխրրի պես էրեսըս մի՛ աշե»: Կամ՝ «Ղուրբանս էղնիք ընտանյոք հանդերձ» և այլն: Եվրոպայի չեմպիոններ տված Գյումրի քաղաքի բնակիչները կատակում են. «Գյումրի մեղալ բերելը դարձել էր անհետաքրքիր՝ բռնիք շռուի պապին բերինք»:

Նույնիսկ գերեզմանաքարերի գեղարվեստական մակագրության մեջ հումորի երանգ կա: Քաղաքի հին գերեզմանատան տապանաքարերից մեկին գրված է՝ «*Լի՛ց, ան էկա*»: Սև հումորի արտահայտություն է մահարձաններից մեկին հետևյալ էպիտաֆիան՝ «*Միրելի մայրիկին՝ որդիներից, բացի Վլադից*»:

Լացող քաղաքը ծիծաղով հաղթեց մեծ աղետի փորձությանը՝ մեծ վշտի ու կորստի մեջ անգամ չկորցնելով կենսասիրությունը: Ծիծաղող քաղաքը բարձրացավ ինքն իրենից՝ ընդառաջ գնալով իր կանաչ-կարմիր կիրակիներին:

Եզրահանգում. Այսպիսով՝ Շիրակի մարզի, մասնավորապես՝ Գյումրի քաղաքի այցեքարտը ցայսօր էլ հումորն ու երգիծանքն են, որ լավագույնս արտահայտվում է Շիրակի երգիծական բանասիրության տեքստերի լեզվում՝ բանաձևային նմուշներում, ասույթաբանության մեջ որպես նրա ազգաբնակչության դիպուկ, պատկերավոր, իմաստալից ու հյուրեղ լեզվամտածողություն՝ զվարթախոհության դրսևորմամբ:

СОВРЕМЕННЫЙ САТИРИЧЕСКИЙ ФОЛЬКЛОР ШИРАКА

Оганнисян Р. П.

Ключевые слова: сатира, юмор, сказ, конкурс юмора, весельчак, языковое мышление, мировосприятие, изобретение, импровизация, жизнелюбие.

Сатирический фольклор Ширака наиболее выражен в следующих жанрах устной поэзии: местных сказах, шутках, народных играх, словах упрека, прозвищах, пословицах и

др. В Ширакской области фольклорный текст превосходно проявляется в контексте обряда, обычая и традиции, с различными формами повествования и включением этнологических пластов. Рассматривая образцы сатирического фольклора Ширака, можно утверждать, что город Гюмри в своей духовной генеалогии и языкознании обобщает городской фольклор и юмор переселенцев из Алашкерта, Басена, Карина и Карса. В образцах сатирического фольклора Ширака присутствуют элементы импровизационного творчества и таланта самозидания.

THE SPECIFICITY OF SATIRICAL FOLKLORE IN SHIRAK

Hovhannisyan R. P.

Key words: *satire, humour, narration, humour contest, funny person, linguo-thinking, world perception, invention, improvization, vitality.*

The satirical folklore of Shirak is widely expressed in the following genres of oral poetry: local conversations, anecdotes, folk games, words of reproach, nicknames, proverbs, etc. In the Shirak region, the folklore text is perfectly manifested in the context of ritual, custom and tradition, with various forms of narration and ethnographic layers. Considering the samples of the satirical folklore of Shirak, it can be stated that the city of Gyumri in its spiritual genealogy and linguistics generalizes the urban folklore and humor of the settlers from Alashkert, the Inner Basin, Karin and Kars. In the samples of satirical folklore of Shirak the elements of improvisation are dominant.

Քրականություն

1. **Գյումրի -2009**, Գյումրի. քաղաքը և մարդիկ, Գյումրու քաղաքապետարան, 445 էջ:
2. **Վարդանյան Գ. -2018**, Հումորի մայրաքաղաք Գյումրի, «ՎՄՎ-Դրինտ» հրատ., 199 էջ:
3. **Николаев Д. -1962**, Смех—оружие сатиры. М. 221 с.
4. **Սահակյան Կ., Հովհաննիսյան Ռ.-2008**, Խաչը՝ թիկունքիս, Յոթվերքը՝ սրտիս // ՀՀ ԳԱԱ Ծիրակի հայագիտական հետազոտությունների կենտրոնի «Գիտական աշխատություններ», հ. 11, Գյումրի:
5. **Սահակյան Կ., Հովհաննիսյան Ռ.-2013**, Մտեղծարար քաղաքը՝ ազգային ինքնության արժեքների կրող (Գյումրու օրինակով) // ՀՀ ԳԱԱ Ծիրակի հայագիտական հետազոտությունների կենտրոնի «Գիտական աշխատություններ», հ. 16, Գյումրի:

Ընդունվել է՝ 25. 09. 2022
Գրախոսվել է՝ 15. 10. 2022
Հանձնվել է տպ.՝ 28. 11. 2022

Տեղեկություններ հեղինակի մասին

Ռոզա ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ՝ ՀՀ ԳԱԱ Ծիրակի հայագիտական
հետազոտությունների կենտրոնի գիտաշխատող, էլ. հասցե՝ vard-rosa@mail.ru

Բ Ա Ն Ա Հ Յ Ո Ւ Ս Ո Ւ Թ Յ Ո Ւ Ն
Ф О Л Ь К Л О Р И С Т И К А
F O L K L O R I S T I C S

ՀՏԴ՝ 398

DOI: 10.52971/18294316-2022.25.2-59

ՄՏԱՓՈԽՈՒԹՅՈՒՆԸ՝ ՈՐՊԵՍ ՀՂԻՈՒԹՅԱՆ ՑՈՒՑԻՉ
(ԲԱՆԱՀՅՈՒՍԱԿԱՆ ՆՅՈՒԹԵՐԻ ՀԱՄԱՏԵՔՍՏՈՒՄ)

Հասմիկ Մատիկյան

ՀՀ ԳԱԱ Շիրակի հայագիտական հետազոտությունների կենտրոն
Շիրակի Մ. Նալբանդյանի անվան պետական համալսարան

Բանալի բառեր՝ *հեքիաթ, բանասաց, ժանր, տեքստ, հղի, նուր, բանաձև, Շիրակ, մտախառնվածք, բանահյուսություն:*

Հոդվածում ներկայացնում ենք հղի կնոջ ուտելու ցանկությանը՝ մտափոխությանն առնչվող բանահյուսական նյութեր. համեմատական մեթոդի միջոցով ուսումնասիրել ենք այն հեքիաթանյութերը, որոնք շոշափում են հղի կնոջ ցանկալի կամ առաջարկվող կերակուրները:

Նախաբան. Հղիությունը, լինելով կնոջ կյանքի կարևոր փուլերից մեկը, ուշադրության է արժանանում ինչպես իրական միջավայրում, այնպես էլ հեքիաթանյութի շրջանակներում:

Մեր նպատակն է առանձնացնել և վերլուծել այն բանահյուսական պատահիկները, որոնք մատնանշում են մտափոխությունը:

Մտափոխություն երևույթն ունի ուրույն բնութագիր հայոց մեջ: Բառարանային վկայությամբ՝ *մտափոխ* բառերը համարժեք է *բարփոխ* բառին, այն է՝ միտքը փոխած, ճաշակը՝ բարքը փոխած: Մտափոխ կանանց բարքն աշխատում են կատարել, տալիս են ուտելու և խմելու, ինչ որ ուզում են, ի հարկե որքան հնարաւոր է¹:

Բարփոխ նշանակում է՝ «ղութեան ժամանակ արտակարգ ցանկութիւններ, այլանդակ ախորժակ ունեցող կին»²: Նշված սահմանման մեջ *բարք* բառը պետք է ընդունել ախորժակ իմաստով: Այսպես՝ *Բարք (Ախց)-ախորժակ, մէտէ, կըսուի միայն բարքս*

¹ Մալխասեանց Ս. -1944, էջ 373:

² Աճառեան Հր. -1913, էջ 180:

կուզե՛ (այլուր՝ սիրտս կուզե՛) մէտէս կ'ուզե՛...³ «Հայոց լեզվի բարբառային բառարան»-ում վկայաբերվում է բարփոխություն գոյականը՝ հղի կանանց ախորժակի խանգարում իմաստով⁴:

Չուզահեռաբար անզլալեզու մշակույթում այս երևույթը *hunger of mother* կամ *pregnancy cravings* բառային միավորներով է արտահայտվում՝ ուտելու բուռն ցանկություն, փափագ իմաստներով:

Այս համատեքստում *hunger* (սով, սովածություն) բառի թե՛ անվանողական, թե՛ փոխաբերական իմաստներն են արժանի հիշատակել՝ քաղց, քաղցածություն, փխբ. տենչ, չափազանց ուժեղ ցանկություն⁵:

Ժողովրդական ընկալմամբ՝ *մտափոխ* բառը իմաստային որոշ առումներով համարժեք է *կամակ* բառին: Մեր կատարած դաշտային աշխատանքների ժամանակ բանասացները նշում էին. «Հղի կրնգա համար կրսեին՝ կամակը բերեք ուտե, օր տղա բերե, դոչ տղա բերե, օր հղի կէղնէին, բան-ման գուզեին ուտելու, կամակ կրսեին, իսկ հղի կնկան էլ կրսեին՝ էրեխով կնիկ է, կամակ գուզե. լավ կեսուրը կրսեր՝ հարսի սիրտը բան գուզե, գտեք բերեք... գուզեն ուտեն հղիության սկզբնական շրջանում մինչև էրեխու խաղալը... Կամակ ըսել են նաև հիվանդ մարդու սրտի ուզած ուտելիքը, կերակուրը: Ես էլ եմ կամակ ուզեցե, բայց ռիսկ չէի էնե, թագա հարս էի, կամընչեի.. Կեսուր կար օր կրսեր՝ մահանա կենե օր էրեխով է, գուզե ուտե՝ արտը խախուտ, մահանա կարկուտ: Եթե սիրտը քաղցր գուզե, աղջիկ կունենա, եթե կծու՝ տղա»⁶:

Այս համատեքստում *սիրտը ուզենալ* արտահայտությունը ձեռք է բերել բանաձևային արժեք: Ուշագրավ է նաև հղի կնոջ ուտելու ցանկությունը չբավարարելու հետևանքը. *եթե հղին սրտի ուզածը չկերավ, աչքը մեջը մնաց, ուրեմն էրեխու աչքը շաշ կամ շիլ կէղնի և այլն*:

Բանասացներից Աննա Մահակյանն էլ ավելացրեց. *հարսին կրսեն՝ հո դու մտափոխ չես, ժողովրդական լեզվով ըսած, կամ հո ծոցվոր կնիկ չես՝ օր միտքդ բուպեն մեկ կփոխես ու կրսես՝ ըսիկ գուզեմ ուտեմ, ընիկ գուզեմ*⁷:

Ներքին Բասենում ամեն երեկո և առավոտ եռացրած կաթի մեջ մեղր կամ կարագ էին լցնում և խմեցնում ծոցվոր և ծննդկան կնոջը⁸:

Մտափոխությանն առնչվող նյութերը հուշապատումների բացառիկ պատկերներ են: - *Կիսուրս մի դեպք է պատմել, նշում է բանասաց Ռ. Արիստակեսյանը*⁹ (լսել եմ), *հղի կինն օր էր բուպեին բան կուզե ուտել, դա ոչ թե հղի կինը գուզե ուտե, այլ էրե-*

³ Աճառեան Հր. -1913, էջ 180:

⁴ ՀԼԲԲ -2001, էջ 173:

⁵ Ասմանգուլյան Հ. -1984, էջ 460:

⁶ Բանասաց Խառնում Միքայելյան: Ծնվ. 1932 թ. Ծիրակի մարզի Մեծ Մեպասար գյուղում: Նախնիները Ալաշկերտից են (Հ. Մատիկյանի դաշտային գրառումներից):

⁷ Բանասաց Աննա Մահակյան: Ծնվ. 1951թ. Լենինականում: Ունի բարձրագույն կրթություն: Նախնիները գաղթել են Արևմտյան Հայաստանի Մշո գավառից (Հ. Մատիկյանի դաշտային գրառումներից):

⁸ Հակոբյան Գ. - 1974, էջ 193:

⁹ Բանասաց Ռ. Արիստակեսյան: Ծնվ. 1964թ. Լենինականում: Ունի բարձրագույն կրթություն: Նախնիները գաղթել են Բուլանըխից (Հ. Մատիկյանի դաշտային գրառումներից):

խեն: Մեկը հղի է էղել գնացել է, (էն ժամանակ սայլերով են տեղափոխվել), սայլի մեջ տեսել է օր նուր կա, ու գողացել է՝ իբր փող չի ունեցել առնելու, գողության համար սպանել են, դիակերպել են ու տեսել օր նուրը երեխի բերանն է էղել:

Ե. Լալայանի ազգագրական նյութերում ուշագրավ մեջբերում կա՝ վերը բերված երևույթին առնչվող. «Ոչ մի կերակրից կամ խմիչքից չեն զգուշանում, ընդհակառակը, շրջապատողներն աշխատում են նրա բոլոր քմահաճույքները կատարել, որպեսզի վնաս չհասնի երեխային, որովհետև կարծում են, թե նրա պատճառով է մտքափոխ լինում՝ այս կամ այն բանը ցանկանում ուտել: Այսպես, պատմում են, թե մի թագավոր իր հղի կնոջ հետ ճանապարհորդելիս, վերջինս ցեխի միջից վերցնում է նռան մի հատիկ և ուտում: Թագավորը զայրանում է, թե քանի այդքան որկրամոլ էս, որ ցեխոտ հատիկը ուտում էս, կարող էս շատ բան թույլ տալ քեզ, և խփում, սպանում է նրան: Իմաստունները գալիս բաց են անում թագուհու փորը և ցույց են տալիս թագավորին, որ ցեխոտ հատիկը արգանդի երեխայի բերանում է, հետևապես և նրա պատճառով էր նա այդքան որկրամոլ դարձել»¹⁰:

Մտափոխ վիճակը և նուր ուտելու ցանկությունը արտահայտվել են նաև հեքիաթանյութի շրջանակներում. Աղջիկ կը ծոցվորի, *մտափոխ* կեղնի, *նուր* գուգե: Ախպեր կերթա, նուր կը բերե, կուտե, ինն ամիս օր կը թըմի՝ տղե մե կը բերե, էդ տղի կշտին մսե խանջալ մե կեղնի կպուկ, վրեն լե նռան հատ մե, ըշտե տղին անուն կը դնին Նռանհատ (ընդգծումները մերն են - Հ.Մ.)¹¹:

Վան-Վասպուրականի «Նառ խաթուն» հեքիաթի սկսվածքում է ընդգծվում նռան՝ պտուղ խորհրդակիր նշանակությունը. «Կեղնի, կեղնի մեյ կնիկ: Էսա կնիկ մի օր տախտ կավիլի, տախտի մեջ կկնդնի մեյ խատ Նռան խատ: Նռան խատ կթալի բերան, կուտի: Ինն ամիս, ինն սհաթ, ինն օր կթըմըմի, Էսա կնիկ կպիրի մեյ խատ խուրն խրեղեն, սիրուն ախչիկ, ինոր անունը կդնի Նառ խաթուն»¹²:

«Մոկս. հայոց բանահյուսական մշակույթը» աշխատության *Վիճակահանության երգեր* բաժնում թվարկվում են ուտելիքներ ու խմելիքներ. մի դեպքում՝ *նուր, թան, մյուս դեպքում՝ էղեղեն, խավրծիլ*՝ տեքստային նույն տիրույթում համապատասխան երաժշտականությամբ՝ *դուր, թաթան, խրեղեն, ոսկեծիլ*:

Քո մեր կերեր նուր, քի թալեր տարկի դուր:

Քո մեր կերեր թան, քի բերեր թաթան...

Կամ՝

Քյո մեր կիրեր էղեղեն,

Քե պիրեր խրեղեն,

Խարս, խան վիճակն ի բարի:

Քյո մեր կիրեր խավրծիլ,

Քե պիրեր ոսկեծիլ...¹³

¹⁰ Լալայան Ե. - 2021, էջ 554:

¹¹ ՀԺՀ -1967, էջ 84:

¹² ՀԺՀ -1999, էջ 542:

¹³ Մոկս -2015, էջ 421:

Էդեդեն/ խրեդեն, խավրծիլ/ուկեծիլ բառաշղթան ռիթմիկ տարրերով շեշտում է հզորություն, առողջություն: Վերը նշված տողերում ընդգծվում է նաև մոր՝ կարևոր սնունդ ուտելու իրողությունը, որով էլ պայմանավորված է երեխայի առողջությունը:

Մոկսի վերոնշյալ տեքստում *խավրծիլ* բույսը բնութագրվում է այսպես՝ *Բագմանկին ըսուած բուսոց ցեղեն է, մետրաչափ բարձրությամբ, ծուռումուռ ճիւղերով, ...որ յատկապէս Գար կ'ըսուին ու շատ ծաղկընէրով: Բոլոր բոյսն ամէն մասամբ թթուահամ է, բայց շաքարով շաղուած՝ լաւ դեղ կ'ընծայէ¹⁴: Քե պիտէր /Մերը բերել է/ արտահայտությունը նույնպես ժողովրդական լեզվամտածողության վկայություն է, որը Շիրակում ունի նաև հետևյալ դրսևորումը՝ *մերը դոչ տղա է բերել, առյուծ է բերել կամ ըսիկ ի նչ կնիզ է, օր ի նչ բերե (խոսքը երեխա ունենալու մասին է), ըսիկ ի նչ մեջք ունի, օր էրեխա բերե և այլն:**

Նրան մասին հնագույն մշակութային հիշատակությունը փոքրասիական առասպելաբանության մեջ է: Ըստ փոյուգական և նախահայկական մի առասպելի՝ մայրության դիցուհի Նանան հղիանում է՝ նրան հատիկ կուլ տալով: Նանայից ծնվում է մեռնող-հառնող աստվածը, որը Արա Գեդեցիկի գուգահեռն է՝ բուսականության ամենամյա զարթոնքի և արեգակի տարեկան շրջապտույտի խորհրդանիշը: Նանայի մասին պատումն անարատ հղիության վերաբերյալ հնագույն առասպելների բավական տարածված տարբերակներից է, որ հետագայում սիրված մոտիվ է դարձել բազմաթիվ ժողովուրդների հեքիաթներում¹⁵:

Ուշագրավ է, որ նուրը կյանքի խորհրդանիշն է: *Նուր* բաղադրիչով դարձվածքներն ու կապակցություններն ունեն դրական իմաստ, մասնավորապես՝ *երեսեն նուր կաթիլ- կարմիր, առողջ երես ունենալ*¹⁶ և այլն:

Ավելին, նուրը սիրո միջավայրին գունեղություն ու քաղցրություն է տալիս՝ դառնալով զգացմունքների արտահայտման յուրօրինակ միջոց: Այս առիթով նշենք Ա. Իսահակյանի հետևյալ տողերը.

Միրտս կ'առնի, սիրտս կուտա,

Նուր պաչ կուգեմ, նուշ պաչե ր...

Վանեցիները ոչ հեռու անցյալում մեծարում էին տղա երեխա բերող մորը և այդ կապակցությամբ նրանք երգեր են հորինել.

Լաճու մոր *նոներ* պիտէք, ծերն ի շայար,

Լաճ ի պերե, լաճ..¹⁷

Անգլալեզու որոշ հեքիաթաշարերում ևս շեշտադրվում է կնոջ մտափոխ լինելը.

Հղի կանայք հաճախ ունենում են ուտելու անհագ ցանկություն, որի թերկատումը կամ չկատարումը վնաս է բերում չծնված երեխային: Օրինակ՝ ATU 310 հեքիաթի՝ *The Maiden in the Tower* տարբերակում հղին գողանում է բույսեր կախարդի պար-

¹⁴ Ալիշան Ղ. -1895, էջ 103:

¹⁵ Դալայան Տ. -2020, էջ 14:

¹⁶ Բեդիրյան Պ. -2011, էջ 992:

¹⁷ Շաղոյան Ա. -2007, էջ 105:

տեղից: Եթե գողանալու ընթացքում հղի կինը բռնվում էր, խոստանում էր չծնված երեխային նվիրաբերել¹⁸:

Իտալական և հայկական հեքիաթատեքստերը ունեն հղի կնոջ ուտելու ցանկությունը նկարագրող պատկերներ. երբեմն ցանկալի կերակրի անունը դառնում է հեքիաթի տեքստի վերնագիր, ահավասիկ՝ Ի. Կալվինոյի *Prezzemolina* (Մաղաղանոս աղջիկը) հեքիաթը¹⁹. «Հղին մտափոխ եղավ և ուզեց մաղաղանոս ուտել: Նա մի անգամ նայեց պատուհանից և տեսավ, որ փերիների այգին լի է մաղաղանոսով. սպասեց, մինչև բոլորը հեռանան, և պատուհանից սանդուղքով իջավ այգի: Հղին կերավ մաղաղանոսը, նորից բարձրացավ մետաքսե սանդուղքով և փակեց պատուհանը: Նույն գործողությունը կրկնեց հաջորդ օրերին նույնպես:

Փերիները նկատեցին, որ մաղաղանոսը իրենց պարտեզից ամեն օր պակասում է.

-Ահա թե ինչ,- որոշեց փերիներից մեկը,- թող մեզանից մեկը թաքնվի պարտեզում, և մենք կիմանանք, թե ով է գողանում մաղաղանոսը:

Հաջորդ օրը կինը նորից իջավ այգի: Հանկարծ մի թփի հետևից մի փերի դուրս թռավ դեպի իրեն:

- Ուրեմն՝ գտանք մաղաղանոս գողոցդին,- բղավեցին փերիները:

-Մի՛ բարկացիր ինձ վրա,- աղաչեց կինը,- ես իսկապես մաղաղանոս եմ ուզում ուտել, ես հղի եմ, սիրտս մաղաղանոս է ուզում»:

-Դե, քանի որ այդպես է, մենք քեզ ներում ենք, բայց հիշի՛ր, եթե աղջիկ ունենաս, նրան *Prezzemolina* (Մաղաղանոս փոքրիկ տղա) կանվանես, իսկ եթե տղա՝ *Prezzemolino* (Մաղաղանոս փոքրիկ աղջիկ): Իսկ երբ երեխան մեծանա, կվերցնենք քեզնից:

Կինը լացակույմած վերադարձավ տուն: Երբ նա պատմեց ամուսնուն փերիների հետ հանդիպման մասին, ամուսինը զայրացավ՝ պատասխանելով.

-Ի՞նչ ես արել, որկրամուլ:

Իտալական մի շարք հեքիաթներում հղի կինը ուրիշի պարտեզից է սրտի ուզած կերակուրը գողանում և գողանալու ճանապարհին հանդիպում է փերու կամ կեսվիուկ, կեսմարդ արարածին (*The Cloven Youth*): Պայման կապելը՝ կեսմարդ, կեսվիուկի և հղի կնոջ միջև դառնում է գերակա միջոց (պայմանականորեն նշենք՝ ես քեզ միրգ կամ բանջարեղեն կտամ ուտելու, դու ինձ՝ երեխայի կեսը): Ուշագրավ է այն, որ կեսի գաղափարը տարածական է նաև հայկական հեքիաթանյութի տիրույթում: Մեջբերենք Շիրակի «Մաջրում Խոջի» հեքիաթից մի հատված. «Ժամանակավոր կեղնի չի եղնի մե հզոր թագավորը: Էդ թագավորը ժառանգ չի ունենա: Զօր ու գիշեր որդի չունենալու համար կը մտածե: Թագավորը կըսե. - Ես չմտածեմ, ո՞վ մտածե: Իմ անցմանես ետև մեկ ժառանգմ չունիմ, օր ժողովուրդս կառավարե:

Էդտեղ Դարվեշը կըսե.- թագավորն ապրած կենա, ես օր քեզի տարիմ էլ ես վախտ երկու տղա տամ, մեկն ընձի կուտա՞ս:

Թագավորը խոստացավ, որ կուտա: Այն ժամանակ Դարվեշը հանեց մե *խնձորը* թագավորին տվավ ու ըսավ.

¹⁸ Haase D. - 2008, p. 639.

¹⁹ Calvino I. -1980, p. 310 (անգլերենից միջնորդավորված թարգմանությունը՝ Հ. Մատիկյանի):

-Տա՛ր, կեսը դու կեր, կեսը՝ թագուհին: Աստծո հրամանովը ձեզի երկու տղա կեղնի, բայց մինչև ես չգամ՝ տղոց անուններ չդնեք»²⁰:

Բանագետ Մ. Խենյանը «Նվիրատուն և խորհրդատուն հայ ժողովրդական հեքիաթներում» մենագրության մեջ անդրադառնում է հայկական հեքիաթներում զգալի մաս կազմող անժառանգ թագավորի, անժառանգ աղքատ ամուսինների մոտիվներին: Շիրակի բերված հեքիաթում դարվիշը ակտիվ գործող անձ է: Մ. Խենյանը նշված գրքում ընդգծում է դերվիշի դերը՝ նշելով. «Դերվիշի առկայությունը մեր հեքիաթներում պայմանավորված է արևելյան բանահյուսական ավանդույթից փոխառնված սյուժեներով, ինչպես նաև տարածաշրջանում քրիստոնեության և մահմեդականության համեմատաբար հարևանաբար կենցաղավարմամբ, որի արդյունքում հեքիաթներ են ներմուծվել ոչ միայն դերվիշների գործառույթները, այլև նրանց՝ Մերձավոր Արևելքում օգտագործվող անվանումները (դարվիշ, դարվեշ, դավրիշ, դավրեշ, դրվրեշ...»²¹:

Կարսի «Յաշօղլանի հեքիաթ»-ում նույնպես դարվիշը աղքատ ամուսիններին առաջարկում է խնձոր ուտել, որը պտղաբեր է՝ պտուղը պտուղ է բերում. «Ժամանակոց կեղնի, չի կղնի, մե մարդ, մե կնիկ: Էսոնք քասիբ կեղնին: ...Մարդ ու կնիկ ամեն օր աստված կը կանչեն, ժամ կերթան, իրանց քասիբ տեղովը մատաղ կենեն, օր բալքի ասված խղճա, իրանց մե ժառանգքս տա, հըմը հեչ բան դուս չի գա:

Դարվեշը բարև կուտա, էս մարդը բարևը կառնի: Դարվիշը կը հարցնե, կըսե.- Ընչի՞ ես էդքան դարդլամիշ էղնում, քու աղոթքդ ու աղաչանքդ հասավ աստու ականջը, ասված խղճաց քու ծերությանդ, ընձի դրկեց, օր քեզի մե տղեմ պարզկեմ: Ահան, առ էս խնձորը, դու ու կնիկդ կուտեք, գալող տարի մե տղեմ կունենակ, հըմը անուն չեք դնե, ինչուրի ես գամ,- էսպես կըսե ու կանհայտանա:

Էստեղ խնձորը կկիսեն, կեսը մարդը կուտե, կեսը՝ կնիկը: Էդ օրվանից կանցնի ինը ամիս, ինը օր, էս կնիկը կազատվի, մե տղեմ կը բերե, մարդ ու կնիկ կուրախանան»²²:

Հղի կնոջ ուտելու շուրջ հյուսվել են նաև հետևյալ խոսքերը. *Եթե հղի կինը գողտունց (թաքուն) է՝ կերել, էրեխու թուշը պուճ կընկնի*, կամ *հղի կինը երկու հոգու համար կուտե* և այլն:

Ըստ ժողովրդական մտածողության՝ երբ *պտուղը խաղաց*, հղի կնոջ նախընտրածը ուտելու ցանկությունը կմեղմանա կամ կանցնի: Հետաքրքրական է, որ հղի կնոջ մտափոխ լինելու իրողությունը առանձնակի է շեշտադրվում ոչ միայն հայկական, այլ նաև այլալեզու հեքիաթանյութերի շրջանակներում: Ամփոփելով նշենք, որ հղի կինը բազմաթիվ հեքիաթների բովանդակային կիզակետում է՝ ուտելու բուռն ցանկություններով. երբեմն հղին փորձության է դիմում, տարաբնույթ ճանապարհներ է անցնում ցանկալի ուտելիքին կամ խմելիքին հասնելու համար:

²⁰ ՀԺՀ -1963, էջ 105:

²¹ Խենյան Մ. - 2021, էջ 46:

²² Կարս -2013, էջ 116:

ЖЕЛАНИЕ ЕСТЬ КАК ПОКАЗАТЕЛЬ БЕРЕМЕННОСТИ (В КОНТЕКСТЕ ФОЛЬКЛОРНЫХ ТЕКСТОВ)

Матикян А. А.

Ключевые слова: сказка, рассказчик, жанр, текст, беременная, гранат, формула, Ширак, менталитет, фольклор.

В статье затрагиваются вопросы, связанные с тягой к беременности. Мы сосредоточим внимание на феномене «тяги» в реальной и эпической среде: в контексте сказок. Исследование показывает, что тяга к беременности и беременная женщина являются ключевой нитью во многих традиционных сказках. Беременная женщина сталкивается со многими препятствиями, пытаясь получить желаемую еду или питье. Помимо сказочных текстов, это явление широко выражено в различных произведениях.

CRAVING AS AN INDEX OF PREGNANCY (IN THE CONTEXT OF FOLKLORE TEXTS)

Matikyan H. H.

Key words: fairy tale, narrator, genre, text, pregnant, pomegranate, formula, Shirak, mentality, folklore.

The paper touches upon the issues related to pregnancy cravings. We focus on the phenomenon 'craving' in real and epic milieu: in the context of fairy tales. The study shows that pregnancy cravings and the pregnant woman are the key thread in many traditional tales. The pregnant woman faces many obstacles while getting the desired food or drink. Besides the fairy tale texts, this phenomenon is widely expressed in different rhymes.

Գ ր ա կ ա ն ո լ յ ո ն

1. Ալիշան Ղ. -1895, Հայրուսակ կամ Հայկական Բուսաբանություն: Մուրբ Ղազար, Վենետիկ, 103 էջ:
2. Աճառեան Հր. -1913, Հայերէն գաւառական բառարան, Լազարեան Ճեմարան Արեւելեան Լեզուսաց, Թիֆլիս:
3. Ասմանգուլյան Հ., Հովհաննիսյան Մ. -1984, Անգլերեն-հայերեն բառարան, Երևան, «Հայաստան» հրատ.:
4. Բեդիրյան Պ. -2011, Հայերեն դարձվածքների ընդարձակ բառարան, Երևան, ԵՀ հրատ.:
5. Գալալյան Տ. -2020, Նժան սիմվոլիկայի դրսևորումը ժողովրդական հանրուկներում, երգերում և հեքիաթներում, 11-րդ գիտաժողովի նյութեր/Կերանք խմբիչնք, գիտերն հիշեցիչնք. հացի խնդիրը բանասիրական և հեղինակային հեքիաթում/Վ, Գիտաժողովի թեգիսներ, Երևան:
6. Լալայան Ե. -2021, Երկեր, վեց հատորով, պատ. խմբ.՝ Մ.Գ.Հորոսյան, ԳԱԱ հնագիտության և ազգագրության ինստիտուտ, Երևան, Հնագիտության և ազգագրության ինստիտուտի հրատ.:
7. Խեմչյան . -2021, Նվիրատուն և խորհրդատուն հայ ժողովրդական հեքիաթներում. Ուսումնասիրություն և նշացանկ, Երևան, ՀԱԻ հրատ.:
8. Կարս -2013, Հայոց բանասիրական մշակույթը, /կազմ.՝ Մ. Բ. Հարությունյան, Մ. Վարդանյան, Է. Խեմչյան, Լ. Ղեջյան, Մ. Խեմչյան, Երևան, «Գիտություն» հրատ., 116 էջ:
9. Հակոբյան Գ. -1974, Ներքին Բասենի ազգագրությունը և բանասիրությունը, «Հայաստան» հրատ., Երևան, 193 էջ:

10. ՀԺՀ -1963, հ. IV, Գիրակ, կազմող՝ Մկրտչյան Մ., Երևան, ՀՍՍՌ ԳԱ հրատ., 105 էջ:
11. ՀԺՀ -1967, հ. X, Տուրուբերան (Մուշ-Բուլանըխ), կազմող՝ Տարոնցի Մ., ՀՍՍՀ ԳԱ հրատ.:
12. ՀԺՀ -1999, հ. XIV, Վան-Վասպուրական, կազմող՝ Սվազյան Վ., Երևան, «Ամբոց» հրատ.:
13. ՀԼԲԲ -2004, Հայոց լեզվի բարբառային բառարան, հ. 1, Հր. Աճառյանի անվան լեզվի ինստիտուտ, Երևան, «Գիտություն» հրատ.:
14. Մալխասեանց Ս. -1944, Հայերեն բացատրական բառարան, հ. 3, Երևան, ՀՍՍՌ Պետհրատ:
15. Մոկս -2015, Հայոց ց բանահյուսական մշակույթը, կազմողներ՝ Հարությունյան Ս.Բ., Խեմչյան Է. Հ., Խեմչյան Մ. Հ., Պողոսյան Ա. Կ., Երևան, «Գիտություն» հրատ.:
16. Ծաղոյան Ա. -2007, Ուրծածոր (Ուրծածոր գյուղի պատմությունը), Երևան, Հեղ. հրատ., 105 էջ:
17. Calvino I. -1980. Italian Folktales. Selected and translated by I. Calvino, translated by George Martin.
18. Haase D. -2008. The Greenwood Encyclopedia of Folktales and Fairy Tales: G-P, Greenwood Publishing Group. 639 p.

Ընդունվել է՝ 26. 09. 2022
Գրախոսվել է՝ 05. 10. 2022
Հանձնվել է տպ.՝ 28. 11. 2022

Տեղեկություններ հեղինակի մասին

Հասմիկ ՄԱՏԻԿՅԱՆ՝ բանասիրական գիտությունների թեկնածու,
ՀՀ ԳԱԱ Գիրակի հայագիտական հետազոտությունների կենտրոնի գիտաշխատող,
Գիրակի Մ. Նալբանդյանի անվան պետական համալսարանի դասախոս,
Էլ. ասցե՝ hasvrej@mail.ru

ՀՏԴ՝ 811.16.1(07)

DOI: 10.52971/18294316-2022.25.2-67

ОСНОВНЫЕ ЯЗЫКОВЫЕ ИСТОЧНИКИ СОВРЕМЕННОЙ ТЕРМИНОЛОГИИ

Нина Карпетян

Гюмрийский филиал Национального политехнического университета Армении

Амалия Багарян

Армянский государственный экономический университет

Ключевые слова: терминообразование, специальная лексика, язык науки и техники.

Рассматриваются наиболее частотные источники и способы терминообразования в русском языке. Указываются основные формы их образования: базовые термины, общенаучные, общетехнические термины, термины мировой семантики.

Показана важность системы языка и её языковых норм, которые влияют на принципы становления, сформирования технической и, в частности, русской терминологии. К способам терминообразования относятся: аббревиация, морфологический и синтаксический способы.

Введение: В XXI веке, в век техники и новейших технологий, наблюдается бурный научно-технический процесс, который приводит к новейшим открытиям в различных областях знаний и способствует формированию высокоэффективных информационно-управленческих технологий. Язык науки и техники, т.е. научный стиль речи, русская профессиональная терминология также подвергаются глобальной трансформации. Это обусловлено тем, что возникает объективная необходимость называть новые явления, предметы и процессы соответствующими языковыми средствами, т.е. терминами и терминологическими словосочетаниями. Следовательно, увеличивается и количество новых слов, словосочетаний, выражений, которые должны соответствовать этим новейшим открытиям, обогащая при этом имеющийся языковой и словарный запас лексики¹.

¹ Абаяев В. -1949, вып.1.с.116.

Уместно указать на важность системы языка и её языковых норм, которые влияют на принципы становления, формирования технической и, в частности, русской терминологии.

При прохождении фундаментальных дисциплин студенты технических вузов впервые сталкиваются с научной литературой и испытывают серьезные затруднения при понимании научного текста, его толковании, осмыслении и употреблении в устной речи. Возникает необходимость серьезной подготовки и точного воспроизведения с целью безошибочной передачи его значения на родной язык².

Цель статьи – рассмотреть основные языковые источники терминообразования. Считаем, что наиболее частотными источниками формирования новых научных терминов являются:

а) базовые термины, которые образуют фундамент данной области знаний (например: IP-адрес – уникальный адрес каждого компьютера в интернете, антивирус, архиватор, база данных, байт, бит);

б) общенаучные и общетехнические термины, которые имеют одинаковую семантику (смысл), но конкретизируют эту семантику (например: операция – информационный процесс, блок питания, ячейка, ядро, принцип модернизации). Они предназначены для того, чтобы выражать понятия, применяемые ко всем областям научного знания: эталон, устройство, технология и т.д.;

в) термины мировой семантики – лексические единицы, которые в текстах по специальности меняют свою семантику: лист – бумажные лист, электронная таблица; окно – отверстие в стене и прямоугольная область по монитору, в которой отображаются программы; папка – обложка для бумаги, элемент графического интерфейса пользователя; переносимость – переносимость человека, особенность интернет сети³.

Эти слова вступают в омонимические отношения. Некоторые лингвисты считают и утверждают, что чем сильнее развита система многозначности в терминологии, тем основательнее изучен предмет мысли, тем точнее установлены связи между общенаучными понятиями и отраслевым понятийным аппаратом, тем структурированнее предстает объект исследования. Известно, что подъязык любой науки, её терминология находятся в диалектическом единстве с общелитературным языком как единой полифункциональной системой, и научная терминология является одной из подсистем лексической системы языка: копипастер, копирайт, копирайтер, линк, линкатор, линкбайтинг, лог-файл, логин, микроформаты, морда сайта, мыло, онлайн – офлайн, пага, паук и т.д.⁴.

Формирование компьютерного термина может происходить как с изменением внешнего облика слова национального языка, так и с сохранением старой формы, но пополнением новым содержанием: окно документа, поле имени, буксировка мышью, вторичное окно, зависание программы⁵.

В компьютерной терминологии много терминов, имеющих смежность понятий по типу: действие → результат действия. Например: вырезка, отладка, вставка, правка⁶.

Однако анализ терминов компьютерной графики показал, что наиболее продуктивным образованием терминов является перенос значений по смежности: род – вид, целое – часть, большее – меньшее. Например: мегафайл - файл, микропроцессор – процессор, кило-

² Акуленко В. -1972.

³ Андреев Н. -1971. с. 36.

⁴ Батхин М. -1998.

⁵ Батхин М. -1998.

⁶ Борковский Ф. -1990.

байт – байт, суперкомпьютер – компьютер, кэш – память, буфер обмена, буферный файл, суп – файл⁷.

Для терминологической системы характерны следующие способы создания:

- морфологический способ (по соответствующим словообразовательным моделям);
- семантический способ, который реализуется при помощи развития специальных значений в словах естественного языка;
- вторичная номинация – использование имеющегося в языке слова для названия научного понятия: мышь, экран, окно, ячейка;
- словообразовательный способ – образование терминов при помощи префиксов (перегрузка), суффиксов (рендеринг, насыщенность), путем сложения слов и основ (рукописный), сокращения слов (ОЗУ). Этот способ терминообразования самый продуктивный;
- синтаксический способ – использование словосочетаний для названия научных понятий: аналоговый видеосигнал;
- различные типы заимствований (словообразовательное и семантическое калькирование)⁸.

Заимствования – названия научного понятия иноязычным словом: интернет, интерфейс, модем, сервер, компакт-диск, инструментарий, локальное обеспечение, монитор, дисплей⁹.

Калькирование – это способ перевода лексической единицы оригинал путем замены ее составных частей – морфем или слов (в случае устойчивых словосочетаний) – их лексическими соответствиями в языке перевода. Сущность калькирования заключается в создании нового слова или устойчивого сочетания в языке перевода, копирующего структуру исходной лексической единицы. Например: аналогия, аргумент, асимметрия, дедукция, индекс и т.д.¹⁰.

Прогрессирующие процессы компьютеризации диктуют необходимость адекватной трансляции соответствующих текстов, написанных на одном языке, на другой. Но сегодня в подавляющем большинстве случаев актуальной проблемой является перевод английских компьютерных терминов на русский. Это нужно для перевода технической документации, литературы, для лексикографической работы¹¹.

Сложность перевода текстов компьютерной тематики заключается в том, что многие компьютерные термины относятся к без эквивалентной лексике, т.е. не имеют регулярных соответствий в русском языке (кроме описательных статей в словарях)¹².

Следует отметить, что среди однословных заимствований нередко встречаются слова типа лэптоп, ноутбук (переносной компьютер) или массмедиа, имиджмейкер, которые в английском образованы путем словосложения (laptop, note-book) или являются двумя независимыми словами (massmedia, imagemaker), но в русском имеют характер нерасчисленности, и поэтому оказываются предпочтительнее словосочетаний, состоящих их двух или более

⁷ Борковский Ф. -1990.

⁸ Борковский Ф. -1990.

⁹ Войскуиский А. -2001. <http://psynet, carfax.ru/texts/voysk6.htm>.

¹⁰ Войскуиский А. -2001. <http://psynet, carfax.ru/texts/voysk6.htm>.

¹¹ Войскуиский А. -2001. <http://psynet, carfax.ru/texts/voysk6.htm>.

¹² Галичкина Е.-2001; Канделаки Т.-1977.

лексических единиц (портативный компьютер, средства массовой информации и т.п.).¹³ Постепенно компьютерные термины приобретают переводческие соответствия, и этот процесс требует изучения. В то же время существующие словари компьютерной техники, либо описывают лишь часть терминологии. Это относится даже к онлайн-словарям, которые по своей природе должны идти вровень с прогрессом. Например глоссарий перевода интерфейса Microsoft International Word List описывает только термины, относящиеся к операционной системе Windows, причем составитель допускает грубые ошибки. Так, слово pointer предлагается переводить как “указыватель” (вместо “указатель”), а slider – как “ползунок” (вместо “регулятор”).

Сообщество компьютерных специалистов интернационально по всей сути, но в качестве lingua franca используют английский – язык, на котором создавались первые языки программирования, первые операционные системы. Знание хотя бы технического английского является неотъемлемым свойством компьютерного специалиста. Поэтому данное сообщество всегда тяготело к заимствованию английских основ и применяло для перевода терминов в основном заимствование через транскрипцию, в том числе и в лимитивной функции, для выражения собственной элитарности. Это повлияло на появление таких терминов с заимствованной основой, как принтер, сканер, файл, модем, интерфейс, пакет и др. “Русификация” компьютерной терминологии – во многом плод стараний компании Microsoft, которая в русских версиях своей операционной системы Windows внедряла русскоязычные эквиваленты таких терминов, как, например, folder и browser – папка и обозреватель (программа для просмотра html-файлов, использующихся в WWW), соответственно.

Примечательно, что некоторые заимствования прижились в русском языке в двух видах. Например, термины floppydisk, router, decoder, videoblaster существуют в языке не только в виде транслитерации, но чаще всего в виде кальки. Нам было проведено сравнение по частоте встречи двух версий перевода одного и того же английского термина (“floppydisc” – флоппи-диск (57800000) – гибкий диск (1340000); “router” – роутер (6270000) – маршрутизатор (3810000), “decoder” – декодер (62300000) – дешифратор (330000), “videoblaster” – видеобластер (11000) – видеоплата (291000).

Популярность того или иного вида адаптации зависит от сферы использования термина. Большинство транслитерированных и транскрибированных терминов являются профессиональными жаргонизмами. Так как программисты часто имеют дело с языком – “оригиналом” компьютера – английским, соответственно они быстрее усваивают английскую морфологическую и фонетическую формы и без труда понимают друг друга. В то же время для многих терминов лингвисты подобрали более адекватную форму перевода, которая понятна для простых пользователей и намного полезней для языка-рецептора.

Выводы: Потребность современного общества в масштабном и высокоскоростном обмене информацией приводит к постоянной модификации электронных устройств, осуществляющих её хранение в обработку. Компьютер – универсальная машина, созданная для работы с информационными потоками, применяется в процессе подготовки к изданию книг, журналов, брошюр, при проведении конференций, лекций, в научных и технических расчетах, оформлении теле- и радиопередач и т.д. Одновременно с появлением новых технических устройств возникают термины, их номинирующие. Языком-источником для формирования компьютерной терминологии выступает английский. Современный этап развития русского языка характеризуется активизацией англоязычных заимствований ввиду ряда

¹³ Галичкина Е.-2001; Канделаки Т.-1977.

экстра- и интралингвистических причин. В качестве основных путей пополнения русской компьютерной терминосистемы выступают заимствование, семантическое словообразование и собственно словообразование. Современная русская компьютерная терминосистема характеризуется изменчивостью словарного состава и выступает организованной совокупностью взаимосвязанных единиц, включающей кодифицированные термины; термины, заимствованные из других областей научного знания; общетехнические термины. В целом словообразовательная адаптация сопровождается приобретением англоязычными компьютерными терминами грамматических свойств русского языка, а именно – категорий рода, числа, падежа у существительных, вида и времени у глаголов. Таким образом, проведенный в настоящем исследовании анализ процессов адаптации позволяет утверждать, что русская компьютерная терминология продолжает развиваться и формироваться, так как англоязычные компьютерные термины не освоены в полном объеме русским языком. Необходимо отметить, что наблюдается тенденция включения компьютерных терминов англоязычного происхождения в ассоциативный дискурс русскоязычных носителей, что подтверждает положение об их всесторонней адаптации по отношению к русской. Современный человек, вооруженный компьютером и системным мышлением, богатым словарным запасом, увидит окружающий мир иначе, воспримет его как процессуальный, сложный и непривычный, а самое главное – высокоорганизованный. Компьютерное начало, исследования по информатике, прикладной математике проникают во все области человеческой научной деятельности.

ԺԱՄԱՆԱԿԱԿԻՑ ՏԵՐՄԻՆԱԲԱՆՈՒԹՅԱՆ ՀԻՄՆԱԿԱՆ
ԼԵԶՎԱԿԱՆ ԱՂԲՅՈՒՐՆԵՐԸ

Կարապետյան Ն. Գ., Բահարյան Ա. Ա.

Բանալի բառեր՝ լեզվաբանություն, տերմինազոյացություն, գիտության և տեխնիկայի լեզու, հաստուկ բառապաշար, հապավում, փոխակերպում:

Դիտարկվում են ռուսաց լեզվում տերմինազոյացության հաճախակի հանդիպող աղբյուրները և մեթոդները: Նշվում են դրանց կազմավորման հիմնական ձևերը՝ բազային տերմիններ, ընդհանուր-գիտական, ընդհանուր-տեխնիկական, համաշխարհային իմաստաբանության տերմիններ: Ներկայացվում է լեզվական համակարգի և ձևերի կարևորությունը, որը մեծ ազդեցություն է ունենում տերմինաբանության ստեղծման և ձևավորման գործում:

THE MAIN LINGUISTIC SOURCES OF MODERN TERMINOLOGY

Karapetyan N. G., Baharyan A. A.

Key words: linguistics, terminology, science, special vocabulary, abbreviation, transformation.

Frequently encountered sources and methods of term formation in the Russian language are presented in the article. The main forms for their construction are basic terms, general-scientific, general-technical, and global semantics terms. The article presents the importance of the

language system and forms, which have a great impact on the creation and formation of terminology.

Б и б л и о г р а ф и я

1. **Абаев В. -1949.** О взаимоотношении иранского и кавказского элемента в осетинском. Осетинский язык и фольклор. М.-Л. Вып.1.
2. **Акуленко В. -1972.** Вопросы интернационализации словарного состава. -Харьков: Изд. Харьковского университета.
3. **Андреев Н. -1971.** Подъязыки как область взаимодействия социального и системного в семантических структурах // Семиотические проблемы языков науки терминологии и информатики: материалы симпозиума – рефераты и аннотации. – В 2-х ч.- М.
4. **Батхин М. -1998.** Наука об идеологиях и философия языка // Тетралогия.- М.- "Лабиринт".
5. **Борковский Ф. -1990.** Англо-русский словарь по программированию и информатике. – М.: Изд. "Русский язык".
6. **Войскуиский А. -2001.** Развитие речевого общения как результат применения Интернета // Конф. “Социальные и психологические последствия применения информационных технологий”. [http://psynet, carfax.ru/texts/voysk6.htm](http://psynet.carfax.ru/texts/voysk6.htm).
7. **Галичкина Е. -2001.** Специфика компьютерного дискурса на английском и русском языках: Дис. кандидата филологических наук– Астрахань; **Канделаки Т. -1977.** Семантика и мотивированность терминов. М.

Принята: 27. 08. 2022
Рецензирована: 29. 10. 2022
Сдана в пч.: 28. 11. 2022

Информация об авторах

Нина КАРАПЕТЯН: кандидат педагогических наук,
доцент кафедры гуманитарных дисциплин Гюмрийского филиала
Национального политехнического университета Армении,
Эл. адрес: nina.karapetyan.56@mail.ru

Амалия БАГАРЯН: аспирант кафедры микроэкономики
Армянского государственного экономического университета,
web программист, финансист "Ucom" LTD.
Эл. адрес: baharyan@mail.ru

ՀՏԴ՝ 81:3

DOI: 10.52971/18294316-2022.25.2-73

ԴԱՐՁՎԱԾՔՆԵՐԸ ԵՎ ԴԵՐԱՆՑ ՈՃԱԿԱՆ ԱՐԺԵՔԸ
ԱԲԻԳ ԱՎԱԳՅԱՆԻ ԱՐՁԱԿՈՒՄ

Սաթենիկ Եղիազարյան

Հայաստանի ազգային պոլիտեխնիկական համալսարան

Բանալի բառեր՝ դարձվածքներ, դարձվածքային սերտաճում, դարձվածքային միասնություն, դարձվածքային կապակցություն, դարձվածքային արտահայտություն, անվանական և հաղորդակցական դարձվածքային արտահայտություններ:

Հոդվածում քննվում են Աբիգ Ավագյանի արձակում տեղ գտած դարձվածքները, որոնք, լինելով վերաիմաստավորված կայուն կապակցություններ, «արտահայտում են այդ ժողովրդի գուտ ազգային, միայն նրան բնորոշ մտածողություն՝ կապված նաև կենցաղի, ազգային սովորույթների և ապրելակերպի հետ»¹: Անժխտելի է, որ յուրաքանչյուր ազգի գրականության մեծագույն արժանիքներից մեկը ազգային դիմագծի, կոլորիտի, գուներանգի վերարտադրությունն է: Իսկ դարձվածքը բոլոր լեզվամիջոցներից ամենից լավ է արտահայտում ժողովրդի ոչ միայն լեզվամտածողության ու հոգեբանության ինքնատիպությունը, այլև կենսափորձը, պատմությունը, սովորույթները, կենցաղն ու աշխարհաճանաչումը²: Վերջիններիս միջոցով է նաև, որ գեղարվեստական խոսքը դառնում է դիպուկ, պատկերավոր և արտահայտիչ:

Նախաբան. Կան գրողներ, որոնց երկերի լեզվում դարձվածքների հաճախակի գործածությունը հասնում է այնպիսի աստիճանի, որ խոսքի ոճավորման այս եղանակը

¹ Եզեկյան Լ. -1986, էջ 35:

² Բաղիկյան Խ. -2000, էջ 14:

կարող է դիտվել իբրև տվյալ գրողի խոսքարվեստի բնորոշ հատկանիշներից մեկը: Հմտորեն օգտվելով ազգային լեզվի դարձվածքների հարուստ գանձարանից՝ գրողն իրականացնում է բազմազան ոճական նպատակներ՝ ապահովելով խոսքի հակիրճությունը, հուզականությունը, արտահայտչականությունը, ոճի բազմազանությունը, խոսքի տիպականացումը, վերարտադրելիությունը: Հատկանիշներ, որոնք գեղարվեստական գրականության լեզվի արժանիքներից են, խոսքը ներգործուն, տպավորիչ դարձնող գործոններ:

Ա. Ավագյանի բառապաշարում տարբերում ենք դարձվածքների իմաստային-շարահյուսական հետևյալ տեսակները.

ա) *Դարձվածքային սերտաճում*. այս խմբի մեջ մտնում են այն դարձվածքները, որոնց ընդհանուր իմաստը չի բխում դարձվածքի կազմի մեջ մտնող բաղադրիչ բառերի բառային իմաստներից: Դրանք բառային անբաժանելի կապակցություններ են, որոնց մեջ բառերը լիովին կորցնում են հասարակության կողմից ընդունված իրենց բառային իմաստները և վերաիմաստավորվելով դառնում են դարձվածքի ամբողջական իմաստի բաղադրիչ: Օրինակ՝ *զլուխ բերել³-հաջողել*՝ «Մենք ձեր այդ քարտուղարի գործը *զլուխ կբերենք*, պարո՛ն» (ՇՀ, 137), *անկողին ընկնել-հիվանդանալ*՝ «Է՛, վատ ժամանակ *անկողին ընկա*, աշխատանքի եռուն օրեր են» (ՆԲ, 175), *տարիք առնել-մեծանալ*՝ «Որդի Բաբեն *տարիք առավ* Բենդում» (Պ, 15, 1963): Դարձվածքների բաղադրիչները, զրկվելով իրենց բուն իմաստից, վերաիմաստավորվում են և միասնաբար նոր իմաստ են արտահայտում: Այս դարձվածքները որոշակի քերականական կարգերի (խոսքի մասերի) պատկանող, բացարձակապես անբաժան, միաձույլ իմաստային միավորներ են: Նրանց բաղադրիչների մեջ կենդանի, գործող շարահյուսական կապի բացակայության պատճառով նախադասության մեջ հանդես են գալիս իբրև մեկ ամբողջական, անբաժանելի անդամ: Դարձվածքի բաղադրիչ հանդիսացող յուրաքանչյուր բառ ոչ միայն չունի հանրորեն գիտակցված և ընդունված իր բառային իմաստը, այլև ընդհանրապես գուրկ է որևէ ինքնուրույն, առանձին բառային իմաստից⁴:

բ) *Դարձվածքային միասնություն*. այս խմբի մեջ մտնում են այն դարձվածքները, որոնք իմաստաբանորեն նույնպես անբաժան են և ամբողջական, բայց, ի տարբերություն նախորդի, սրանց դարձվածքային ընդհանուր իմաստը որոշ չափով պատճառաբանված է դարձվածք կազմող բաղադրիչների առանձին փոխաբերական իմաստներով: Նման դեպքերում դարձվածքի իմաստը բխում է առանձին բաղադրիչների բառային իմաստների միավորումից, որոնք, ունենալով փոխաբերական իմաստ, արտահայտում են ընդհանրացված բովանդակություն: Օրինակ՝ *լեզուն կսպ ընկնել*՝ «Աղջիկը անձրևից թրջվել էր, դողում էր, վախից *լեզուն կսպ էր ընկել*» (ՀՏ, 114), *խելքը զլխին*՝ «-Այդ մեր լեյտենանտ Միխայելովը *խելքը զլխին* տղա էր...» (ՇՀ, 150-151), *երես դարձնել*՝ «Սա պարզապես ուզում է *երես դարձնել* երջանկությունից» (Պ, 112, 1965): Այսպիսի կառույցները, լինելով ժողովրդի պատկերավոր լեզվամտածողության, իրերի

³ Բեդիրյան Պ. - 2011, էջ 311:

⁴ Սուքիասյան Ա. -1982, էջ 375:

և երևույթների գնահատման սեղմ և կուռ արտահայտիչներ, խոսքին հաղորդում են յուրահատուկ կենդանություն և աշխուժություն:

Դարձվածքային սերտաճումը և դարձվածքային միասնությունը՝ իբրև իմաստային տեսակետից անբաժանելի միավորներ և բառերի համարժեքներ, միավորվում են մեկ խմբի մեջ և լեզվաբանության մեջ կոչվում են *իդիոմներ* կամ *իդիոմատիկ արտահայտություններ*⁵:

գ) *Դարձվածքային կապակցություն*. այս խմբի մեջ մտնում են այն դարձվածքները, որոնց ընդհանուր իմաստը ամբողջովին բխում է դարձվածք կազմող բաղադրիչ բառերի բառային իմաստներից: Այս դեպքում բաղադրիչները հիմնականում պահպանում են իրենց իմաստային ինքնուրույնությունը, այնուամենայնիվ, մնում են կախյալ վիճակում, և բաղադրիչներից մեկը հաճախ հանդես է գալիս փոխաբերական իմաստով: Օրինակ՝ *ականջ դնել*՝ «Խորենենց տան մոտ նրանք կանգ առան, *ականջ դրին*» (Վ, 78), *գլուխ ջարդել*՝ «Լեսինկովը *գլուխ էր ջարդում* որևէ միտք դուրս կորզել այդ սարսափելի լեզվից» (ՇՀ, 192), *գլուխն ազատել*՝ «Զփորձե՛ք ձեր *գլուխն ինձանից ազատել*, վարպե՛տ, ես աներես թղթակցի համառություն ունեմ» (Պ, 6, 1965):

Հարկ է նշել, որ Ա. Ավագյանի երկերում հաճախ են հանդիպում մարմնի մասերի անվանումներից կազմված դարձվածքները, որը միանգամայն բացատրելի և հասկանալի է, որովհետև մարդ արարածը, անհատը իրենով, իր օրգանիզմով, զգայարաններով ու զգայություններով է կապվում աշխարհի հետ, և վերջինս դրանց միջոցով բեկվելով է հասնում նրա իմացությանն ու գիտակցությանը⁶: Նման կայուն բառակապակցությունների արտահայտած փոխաբերական իմաստները խոսքը դարձնում են առավել պատկերավոր և տպավորիչ: Օրինակ՝ *գլուխ հանել*՝ «Մատանան գիտե, ոչ մի բանից չի լինում *գլուխ հանել*» (ՇՀ, 136), *սիրտը բացել*՝ «Այնտեղ նրանք առանձնացան, և մի լավ ծառի տակ Միհրանը *սիրտը բացեց*» (ՎՀ, 101), *պոչ խաղացնել*՝ «Ուզում ես *պոչ խաղացնել* մի լրբի առաջ» (Պ, 26, 1958):

դ) *Դարձվածքային արտահայտություն*. սրանք այն կայուն դարձվածաբանական միավորներն են, որոնք իմաստային տեսակետից ոչ միայն բաժանելի են, այլև կազմված են ազատ իմաստ ունեցող բաղադրիչ բառերից, և դարձվածքի ընդհանուր իմաստն ամբողջապես կախված է և բխում է դարձվածք կազմող բաղադրիչ բառերի բառային իմաստից: Սրանք որոշ չափով մոտենում են դարձվածքային միասնություններին և դարձվածքային սերտաճումներին:

Ա. Ավագյանի արձակում իրենց առանձնահատուկ տեղն ունեն դարձվածաբանական արտահայտության երկու դրսևորումները՝ *անվանական և հաղորդակցական* դարձվածքային արտահայտությունները: Հեղինակը վարպետորեն է գործածում և՛ անվանական, և՛ հաղորդակցական դարձվածքներն իր երկերում:

ա) *Անվանական դարձվածքային արտահայտությունները* բառային արժեք ունեն, բառերի նման լեզվում անվանական դեր են կատարում և տրամաբանորեն համապատասխանում են հասկացությանը: Այսինքն՝ սրանք ստորոգումից զուրկ դարձ-

⁵ Նույն տեղում, էջ 377:

⁶ **Քեդիբյան Պ. -1973**, էջ 91:

վածքներն են, որոնք անվանողական արժեք ունեն և համարժեք են բառերին: Այս դեպքում դրանք վերախնաստավորված ձևով նշում են անձը, առարկան, երևույթը, սրանց հատկանիշները, որոնք բառերի պատկերավոր և արտահայտչական համարժեք ձևեր են: Օրինակ՝ *ձեռքը նեղ*՝ «Իմ *ձեռքը նեղ* չէ,-ասաց տղան,-չեմ թողնի, որ պակասություն ունենաս» (ՎՀ, 146), *հին գայլ*՝ «Ինչ խոսք, որ անգլիացիներն Իրանում *հին գայլեր են*, ամբողջ երկիրը գիտեն իրենց գրպանի պես» (ՇՀ, 423):

Ա. Ավագյանի գեղարվեստական խոսքում երբեմն կարելի է հանդիպել դարձվածքների, որոնք հոմանիշային հարաբերության մեջ են գտնվում: Հեղինակը դարձվածքի բաղադրիչներից մեկը փոխարինում է որևէ իմաստով մոտ, հոմանիշ բառով: Օրինակ՝ *երես շուռ տալ* դարձվածքին որպես համարժեք օգտագործում է գրական լեզվում գործածվող *երես դարձնել* դարձվածքը. «Էլի մարդիկ եկան, թե հարկավոր է *երես շուռ տալ*, ն՛ կապալառուից, ն՛ գյուղապետից, ն՛ մոլլայից *երես դարձրինք*, մեզ քարշ տվին արքոր» (Վ, 153): Կամ՝ *կաշվից դուրս գալ* (Պ, 37, 1955) և *մաշկից դուրս գալ* (Հ, 232), *գլխին քարոզ կարողալ* (ՆԴ, 6) և *գլխին խրատներ կարողալ* (ՆԴ, 42): Ինչպես նկատում է Ա. Մուքիայանը. «Այս կարգի դարձվածքները միջին դիրք են գրավում դարձվածքային տարբերակների և դարձվածքային հոմանիշների միջև, դարձվածքային իմաստների նույնության պատճառով որոշակի համատեքստերում հնարավոր է դրանց ոչ ընդհանուր բաղադրիչների փոխադարձ փոխարինությունը»⁷: Հեղինակի խոսքարվեստում նկատելի են նաև հականիշ դարձվածքներ, որոնք ուժեղացնում են խոսքի արտահայտչականությունը: Օրինակ՝ «Մա՛մ, դու ամեն ինչ կարող ես անել,- մտածեց Մանվելը,-ն՛ *բախտդ կապել* նրան, ն՛ *բախտդ չկապել*» (Հ, 264): Այս կարգի դարձվածքները հարազատորեն արտացոլում են ժողովրդի ազգային լեզվամտածողությունը, լեզվական ճաշակը, խոսք կառուցելու նախընտրած ձևերն ու եղանակները:

բ) *Հաղորդակցական բնույթի դարձվածքային արտահայտությունները* նախադասություններին համարժեք կապակցություններն են, որոնք տրամաբանորեն համագոր են դատողությանը: Դրանք տարբերվում են անվանական դարձվածքային արտահայտություններից նրանով, որ ստորոգում արտահայտելով՝ նախադասություններ են, տրամաբանորեն՝ դատողություններ: Վերջիններս նաև «այլաբերական-փոխաբերական իմաստ արտահայտող այնպիսի կառույցներ են, որոնք խոնարհված բայով բաղադրիչ են ունենում և հանդես են գալիս նրա հետ իբրև ամբողջական, ամփոփ միավոր»⁸: Օրինակ՝ «Բա ես ի՞նչ հող տամ իմ գլխին, Առուստա՛մ աղա» (ՎՀ, 86), «-Հարո՛ւթ, մեր արևը խավարեց» (Պ, 121, 1958):

Հայերենում դարձվածքների կազմությանը հիմնականում մասնակցում են նյութական իմաստ արտահատող խոսքի մասերը, մասնավորապես՝ գոյականը, ածականը, բայը: Ուսումնասիրությունները ցույց են տալիս, որ Ա. Ավագյանի արձակում մեծ թիվ են կազմում այն դարձվածքները, որոնց գլխավոր բաղադրիչն արտահայտված է բայով: Դա բացատրվում և պայմանավորվում է, անշուշտ, այն մեծ դերով, որ խաղում է

⁷ Մուքիայան Ա. -1982, էջ 313:

⁸ Մարգարյան Ալ. -1990, էջ 310:

բայ խոսքի մասը խոսքի կառուցման, բառերի կապակցման գործում և առհասարակ հաղորդակցական գործընթացում:

Բայ գերադաս անդամով դարձվածքները, ըստ բաղադրիչների քանակի, լինում են մի քանի տեսակ:

ա) *Երկբաղադրիչ. գլուխ ցավեցնել*՝ «Այն ժամանակ ինչո՞ւ ենք զուր տեղը *գլուխ ցավեցնում*, կալանավորներին բաց թողնենք իրենց տները վերադառնան» (ՇՀ, 159), *տանուլ տալ*՝ «Եթե տպարան խուժեն,-շնչաց Լևոնը,-ապա մենք շատ բան *տանուլ կտանք*» (Վ, 77):

բ) *Եռաբաղադրիչ. մաշկից դուրս գալ*՝ «Հարությունը պատմեց, որ վաճառատուն հիմնադրելու օրից մինչև օրս *աշխատել է մաշկից դուրս գալով*՝ գիշեր-ցերեկ» (ՎՀ, 75), *աշխարհին հրաժեշտ տալ*՝ «Բայց չէ՞ որ քո այդ ողջ ունեցվածքդ կկորչի, կզնա, երբ այս *աշխարհին հրաժեշտ տաս*» (ՎՀ, 76):

գ) *Քառաբաղադրիչ. բախտավոր աստղի տակ ծնվել*՝ «Մարդիկ կան, որոնք *բախտավոր աստղի տակ կծնվեն*,-ասաց նա, երբ արդեն սուրճ էինք խմում» (ՎՀ, 74-75), *պղտոր ջրում ձուկ որսալ*՝ «Նման անհիմն հայտարարություններով կարմիր գործակալներն ուզում են *պղտոր ջրում ձուկ որսալ*» (ՇՀ, 419):

Բայով արտահայտված բաղադրիչը հիմնականում գործածվում է գոյականի հետ և ըստ քերականական որոշ հատկանիշների՝ սեռի, խնդրառության համապատասխան կազմում է բազմատեսակ հարաբերություններ արտահայտող դարձվածքներ:

Ա. Ավագյանի բառապաշարում առանձնանում են գոյականի կապակցությամբ հետևյալ դեպքերը.

ա) գոյական+գոյական կառույցով. *խելքը գլխին*՝ «Այդ մեր լեյտենանտ Միխայելովը *խելքը գլխին* տղա էր» (ՇՀ, 150-151), *առյուծի սիրտ*՝ «Էդ մարդը, ես չեմ ասի գելի՛ *առյուծի սիրտ* ուներ» (ՄԱ, 38):

բ) Գոյական+գոյական+բայ կառույցով. *աչքի պոչով նայել*՝ «Ղազարոսի տղան *աչքի պոչով* զգույշ հետ է նայում և...» (ՎՀ, 110):

գ) Ածական+ածական+բայ կառույցով. ծանր ու թեթև անել՝ «Տեսողե՛ր, մի լավ *ծանր ու թեթև անեիր*» (Պ, 45, 1958):

դ) Ածական+գոյական կառույցով. «Լսի՛ր, դու *բարի պտուղ* չես երևում» (Վ, 173): Ինչպես ցույց են տալիս օրինակները, հեղինակի բառապաշարում մեծ թիվ են կազմում, մասնավորապես, բայական դարձվածքները, որոնք հերոսների խոսքը ոճավորելու, խոսողի վերաբերմունքն ու հույզերն արտահայտելու, կերպարի խոսքին հուզաարտահայտչական երանգավորում հաղորդելու լավագույն միջոցներ են:

Ա. Ավագյանի բառապաշարում ընդգծված արտահայտչականությամբ առանձնանում են *եղանակավորող դարձվածքները*, որոնք իրենց ձևաբանական և շարահյուսական առանձնահատկություններով տարբերվում են անվանական և բայական արժեք ունեցող դարձվածքներից և մեծ մասամբ հաղորդակցական արժեք ունեն: Դրանց ճնշող մասը հարաբերակից է նախադասություններին: Վերջիններս խոսքը ոճավորելու, խոսողի վերաբերմունքն ու զգացմունքներն արտահայտելու, խոսքին հուզաարտահայտ-

չական երանգ հաղորդելու անփոխարինելի միջոցներ են: Օրինակ՝ «Խոսքը մեր մեջ, Շավարժ, անհաշտ մարդ է քո ընկերը, է՛հ, աստված իր հետ» (Հ, 225) և այլն:

Ա. Ավագյանի խոսքում կարելի է հանդիպել դարձվածքների, որոնք օգտագործվում են միջարկումներով, այսինքն՝ բառեր և կապակցություններ են ավելանում դարձվածքների մեջ: «Ավելացումը պայմանավորվում է դարձվածքի բովանդակության մասնավորումով՝ այն հաշվով, որ կատարելապես համապատասխանի խոսքային միջավայրին, նպաստի նկարագրության կոնկրետությանը, մտքի առավել դիպուկ արտահայտմանը»⁹: Օրինակ՝ «Գևորգի դեմքը ցավից կուչ էկավ և, չգիտես ինչու, *ականջներն սկսեցին այրվել*» (ՎՀ, 216):

Դարձվածքների բնորոշ հատկանիշներից է նաև խոսքի սեղմությունը, հա-կիրճությունը, որոնք հնարավորություն են տալիս դիպուկ ձևով արտահայտելու միտքը և զերծ մնալու ավելորդ նկարագրություններից: Ահա այդպիսի դեր են կատարում հետևյալ ժողովրդական դարձվածքները. «Եթե աշխարհը պաժառ ընկնի, Մերգե՛յ, դու *մատդ մատիդ չես դիպցնի*» (Պ, 35, 1958), «Ըհը,-ասաց Արփիկի մայրը,-*մեր լավությանն ատամներով է հատուցում*» (ԵԷՉԵ, 35) և այլն: Դիպուկ գործածված դարձվածքներն այնքան խոսուն են և տպավորիչ, որ հերոսներին ներկայացնելու համար մանրամասնությունների կարիք այլևս չի զգացվում:

Երբեմն դարձվածք գործածողն իրավիճակի տիպականությունն ընդգծելու նպատակով հավելում է *«ինչպես ասում են»* և նման կարգի այլ արտահայտություններ, որոնք դարձվածաբանության մեջ կոչվում են օժանդակ ցուցիչներ¹⁰: Օրինակ՝ «Նա, իհարկե, այդպիսին չէ,- այնուհետև շարունակեց Նազելին,-գույները, *ինչպես ասում են, շատ եք խտացնում*» (ՆԳ, 114):

Երբեմն դարձվածքի բաղադրիչ են դառնում կենդանիներին, բնության երևույթներին վերաբերող բառերը: Օրինակ՝ *ուղտի ականջում քնել*՝ «Քո հայրը ծնված օրից քնել է *ուղտի ականջում*» (ՎՀ, 196), *դարմանը քամուն տալ*՝ «Դա, իհարկե, ցնդաբանություն է, հինգերորդ գորասյան *դարմանը քամուն է տված*, այստեղ ուրիշ շանսեր կան» (ՇՀ, 101):

Հաճախ հեղինակը լեզվում եղած դարձվածքի բաղադրիչ բառը փոխարինում է համարժեք այլ բառով՝ նոր երանգներ հաղորդելով խոսքին: Օրինակ՝ «Մանվելի համար իր կյանքի ողջ պատմությունն սկսեց մարմնավորվել այն ժամանակ, երբ այլևս կորցնելու ոչինչ չուներ, վերադարձի բոլոր կամուրջները *փլվել էին*, սկսվող բոլոր ճանապարհների առջև պատեր էին բարձրացել» (Հ, 225), «Եթե ես մի օր գրասենյակից բացակայեմ, այնտեղ բաբելոնյան *խրտում կսկսվի*» (ՇՀ, 19), «Հարուլը սատանայից *երեք* օր առաջ է ծնվել, նա չի սխալվել» (ՇՀ, 326): Ընդգծված բառերը փոխարինել են՝ *այրվել, խտնաշփոթ, յոթ* տարբերակներին:

Որոշ դարձվածքներում հեղինակը գրական մշակման է ենթարկել նրանցում եղած ժողովրդախոսակցական ձևերը՝ գրական ձևերով փոխարինելով: Այսպես, օրի-

⁹ Մելքոնյան Ա. - 1984, էջ 35:

¹⁰ Բաղիկյան Խ. - 2000, էջ 23:

նակ, ծուղակ բառը փոխարինվել է *որոզայթով*. «Գեղեցիկ կինը, հոգի՛ս, գեղեցիկ *որոզայթ է*» (ՆԷ, 106):

Եզրահանգում. Ուսումնասիրելով Ա. Ավագյանի արձակույթում տեղ գտած դարձվածքները՝ հանգում են այն եզրակացության, որ դարձվածքների գործածությամբ գրողի խոսքը դարձել է ժողովրդական լեզվամտածողությանը հարազատ, դիպուկ, պատկերավոր և բազմազան, քանի որ դրանք խոսքը ոճավորելու անփոխարինելի միջոցներ են:

ФРАЗЕОЛОГИЗМЫ И ИХ СТИЛИСТИЧЕСКОЕ ЗНАЧЕНИЕ В ПРОЗЕ АБИГА АВАГЯНА

Егiazарян С. Е.

Ключевые слова: *фразеологизмы, фразеологическое сращение, фразеологическое единство, фразеологическое словосочетание, фразеологическое выражение, именное и коммуникативное фразеологические выражения.*

Исследуя нашедшие в прозе А. Авагяна фразеологизмы, приходим к выводу, что с применением фразеологизмов слово писателя стало родственным народному языковому мышлению, четким, образным и многозначным, поскольку фразеологизмы являются незаменимыми способами стилизации слова.

PHRASEOLOGICAL UNITS AND THEIR STYLSTIC VALUE IN ABIG AVAGYAN'S PROSE

Yeghiazaryan S. E.

Key words: *phraseological units, phraseological fusion, phraseological unity, phraseological collocation (combination), phraseological expression, nominal and communicative phraseological expressions.*

Studying the phraseological units found in A. Avagyan's prose, we conclude that the writer's speech has become close to the national language thinking (awareness): proper, descriptive and diverse; they are indispensable means of speech styling.

Համառոտագրություններ

1. Ա.-Արիգ Ավագյան
2. ԵԷՉԵ-«Եղել է, չի եղել», 1973:
3. Հ-«Հարված», 1978:
4. ՀՏ-«Հարավային տենդ», 2002:
5. ՆԷ-«Նազելի Դալարյան», 1959:
6. ՇՀ-«Շիկացած հող», 1955:

7. Վ-«Վաղը». 1951:
8. ՎՀ-«Վերջին հանգրվան», 1982:
9. Պ-«Պատմվածքներ», 1958:
10. ՄԱ-«Մարդը անապատում», 1988:

Գրականություն

1. **Բաղիկյան Խ.-2000**, Դարձվածային ոճաբանություն, Երևան:
2. **Բեղիբյան Պ.-1973**, Ժամանակակից հայերենի դարձվածաբանություն, Երևան:
3. **Բեղիբյան Պ.-2011**, Հայերեն դարձվածքների ընդարձակ բացատրական բառարան, Երևան:
4. **Եզնկյան Լ.-1986**, Հրանտ Մաթևոսյանի արձակի խոսքարվեստի մի քանի հարցեր, Երևան:
5. **Մարգարյան Ալ.-1990**, Ժամանակակից հայոց լեզու, Երևան:
6. **Մելքոնյան Մ.-1984**, Ակնարկներ հայոց լեզվի ոճաբանության, Երևան:
7. **Մուքիսայան Ա.-1982**, Ժամանակակից հայոց լեզու, Երևան:

Ընդունվել է՝ 13.07.2022
Գրախոսվել է՝ 10.08.2022
Հանձնվել է տպ.՝ 28.11.2022

Տեղեկություններ հեղինակի մասին

Սաթենիկ ԵՂԻԱԶԱՐՅԱՆ՝ բանասիրական գիտությունների թեկնածու
Հայաստանի ազգային պոլիտեխնիկական համալսարանի լեզուների
գիտակրթական կենտրոնի հայոց լեզվի ամբիոնի դոցենտ,
Էլ. հասցե՝ esatenik@mail.ru

ՀՏԴ՝ 904:621

DOI: 10.52971/18294316-2022.25.2-81

ՇԻՐԱԿԻ ՊԱՇՏՊԱՆԱԿԱՆ ՀԱՄԱԿԱՐԳԻ ԶԵՎԱՎՈՐՄԱՆ
ԳՈՐԾԸՆԹԱՅԸ

Գայանե Քոչարյան

ՀՀ ԳԱԱ հնագիտության և ազգագրության ինստիտուտ

Բանալի բառեր՝ Շիրակի գոգավորություն, ամրաշինական կառույցներ, գծային պաշտպանական համակարգ, համակենտրոն պաշտպանական համակարգ:

Սույն հոդվածում պատմահնագիտական առկա տվյալների համալիր ուսումնասիրության հիման վրա Շիրակը ներկայացվում է որպես Այրարատ նահանգի պաշտպանական համակարգի մասը կազմող կարևորագույն օղակներից մեկը: Պաշտպանական համակարգերի ձևավորման գործընթացը շարունակական երևույթ է, այն տևականորեն համարվելով է իրականանում և ամբողջանում: Փորձ է արվում վերականգնելու Շիրակի պաշտպանական համակարգի շուրջ հինգ հազարամյա պատմության ընդհանրական բնութագիրը: Տեսական զարգացման գործընթացում, ժամանակի պահանջի թելադրանքով որոշակի սրբագրումներ կրելով հանդերձ, Շիրակի պաշտպանական համակարգը պահպանում է իր հիմնական ուրվապատկերը:

Նախաբան. Հնագիտական հետազոտությունները հավաստում են Կարսի սարահարթով, Շիրակի ու Փամբակի լեռնաշղթաներով, Արագածի լեռնավահանով շրջափակված Շիրակի միջլեռնային արգասաբեր գոգավորության բնական պաշտպանվածությունը ամրաշինական կառույցներով գորացնելու իրողությունը՝ վաղ բրոնզի դարից ներառյալ զարգացած միջնադարը: Պատմահնագիտական սկզբնաղբյուրների պարունակած տեղեկատվությունը և տեղագրական տվյալները հնավորություն են ընձեռում ուրվագծելու Շիրակի գոգավորության պաշտպանական համակարգի համապատ-

կերը, ճշտելու կառուցվածքային բնութագիրը և հետամուտ լինելու զարգացման ընթացքին: Հետազոտությունների ընձեռած տվյալների համեմատական քննությամբ բացահայտվում է Շիրակի պաշտպանական համակարգի զարգացման հիմնական փուլերի անսքող կապը տարածաշրջանի ռազմաքաղաքական իրադրությունների հարափոփոխ դրսևորումների հետ:

Խնդրի դրվածքը և արդի վիճակը

Անուրանելի է մեծ երախտավորներ Ատրպետի, Թ. Թորամանյանի, հատկապես Ն. Մառի արշավախմբի կողմից¹ Շիրակի ամրաշինական կառույցների ուսումնասիրության կարևորությունը՝ առավել ևս որ դրանց զգալի մասը, գտնվելով Թուրքիայի ներկայիս տարածքում, ուսումնասիրողների համար մնում է անհասանելի: Ընդհատված այս կարևոր սկիզբը՝ Հայաստանի Հանրապետության սահմաններում իր առավել լայն, հետևողական շարունակությունն ունեցավ միայն XX դ. երկրորդ կեսից սկսած (Կ. Ղաֆադարյան, Տ. Խաչատրյան, Լ. Պետրոսյան, Ս. Հարությունյան, Ա. Սմիթ, Ռ. Բադալյան, Պ. Ավետիսյան և այլք)², թեպետ այդ ընդմիջման ընթացքում կատարվել են առանձին նախնական հետախուզական բնույթի աշխատանքներ (Ա. Հաջյան, Լ. Գյուզալյան, Բ. Պիտրովսկի, Ե. Բայբության)³: Շնորհակալ գործ է կատարել Ս. Ղազարի միաբան Հ. Հովաննիսյանը⁴ ի մի հավաքելով Հայաստանի բերդերի մասին եղած տեղեկատվությունը: Խնդրի պատմաքննական ուսումնասիրությամբ առանձնանում է Ա. Զարյանի⁵ համեմատական վերլուծությամբ պաշտպանական համակարգերի բացահայտումը: Նա Այրարատի պաշտպանական ընդհանուր համակարգում բացահայտում է Շիրակի ամրաշինական կառույցների գծային և համակենտրոն համակարգերը:

«Անտիկ Դվինը Արտաշատի պաշտպանական համակարգում» մեր հոդվածում Արարատյան գոգավորության պաշտպանական համակարգը իր հիմնական գծերով բնութագրելիս, ներկայացնելով գոգավորության բնական պաշտպանվածությունը հզորացնող՝ հովիտը շրջապատող լեռնալանջերին շրջանաձև, գետահովիտների երկայնքին գծային շարքով դասավորված, լեռնանցքների ու դարպասների մոտ խմբված ամրոցների լայն ցանցը՝ անդրադարձել ենք նաև Ախուրյանի հովտով և Արագածի արևմտյան և արևելյան լանջերով դեպի Շիրակ անցնող հաղորդակցության նշանավոր ուղիներին⁶:

Տվյալ հարցի լուսաբանմանն առնչվող նորոյա ձեռքբերումների⁷ շրջանակներում, լրացուցիչ և համոզիչ հիմնավորումների համեմատական վերլուծությունը ևս հանգեցնում է Շիրակի ամրաշինական կառույցների թվագրության որոշակի ճշգրտում-

¹ Ատրպետ -1914, Марр Н. -1939, Թորամանյան Թ. -1942, Թորամանյան Թ. -1948:

² Ղաֆադարյան Կ. -1972, Хачатрян Т. -1975; Петросян Л. -1989; Badaljan R. et al. -1992; Հարությունյան Ա. -1994: Smith A., Kafadarian K.-1996; Avetisyan P. et al. -2000; Badalyan R., Avetisyan P. -2007.

³ Аджан А., Гюзальян Л., Пиотровский Б. -1932.

⁴ Յովաննիսյան Հ. -1970, էջեր 688-747, 922-931:

⁵ Զարյան Ա. -1986:

⁶ Քոչարյան Գ. -1996:

⁷ «Ախուրյանի ավազանի ամրաշինական կառույցները» թեմայի շրջանակներում տե՛ս Խաչատրյան Հ. -2016, Խաչատրյան Հ. -2017, Եգանյան Լ. -2017:

ների: Այսուհանդերձ, Շիրակի պաշտպանական համակարգի ընդհանուր պատկերի ամբողջական և ավարտուն վերականգման համար անհրաժեշտ է հնագիտական նյութի լուրջ համալրում և պատմաճարտարապետական խնդիրների շարունակական ընդգրկումն քննություն⁸:

Ամրոցների տեղագրական և ժամանակագրական տվյալները

Հնագույն ժամանակներից ի վեր Հայկական լեռնաշխարհով անցնող միջազգային տարանցիկ առևտրի, միաժամանակ և ռազմավարական կարևորության Հյուսիսային մայրուղին երկփեղկվում էր Շիրակի դաշտում՝ մի ճյուղը Երասխի հովտով դեպի Իրանական աշխարհ, Հեռավոր Արևելք, մյուսը՝ լեռնաշխարհի կենտրոնական շրջաններով դեպի Միջագետք, Միջերկրականի ափեր:

Երասխ-Ախուրյան ռազմավարական հանգուցակետում տեղադրված Երվանդաշատը, Երվանդակերտը, Բագարանը⁹ և Կարսի սարահարթի դարավանդներին տեղադրված՝ Սրեն, Ծպնի, Տեկոր, Ագարակ, Մաղխասբերդ, Արջո-Առիճ¹⁰, Անի, Աղջկաբերդ, Արգինա, Երազգավորս, Տիգնիս, Մոսկերտ¹¹ և Ախուրյանի ձախ ափի Քերթի, Վահրամաբերդ, Տիրաշեն, Կուսայրի նաև Գուսանագյուղի, Շիրակավանի ամրոցները¹² հս-

⁸ Քննվող խնդրի մասին հակիրճ զեկուցվել է «Շիրակի պատմամշակութային ժառանգությունը» հանրապետական առաջին գիտաժողովին, Գյումրի, 1994 թ., տե՛ս **Քոչարյան Գ. -1994**, էջեր 35-36:

⁹ Երասխ-Ախուրյան ռազմավարական հանգուցակետի մասին տե՛ս **Քոչարյան Գ. -1996**, էջեր 338-339:

¹⁰ *Մրին* - Ախուրյան-Տեկոր գետախառնուրդի վայրում՝ XII դ. ամրոց (**Թորամանյան Թ. -1942**, էջ 295). *Ծպնի* - Տեկորի վտակի ափին՝ ամրոցների մնացորդներ (**Ատրպետ -1914**, էջ 168). *Տեկոր* - նույնանուն գետի ափին, կիկլոսյան ամրոցի հիմքի վրա VI դ. Կամսարականների կողմից վերաշինված բերդ, գործել է և Բագրատունիների շրջանում (**Ատրպետ -1914**, էջ 166, **Թորամանյան Թ.-1942**, էջեր 37, 173-174, 330-331). *Ագարակ* - նախորդ ամրոցից 10 կմ գետի հոսանքն ի վեր՝ կիկլոսյան ամրոց (**Ատրպետ-1914**, էջ 165). *Մաղխասբերդ* - Անիից հարավ, Ախուրյանի ափին՝ կիկլոսյան ամրոցի տեղում VI դ. վերակառուցվել է և գործել Կամսարականների, Բագրատունիների, Չաքարյանների օրոք, կանգուն է եղել մինչև XVII դ. (**Ատրպետ-1914**, էջ 168, **Թորամանյան Թ. -1942**, էջեր 311-312). *Արջո-Առիճ* - նույնանուն լեռան ստորին գագաթներից մեկի վրա՝ կիկլոսյան շինության մնացորդներ (**Ատրպետ-1914**, էջ 168, **Թորամանյան Թ. - 1942**, էջ 330): Ի լրումն նշենք, որ Աշխարհբեկ Քալանթարը 1920 թ. Անի-Տեկոր շրջակա տարածք կատարած ուղևորության իր օրագրում անդրադարձել է *Արջո-Առիճի*, *Տեկորի*, *Ագարակի* ամրաշինական կառույցներին (**Քալանթար Ա.-2007**, էջեր 146, 150, 169, 174-176):

¹¹ *Անի* - Ախուրյանի և Ծաղկոցաձորի կիրճերով եզերված դարավանդի վրա՝ կիկլոսյան պարիսպների մնացորդներ, IV-XIV դդ. անմատույց ամրոց, *Աղջկաբերդ* - նույն տեղում՝ կիկլոսյան շինությունների մնացորդներ, IV-XII-XIII դդ. ամրոց (**Մարր Ի. -1939**, cc. 19-23, 49, 66, **Թորամանյան Թ. -1942**, էջեր 323-338). *Արգինա* - Կարս գետի ստորին հոսանքի աջ ափին, հնագույն ամրոցի տեղում՝ VI-X դդ. ամրոց (**Ատրպետ-1914**, էջ 187, **Թորամանյան Թ. -1942**, էջ 305). *Երազգավորս* - Ախուրյան-Կարս գետախառնուրդի վայրում՝ մ. թ. IX դ. բերդ (**Թորամանյան Թ. -1942**, էջ 312). *Տիգնիս* - համանուն գետի ափին, վաղ բրոնզի դարին բնորոշ գտածոներ, կիկլոսյան ամրոցի հիմքի վրա կառուցված Բագրատունիների ամրոց-դղյակ (**Թորամանյան Թ -1942**, էջեր 312-314, **Хачатрян Т. -1975**, cc. 38-39). *Մոսկերտ* - Տիգնիս գետի հոսանքն ի վեր, կիկլոսյան ամրոցի տեղում՝ Արշակունյաց և Բագրատունյաց օրոք վերաշինված բերդի, իսկ շրջակա գյուղերի տարածքում կիկլոսյան ամրոցների մնացորդներ (**Ատրպետ-1914**, էջ 187):

¹² *Քերթի* - Շիրակի լեռնաշղթայի «Սղնախներ» սարի վրա՝ մ. թ. ա. X դ. վաղերկաթեդարյան ամրոցը գործել է ներառյալ մ. թ. ա. VI-IV դդ. (**Петросян Л. -1989**, cc. 26-31, 36). *Վահրամաբերդ* - Անիից հյուսիս, Ախուրյանի կիրճում, հրվանդանի վրա, կիկլոսյան ամրոցի տեղում՝ մ. թ. X դ. Վահրամ Պախլավաճու կառուցած «կայազորային ախալի ամրոց», Արգիշթե I-ի ժայռափոր արձանագրություն (**Ար-**

կում էին միջազգային առևտրի հիշյալ մայրուղու արևմտյան ճյուղի Շիրակով անցնող հատվածը (նկ. 1):

Արագածի հյուսիսարևմտյան լանջի Գառնհովտի, Մառնաղբյուրի, Լեռնակերտի, Տուֆաշենի, Հոռոմի¹³, հյուսիսային լանջի Սպանդարյանի, Արևշատի, Հնաբերդի, Ծաղկահովտի ամրոցները¹⁴ և Նիգով անցնող Քասաղի հովտի՝ Ապարանի բերդ, Գա-

тoнян С. -1985, сс. 258-259, Հարությունյան Ս. -1994, էջ 41,) *Տիրաշեն* - Վահրամաբերդից հարավ, կիկլոպյան ամրոցի տեղում՝ մ. թ. X դ. կառուցված «կայազորային տիպի ամրոց» (Հարությունյան Ս. -1983, էջ 35, Հարությունյան Ս. -1985, էջեր 47-48, Խաչատրյան Հ. -2017, էջեր 209-210). *Կունայրի* - Ախարյանի ափին, բարձունքի վրա՝ խոշոր ամրոց-բնակավայր, այստեղ հայտնաբերված հնագիտական նյութը թվագրվում է մ. թ. ա. III հազարամյակից միջնադարը ներառյալ (Хачатрян Т. -1975, сс. 28, 130, Հարությունյան Ս. -1994, էջ 42). *Գուսանագրող* - Ախարյանի հովտում, Կումայրիից հարավ՝ կիկլոպյան ամրոցների մնացորդներ, որոնցից մեկի տեղում XIII-XIV դդ. կառուցվել է նոր ամրոց (Ատրպետ-1914, էջ 168. Թորամանյան Թ. -1942, էջեր 24-27, Թորամանյան Թ. -1948, էջեր 133-134, 172), սույն հնավայրը վերագրվում է «երկու կամ ավելի ամրոց-միջնաբերդերով պաշտպանվող» բրոզեդարյան բնակատեղիների շարքին, հայտնաբերվել է ուշ բրոնզի դարի նյութ (Хачатрян Т. -1975, с.128, Ղաֆադարյան Կ. -1984, էջեր 34, 128,). *Ծիլակավան* - համանուն գյուղի ծայրամասում, Ախարյանի ափին, դարավանդի գագաթին՝ մ. թ. ա. VIII-VI դդ. ամրոց (Петросян Л. -1989, сс. 8-9, Թորոսյան Ռ., Խնկիկյան Օ., Պետրոսյան Լ. -2002, էջեր 116-128):

¹³ *Գառնհովտ* - Մաստարայից հյուսիս-արևելք՝ տարբեր ժամանակների կիկլոպյան ամրոցների համալիր, ամրոցներից երկուսը թվագրվում է ուշ բրոնզի և վաղ երկաթի դարաշրջաններով՝ մ. թ. ա. XIII-X դդ. (Аджан А. и др. -1932, сс. 61-64, Թորամանյան Թ. -1942, էջեր 21-24, Ղաֆադարյան Կ. -1972, էջ 153, վաղ երկաթի դարի ամրոցների մասին տե՛ս Smith A., Kafadarian K.-1996, pp. 29-31), Գառնհովտը III-V դդ. համարում է Արագածոտնի լեռնային պաշտպանական գոտին (Մադրյան Բ. -1989, էջ 78, Քոչարյան Գ. -1996, էջ 340). *Սառնաղբյուր* - Գառնհովտից հյուսիս-արևմուտք՝ մ. թ. ա. III-I հազարամյակի կեսերն ընդգրկող ամրոց-բնակատեղիների համալիր (Ղաֆադարյան Կ. -1972, էջեր 152-153, Хачатрян Т. -1975, с. 38, վաղերկաթեդարյան ամրոցների մասին տե՛ս Smith A., Kafadarian K.-1996, p. 29). *Լեռնակերտ* - Մառնաղբյուրից հյուսիս-արևելք, սպառաժ սարերի վրա՝ վաղերկաթեդարյան «Վերի բերդ» և «Վարի բերդ» ամրոցներ, վերջինիս վերգետնյա հնագիտական նյութը վերաբերում է վաղ բրոնզի դարաշրջանին՝ մ. թ. ա. IV – III հազ. (Ղաֆադարյան Կ. -1972, էջ 153, Хачатрян Т. -1975, сс. 127-128, Smith A., Kafadarian K.-1996, pp.31-33). *Տուֆաշեն* - Արթիկից հարավ-արևմուտք, կիկլոպյան ամրոցի մնացորդներ, ըստ ընդհանուր բնութագրի՝ ուշ բրոնզի, վաղերկաթեդարյան ամրոց (Хачатрян Т. -1975, сс.128-129, Ղաֆադարյան Կ. -1984, էջ 62). *Հոռոմ* - Արթիկից հյուսիս-արևմուտք, Մանթաշ գետի հովտում, բարձունքի վրա՝ ուշ բրոնզի, վաղ երկաթի, Վանի թագավորության և միջնադարյան (IX-XI դդ.) ամրոցների համալիր (Badaljan R. et al. -1992, pp. 31-48, միջնադարյան ամրոցը պեղել է և թվագրել հնագետ Մերգել Հարությունյանը), ըստ հնագիտական տեղեկատվության՝ մ. թ. ա. VI դ. առաջին կեսից հետո կյանքն այստեղ շարունակվել է (Kohl Ph., Kroll St. -1999, pp. 243-259):

¹⁴ *Սպանդարյան* - Արթիկից հյուսիս-արևելք, Մանթաշ գետի աջ ժայռոտ ափին՝ ամրոց-բնակատեղիների մնացորդներ, վաղ բրոնզի, ուշ բրոնզի, վաղ երկաթի մշակույթներին բնորոշ հնագիտական նյութ, Արգիշթեն I-ի ժայռավոր արձանագրություն (Թորամանյան-1948, էջեր 134, 197-198, Хачатрян Т. -1975, сс. 37-38, 127-128, Арутюнян С. -1985, сс.116-117). *Արևշատ* - Մանթաշ գետի հոսանքն ի վեր, բլուրների վրա կիկլոպյան ամրոց՝ դասվում է ուշ բրոնզ, վաղերկաթեդարյան հուշարձանների շարքին (Аджан А. и др.-1932, сс. 61-64, Хачатрян Т. -1975, сс.127-128). *Հնաբերդ* - Արևշատից հարավ-արևելք, կիկլոպյան ամրոց՝ պատկանում է մ. թ. ա. XIII-VI դդ. ամրոցների շարքին (Аджан А. и др. -1932, сс. 61-64, Թորամանյան-1942, էջեր 31-32, Хачатрян Т. -1975, сс. 26, 128-129, Ղաֆադարյան Կ. -1984, էջ 62), ըստ նոր տվյալների՝ ընդգրկվում է ուշ բրոնզի, վաղ երկաթի, ուշ ուրարտական, արեմենյան, անաիկ և միջնադարի ժամանակագրական շրջանակներում (Avetisyan P. et al.-2000, pp. 39-41). *Ծաղկահովտ* - Հնաբերդի հարևանությամբ դեպի հյուսիս-արևելք, բարձունքի վրա կիկլոպյան ամրոց՝ ընդգրկվում է ուշ բրոնզի, վաղ երկաթի, ուշ ուրարտական, արեմենյան, անաիկ և միջ-

զանոց, Դովրի, Աշտարակ, Աղթամիր, Օշական ամրոցների գծային շարքը¹⁵ կազմում էին Շիրակ-Նիգ պաշտպանական աղեղը (նկ. 1):

Արագածոտնի¹⁶ և Շիրակ-Նիգի ամրաշինական կառույցների աղեղները միասին ապահովում էին Հյուսիսային մայրուղու՝ Արագած լեռան արևմտյան և արևելյան լանջերով անցնող ուղեգծերը (նկ. 1): Ուշադրության է արժանի, որ թվարկած հուշարձանները ճշգրտում են Հ. Մանանդյանի պատմաշխարհագրական աշխատություններում մեկնաբանված առևտրական ճանապարհների ուղղություններն ու ռազմավարական կարևորությունը¹⁷:

Պաշտպանական համակարգի ձևավորման գործընթացը

Վաղ բրոնզի դարաշրջանում (մ. թ. ա. IV-III հազ.), Շիրակով անցնող Հյուսիսային միջագային տարանցիկ առևտրի մայրուղու ճյուղավորումների երկայնքին (Ախուրյանի հովիտ) և լեռնալանջերին (Արագած լեռ) ամրաշինական կառույցներ տեղադրելով, առկա է տարածքի բնական պաշտպանվածության հզորացման միտում: Հավելենք, «որ վաղ պետական կազմավորումները տարածաշրջանում արձանագրվում են առնվազն մ. թ. ա. III հազարամյակի վերջերից»¹⁸:

Ուշ բրոնզի և վաղ երկաթի դարաշրջաններում (մ. թ. ա. XV-XII/IX դդ.) նկատվում է պաշտպանական համակարգի հերթական համալրում և կազմավորում, որն աներկբայորեն պետական նոր միավորումների առաջացման և հզորացման արդյունք է: Այս շրջանում (հատկապես մ. թ. ա. IX դարից ի վեր) համակարգի ծավալուն համալրման իրողությունը պայմանավորված էր Վանի թագավորների արշավանքներին միացյալ ուժերով դիմագրավելու, սեփական անկախությունը պահպանելու, Հյուսիսային մայրուղին իր ճյուղավորումներով հանդերձ վերահսկելու՝ Էթիունի համադաշնության¹⁹ ռազմաքաղաքական շահավետությամբ:

Երկաթի լայն տարածման դարաշրջանում (մ. թ. ա. VIII-VI դդ.)՝ Վանի թագավորությանը, Երվանդունիների և Աքեմենյան սատրապության ժամանակաշրջանին (մ.թ.ա. VI-IV դդ.) վերաբերող նյութերը դեռևս անբավարար են քննվող խնդրի բացահայտման համար: Այսուհանդերձ հատկանշական է, որ Վանի թագավորության արշավանքները փաստագրող նյութերը (Վահրամաբերդ, Սպանդարյան)²⁰ և Հոռոմի, Հնաբեր-

նադարի ժամանակագրական շրջանակներում (Алжан А. и др.-1932, сс.61-64, **Թորամանյան Թ.** - 1942, էջեր 14-17, **Smith A., Kafadarian K.**-1996, pp.32-36, **Avetisyan P. et al.** -2000, pp. 32-37, 47-50):

¹⁵ Քասաղի հովտի Ապարանի բերդ-Գազանոց-Օշական ամրոցների գծային շարքի մասին տե՛ս **Քոչարյան Գ.**-1996, էջեր 340-341,344-345, տե՛ս նաև **Badalyan R., Avetisyan P.** – 2007, pp.43, 49, 90, 95-97:

¹⁶ Արագածոտնի՝ Ծամիրամ, Արուճ, Աշնակ, Թալին, Մաստարա, Կոշ, Բազմաբերդ, Մասունաշեն, Կաթնաղբյուր, Չաքարի բերդ, Դաստակերտ ամրոցների պաշտպանական աղեղի մասին մանրամասն տե՛ս **Քոչարյան Գ.** -1996, էջեր 339-340, 344:

¹⁷ **Манандян А.** -1954, сс. 153-159, **Մանանդյան Հ.** -1960, էջեր 145-146 (տե՛ս քարտեզ 1),էջեր 165-166 (քարտեզ 7):

¹⁸ **Ավետիսյան Հ., Ավետիսյան Գ.** -2006, էջ 4: Ախուրյանի ափամերձ կիկլոսայան ամրաշինական կառույցների մասին տե՛ս **Եգանյան Լ.**- 2017

¹⁹ Մ. թ. ա. IX դ. վերջին քառորդում Հայկական Պարից հյուսիս ձևավորված Էթիունի համադաշնության մասին տե՛ս **Խանգաղյան Է.** -1979, էջեր 120-132, 145-148, **Ավետիսյան Գ., Բորոխյան Ա.** - 2010, էջեր 16-17:

²⁰ **Арутюнян С.** -1985, сс.116-117, 258-259.

դի, Ծաղկահովտի քննվող ժամանակի ամրոցները իրենց տեղագրությամբ նույնպես վավերացնում են Ախուրյանի հովտով և Արագածի հյուսիսային և հյուսիսարևմտյան լանջերով անցնող հայտնի ուղեգծերը (նկ. 1):

Անտիկ դարաշրջանում (մ. թ. ա. VI-մ. թ. IV դդ.) կյանքի շարունակական ընթացքը հնագիտորեն վավերացված է Շիրակում²¹: Հայոց արքայատոհմերի օրոք վերստին արժևորվում է Շիրակի առևտրատնտեսական և ռազմավարական առանձնակի կարևորությունը՝ Արևելք-Արևմուտք միջազգային տարանցիկ առևտրի Հյուսիսային մայրուղու ճյուղավորումների վրա: Այդ է վկայում հաղորդակցության ուղիների վերահսկողությունը ապահովող ամրաշինական կառույցների (շերտագրական հաջորդականությամբ փաստված) շարունակական զարգացման համընդհանուր պատկերը:

Կամսարական նախարարական տունը (IV-VIII դդ.), իշխելով Շիրակում և Արշարունիքում, Ախուրյանի հովտում, նախկին կիկլոպյան ամրոցների տեղում կառուցում է Սոսկերտ, Արգինա, Անի, Աղջկաբերդ, Մաղխասբերդ, Տեկոր ամրոցները: Կամսարականները փաստորեն հյուսիս-հարավ ուղղությամբ վերակազմավորում, ուժեղացնում են ամրաշինական կառույցների դիմադրության հնագույն շարքը ընդհուպ առևտրական և ռազմավարական խոշորագույն հանգուցակետ Երվանդաշատը՝ ապահովելով գյուղատնտեսության, արհեստի և առևտրի կետրոնների խաղաղ զարգացումը տարածաշրջանում (նկ. 1):

Բագրատունիների քաղաքական հզորացմանը զուգընթաց (IX-XI դդ.)՝ միջազգային հարաբերությունների աստիճանաբար կայունացումը և սոցիալ-տնտեսական կյանքի զարգացումը հանգեցրեցին երկրում նոր կենտրոնների առաջացմանը (Անի, Կարս, Արծն)²²: Սրանցով էլ պայմանավորված որոշակի սրբազրույմների ենթարկվեց Արևելքը Բյուզանդական կայսրության հետ կապող միջազգային տարանցիկ առևտրի Հյուսիսային մայրուղին: Մարանդ-Նախճավան-Դվին-Անի-Կարս-Արծն-Տրապիզոն ուղեգծի գլխավոր հանգուցակետը X դ. երկրորդ կեսին դարձավ Բագրատունյաց թագավորության նորաստեղծ մայրաքաղաքը՝ Անին: Այստեղ էր մայրուղին ճյուղավորվում դեպի Սև, Կասպից, Միջերկրական ծովերի ափեր²³: Բագրատունիները ներառնելով այս հիմնական ուղղությունները՝ Անիից տարբեր հեռավորությունների վրա վերաշինում, վերականգնում են հին ամրոցները, համալրում նաև նորերով: Այսպես՝ հյուսիսում՝ Երազգավորս, Արգինա, Տիգնիս, Սոսկերտ, Գուսանագյուղ, Հոռոմ, Կումայրի, Տիրաշեն, Վահրամաբերդ, արևելքում և հարավ-արևելքում՝ Թալին, Աշնակ, անառիկ Անբերդ²⁴, հարավում՝ Աղջկաբերդ, Մաղխասբերդ, Տեկոր, Բագարան, արևմուտքում և հարավ-արևմուտքում՝ Կարս, Կաղզվան, Կապույտ բերդ:

Եզրահանգում. Տարածաշրջանի ամրաշինական կառույցների ուսումնասիրության արդի մակարդակը գիտական առավել խոր եզրահանգումների հնարավորություն դեռևս չի ընձեռում: Այսուհանդերձ ներկայացված հուշարձանների տեղագրական ու-

²¹ Խաչատրյան Հ. -1994, էջեր 28-30, Тер-Мартirosов Ф. -1999, с.с. 32-46:

²² Манандян А. -1954, с.с. 214-216, 233-234.

²³ Առաքելյան Բ. -1964, էջեր 32-34:

²⁴ Անիի պաշտպանական օղակում Ամբերդի առանձնակի դերի մասին տե՛ս Հարությունյան Ս. - 1978, էջեր 15, 17, 20-23, Հարությունյան Ս. -1994, էջեր 40-42:


սումնասիրությամբ և շուրջ հինգ հազարամյակ ընդգրկող ժամանակագրական վերլուծությամբ ուրվագծվում է Շիրակի գոգավորության պաշտպանական համակարգի շարունակական զարգացման համապատկերն ընդհանուր գծերով:

Մ. թ. ա. III հազարամյակից ի վեր ներառյալ զարգացած միջնադարը՝ քննվող տեղանքի բնական անառիկությունը գորեղացվում է փոխկապակցված, միմյանց լրացնող ամրաշինական բնույթի կառույցներով:

Կամսարականների շրջանին (IV-VIII դդ.) բնորոշ է Ախուրյանի հովտի ամրաշինական կառույցների վերաշինման ու համալրման միտում, որով հզորացվում է Շիրակի գծային պաշտպանական համակարգը²⁵:

Բագրատունիների թագավորության շրջանում (IX-XI դդ.) արքունիքը Անի տեղափոխելուց ի վեր, ի լրումն Կամսարականների գծային պաշտպանական համակարգի, ձևավորվում է մայրաքաղաքի համակենտրոն պաշտպանական համակարգը²⁶: Մալստ էության, նոր զարգացող կենտրոնների իրողությամբ պայմանավորված, Անիում հատվող առևտրական ուղիների սրբազրում էր:

Շիրակի տևականորեն կատարելագործվող պաշտպանական համակարգը՝ Այրարատի ընդհանուր պաշտպանական համակարգի բաղկացուցիչ օղակը, դառնում է պետականությունը վերականգնած ինքնիշխան երկրի համար առաջնակարգ ռազմավարական կարևորության հանգույց:



Նկար 1.

²⁵ Զարյան Ա. -1986, էջեր 91- 92:

²⁶ Նույն տեղում, էջեր 92, 143:

ПРОЦЕСС ФОРМИРОВАНИЯ ОБОРОНИТЕЛЬНОЙ СИСТЕМЫ ШИРАКА

Кочарян Г. Г.

Ключевые слова: *Ширакское плато, фортификационные сооружения, линейная оборонительная система, концентрическая оборонительная система.*

Ширакское плодородное плато занимает территорию расположенную между Карским плоскогорьем, Ширакским и Памбакскими горными хребтами, а также массивным щитом горы Арагац. Естественная обороноспособность Ширакского плато с древнейших времен усиливается фортификационными сооружениями. Значительная часть этих сооружений в археологическом отношении изучена недостаточно, чтобы иметь возможность для более глубокого научного обобщения. Тем не менее, сравнительный анализ результатов исследования топографических и хронологических данных (с учетом военно-политической ситуации в регионе) позволяет проследить процесс последовательного формирования оборонительной системы Ширака с III тысячелетия до н. э. по I тысячелетие н. э.

В период княжеского рода Камсараканов (IV-VIII вв.) наблюдается тенденция перестройки и пополнения древнейших крепостей расположенных вдоль тразитных торговых путей Ахурянской долины, в результате чего сформировалась и усилилась линейная оборонительная система Ширака.

В период царствования Багратидов (IX-XI вв.) - при перенесении царского двора из Карса в Ани (961 г.) - сливаясь камсаракановской линейной оборонительной системой формируется концентрическая оборонительная система столицы. Это было обусловлено возникновением новых развивающихся городских центров, в результате чего торгово-стратегические пути скрещивались в Ани. Реорганизованная и усовершенствованная оборонительная система Ширака - составное звено общей оборонительной системы Айрарата - становится контролирующим узлом стратегической важности для восстановленной государственности суверенной страны.

THE PROCESS OF FORMATION OF SHIRAK DEFENSIVE SYSTEM

Kocharyan G. G.

Key words: *Shirak plain, fortifications, linear defensive system, concentric defensive system.*

Archaeological investigations witness fact to strengthen the natural defence of the fertile Shirak plain (enclosed by the Kars plateau, the Shirak and Pamback Ranges and the Mt. Aragats) by the fortifications since the ancient times. The archaeological research level of the considerable part of these fortifications doesnt enable to do the more complete interpretations. However comparative analysis of the results of investigations based on topographical and chronological data of the fortifications, together with the account of military and political situation in the region, enable to reveal the process of successive formation of the Shirak defensive system since the 3rd millennium BC up to 1st millennium AD.

In the period of the Kamsarakan prince's family (4th-8th centuries AD) ancient fortresses along Akhuryan valley transit trade routes are being rebuilt and completed. Hence the linear defensive system of the Shirak plain was formed and strengthened.

During the reign of Bagratids (9th-11th centuries AD) the capital from Kars to Ani was trasfered in the 961 AD. By this action, fusing together with the linear defensive system was formed the concentric defensive system of the capital. In connection with the rise of the new developing urban centres, Ani, as the most important strategic centre, also became crossroad of the international transit trade routes. Reorganized and improved Shirak defensive system - one of the composite links of the Ayrarat state defensive system - became the controlling junction with strategic significance for the reconstructed statehood sovereign country.

Գ ր ա կ ա ն ո թ յ ո ն

1. **Առաքելյան Բ. -1964**, Քաղաքները և արհեստները Հայաստանում IX-XIII դդ., հ. 2, Երևան, ՀՍՍՌ ԳԱ հրատ., 320 էջ:
2. **Ավետիսյան Հ., Ավետիսյան Պ. -2006**, Արարատյան դաշտի մշակույթը մ. թ. ա. XI-VI դարերում, Երևան, ԵՀ հրատ., 396 էջ:
3. **Ավետիսյան Հ., Բորիսյան Ա. -2010**, Ուրարտուի հնագիտություն (Ամրոց-բնակավայրեր և դամբարանային համալիրներ), Երևան, «Բավիղ» հրատ., 236 էջ:
4. **Ատրպետ -1914**, Շիրակի աչկատարեան(կիկոպեան) ամրոցները // Ազգագրական հանդես, 25/2, Թիֆլիս, էջեր 165-188:
5. **Եգանյան Լ. -2017**, Ախուրյան գետի ավազանի կիկոպեան կառույցները // ՀՀ ԳԱԱ Շիրակի հայագիտական հետազոտությունների կենտրոնի «Գիտական աշխատություններ», XX, Գյումրի, էջեր 190- 205:
6. **Զարյան Ա. -1986**, Ակնարկներ հին և միջնադարյան Հայաստանի քաղաքաշինության պատմության, Երևան, ՀՍՍՀ ԳԱ հրատ., 223 էջ:
7. **Թորամանյան Թ. -1942**, Նյութեր հայկական ճարտարապետության պատմության, հ. Ա, Երևան, Արմ-ՖԱՆի հրատ., 403 էջ:
8. **Թորամանյան Թ. -1948**, Նյութեր հայկական ճարտարապետության պատմության, հ. Բ, Երևան, ՀՍՍՌ ԳԱ հրատ., 307 էջ:
9. **Թորոսյան Ռ., Խնկիկյան Օ., Պետրոսյան Լ. -2002**, Հին Շիրակավան (1977-1981 թթ. Պեղումների արդյունքները), Երևան, ՀՀ ԳԱԱ «Գիտություն» հրատ., 259 էջ:
10. **Խանգաղյան Է. -1979**, Էլառ-Դարանի, Երևան, ՀՍՍՀ ԳԱ հրատ., 188 էջ:
11. **Խաչատրյան Հ. -1994**, Ուրվագծեր Շիրակի դաստակերտի մ. թ. ա. I-ին դարի առևտրատնտեսական հարաբերությունների // «Շիրակի պատմամշակութային ժառանգությունը», հանրապետական առաջին գիտաժողով, Չեկուցումների թեզիսներ, Գյումրի, էջեր 28-30:
12. **Խաչատրյան Հ. -2016**, Պաշտպանական կառույցների գործառնությունը դասակարգում // ՀՀ ԳԱԱ Շիրակի հայագիտական հետազոտությունների կենտրոնի «Գիտական աշխատություններ», XIX, Գյումրի, էջեր 27-33:
13. **Խաչատրյան Հ. -2017**, Ախուրյանի ավազանի միջնադարյան ամրաշինական կառույցները // ՀՀ ԳԱԱ Շիրակի հայագիտական հետազոտությունների կենտրոնի «Գիտական աշխատություններ», XX, Գյումրի, էջեր 206- 215:
14. **Հարությունյան Ս. -1978**, Անբերդ, Երևան, ՀՍՍՀ ԳԱ հրատ., 110 էջ:
15. **Հարությունյան Ս. -1983**, Մարմաշենի 1980-1982 թթ. պեղումների արդյունքները // Հայկական ՄՍՀ-ում 1981-1982 թթ. դաշտային հնագիտական աշխատանքների արդյունքներին նվիրված գիտական նստաշրջան, Չեկուցումների թեզիսներ, Երևան, էջ 35:
16. **Հարությունյան Ս. -1985**, Մարմաշենի պեղումների արդյունքները // Հայկական ՄՍՀ-ում 1983-1984 թ. դաշտային հնագիտական աշխատանքների արդյունքներին նվիրված գիտական նստաշրջան, Չեկուցումների թեզիսներ, Երևան, էջեր 47-49:
17. **Հարությունյան Ս. -1994**, Անիի պաշտպանական համակարգը // «Շիրակի պատմամշակութային ժառանգությունը» հանրապետական առաջին գիտաժողով, Չեկուցումների թեզիսներ, Գյումրի, էջեր 40-42:

18. **Ղաֆադարյան Կ. -1972**, Դիտողություններ ուրարտական ամրաշինության վերաբերյալ // Պատմաբանասիրական հանդես, N 2, էջեր 151-162:
19. **Ղաֆադարյան Կ. -1984**, Արգիշտիխինիի քաղաքի ճարտարապետությունը (1962 -1976 թթ. պեղումների նյութերով), Երևան, ՀՄՍՀ ԳԱ հրատ., 164 էջ:
20. **Մանանդյան Հ. -1960**, Հերակ կայսեր պարսկական արշավանքների ընթացումները, Քննական տեսություն հայ ժողովրդի պատմության, հ. Բ, Երևան, Հայպետհրատ, էջեր 141-172:
21. **Յովհաննէսեան Հ.-1970**, Հայաստանի բերդերը, Վենետիկ-Ս.Ղազար, 1014 էջ:
22. **Սադոյան Բ. -1989**, Արագածոտնի վաղ միջնադարյան ամրոցների տիպաբանական տարբերակման փորձ // Հայկական ԽՍՀ-ում 1987-1988 թթ. դաշտային հնագիտական աշխատանքների արդյունքներին նվիրված գիտական նստաշրջան, Չեկուցումների թեզիսներ, Երևան, էջեր 78-80:
23. **Քալանթար Ա. -2007**, Հայաստան՝ Քարե դարից միջնադար, երկերի ժողովածու, Երևան, ՀՀ ԳԱԱ «Գիտություն» հրատ., 410 էջ:
24. **Քոչարյան Գ. -1994**, Գիրակի պաշտպանական համակարգի ուրվագծման փորձ // Գիրակի պատմամշակութային ժառանգությունը, հանրապետական առաջին գիտաժողով, Չեկուցումների թեզիսներ, Գյումրի, էջեր 35-36:
25. **Քոչարյան Գ. -1996**, Անտիկ Դվինը Արտաշատի պաշտպանական համակարգում // Հանդես Ամսորնայ, N 1-12, էջեր 336-359:
26. **Аджан А., Гюзальян Л., Пиотровский Б. -1932**. Циклопические крепости Закавказья // Сообщения Государственной Академии истории материальной культуры. вып. 1-2. сс. 61-64.
27. **Арутюнян Н. -1985**. Топонимика Урарту. “Хурриты и Урарты” 1, Ереван, изд. АН Арм ССР. 308 с.
28. **Манандян Я. -1954**. О торговле и городах Армении в связи с мировой торговлей древних времен (V в. до н. эры - XV в. н. эры), Ереван, изд. ЕУ. 346 с.
29. **Март Н. -1934**. Ани: Книжная история города и раскопки на месте городища, Л.-М. Огиз, Государственное социально-экономическое изд., 133 с.
30. **Петросян Л. -1989**. Раскопки памятников Кети и Воскеаска (III-I тыс. до н. э.), Археологические раскопки в Армении, N 21, Ереван, изд. АН Арм ССР, 125 с.
31. **Тер-Мартиросов Ф. -1999**. Ширак в эпоху классической античности // ՀՀ ԳԱԱ Գիրակի հայագիտական հետազոտությունների կենտրոնի «Գիտական աշխատություններ», II, Գյումրի, էջեր 32-46 :
32. **Хачатрян Т. -1975**. Древняя культура Ширака III-I тыс. до н. э., Ереван, изд. ЕУ. 276 с.
33. **Avetisyan P., Badalyan R., Smith A. -2000**. Preliminary Report on the 1998 Archaeological Investigations of Project Aragats in the Tsakahovit Plain, Armenia // Studi Micenei ed Egeo-Anatolici, XLII/1, pp. 19-59.
34. **Badalyan R.S., Avetisyan P.S.- 2007**. Bronze and Early Iron Age Archaeological Sites in Armenia: I. Mt. Aragats and its Surrounding Region, British Archaeological Reports International Series 1697, Oxford, 2007.
35. **Badaljan R., Edens C., Kohl P., Tonikjan A. -1992**. Archaeological Investigations at Horom in the Shirak Plain of Northwestern Armenia, 1990 // Iran, XXX, pp. 31-48.
36. **Kohl Ph., Kroll St. -1999**. Notes on the Fall of Horom // Iranica Antiqua, XXXIV, pp. 243-259.
37. **Smith A.T, Kafadarian K.- 1996**. New Plans of Early Iron Age and Urartian Fortresses in Armenia: Preliminary Report of the Ancient Landscapes Project, Iran XXXIV, pp. 23-37.

Ընդունվել է՝ 10. 09. 2022
 Գրախոսվել է՝ 22. 09. 2022
 Հանձնվել է տպ.՝ 28. 11. 2022

Տեղեկություններ հեղինակի մասին

Գայանե Քոչարյան՝ պատմական գիտությունների թեկնածու,
 ՀՀ ԳԱԱ հնագիտության և ազգագրության ինստիտուտի
 Հին Հայաստանի հնագիտության բաժնի գիտաշխատող,
 էլ. հասցե՝ vruyr 2001@yahoo.com.

ՀՏԴ՝ 904

DOI: 10.52971/18294316-2022.25.2-91

«ԿՈՒՄԱՅՐԻ» ՊԱՏՄԱՄՇԱԿՈՒԹԱՅԻՆ ԱՐԳԵԼՈՑ-ԹԱԳԱՐԱՆՈՒՄ
ՊԱՀՊԱՆՎՈՂ ՇԻՐԱԿԱՎԱՆԻ ՊԱՏԱՀԱԿԱՆ ԳՏԱԾՈՆԵՐԻ ՇՈՒՐՁ

Ինքա Ավագյան

ՀՀ ԳԱԱ Շիրակի հայագիտական հետազոտությունների կենտրոն
Գյումրու քաղաքապետարանի «Կումայրի» պատմամշակութային
արգելոց-թանգարան

Բանալի բառեր՝ Շիրակավան, պատահական գտածո, բրոնզե թաս,
հարթ, բրոնզե, թիթեղյա, կախիկներ:

«Կումայրի» պատմամշակութային արգելոց-թանգարանը ստեղծվել է 1980թ. և իր ստեղծման օրվանից ծավալել է գիտահավաքչական գործունեություն՝ թանգարանի հավաքածուն մշտապես հարստացնելով հնագիտական նոր գտածոներով: Հավաքածուի մեջ առանձնահատուկ են 1980-ական թթ. վերջին և 1990-ականների սկզբին Շիրակավան գյուղում պատահականորեն գտնված մի քանի բրոնզե գտածոները: Որևէ տեղեկություն իրերի հայտնաբերման մասին չի պահպանվել: Նույնիսկ իրերի դամբարանային ծագումը փաստագրող որևէ տեղեկություն գոյություն չունի: Մույն հաղորդման մեջ ներկայացված են այդ պատահական գտածոները՝ բրոնզե թաս և բրոնզե չորս կախիկներ, կատարվել է նրանց համեմատական ուսումնասիրություն և դասակարգում ըստ տիպերի:

Նախաբան. Այսօր «Կումայրի» պատմամշակութային արգելոց-թանգարանի հնագիտական հավաքածուի մեջ ուրույն տեղ են զբաղեցնում Շիրակավանից պատահականորեն հայտնաբերված մի քանի գտածոներ, որոնք 2021թ. դրությամբ դեռ զբանցված չեն եղել թանգարանի մայր մատյանում և այս պահի դրությամբ ստացել են նախնական ֆոնդային համարներ: Ցավոք, որևէ տեղեկություն իրերի հայտնաբերման մասին չի պահպանվել: Կարելի է միայն ենթադրել, որ դրանք դամբարանային համատեքստից

են: Գիտական շրջանառության մեջ են դրվում մի շարք նյութեր (ՆՖ. թիվ 100/1,2,3,4,5)¹, որոնց հրապարակումը համարում է Շիրակավանի պեղումներից և Հայաստանի այլ շրջաններից հայտնի նմանօրինակ իրերի հավաքածուները:

Գտածոները մետաղյա զետեղարանի նմուշներ են՝ բրոնզե թաս (լուս. 3, 4) և բրոնզե չորս հարթ թիթեղյա կախիկներ (լուս. 5, 11, 12, 13):

Բրոնզե թասի բազմաքանակ նմանօրինակները հայտնի են Շիրակի Արթիկ², Սպանդարյան հուշարձաններից, Արարատյան դաշտի համաժամանակյա հուշարձաններից: Թասի տրամագիծը 18 սմ է, բարձրությունը՝ 8 սմ: Այն ամբողջական բրոնզե թիթեղից է և թվագրվում է Ք.ա. XII-X դդ.: Թասի հատակին՝ արտաքին կողմից, առկա է 5 սմ տրամագծով մի փոսիկ, որը թասի մեջ երևում է պորտ հիշեցնող էլուստ՝ 1 սմ տրամագծով: Հավանաբար այս էլուստը պայմանավորված է պատրաստման եղանակով: Բրոնզե, ամբողջական թիթեղից Սպանդարյանի նմանօրինակ թասի տրամագիծը 17 սմ է (լուս. 2, 14)³, խորությունը՝ մոտավորապես 5 սմ: Սպանդարյանի թասի նմանօրինակը պեղվել է Արթիկի դամբարանադաշտի ուշ բրոնզի երկրորդ փուլով թվագրվող թիվ 575 դամբարանում (լուս. 1)⁴: Տ. Խաչատրյանը նմանօրինակ թասերը նույնպես թվագրում է վաղ երկաթի և միջին երկաթի դարերով, սակայն նշում է, որ կան նաև ավելի վաղ օրինակներ Թրիալեթից, որոնք Բ. Կուֆտինը թվագրում է ուշ բրոնզի դարաշրջանով: Ինչպես Սպանդարյանի, այնպես էլ Շիրակավանի թասերը ամբողջական թիթեղից են, սակայն Շիրակավանի նմուշը տարբերվում է նրանով, որ մյուսները կենտրոնում չունեն 1 սմ տրամագծով էլուստ:

Համեմատաբար լավորակ բրոնզից ուրարտական թասեր պահպանվում են Հայաստանի պատմության թանգարանում և Էրմիտաժում: Դրանք պեղվել են Կարմիր բլուրից և ունեն ուրարտական արքաների անուններով արձանագրություններ⁵՝ Մենուա, Արգիշտի I, Սարգուրի II, Ռուսա I: Բ. Պիոտրովսկին ենթադրում է, որ Կարմիր բլուրից պեղված հայտնի թասերը պատրաստված են հատուկ սարքով, որը ձգվել է թիթեղը, կամ արհեստավորը, այն կռել է ամբողջական բրոնզե թիթեղից:

Նկատի ունենալով, որ թասի հայտնաբերման պայմանները և միջավայրը անորոշ են և հենվելով Շիրակից հայտնի երկու նմանօրինակների վրա, Շիրակավանից պատահական հայտնաբերված թասը կարելի է թվագրել Ք.ա. XII-X դդ.՝ Լճաշեն-Մեծամորյան մշակույթի III փուլով⁶:

Շիրակավանից հայտնի պատահական գտածոների մեջ առանձնահատուկ ուշադրության են արժանի բրոնզե սկավառակն ու երեք կախիկների բեկորները (стандарт), որոնք դրոշներից կախելու նպատակով են օգտագործվել: Բրոնզե թիթեղից պարզունակ շրջանների դասավորություն է հիշեցնում թիթեղյա սկավառակը (լուս. 5), որի

¹ Նյութերը ժամանակին թանգարանի մայր մասայնում չեն գրանցվել և հողվածում ներկայացվում են նախնական ֆոնդավորման համարներով:

² Хачатрян Т. -1975, с. 220.

³ Ավագյան Ի. -2016, էջեր 14-17: Ավագյան Ի. -2016, էջեր 258-263:

⁴ Хачатрян Т. -1975, с.с. 219-220, рис. 131; Badalyan R., Avetisyan P. - 2007, p. 74, pl VI-16.

⁵ Пиотровский Б. -1959. с. 180, табл. XXXIV.

⁶ Badalyan R., Smith A. -2008, p 47.

մի ծայրին ուղղված թիթեղից կախելու հարմարանք է արված, իսկ կենտրոնում հարթ տապարիկ հիշեցնող ելուստ կա: Այս կախիկները իրենցից ներկայացնում են տիեզերքի պարզունակ մոդելներ: Բազմաթիվ նմանօրինակները պահպանվում են Հայաստանի պատմության թանգարանում: Այս նմուշները, ըստ Բ. Թումանյանի և Հ. Մնացականյանի, պատկերում են սնամեջ Երկիրը՝ շրջապատված երկու օղակով (ջրով և մթնոլորտով)⁷: Բոլոր դեպքերում երկիրն ունի կլոր ձև: Այդ ժամանակներում ենթադրել են երկրի կլորությունը, իսկ Երկրի կենտրոնական մասում պատրաստված՝ ներքևում լայն, իսկ վերևում խաչաձև ցցվածքը շատ բանով հիշեցնում է աստղագիտական գրականության մեջ ընդունված Երկրի նշանը⁸: Տապարիկ հիշեցնող այս մանրամասն մասնագետները նաև անվանում են ցուլ⁹, եզան կամ ցուլի գլուխ¹⁰ և տապարացուլ¹¹: Ըստ Հ. Մարտիրոսյանի՝ արևի պաշտամունքի հետ կապվող սկավառակաձև առարկաներ են, համակենտրոն շրջանակների թիթեղյա հսկա մեդալիոններ¹²: Այս օրինակները երբեմն թռչունների փոքրիկ ֆիգուրներ են կրում, կենտրոնական մասում ցլի գլխի ոճավորված կերպարով կամ այլ առարկաներով¹³: Այս գտածոներից ամենահետաքրքրականը համակենտրոն սկավառակի հիմքի վրա բարձրացող յոթ «աստղերի» ֆիգուրներ կրող առարկա է, որ կարծես հիմք է տալիս մտածելու, թե մեր հեռավոր նախնիները կոնկրետ գաղափար ունեին յոթ մոլորակների մասին:

Շիրակում՝ Ալեքսանդրապոլի բերդի Սև ամրոցի մոտակայքում, երկնային լուսատուների նման համախումբ ունեցող վեց շտանդարտներ է պեղել Է. Ռեպերը 1900 թ.¹⁴ (լուս. 15, 16): Սև ամրոցի մոտակայքում նրա պեղած չորս սալարկղային դամբարաններից երեքի հանգուցյալները արական սեռի ներկայացուցիչներ էին, զույգ շտանդարտներ (երկարությունը՝ 35 սմ, թիթեղյալի հատվածինը՝ 19,5 սմ, սրածայր պոչուկի երկարությունը՝ 15,5 սմ, լայնությունը՝ 13 սմ, թիթեղի հաստությունը՝ 2 մմ) խաչաձև հատված գտնվել են հանգուցյալների կրծքավանդակի վրա (լուս. 15), սակայն կանացի դամբարանում նման իրեր չեն եղել: Իրերի թիթեղյալի մասը պոչուկին գամված է եղել երկու գամերով: Նմանօրինակները՝ Շիրակականի դամբարանադաշտից¹⁵:

Ըստ Հ. Մարտիրոսյանի՝ աշխարհահռչակ աստղագետներից շատերը, Հայաստանը համարելով Հին Արևելքի աստղագիտության, տոմարական առաջին հաշվումների ելակետային կենտրոն, այս առարկաներից յուրաքանչյուրը վերագրել են առանձին երևույթների պաշտամունքին¹⁶: Բ. Թումանյանը, Հ. Մնացականյանը, Հ. Միմոնյանը Լճաշենից հայտնաբերված այս գտածոն թվագրում են ք.ա. XI-IX դդ. և համարում են

⁷ Թումանյան Բ, Մնացականյան Հ. -1965, էջ 10:

⁸ Նույնը:

⁹ Մարտիրոսյան Հ. -1971, էջ 100:

¹⁰ Իսրայելյան Հ. -1973, էջ 84:

¹¹ Արքահամյան Լ. -2004, էջեր 12-14:

¹² Մարտիրոսյան Հ. -1969, էջ 32, տախտակ 37:

¹³ Նույնը:

¹⁴ Rösler E. -1902. pp. 221-245.

¹⁵ Թորոսյան Ռ. և այլք -2002, էջ 106:

¹⁶ Մարտիրոսյան Հ. -1969, էջ 32, աղ. LXXV-17:

Արեգակնային համակարգության մոդել¹⁷, Ն. Բարայեյանը կախիկը կապում է ցուլի համաստեղության և լուսատուների պաշտամունքի հետ¹⁸:

Նմանօրինակ կախիկները և Ռեսլերի պեղած շտանդարտների նմանօրինակները մեծ քանակությամբ պեղվել են Շիրակավանի դամբարանադաշտում¹⁹, այս իրերը հնագետները համարում են ծիսական իրեր: Ներկայացնենք երեքական համակենտրոն շրջաններից կազմված բրոնզաձուլ կախիկները: Վերջիններիս կենտրոնական մասում հարթ տապարակի ձև ունեցող զարդ կա: Ճիշտ նման մեր պահոցներում պահպանվող օրինակին, որի տրամագիծը 11,5 սմ է, իսկ կախելու համար նախատեսված ոլորված թիթեղ հիշեցնող ծայրից մինչև սկավառակի վերջին համակենտրոն շրջանը ընկած տարածությունը՝ 13 սմ (լուս. 5): Շիրակավանի դամբարանադաշտի կախիկները բաժանվում են երկու տարբերակի: Առաջին տարբերակին պատկանող նմուշները ձևավորում են փակ շրջան²⁰, իսկ մյուսների ծայրերը ստորին մասում փոքր-ինչ հեռացած են²¹: Շիրակավանից հայտնի փակ շրջան ձևավորող նմուշը պեղվել է 1978թ. թիվ 31 քարակղային դամբարանում: Պեղումների պահին պահպանված էր դամբարանի հարավարևմտյան անկյունաձև հատվածը, խորությունը՝ 1,1 մ: Հայտնաբերված նյութերն են խոշոր եղջերավոր անասունների առանձին ոսկորներ, ատամնավոր մակերեսներով երկու ապարանջան (մեկը ներձկված էր), անկյուններում՝ առյուծների գլուխներով զարդարված ուղղանկյունաձև իր, եռաշրջան կախիկներ, նետապաքներ, գավազանի գլխակալ, վահան, կոճակ, օղ, շքասեղի մաս, խեցեղեն՝ ամբողջական և բեկորային վիճակում²²: Շիրակավանից հայտնի բաց շրջան ձևավորող նմուշը դարձյալ պեղվել է 1978թ. թիվ 29 քարակղային դամբարանում (2,6X1,2X1,4մ): Քարակղի հատակին սալ էր դրված, որի հետևանքով հատակը 10 սմ ցածր էր գտնվում արևմտյան կեսից: Դամբարանի կենտրոնում գտնվեց կրծքավանդակը, իսկ ստորին ծնոտը հարավային պատի մոտ էր դրված: Կոնքոսկրը և ոտքերի ոսկորները հայտնաբերվեցին արևելյան մասում, հատակից 50-60 սմ բարձրության վրա: Այստեղ ակնհայտ էր դիմաստնատման ձեռք: Ուղեկցող նյութերն էին խեցեղեն, վահանի, օղ, եռաշրջան կախիկներ, աստղաձև զարդեր և բրոնզե կեռ²³: Մեր նմուշը պատկանում է երկրորդ խմբին և հավանաբար դամբարանային մշակույթից է և, ինչպես վերը նկարագրված նմանօրինակները, երկրի խորհրդանիշն է համարվում: Այս կախիկի հետ են աղերսվում նաև Օշականի թիվ 99 դամբարանից պեղված երեք բրոնզե կախիկները, որոնք հնագետները Տոլորսի²⁴ (լուս. 10) և Վարդաքարի կախիկների նմանությամբ թվագրում են XI-X դդ.²⁵:

¹⁷ Թումանյան Բ, Մնացականյան Հ. -1965, էջ 12: Սիմոնյան Հ. -2013, էջ 42:

¹⁸ Բարայեյան Հ. -1973, էջեր 86-87:

¹⁹ Թորոսյան Ռ. և այլք -2002, էջ 106:

²⁰ Նույն տեղում, աղ. LXXI, 2:

²¹ Նույն տեղում, աղ. LXVI, 10-12, LXVII, 10, LXIX 20-21, LXX, 8, LXXII, 7, LXIII, 16, LXXV, 15:

²² Նույն տեղում, էջ 100:

²³ Նույն տեղում, էջ 100:

²⁴ Մարտիրոսյան Հ. -1971, էջ 100:

²⁵ Есаян С., Калантарян А. -1988. 93-94, 97-98, таб. CIV-1,4,7. Badalyan R., Smith A. -2008, p. 47.

Կախիկների այս տեսակը հայտնի է Ք.ա. I հազարամյակի սկզբից (Տոլոս, Վարդաքար), իսկ Մինգչաուրի II և V դամբարանաթմբերից գտնվածները թվագրվում են Ք.ա. IX-VIII դդ.: Հավանաբար նման կախիկ են ձուլել և Այրիվանքի բնակավայրի պեղումներից հայտնաբերված, թերի պահպանված կաղապարի մեջ, որը գտնվել է Ք.ա. I հազարամյակի սկզբով թվագրվող նյութերի միջավայրում²⁶:

Շիրակավանից հայտնի այլ բրոնզե թիթեղյա գտածոները, որոնք պահպանվում են «Կուսակցի» պատմամշակութային արգելոց-թանգարանի պահոցում, իրենց տեսքով տարբերվում են վերը նկարագրված օրինակներից, սակայն որոշ առանձնահատկություններով նաև աղերսվում են դրանց: Մրանցից երկուսը նույնպես ունեն կախելու համար ոլորված թիթեղից հարմարանք: Համեմատաբար ամբողջական կախիկն ունի 14 սմ երկարություն և տապարի լայնացող մասում՝ 6 սմ լայնություն (լուս.13): Փոքր-ինչ վնասված են տապարի եզրը և հիմքին մոտ գտնվող ծայրերը (5,5 սմ): Երկրորդ կախիկի միայն վերին հատվածն է պահպանված (պահպանված երկարությունը՝ 10 սմ), բացակայում է տապար հիշեցնող ստորին մասը (լուս.11), իսկ հիմքին մոտ գտնվող եզրերի պահպանված հատվածը 5,5 սմ է, պահպանվել է նաև ոլորված թիթեղից կախելու հարմարանքը: Երրորդ կախիկը պահպանվել է գրեթե ամբողջությամբ (լուս.12), բացակայում է վերին հատվածը, որին հավանաբար ամրացված է եղել ոլորված թիթեղից կախելու հարմարանքը (երկարությունը 11,5 սմ է, իսկ տապարիկի լայն հատվածը՝ 6,5 սմ): Բրոնզե թիթեղից պատրաստված երեք կախիկներն էլ ձևով հիշեցնում են հարթ տապարներ, բայց թե ինչի սիմվոլներ են համարվում, միանշանակ դժվար է ասել: Այս կախիկների նմանօրինակները հայտնի են Թալինից²⁷ և Շիրակավանից²⁸: Թալինի նմուշը (18,5 սմ) գտնվել է թիվ 8 դամբարանից (լուս. 10), այն առաջին անգամ հրատարակել է Գ.Արեշյանը 1990թ.: Թալինի կախիկը դամբարանից է, ի տարբերություն Շիրակավանից հայտնի մյուս նմանօրինակի (լուս. 8), որը, ինչպես մեր գտածոները, նույնպես պատահական է և չափերով մոտ է մեր կախիկներին:


Հաշվի առնելով տապարաձև կախիկների հայտնի նմանօրինակների թվաքանակները՝ «Կուսակցի» արգելոցի նմուշները թվագրվում են Ք.ա. X-VIII դդ. և պատկանում են Լճաշեն-Մեծամորյան մշակույթի IV-V փուլերին:

Անփոփում. Այսպիսով Շիրակավանից հայտնաբերված պատահական գտածոները բնորոշ են դամբարանային մշակույթին, իրենց նմանօրինակներն ունեն Հայաստանի հնագիտական մի շարք հուշարձաններից հայտնի նյութերում և թվագրվում են Ք.ա. XII-VIII դդ.: Բրոնզե թասը թվագրվում է Ք.ա. XII-X դդ. և բնորոշ է Լճաշեն-Մեծամորյան մշակույթի III փուլին, իսկ չորս բրոնզե կախիկները՝ Ք.ա. X-VIII դդ. և պատկանում են Լճաշեն-Մեծամորյան մշակույթի IV-V փուլերին:


²⁶ Ըստ արդյուրի՝ նյութը 2002 թ. դրությամբ հրատարակված չէ (նշվ. աշխ., էջ 106):

²⁷ Badalyan R., Avetisyan P.- 2007. p. 251, pl VII-10.

²⁸ Թորոսյան Ռ. և այլք -2002, աղ. LX-14:



1. Թաս Արթիկից



2. Թաս Սպանդարյանից




3. Թաս Շիրակավան պատահական գտածո



4. Թաս Շիրակավան պատահական գտածո, պորտաձև ելուստը




5. Կախիկ պատահական գտածո Շիրակավանից



6. Կախիկ Շիրակավանից



7. Կախիկներ Շիրակականից



8.Տապարաձև կախիկ Շիրակականից



9. Կախիկ Տոլորսից



10 Կախիկ Թալինից



11.Պատահական գտածո Շիրակականից



12. Պատահական գտածո Շիրակականից




13. Պատահական գտածո
Շիրակավանից



16. Շտանդարտ
Սև ամրոցից



14 Թառ Սպանդարյանից



15. Շտանդարտներ Սև ամրոցից

О СЛУЧАЙНЫХ НАХОДКАХ ИЗ ШИРАКАВАНА ПО МАТЕРИАЛАМ ИСТОРИКО-КУЛЬТУРНОГО МУЗЕЯ-ЗАПОВЕДНИКА "КУМАЙРИ"

Авагян И. Э.

Ключевые слова: *Ширакаван, случайная находка, бронзовая чаша, гладкие, бронзовые, листовые подвески.*

В работе представлены случайные находки из села Ширакаван Ширакского марза, которые хранятся в археологическом фонде Историко-культурного музея-заповедника "Кумайри". Случайные находки были обнаружены во время строительных работ, которые проводились в селе Ширакаван в конце 1980-х – начале 1990-х гг. Коллекция состоит из бронзовых изделий - бронзовая чаша и бронзовые штандарты-подвески двух типов. Бронзовые штандарты датируются началом I-ого тысячелетия- IX-VIII вв. до Р. Х., а бронзовая чаша - XII-X вв. до Р. Х.

ABOUT RANDOM FINDS FROM SHIRAKAVAN STORED IN THE HISTORICAL AND CULTURAL MUSEUM-PRESERVE "KUMAYRI"

Avagyan I. E.

Key words: *Shirakavan, chance find, bronze bowl, smooth, bronze, leaf pendants.*

The work presents random findings from the village of Shirakavan, Shirak Marz. Chance findings were discovered during the construction work that was carried out in the village of

Shirakavan in the late 1980s - early 1990s. The collection consists of bronze items - a bronze bowl and two types of bronze standards-pendants. Bronze standards date back to the beginning of the 1st millennium-9th-8th centuries BC, and a bronze bowl -XII-X centuries BC.

Գ ր ա կ ա ն ո թ յ ո ն

1. **Աբրահամյան Լ. -2004**, Շիրակի պատմամշակութային ժառանգությունը հանրապետական վեցերորդ գիտական նստաշրջանի նյութեր, Գյումրի, 12-14 էջեր,:
2. **Ավագյան Ի. -2016**, Պատահական գտածոներ Շիրակի Սպանդարյան գյուղի դամբարանադաշտից, «Շիրակի պատմամշակութային ժառանգությունը. հայագիտության արդի հիմնահարցեր» 9-րդ միջազգային գիտաժողով, Գյումրի, 24-25 սեպտեմբերի, զեկուցումների դրույթներ, Երևան, 14-17 էջեր:
3. **Ավագյան Ի. -2016**, Պատահական գտածոներ Շիրակի Սպանդարյան գյուղի դամբարանադաշտից, ՀՀ ԳԱԱ ԾՀՀԿ «Գիտական աշխատություններ», հ. XIX, Գյումրի, 258-263 էջեր:
4. **Թումանյան Բ, Մնացականյան Հ. -1965**, Բրոնզե դարի գոտի օրացույց, Երևան:
5. **Թորոսյան և այլք -2002**, Թորոսյան Ռ., Խնկիկյան Օ., Պետրոսյան Լ., Հին Շիրակավան (1977-1981թթ. պեղումների արդյունքները), Երևան:
6. **Իսրայելյան Հ. -1973**, Պաշտամունքն ու հավատալիքը ուշ բրոնզիդարյան Հայաստանում ըստ հնագիտական նյութերի, Երևան:
7. **Մարտիրոսյան Հ. -1969**, Ուշբրոնզիդարյան բնակավայրեր և դամբարանադաշտեր, Հայաստանի հնագիտական հուշարձաններ, բրոնզիդարյան հուշարձաններ 2, պրակ II, Երևան:
8. **Մարտիրոսյան Հ. -1971**, Քարի դարից՝ Ուրարտու, Երևան:
9. **Մինոնյան Հ. -2013**, Հայաստանը ուշ բրոնզի և վաղ երկաթի դարերում (Ք.ա. 1500-800), Հայաստանի հնագիտական ժառանգությունը, Պատմամշակութային ժառանգության մատենաշար, հ. է, Երևան, 42-49 էջեր:
10. **Есаян С., Калантарян А. -1988**, Опакан-I, Основные результаты раскопок 1971-1983, Ереван.
11. **Пиотровский Б. -1959**. Ванское царство (Урарту). М.
12. **Хачатрян Т. -1975**. Древняя культура Ширака III-I тыс. до н.э. Ереван.
13. **Badalyan R., Smith A., Lindsay I., Khatchadourian L., Avetisyan P. -2008**, With appended by Monahan B. and Hovsepyan R., Archäologische Mitteilungen aus Iran und Turan (AMIT), Separatum, Band 40, 2008, pp. 47 -105.
14. **Badalyan R., Avetisyan P. -2007**. Bronze and Early Iron Age Archaeological Sites in Armenia, I, Mt. Aragats and its surrounding region, Maison de l' Orient et de la Maditerranée-Jean Pouilloux, BA International Series.
15. **Rösler E. -1902**. sendet aus Elisabethpol den Schluss (vgl. Verhandlungen, 34, S. 137) seines Berichtes über archäologische Forschungen und Ausgrabungen in Transkaukasien, unternommen für die kaiserlich russische Archäologische Commission im Jahre 1900, pg. 221-245:

Ընդունվել է՝ 10.03.2022

Գրախոսվել է՝ 25.04.2022

Հանձնվել է տպ.՝ 28.11.2022

Տեղեկություններ հեղինակի մասին

Ինգա ԱՎԱԳՅԱՆ՝ պատմական գիտությունների թեկնածու, դոցենտ,
ՀՀ ԳԱԱ Շիրակի հայագիտական հետազոտությունների կենտրոնի գիտաշխատող,
«Կումայրի» պատմամշակութային արժեք-թանգարանի տնօրեն,
էլ. հասցե՝ inga.avagyan.76@mail.ru

ԱՎԱՆԻ ՏԱՃԱՐԻ 1219 Թ. ՎԻՄԱԳԻՐԸ
ՏՆՏԵՍԱԿԱՆ ԵՎ ՂԱՎԱՆԱԿԱՆ ՀԱՐՑԵՐԻ ՀԱՄԱՊԱՏԿԵՐՈՒՄ

Ավետիք Ղազարյան

ՀՀ ԿԳՄՍՆ «Պատմամշակութային արժեքապահպանության և պատմական միջավայրի պահպանություն» ՊՈԱԿ

Բանալի բառեր՝ *Ավանի տաճար, Հայ քաղկեդոնական հակաթոռ կաթողիկոսություն, վիմական արձանագրություն, Ջաքարյան իշխանապետություն, Իվանե Ջաքարյան, իշխան Ջաջուռ Խաղբակյան, Ավանի վանական միաբանություն, սեփականության միջնադարյան իրավունք:*

Երևանի Ավանի տաճարի վիմական արձանագրություններն արժեքավոր սկզբնաղբյուր են թե՛ հուշարձանի, թե՛ Հայաստանի միջնադարյան պատմության գիտական հետազոտման համար: Տաճարի 1219թ. արձանագրությունը, լինելով Ավանի՝ Ջաքարյան իշխանապետության ժամանակաշրջանի առաջին վավերագիրը, պարունակում է տեղեկատվական հարուստ պաշար ժամանակի տնտեսական, իրավական, դավանական, ինչպես նաև վարչատարածքային կառավարման և պատմական անձանց վերաբերյալ: Տվյալ հանգամանքը գիտական հենք է ծառայում վիմագրի բովանդակային բազմաձև շերտերի՝ տնտեսական և դավանական հարցերի համապատկերում բազմակողմանի և համադրական հետազոտման համար:

Նախաբան. Ավանի տաճարը՝ Երևանի նույնանուն վարչական շրջանի հյուսիսարևելյան հատվածում, հիմնադրվել է VI-VIIդդ. սահմանագծին՝ որպես քաղկեդոնական հակաթոռ կաթողիկոսության աթոռանիստ: Հուշարձանը՝ հիմնադրման և ընթացիկ պատմությամբ, ճարտարապետահատակագծային նորարար հորինվածքով, վիմական արձանագրություններով, սկսած XIXդ. վերջին տասնամյակից, եղել է հետազոտման առարկա: Հուշարձանի պատմական հարուստ ժառանգության կարևոր մի հատված՝ վիմական արձանագրությունները, անգնահատելի սկզբնաղբյուր են ինչպես տա-

ճարի, այնպես Հայաստանի միջնադարյան պատմության գիտական հետազոտման համար:

Տաճարի XIII-XIV դդ. թվագրվող հինգ արձանագրություններ պահպանվել են արևմտյան պատի ճակատային հատվածում: Հիմնականում նվիրատվական բնույթի այս վիմագրախումբը արժևորվում է ժամանակի տնտեսական, դավանական, ինչպես նաև վարչատարածքային կառավարման, պատմական անձանց և այլ հարցերի վերաբերյալ տեղեկատվական հարուստ պաշարով:

Տվյալ վիմագրախումբում, մի շարք հանգամանքներով պայմանավորված, գիտական առանձնակի կարևորություն է ներկայացնում 1219 թ. արձանագրությունը: Այն Ավանի տաճարի` Ջաքարյան իշխանապետության ժամանակաշրջանին վերաբերող առաջին արձանագրությունն է, որով քաղաքական նոր պայմաններում վավերագրվում են տաճարին առնչվող մի շարք տնտեսական իրողություններ: Բովանդակության որոշ բաղադրիչներ կարևորվում են Ավանի տաճարի կարգավիճակի որոշման և հոգևոր սպասավորների դավանական պատկանելությանը վերաբերող հարցերի քննության համատեքստում: Այն հանդես է գալիս ժամանակագրորեն հաջորդող, ինչպես և նախորդող մի շարք արձանագրությունների հետ կապակցված, ինչը գիտական հենք է ծառայում վիմագրի բովանդակային բազմաձև շերտերի բազմակողմանի և համադրական հետազոտման համար:

Անադարտ պահպանված ութտողյա արձանագրությունը` «Ի ԹՈՒԻՍ ՀԱՍՈՑ»: ՈՒԿԸ:(668+551=1219) ԵՍ ԻՎԼԱԵ ԱԹԱԲԱԿ Հ/ԱՈՑ ԵՒ ՎՐԱՑ ԷՏՈՒ ԶԿՈՒԶԱ ԱԲԱՆԱ [ՈՐ] Ի/ ՀՆՈՑ ՍՈՑԱ ԷՐ ԵՒ ԿՐԿԻՆ ԳՆԵՑԻՆ Ի ԶԱԶՈՌ ԲԱԶՈՒՄ ԳԱՆՁԻԻ ՀԱՅՐԷՆԻՔ: ԱՐԴ [ՈՐ]Ք ՅԻՄՈՑ ԿԱՍ ՅԱԲ/ՏԱՐԱՑ ԼԻՆԻՆ ՏԷՐ ԵՐԿՐԻՍ ՀՈՂ ԵՒ ԶՈՒՐ ԱԻԵԼՑԱՆԵԼ ՊԱՐՏ Է Ա/ԻԱԼՆԱՅ՝ ՎԱՍՆ ՄԻԱՍՏՈՒԹԵԼԱՅ՝ ՍՈՑԱ: ԵՒ ՈՎ ԽԼԷ ԱԿԱԻՍ ՄԻ ԿԱՍ Ի ԲԱ/ՀԱՎԱՐԷ ՇԱՐԵՏ ԱՌՈՒ :Յ:ԺԸ:(318) ՄԲ: ՀԱՐՑՆ ԵԶՈՎԵՍՅԻ ԸՆԴ ՅՈՒԴ/ԱԻ ԴԱՏԱՊԱՐՏԻ [ԱՄԷՆ]»¹, փորագրված է Ավանի տաճարի արևմտյան պատի հարավային կիսահատվածում` շքամուտքի ճակտոնի և պատուհանի պսակի միջև:

Արձանագրության լեզուն գրաբարահեն է, բարբառախառն, շարահյուսական բարդ կառուցվածքով: Արձանագրված է Իվանե Ա. Ջաքարյանի անունից, որ 1212 թվականից Հայաստանի ինքնակալ կառավարիչն էր, իսկ 1213 թվականից` նաև Վրաստանի աթաբեկը, այն է` գահապահը:

1219 թ. ԱՐԶԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆԸ` ՏՆՏԵՍԱԿԱՆ ՀԱՄԱՏԵՔՍՏՈՒՄ

Քննվող արձանագրության տնտեսական բնութագրի բացահայտման տեսանկյունից առանցքային նշանակություն ունի «ԿՈՒԶԱ» բառամիավորը: Արձանագրությունը, ըստ էության, կազմվում է` վավերացնելու նրանով պայմանավորված տնտեսական իրողությունները: «Բազում գանձի» գնման արդյունքում սեփականության «հայրենիք» իրավատեսակով ձևակերպման հանգամանքը, ինչպես նաև դրանից բխող իրավունքները, որոնք տարածվում են արձանագրության 5-7-րդ տողերում վկայված հերկելի և

¹ Արձանագրության հրատարակված վերծանությունները տե՛ս **ՏԷՐ-ՍԿՐՈՒՅԵԱՆ ՄԻԽԻՅԱՐ ՎՈՂ. -1904**, էջ 48: **ՎՏ -1913**, էջ 62; **ՂԱՓԱՊԱՐՅԱՆ Կ. -1975**, էջեր 192-193:

«բահավար» հողատարածքների վրա, թույլ են տալիս միանշանակ հաստատել «ԿՈՒԶՍ»-ի՝ հողակալվածք լինելու իրողությունը:

«Կուզա»-ն՝ որպես հողակալվածք, առաջինը մեկնաբանում է Հր. Աճառյանը «Ջաջուռ» բառահոդվածում՝ անվանելով այն «մի հող». «Ջաջուռ, որից Իւանէ (+1231) Աթաբէգը գնել է մի հող և նվիրել Աւան գյուղին»²: Նման եզրակացության համար, հավանաբար, տեղիք է տվել «էտու» բայի հիմնական և հաճախ կիռառելի *նվիրել, պարգևել* նշանակությունը: Մակայն, ինչպես նկատում է Կ. Ղաֆաղարյանը, այն ոչ թե նվիրվում, այլ գնվում է և, «էտու»-ն, ինչպես կարծում է նա, մատնանշում է այդ հարցում Իվանե Ջաբարյանի ցուցաբերած օգնությունը գնող կողմին:³

«ԿՈՒԶՍ»-ի՝ որպես հողակալվածքի հստակեցմամբ, առաջադրվում են մի շարք հիմնահարցեր, որոնց քննությանն օժանդակում է արձանագրության մեջ առկա տեղեկատվական պաշարը:

Ըստ արձանագրության՝ հիմքեր են առաջանում քննելու հողակալվածքի առարկայական կազմը և տարբերակելու դրա երկու իրավական կարգավիճակ՝ վաճառքի պահին և առօրյա հետո: Իր հերթին, հողօգտագործման իրավական կարգավիճակով պայմանավորված, հնարավորություն է ընձեռվում քննության առարկա դիտարկելու հողակալվածքը սեփականության իրավունքով տիրապետող յուրաքանչյուր կողմի ինքնության հարցը:

Հողակալվածքի առարկայական կազմը որոշելու համար կարևորվում է արձանագրության 6-7 տողերում առկա տեղեկատվությունը: Իվանե Ջաբարյանի խոսքի՝ սեփականության իրավահարկային վիճակին առնչվող հատվածում այդ մասին վկայում են «ակաւս» և «բահավար» բառամիավորները:

Նշված բառակազմից «բահավար» միավորը Կ. Ղաֆաղարյանը մեկնաբանում է որպես «շարետ»-ի վճարից ազատված «բահով վարող» անձ:⁴ Ս. Ավագյանը համակողմանի բառաքննության արդյունքում եզրակացնում է, որ այն մատնանշում է բահով մշակվող հողատեսակ:⁵ Ոճախմաստային համաձայնությամբ թելադրված, որ է՝ մշակման եղանակը, հիմնավորվում է Ս. Ավագյանի մեկնաբանությունը:

Այսպիսով՝ կարելի է եզրահանգել, որ արձանագրության մեջ «ակաւս» և «բահավար» եզրույթները ներկայացնում են «Կուզա» հողակալվածքի առարկայական համահավաք կազմը՝ բաղկացած հերկելի և բահով մշակվող հողերից:

Հողակալվածքի առարկայական կազմի ևս մեկ կարևոր հատկանիշի մասին է խոսում նաև անվան առկայությունը: «Կուզա»-ն՝ որպես տեղանուն, վկայում է «հայրենիք» իրավակարգով գնված հողատարածքի միակտոր և ամբողջական լինելու մասին, որի տարածական, թերևս, ծավալուն ընդգրկումը բնութագրվում է «բագում գանձի» գնված լինելու իրողությամբ:

Հողակալվածքի իրավավիճակը վաճառքի պահին և սեփականատերը

² Աճառյան Հ. -1948, հ. Դ, էջ 295:

³ Տե՛ս Ղաֆաղարյան Կ. -1975, էջ 193:

⁴ Տե՛ս Ղաֆաղարյան Կ. -1975, էջ 193:

⁵ Տե՛ս Ավագյան Ս. -1978, էջեր 39-40:

Արձանագրության մեջ «գնեցին ի Ջաջոռ» հաստվածով վկայվում է վաճառված հողակալվածքի սեփականատիրոջ անունը: Հր. Աճառյանը հետազոտողներից միակն է, որ անձնորոշում է տվյալ հատուկ անունը, թեև սահմանափակվում է բնագրի ընձեռած տեղեկատվությամբ՝ Ջաջոռին ներկայացնելով մեկը, ով վաճառել է իր հողը:

Այդուհանդերձ, արձանագրության մի շարք դրվագներ, հանդիսանալով տվյալ ժամանակաշրջանի՝ Ջաքարյան իշխանապետության կառավարման համակարգով և վարչատնտեսական հարաբերություններով պայմանավորված դրսևորումներ, հնարավորություն են ընձեռում քննելու թե՛ վաճառվող հողակալվածքի իրավավիճակի և թե՛ սեփականատիրոջ անձնորոշման հարցերը:

Ջաջոռի սեփականության իրավատեսակը

Ջաքարյան իշխանապետության ժամանակաշրջանում վասալ իշխանների համար գործում էին հողատիրության երկու իրավատեսակ՝ սեփականատիրական և պայմանական, որոնք առավելապես հայտնի են «հայրենիք» և «պարզականք» ձևակերպումներով:

Հայաստանի ազատագրված նահանգների զգալի մասը սեփականության իրավունքով պատկանում էր իշխանապետերին՝ Ջաքարյան իշխանական տան անդամներին, իսկ մնացած հաստվածը նրանց կողմից հատուկ ծառայության դիմաց տրվել էր ի տիրապետություն նոր ստեղծված կամ հին իշխանական տներին՝ որպես «հայրենիք» կամ «պարզականք»: Ընդ որում, հողային սեփականության այս երկու տեսակներից պայմանական իրավունքով տրված «պարզականք» տիրույթներն առանց իշխանապետի համաձայնության ավատառու իշխանների կողմից ենթակա չէին օտարման, նվիրման կամ վաճառքի:⁶

Արձանագրության 1-4-րդ տողերը, ինչպես ցույց է տալիս քննությունը, պարունակում են տեղեկություն, որով հնարավոր է դառնում ճշտել վաճառվող հողակալվածքի իրավավիճակը:

Տեղեկության մեջ առանցքային է Իվանե Ջաքարյանի «Էտու Ջկուգա» արտահայտությունը, ինչը մատնանշում է Իվանե Ջաքարյանի իրավական միջամտությունը՝ հողակալվածքի առքուվաճառքի իրականացման պահանջներով պայմանավորված, և դիտարկելի է իշխանապետ-ավատառու իրավահարաբերությունների տիրույթում: Իվանե Ջաքարյանի «Էտու»-ն հասցեագրվում է ոչ թե գնող կողմին, այլ վերաբերում է ավատառու Ջաջոռին, որով նրան արտոնվում է իրականացնել «պարզականք» կարգավիճակ ունեցող հողակալվածքի վաճառքը: Իշխանապետի կողմից տրվում է ոչ թե «Կուգա»-ն, այլ այն վաճառելու արտոնություն:

Ջաջոռի ինքնությունը

Արձանագրության մի շարք դրվագներ հիմք են ծառայում եզրակացնելու Ջաջոռի՝ իշխանական որոշակի ընտանիքի պատկանելության վերաբերյալ:

Հայաստանի ազատագրումից հետո Ջաքարյանները հատուկ ծառայության դիմաց, որը հիմնականում հաղթական մասնակցությունն էր ռազմական գործողություններում, որպես պարզև հողատարածքներ են շնորհում հին կամ իրենց կողմից նոր

⁶ Տե՛ս Բաբայան Լ. -1964, էջեր 393-394:

հաստատված իշխանական տներին: Ջաջուռի կողմից ստացված այդպիսի պարզևի մասին է խոսում «պարզևականք» իրավատեսակով «Կուզա» հողակալվածքի տնօրինումը, որի վաճառքն իրականացվում է իշխանապետի արտոնությամբ:

Արձանագրության մեջ Իվանե Ջաքարյանի արտահայտությունը՝ «ԱՐԴ [ՈՐ]Ք ՅԻՄՈՑ ԿԱՄ ՅԱԻ/ՏԱՐԱՅ ԼԻՆԻՆ ՏԷՐ ԵՐԿՐԻՍ ՀՈՂ ԵՒ ՋՈՒՐ ԱԻԵԼՑԱՆԵԼ ՊԱՐՏ Ե Ա/ԻԱԼՆԱԿ՝ ՎԱՄՆ ՄԻԱՄՏՈՒԹԵԼԱՆՆ] ՍՈՑԱ...», ի թիվս արժեքավոր այլ տեղեկությունների, նաև պարունակում է հաղորդում Ջաջուռի իշխանական ծագման և ընդհանուր կալվածքի վերաբերյալ: «ՅԻՄՈՑ ԿԱՄ ՅԱԻ/ՏԱՐԱՅ» հատվածով նախ վկայվում է որոշակի իշխանապետի՝ իշխան Ջաջուռի ենթակայության վերաբերյալ: Շարունակությունը՝ «ԼԻՆԻՆ ՏԷՐ ԵՐԿՐԻՍ», թույլ է տալիս ենթադրել, որ «Կուզա»-ն ընդամենը մի հատվածն է Ջաջուռի՝ Ավանում գտնվող հողային տիրույթների: Այդու՝ Իվանե Ջաքարյանի «էտու զԿուզա Աւանա» արտահայտության մեջ «Աւանա»-ի հոլովածնը հնարավոր է դառնում մեկնաբանել ոչ թե տրականով, այլ սեռականով, որով մատնանշվում է «Կուզա» հողակալվածքի՝ հատկապես ո՛ր հողատիրության բաղկացուցիչ լինելը, այդպիսով նաև դրա՝ ում պատկանելությունը:

Պատմական հայտնի տվյալների համաձայն՝ Ջաքարե ամիրսպասալարի գերիշխանությանն էին ենթարկվում Վաչուտյանների, Պահլավունիների, Հոնենց և այլ իշխանական տներ, իսկ Իվանե աթաբեկի ենթակայության տակ էին Օրբելյանները, Խաղբակյանները, Դուխյանները, Շահուռնեցիները, Մահևանյանները և ուրիշներ:⁷

XII-XIII դդ. վիմական արձանագրություններում վկայված «Ջաջուռ» անձնանունը պատկանում է վերոնշյալ իշխանական տներից բացառապես Խաղբակյաններին: Տվյալ իշխանական տան Ջաջուռ անվամբ հիշատակվող երկու ներկայացուցիչներից ժամանակագրական անհամապատասխանությամբ բացառում ենք Ջաջուռ Ա-ին (+1173 թ.): Քննության արդյունքում հիմքեր են ի հայտ գալիս ենթադրելու, որ Խաղբակյան իշխանական տան մեկ այլ անդամ՝ Ջաջուռ Բ-ը (+1224 թ.) և Ավանի տաճարի 1219 թ. արձանագրության մեջ վկայված Ջաջուռը միևնույն անձն են:

Խաղբակյանները Կիրակոս Գանձակեցու հաղորդմամբ՝ «գաւառաւ խաչէնացիք էին, յերևելի ազգէ, հաւատով քրիստոնէայք ուղղափառք (իմա՝ հայադավան-Ա.Ղ.) և ազգաւ հայ»:⁸ Մինչև Ջաքարյան իշխանապետության հաստատումը Խաչենում Խաղբակյան իշխանական տան ունեցած կալվածքների վերաբերյալ հայտնի է միայն, որ նրանց հոգևոր կենտրոնը և տոհմական գերեզմանատունը Հավապտուկում էին՝ Խոխանաբերդի դիմաց, Խաչենագետի վրա, իսկ բնակավայրը՝ Գեռաքարում:

XIII դարասկզբին Խաղբակյան իշխանական տունը վերելք է ապրում շնորհիվ Վասակի, որն առանցքային դերակատարներից է Ջաքարյանների գլխավորած ազատագրական պայքարում: Նա իր եղբոր՝ Ջաջուռի հետ նշանակալի մասնակցություն է ունենում Վայոց Ձորի, Բջնիի և Դվինի գրավման գործում, որի արդյունքում որպես

⁷ Մանրամասն տես **Մանանդյան Հ., -1952**, էջեր 147-160:

⁸ Նույն տեղում, էջ 206:

պարզև ստանում է ընդարձակ կալվածքներ Վայոց ձորում, Շահապունիքում, Վարաժնունիքում և Կոտայքում:⁹

Խաղբակյան իշխանական տան՝ Կոտայք գավառում ունեցած կալվածքների մասնավոր հավաստումն է, կարծում ենք, 1219 թ. արձանագրության մեջ հիշատակված այն «երկիր»-ը, որի մի հատվածը՝ «Կուզա»-ն վաճառում է Ջաջուռ Խաղբակյանը:

Այն հանգամանքը, որ 1219 թ. արձանագրության մեջ վկայված Ջաջուռը և Ջաջուռ Խաղբակյանը նույն անձն են, և նա գերդաստանի կալվածքների սահմաններում ունեցել է իրեն պատկանող ընդարձակ հողակալվածք, փաստում է Ջաջուռ Խաղբակյանի որդու՝ Գրիգորի թողած արձանագրությունը հայրենի Խաչենում:

Խաչեն գետի ձախ ափին, Վաճառ գյուղատեղիում գտնվող Ս. Ստեփանոս եկեղեցու հարավային մուտքի արևելյան եզրին Գրիգորի կողմից արձանագրված է. «ՀՐԱՄԱՆԱԻ ԱԾԱՍԷՐ ԻՇԽԱՆԻՆ/ ՀԱՍԱՆԱ, ՏՆ ԽԱՉԻՆՈ, ԵՍ ԳՐԻԳՈՐ ՈՐ/ԴԻ ՔԱՉ ՋԱԻՐԱԿԱՆԻՆ ՋԱՋՈՒՌԱ/ ԵՏՈՒ ՋԱԻՆԱԽՈՌՈՒՆ ԵՐԿԻՐՆ Ի ԱՐ/ՆԱՀԱՍԱԿՍ, ՏՐԱ ԵՎ ՄԻԱԲԱՆՔՍ/ ՏՈՒՐԻ ՋՄԲ. ԳՐԻԳՈՐԻ ՏԱԻՆՆ/ :Բ: ՊԱՏԱՐԱԳ»:¹⁰

Արձանագրության մեջ, կարծում ենք, տրոհման ենթակա է նաև «ՋԱԻՆԱԽՈՌՈՒՆ» բառամիավորը: «ՋԱԻՆԱ ԽՈՌՈՒՆ ԵՐԿԻՐՆ» բառակապակցությունը հնարավոր է դառնում մեկնաբանել «ԽՈՌՈՒՆ» (=խորին), այն է՝ խորունկ, հեռվում գտնվող «Աւանա» «երկիր» հողատիրույթը, որը Գրիգորը նվիրաբերում է Ս. Ստեփանոս եկեղեցուն: Սույն արձանագրությունը հիմք է ծառայում եզրակացնելու, որ Գրիգորի «ՋԱԻՆԱ ԽՈՌՈՒՆ ԵՐԿԻՐՆ» և Ավանի տաճարի արձանագրության «երկիր»-ը, որի մասն է «ԿՈՒՉԱ»-ն, նույնական են և, հետևաբար, նույն անձն են Գրիգորի «քաջ զարական» հայր և 1219 թ. արձանագրության «Ջաջուռ»-ները, որ Ջաջուռ Բ. Խաղբակյանն է:

Այդպիսով՝ քննության արդյունքները թույլ են տալիս եզրակացնել, որ «Կուզա» հողակալվածքը, լինելով առավել ընդարձակ հողատիրույթի՝ «Ավանի հեռավոր երկրի» մի մաս, հողատիրության «պարզևականք» իրավատեսակով պատկանել է Ջաջուռ Բ. Խաղբակյան իշխանին:

**ԳԼՎԱԾ ՀՈՂԱԿԱԼՎԱԾՔԻ ԻՐԱՎԱՎԻՃԱԿԸ, ՍԵՓԱԿԱՆԱՏԵՐԸ ԵՎ ՆՐԱ
ԴԱՎԱՆԱԿԱՆ ՊԱՏԿԱՆԵԼՈՒԹՅԱՆ ՀԱՐՑԸ**

Գնված հողակալվածքի իրավավիճակը

Արձանագրության մեջ վավերացվում է գնված «Կուզա» հողակալվածքի սեփականության «հայրենիք» իրավատեսակը՝ «...գնեցին բազում գանձի հայրենիք»: Այսօրինակ սեփականության գլխավոր առանձնահատկություններն են տիրապետման հաջորդականության անխախտելիությունը, կալվածքի անձեռնմխելիությունը և տեղական մասշտաբով՝ ապահարկությունը:¹¹ Իրավական տվյալ երեք բաղադրիչները վկայված են քննվող արձանագրության մեջ:

Առքն իրականացնող կողմի՝ սեփականության տիրապետման հաջորդականության իրավունքի, առավել ճշգրիտ՝ այդ իրավունքի վերականգնման մասին վկայում է

⁹ Տե՛ս **Գարեգին կաթողիկոս Յովսեփեան -1969**, էջեր 17,18: Տե՛ս նաև **Մանանդյան Հ. -1952**, էջ 154:

¹⁰ **ՂՂՎ -1982**, էջ 79:

¹¹ Տե՛ս **Բաբայան Լ. -1964**, էջեր 390-391:

«...ՈՐ Ի ՀՆՈՑ ՍՈՑԱ ԷՐ...» արտահայտությունը: Այսու կարող ենք եզրակացնել, որ Իվանե Չաքարյանի կողմից ավատառուին տրված վաճառքի արտոնությունը պայմանավորվում է առքն իրականացնող կողմի՝ հողակալվածքի նկատմամբ տիրապետման հաջորդականության և սեփականության անվիճարկելիության իրավունքով:

«Կուգա» հողակալվածքի անձեռնմխելիության և ապահարկության իրավական ցուցանիշները, ինչպես կարծում ենք, ի հայտ են գալիս միասնաբար՝ մեկ արտահայտության մեջ՝ «...ԵՒ ՈՎ ԽԼԷ ԱԿԱԻՍ ՄԻ ԿԱՍ Ի ԲԱ/ՀԱՎԱՐԷ ՇԱՐԵՏ ԱՌՈՒ :Յ:ԺԸ:(318) ՄԲ: ՀԱՐՑՆ ՆՁՈՎԵՍՑԻ ԸՆԴ ՅՈՒԴ/ԱԻ ԴԱՏԱՊԱՐՏԻ [ԱՄԷՆ]:»

Ս. Ավագյանի գնահատմամբ՝ սույն հատվածը վերաբերում է աթաբեկ Իվանեի կողմից ոչ թե մշակովի բուրր հողամասերի, այլ միայն «բահավար» հողերի՝ շարիատ հողային հարկից ազատելուն:¹²

Արձանագրության քերականական և ոճաբանական քննությունը թույլ է տալիս կարծել, որ խոսքը վերաբերում է ոչ թե հարկից ազատմանը, այլ արդեն հարկից ազատված կարգավիճակում՝ անգամ «շարետ» գանձելու արգելքին:

Սեփականության «հայրենիք» կարգավիճակով գնված «Կուգա» հողակալվածքն արդեն իսկ ազատվում էր տեղական հարկերից, իսկ տվյալ արտահայտության նախադաս հատվածը՝ «ԱՐԴ [ՈՐ]Ք ՅԻՍՈՑ ԿԱՍ ՅԱԻ/SԱՐԱՅ ԼԻՆԻՆ ՏԷՐ ԵՐԿԻՒՍ...», հարկահանման արգելքով, վերաբերում է տեղի ավատառու իշխանությանը:

Նկատի ունենալով նախադաս «...ՈՎ ԽԼԷ ԱԿԱԻՍ ՄԻ...» բառակապակցության մեկնաբանությունը՝ «Ով նվազագույն չափով իսկ հող խլի...»¹³, նշված հատվածը հանդես է գալիս ոչ թե ինքնուրույն, մասնակի իմաստով, այլ նախադասության ընդհանուր իմաստը բացահայտող երկու բաղադրիչներից մեկը և որպես շարունակություն արտահայտում է «...կամ շարետ կվերցնի հողից» իմաստը: Այդպիսով, ինչպես կարծում ենք, Իվանե Չաքարյանի՝ որպես նզովք ձևակերպված արգելքով հաստատվում է ամբողջական հողակալվածքի անձեռնմխելիության և տեղական ապահարկության իրավունքը, որը վերապահվում է նոր սեփականատիրոջը:

Գնորդ սեփականատերը և նրա դավանական պատկանելության հարցը

«Կուգա» հողակալվածքի գնորդ սեփականատիրոջը, ոչ որպես քննության առանձին առարկա, անդրադառնում է Կ. Ղաֆաղարյանը՝ դիտարկելով խնդիրը դավանական պատկանելության հարցի համատեքստում: Վերլուծելով արձանագրության մեջ վկայված «միամտություն» բառամիավորը՝ հեղինակը նոր սեփականատեր է նշում ավանցիներին, որով, ըստ էության, գնված հողակալվածքը որակում է համայնական:¹⁴ Նույնօրինակ կարգավիճակով հողակալվածքի նոր սեփականատիրոջը ներկայացնում է նաև Հր. Աճառյանը՝ վերոնշյալ բառահորվածում օգտագործելով «Ավան գյուղ» ձևակերպումը:¹⁵

¹² Տե՛ս Ավագյան Ս. -1978, էջ 40:

¹³ Ղաֆաղարյան Կ. -1975, էջ 193:

¹⁴ Նույնը:

¹⁵ Տե՛ս Աճառյան Հ. -1948, էջ 295:

Հարկ է փաստել, որ արձանագրության մեջ առկա չէ որևէ վկայություն ավանցիների կամ Ավան գյուղի վերաբերյալ:¹⁶

«Կուզա» հողակալվածքը համայնական գնահատելու պատճառ, ինչպես կարելի է ենթադրել, հանդիսացել են արձանագրության մեջ երկու անգամ վկայված «Աւան» եզրույթները:

Արձանագրության «Աւան» եզրույթները եթե մեկնաբանվում են ոչ թե սեռական, այլ տրական հոլովաձևով, ապա կարող են, թեև ոչ ուղղակի և միանշանակ, այդուհանդերձ, ենթադրելու պատճառ դառնալ, որ կիրառվել են «գյուղ» իմաստով և մեկնաբանվել անգամ «ավանցիներ» նշանակությամբ: Այդ դեպքում, սակայն, առաջանում են անհաղթահարելի խնդիրներ՝ արձանագրության համապարփակ, իմաստային ներդաշնակ մեկնաբանության համար, որով խախտվում է բովանդակային ամբողջականությունը:

Իվանե Զաքարյանի «Էտու զԿուզա Աւանա» արտահայտության մեջ առաջին հայացքից տրամաբանական և պահանջված է թվում «Աւան»-ի տրական հոլովաձևը, առանց որի նախադասության մեջ բացակայում է հասցեատերը՝ որին տրվում է «Կուզա»-ն: Այդ դեպքում, սակայն, «Էտու» բայը դառնում է կիրառելի միայն «նվիրել» իմաստով, ինչը հստակ արտահայտվել է Հր. Աճառյանի բառահոդվածում: Արդյունքում՝ առաջանում են անհամատեղելի երկու իրողություններ: Ստացվում է՝ Ավան գյուղը կամ ավանցիները «բազում գանձի» վճարում են՝ «Կուզա»-ն նվեր ստանալու համար: Հակասությանն անդրադառնում է Կ. Ղաֆադարյանը՝ «Էտու»-ն մեկնաբանելով «վերադարձնել տվի»¹⁷ իմաստով՝ իշխանապետի՝ ավատառուին վաճառքն արտոնելու իրավական միջամտությունը ներկայացնելով որպես «ավանցիներ»-ի խնդրանքին ընդառաջ միջնորդություն, որով, սակայն, ստացվում է իշխանապետը ոչ թե արտոնում, այլ պարտադրում է ավատառու իշխանին՝ վաճառելու հողակալվածքը: Այս դեպքում անգամ իշխանապետի գործառույթը մնում է վաճառքի իրավական ընթացակարգի շրջանակներում, և նա տալիս է ոչ թե գնելու իրավունք ավանցիներին, այլ վաճառելու պարտականություն՝ ավատառուին:

Ինդիքը, ինչպես դիտարկեցինք վերևում, առնչվում է իշխանապետի կողմից ավատառուին տրված վաճառքի իրավունքին, և «զԿուզա Ավանա» կապակցությունը՝ «Ավանի Կուզա»-ն մեկնաբանությամբ մատնանշում է այն հողատիրությունը՝ «Ավան» անվանվող, որի մասն է կազմում «Կուզա»-ն:

«...ՀՈՂ ԵՒ ԶՈՒՐ ԱԻԵԼՑԱՆԵԼ ՊԱՐՏ Է ԱԻԱԼՆԱԼ ՎԱՍՆ ՄԻԱՍՏՈՒԹԵԼԱՆՍ ՍՈՑԱ» կապակցության «Աւան»-ի արտահայտած իմաստը, ինչպես կարծում ենք, հարկ է դիտարկել ըստ քերականական և շարահյուսական հատկանիշների՝ արձանագրության բովանդակության համատեքստում: Տվյալ հատվածն իշխանապետի կողմից ուղղված է ավատառու այն իշխաններին, որ տեր են կամ դեռ տիրապետելու են «երկրին»,

¹⁶ Հայկական միջնադարյան աղբյուրներում համայնական հողատիրությունը բնորոշելու համար օգտագործվում է «ժողովուրդ» ձևակերպումը: Որոշ դեպքերում գյուղական համայնքի մասին հնարավոր է դառնում եզրակացնել պաշտոնեության (ձեռնավորներ, տանուտերեր) հիշատակումներից (տե՛ս **Խաչիկյան Լ. -1958**, էջեր 110-111):

¹⁷ **Ղաֆադարյան Կ. -1975**, էջ 193:

այսինքն՝ այն կալվածքին, որը, ինչպես արդեն դիտարկեցինք, հավանական է՝ Ավանը ներառող ընդարձակ մի տիրույթ է: Այդու՝ տվյալ հատվածը հանդես է գալիս արձանագրության սկզբնամասում վկայված «Աւանա»-ի իմաստային նշանակությանը փոխշակապված: Այս դեպքում ևս, կարծում ենք, «Աւանա» բառաձևը ոչ թե տրական, այլ սեռական հոլովաձևով է կիրառված: Հետևաբար՝ հատվածը, բարդ շարահյուսական կառուցվածքով հանդերձ, արտահայտում է ոչ թե «Ավանին հող և ջուր ավելացնելու», այլ «Ավանի հողից և ջրից ավելացնելու» իմաստ:

Գնված հողակալվածքի սեփականատիրոջ ո՛վ լինելու հարցին, կարծում ենք, պատասխանում է արձանագրության մեկ այլ հատված:

«Կուգա» հողակալվածքի նոր սեփականատիրոջ մասին արձանագրության մեջ վկայվում է երեք անգամ: Մի դեպքում կիրառվում է «սոցա»՝ «սոքա» ցուցական դերանվան սեռական հոլովաձևը («...որ ի հնոց սոցա էր...»), հաջորդիվ՝ «գնեցին»՝ «գնել» բայի անցյալ կատարյալ ժամանակաձևի հոգնակի, երրորդ դեմքը («...գնեցին բազում գանձիւ հայրենիք»), և, ի վերջո, ինչպես կարծում ենք՝ «վասն միամտութե[ան] սոցա» բառակապակցությունը:

«Վասն միամտութե[ան] սոցա». դավանական «համամտութիւն», թե ո՛վ է սեփականատերը

«Միամտութիւն» եզրույթը վկայված է միայն Ավանի տաճարի երեք՝ 1219, 1285 և 1287թթ. վիմական արձանագրություններում: Դատելով տվյալ բառամիավորով կազմված կապակցության տարածամանակյա, սակայն ձևաբանական և իմաստային նույնօրինակ կիրառությունից՝ 1219 թ. արձանագրության սույն հատվածը կրկնօրինակվում է ժամանակագրորեն հաջորդող երկու վիմագրերում, սակայն, որոշակի առանձնահատկությամբ: 1285 և 1287 թթ. արձանագրություններն իմաստային լրացուցիչ և, ինչպես կարծում ենք, առանցքային հստակություն են հաղորդում քննվող հատվածին:

Կ. Ղաֆաղարյանը «միամտություն» եզրույթի առնչությամբ ենթադրում է, որ այն, վերաբերելով Իվանե աթաբեկին և «Կուգա» հողակալվածքի գնորդ «ավանցիներ»-ին, ցույց է տալիս նրանց միջև «համամտություն» -ը, որը «քաղկեդոնական դավանանքն է՝ հունադավանությունը»:¹⁸ Նույն կերպ նրա կողմից մեկնաբանվում են նաև սույն եզրույթի կիրառությունները 1285 և 1287 թթ. արձանագրություններում, որոնց համար հիմք են ծառայում վրաց արքայազն Դավթի և Խուլթուբուղայի քաղկեդոնադավան պատկանելությունը:¹⁹

Ավանի տաճարի երեք վիմական արձանագրություններում վկայված «միամտութիւն» եզրույթի և նրանով կազմված կապակցության՝ կողմերի միջև քաղկեդոնական դավանանքի ընդհանրության իմաստով մեկնաբանման համար՝ Կ. Ղաֆաղարյանը հղում է անում տաճարի հիմնադրման պատմությանը և 633 թ. երկլեզու ծածկագիր արձանագրության՝ իր ուսումնասիրությանը: Արդյունքում ներկայացվում է եզրակացու-

¹⁸ Տե՛ս Ղաֆաղարյան Կ. -1975, էջ 193:

¹⁹ Ղաֆաղարյան Կ. -1945, էջ 22:

թյուն «Ավանի տաճարի և գյուղաքաղաքի բնակչության»՝ Հովհան կաթողիկոսի մահվանից մինչև XIII դ. քակեղոնադավան լինելու վերաբերյալ:²⁰

Հայ քաղկեդոնական հակաթոռ կաթողիկոսությունը հիմնադրվել է Ավանում 591 թ. և տեղի մինչև միակ կաթողիկոս Հովնան Բագարանցու մահը՝ 611 թ.: Ավանում կաթողիկոսությունը, սակայն, գտնվել է մինչև 605/606 թթ.՝ մնացյալ ժամանակահատվածը գործելով տարագիր: Հայ քաղկեդոնական հակաթոռ կաթողիկոսության աթոռանիստ Ավանի տաճարը, ըստ մատենագրական հիշատակության, արդեն 607 թ. հիշատակվում է Դվինի հայոց կաթողիկոսության ենթակա հայադավան վանք:²¹

Ավանի տաճարի երկվեզու ծածկագիր արձանագրությունը, ինչպես արդեն անդրադարձել ենք, հակաքաղկեդոնականության հալածական պայմաններում յուրօրինակ ծածկագիր կազմությամբ չի կարող միանշանակ մեկնաբանվել և, ըստ մեր կարծիքի, խոսում է քաղկեդոնականությունը մերժող դիրքերից:²²

Բնագրի բովանդակային վերլուծությունը ցույց է տալիս սակայն, որ տվյալ երեք արձանագրություններում բացակայում են քերականական այնպիսի միջոցներ, որոնք ցույց կտային «վասն միամտութե[ան] սոցա» արտահայտության կապը որևէ մեկի հետ: Այդ հանգամանքը թույլ է տալիս կարծել, որ «միամտութին» եզրույթը վերաբերում է միայն «սոցա» դերանվանը, այսինքն՝ խոսքը վերաբերում է «սոցա»-ն կազմող անդամների միջև «միամտութե[ան]»-ը կամ, առավել հստակ, «սոցա»-ի անդամներից կազմված «միամտութե[ան]»-ը: Սույն իմաստը, ինչպես կարծում ենք, պարզորոշ վկայում են 1285 և 1287 թթ. արձանագրությունների՝ տվյալ արտահայտությամբ կազմված նախադասությունները:

Վրաց արքայազն Դավիթն ասում է. «... թողի զԱւանա զայգեաց շարետն վ[ա]յս[ն] միամտութե[ան] սոցա», իսկ Խութութբուղան՝ «... թողի զԱւանա զագե[ա]յց շարետն եւ զջուլհակերոյն հորակտան վ[ա]յս[ն] միամտութե[ան] սոցա»:²³ Ինչպես տեսնում ենք, տվյալ հատվածներում մի դեպքում վրաց արքայազն Դավիթը, մյուս դեպքում աթաբեկ և ամիրսպասալար Խութութբուղան «թողնում», այն է՝ ազատում են նշված հարկերից, սակայն հարց է առաջանում ու՞մ: «Աւան» տեղանունը երկու դեպքում էլ կիրառվում է տեղորոշման նպատակով՝ «զԱւանա»՝ նշելով Ավանի շուրջ գտնվող այգիները: Ուստի հասցեատերը, ինչպես կարծում ենք, ներկայանում է «միամտութին սոցա»-ն:

Այսպիսով, կարծում ենք, որ 1219 թ. արձանագրության մեջ Ջաջուռ Բ. Խաղբակյան իշխանից «Կուգա» հողակալվածքը «բագում գանձի» առքն իրականացնող կողմն է «միամտութին սոցա»-ն կամ նույնն է ասել՝ «միամտութին»-ը:

Մատենագրական վկայությունը Ավանի վանքի ու երեցի, այն է՝ միաբանության ու վանահոր մասին²⁴ հիմք է ծառայում կարծելու, որ «միամտութին» եզրույթը կիրառվում է «միաբանություն» նշանակությամբ և, այդպիսով, արտահայտում է «վանական միաբանություն» իմաստը: 1219թ. արձանագրության մեջ «միամտութին» բառի՝ վանա-

²⁰ Ղաֆադարյան Կ. -1945, էջեր 22-26:

²¹ Տե՛ս Ուխտանէս Եպիսկոպոս -1871, էջ 64: Տե՛ս Ղազարյան Ա. -2018, 3 (19), էջեր 63-67:

²² Տե՛ս Ղազարյան Ա. -2018, 3 (19), էջեր 71-72:

²³ Ղաֆադարյան Կ. -1975, էջ 195:

²⁴ Ուխտանէս Եպիսկոպոս -1871, էջ 64:

կան միաբանության իմաստով կիրառությունը թերևս հարկ է դիտարկել վանականների կողմից տրված ինքնանվանում, հատկապես, եթե նկատի ունենանք տվյալ ժամանակահատվածում Ավանի վիմագրերում միաբանության անվանման միաձևության բացակայությունը:²⁵

«Միամտութիւն» եզրույթի կրկնումը 1285 և 1287 թթ. արձանագրություններում հարկ է համարել ոչ այնքան կիրառման շարունակականության, որքան իրավական հետևանք: Կրկնակիրառմամբ հավաստվում էր մի դեպքում գնորդ, մյուս դեպքերում՝ նվիրառու կողմի նույնականությունը, որ էր, ինչպես կարծում ենք, Ավանի վանական միաբանությունը:

Եզրահանգում. Սույն հոդվածի շրջանակում ամփոփելով Ավանի տաճարի 1219թ. արձանագրության քննությունը տնտեսական և դավանական հարցերի համապատկերում՝ ներկայացնում ենք հետևյալ եզրակացությունները.

1. Ավանի տաճարի 1219 թ. արձանագրությունը կայացած առքուվաճառքի պաշտոնական վկայագիր է:
2. Վաճառքի առարկան «Կուզա» հողակալվածքն է, որի սեփականատեր Ջաջուռը, ինչպես կարծում ենք, իշխան Ջաջուռ Բ. Խաղբակյանն է:
3. Հողակալվածքի վաճառքն իրականացվում է սեփականության «պարզական» իրավավիճակի պահանջներին համապատասխան՝ իշխանապետ Իվանե Ջաքարյանի կողմից ավատառուին տրված արտոնությամբ:
4. Հողակալվածքի գնորդն է, ինչպես կարծում ենք, Ավանի վանական միաբանությունը:
5. Արձանագրության մեջ ճշտվում է գնված «Կուզա» հողակալվածքի առարկայական կազմը՝ ռոռզմամբ ապահովված հերկելի և բահամշակ հողատարածքներ:
6. Արձանագրությամբ ամրագրվում են գնված հողակալվածքի սեփականության «հայրենիք» իրավավիճակը և, ինչպես կարծում ենք, եկեղեցական կարգավիճակը՝ համապատասխան իրավատնտեսական երաշխիքներով (սեփականության տիրապետման հաջորդականություն, հողակալվածքի անձեռնմխելիություն, ապահարկություն):

ЛАПИДАРНАЯ НАДПИСЬ 1219 г. АВАНСКОГО СОБОРА В КОНТЕКСТЕ ЭКОНОМИЧЕСКИХ И ДОГМАТИЧЕСКИХ ОПРОСОВ

Газарян А. В.

Ключевые слова: *Аванский собор, Армянский халкидонский антипрестольный католикосат, Захаридское княжество Армении, Иване Захарид, князь Джаджур Хагбабян, монашеский орден Авана, средневековое право собственности Армении.*

²⁵ Ավանի վանական միաբանության ձևակերպման համար վանքապատկան Ս. Հովհաննես եկեղեցու 1313 թ. արձանագրության մեջ նվիրատուների կողմից կիրառվում է այդ ժամանակ արդեն «միաբանք» (միաբաններ) եզրույթը, իսկ միաբաններն ինքնանվանվում են «վանեցիք» (վանականներ): Տե՛ս **Ղաֆադարյան Կ.** -1975, էջ 203: **Ավագյան Ս.** -1978, էջեր 302-304:

Лапидарные надписи Аванского собора, руины которого сохранились до наших дней в административном районе Аван современного Еревана, ценнейшие источники изучения истории как данного собора, так и средневековой Армении.

Историографический, лингвистический и грамматический анализ лапидарной надписи 1219 г. дает основы рассмотрения вопросов истории собора экономического характера и догматической принадлежности. В результате изучения заключаются ряд выводов по которым лапидарная надпись характеризуется как официальный документ купли продажи земельного участка между местным феодалом князем Джаджуром Хагбакян и монастырем Авана. Надпись дает возможность определить юридический статус владения до и после продажи, предметный состав земельного участка. Лапидарная надпись предметно отражает административно-политические, социально-экономические реалии Захаридского княжества Армении в первой четверти XIII века.

THE AVAN CATHEDRAL'S LAPIDARY INSCRIPTION OF 1219 IN THE CONTEXT OF ECONOMIC AND DOGMATIC ISSUES

Ghazaryan A. V.

Key words: *the Avan Cathedral, the Armenian anti-see Chalchedonic Catholicosate, Zakharid Principality of Armenia, Ivane Zakharid, Prince Jadjur Khagbakyan, monastic order of Avan, medieval ownership of Armenia.*

The lapidary inscriptions of the Avan Cathedral, the ruins of which have survived to this day in the administrative district of Avan of modern Yerevan, are the most valuable sources for studying the history of both this cathedral and medieval Armenia.

The historiographical, linguistic and grammatical analysis of the lapidary inscription of 1219 provides the basis for considering questions of the history of the Cathedral of an economic nature and dogmatic belonging. As a result of the study, a number of conclusions are drawn according to which the lapidary inscription is characterized as an official document of the sale and purchase of a land plot between the local feudal prince Jajur Khagbakyan and the Avan monastery. The inscription makes it possible to determine the legal status of ownership before and after the sale, the subject composition of the land. The lapidary inscription substantively reflects the administrative-political, socio-economic realities of the Zakharid principality of Armenia in the first quarter of the 13th century.

Քրականություն

1. Աճառյան Հ. -1948, Հայոց անձնանունների բառարան, հտ. Դ, Երևան, Պետհամալսարանի հրատ.:
2. Ավագյան Ս. -1978, Վիմական արձանագրությունների բառարանություն, Երևան, ԵՀ հրատ.:
3. Բարսյան Լ. -1964, Հայաստանի սոցիալ-տնտեսական և քաղաքական պատմությունը XIII-XIV դարերում, Երևան, Հայպետհրատ:
4. Գարեգին կաթողիկոս Յովսէփեան 1969, Խաղրակեանք կամ Պռոշեանք Հայոց պատմութեան մէջ, Բ. հրատ., տպարան Կաթողիկոսութեան Հայոց Մեծի Տանն Կիլիկիոյ, Անթիլիաս-Լիբանան:
5. ԴՀՎ. -1982, Գիվան հայ վիմագրության, պրակ V, Արցախ, կազմեց՝ Ս. Գ. Բարխուդարյան, Երևան, ՀՄՍՀ ԳԱ հրատ.:

6. **Խաչիկյան Լ. -1958**, XIV-XV դարերի հայկական գյուղական համայնքների մասին // Պատմաքաղաքագրական հանդես, Երևան
7. **Ղազարյան Ա. -2018**, Ավանի տանարի երկլեզու ծածկագիր արձանագրությունը. մե՛կ, թե՛ երկու արձանագրություն // «Ակունք» գիտական հոդվածների ժողովածու, թիվ 3 (19), Երևան, ԵՀ հրատ.:
8. **Ղաֆաղարյան Կ. -1945**, Ավանի երկլեզվյան ծածկագիր արձանագրությունը, Երևան, ՀՄՍՌ ԳԱ հրատ.:
9. **Ղաֆաղարյան Կ. -1975**, Երևան. միջնադարյան հուշարձանները և վիմական արձանագրությունները, Երևան, ՀՄՍՀ ԳԱ հրատ.:
10. **Ղաֆաղարյան Կ. -1948**, Հովհաննավանքը և նրա արձանագրությունները, Եր., ՀՄՍՌ ԳԱ հրատ.:
11. **Մանանդյան Հ. -1952**, Քննական տեսություն հայ ժողովրդի պատմության, հտ. III, Եր., ՀՄՍՌ ԳԱ հրատ.:
12. **ՎՏ -1913**, Վիմական տարեգիր, ցուցակ ժողովածոյ արձանագրութեանց Հայոց, կազմեաց Կոստանեանց Կ., Ս.- Պետերբուրգ, Տպարանն Գիտութեանց ճեմարանի Կայսերականի:
13. **Տէր-Մկրտչեան Մխիթար վրդ. -1904**, Մի քանի հին արձանագրութիւններ, Հանդէս հայագիտութեան // Zeitschrift für armenische Philologie, Herausgegeben von Agop Manandian als Vertreter für Russland, Nikolaus Finck und Esmik Gjandschezian als Vertretern für die übrigen Länder. Zwiter Band, Marburg (Hessen), "N. G. Elwert'sche Verlagsbuchhandlung".
14. **Ուխտանէս եպիսկոպոս -1871**, Պատմութիւն Հայոց, հատուած առաջին, ի Վաղարշապատ, ի տպարանի Սրբոյ Կաթողիկէ Էջմիածնի:

Ընդունվել է՝ 10. 08. 2022
Գրախոսվել է՝ 26. 09. 2022
Հանձնվել է տպ.՝ 28. 11. 2022

Տեղեկություններ հեղինակի մասին

Ավետիք ՂԱԶԱՐՅԱՆ ՀՀ ԿԳՄՄՆ «Պատմամշակութային արգելոց-թանգարանների և պատմական միջավայրի պահպանություն» ՊՈԱԿ-ի գիտահետազոտական բաժնի մասնագետ, էլ. հասցե՝ avevram@gmail.com

ՀՏԴ՝ 908

DOI: 10.52971/18294316-2022.25.2-113

АЛЬТЕРНАТИВНОЕ ИСПОЛЬЗОВАНИЕ ЭТНОГРАФИЧЕСКИХ МАТЕРИАЛОВ

Լիաննա Գեւորջյան

"Служба по охране исторической среды и историко-культурных музеев-заповедников" ГНКО
Армянский государственный педагогический университет им. Х.Абовяна

Ключевые слова: *этнографические артефакты, музеи, украшения, одежда, вернисаж, амулеты, куклы, глиняные сосуды для хранения соли, рестораны.*

В современной жизни общества этнографические артефакты презентуются не только в музейных экспозициях. Элементы национального используются в современных изделиях. Подлинные артефакты или подобные новodelы экспонируются на ереванском «Вернисаже», в интерьерах ресторанов, гостиниц и офисов. При этом, интерпретация артефактов и элементов традиционной культуры проводится в соответствии с трансформацией его смысла во времени и требованием рынка. Повсеместное использование на разных площадках предметов, схожих с музейными этнографическими артефактами, создаёт необходимость рассмотреть их в историко-культурном аспекте.

В статье, на основе исследования научной литературы, а также с использованием методов наблюдения, интервьюирования, сравнительного анализа, определены виды презентации этнографических артефактов на различных не музейных площадках, которые принципиально отличаются от подходов традиционного музееведения, а также рассмотрены опасности, которые заключаются в такого рода презентации и сохранении элементов культурного наследия.

Введение: *Использование элементов национального в современных изделиях.* К идее использования элементов национальной одежды и украшений в современной моде уже пришли многие дизайнеры и мастера. Например, на ювелирных работах активно используются символы, ассоциирующие с идентичностью армян: фрагменты клинописи на кольцах и кулонах; изображения мецаморского мифического гиппариона (XI-X вв. до н. э.) и статуэтток из раскопок Лори берда (XV-XIV вв. до н. э.) и Толорса (XIV-XIII вв. до н. э.) в едином

дизайне на кулоне под названием «Ван» и др. (рис.1). Из ответа на вопрос о том, какую связь видит автор между анахроничными символами эпохи поздней бронзы и раннего железа и названием авторской ювелирной работы, стало ясно – никакой. Первоочередной задачей было, как сказал автор, использование «красивых элементов культуры с армянской символикой».

Не надо забывать, что этнический стиль в современной моде образовался как направление, в котором комплекты одежды воспроизводят отдельные черты национального костюма, соразмеряя его с современными модными тенденциями. Главным при составлении комплекта является использование характерных для традиционного костюма кроя, материалов, оттенков, орнаментов, декора, аксессуаров, что с успехом осуществляет «Культурный центр Терьян», основанный в начале 2000-х гг. Арушаном Акопяном и Лилит Меликян. Центр занимается культурно-образовательной деятельностью в сотрудничестве с историками, этнографами, дизайнерами, художниками изучает, пропагандирует, создаёт, продаёт, сдаёт в аренду, организует показы и выставки новоделов по образу традиционных армянских костюмов и современной одежды, с использованием национально окрашенных элементов не только в Армении (рис. 2). Для создания эскизов изучаются специальная литература, средневековая миниатюра и музейные коллекции национального костюма, ковров, ковров, вышивки, аксессуаров и др.

Кроме реальной деятельности и предоставления различных услуг с использованием национально окрашенных элементов культуры: одежда, сувениры, декоративные элементы интерьера и др., такие организации как «Центр народного искусства» (Folk Art Centre), «Армянский тараз» (Հայկական ՏԱՐԱԶ | Armenian TARAZ), «Культурный центр Терьян» (Teryan Cultural Center) имеют свои виртуальные страницы. Таким образом, уже в самом начале XXI века усилиями художников-дизайнеров посредством использования элементов традиционной культуры стала более своеобразной модная одежда и аксессуары, что подробно и квалифицированно разъясняется на сайтах организаций. Ношение модной одежды с элементами традиционной становится своеобразным трендом армянскости, популярным настолько (судя по комментариям), что престижным считается выставление своих фотографий в социальных сетях именно в таковой одежде, пропагандируя «традиционное в современном».

Однако, иногда, увлечение дизайном, приводит к неоправданному и искажённому использованию традиционных элементов и орнаментов, переименованию их интерпретации. Например, на фотографии девочки в национальном костюме гранат и глиняный кувшин играют роль национального интерьера, но наличие передника и головного убора говорят о принадлежности костюма замужней женщине. Актуализация костюма в качестве детского игнорирует половозрастные особенности армянского национального костюма (рис. 3). Отзывы под фотографией свидетельствуют о том, что мало кто осведомлён об истинном назначении вещей. Более того, через интернет-магазин, т.е. в любой точке мира, можно купить «армянский детский национальный костюм», который, как видно на фотографии, создан скорее как национально окрашенный сценический костюм (рис. 4). Таким образом, уже и в Армении, и за ее пределами представления об армянском национальном костюме несколько искажены.

Иногда в традиционное вводятся совершенно чуждые армянской традиции элементы, которые, к сожалению, со временем претендуют стать таковыми (Հայկական Ինքնուրույն Տարազային Իրեր, Տարազային Իրեր-Tarazayin Irer).

С точки зрения подлинности интерпретации промежуточное место между «экспозициями» ресторанов, гостиниц и музеями занимает ереванский «Вернисаж», который сти-

хийно организовался в 1986 г. как не только выставка-продажа, но и место прогулок, встреч, т.е. своего рода коммуникационное пространство¹. Многие считают ереванский «Вернисаж» этнографической выставкой под открытым небом. На самом деле различия довольно принципиальные. Во-первых, этнографическая музейная выставка – это презентация научной реконструкции знаний о материальной и нематериальной культуре, в котором участвуют не любые, а подлинные предметы, получившие благодаря определённым качествам статус музейных, в отличие от выставленных на «Вернисаже» предметов-товаров. Во-вторых, различны цели и задачи: музей создаёт пространство для музейной коммуникации, базу для проведения культурно-массовых, познавательных мероприятий, а «Вернисаж», по сути, является торговым рядом сувенирной продукции, в том числе и национально окрашенных товаров.

Здесь продаются и оригиналы артефактов материальной культуры, и скопированные новоделы, и изделия декоративно-прикладного искусства, не только традиционно ассоциирующиеся в сознании людей с армянской идентичностью, но и создаются новые символы национальной идентичности². Однако, специалисты отмечают, что ереванский Вернисаж не является истинным интерпретатором армянской культуры³.

Рассмотреть этот феномен можно с нескольких точек зрения. Конечно, это выставка-продажа, производящая впечатление музейной, но не имеющая к таковой никакого отношения, «экспонаты» которой носят национальный окрас, сделаны по мотивам традиционно-го, но таковыми не являются). Элементы, скопированные с традиционных, иногда музейных артефактов, а также некоторых общепринятых символов идентичности, иногда несут иную смысловую нагрузку, подчинённую новым символам и трендам армянскости⁴.

Например, амулеты (*դիւրմիւնի*) одни из часто встречающихся сувениров на «Вернисаже», в сувенирных магазинах и лавках. Они красивы, просто орнаментированы, сравнительно не трудоёмки в изготовлении, недороги, хорошо распродаются, бывают самых разных размеров. Традиционно деревянные амулеты были предназначены от сглаза животных, для оберега дома, амбара, стойла и др⁵. Сегодня их изготавливают также и в виде женских оберегов-украшений. Такая наглядная трансформация символа культуры частична, так как сохранила понятие оберега и для дома, и для человека.

Кукла-чучело Нури, которая традиционно использовалась во время обряда вызова дождя, так как считалась духом воды⁶, « <...> она так добросердечна, что плачет при виде мучающихся от жары людей и животных, и на смоченной ее слезами земле сразу же появляются цветы и растения»⁷. Сегодня ей приписываются новые магические возможности: в жару вызывает дождь, на Новый год посылает гату, семьям обеспечивает благоденствие, бездетным дарит детей.

Традиционная кукла Нури была одета « <...> в светлую и цветастую рубашку, которая была перевязана радужным поясом, ведь радуга символ дождя <...> »⁸. Сувенирные куклы Нури одеты с использованием отдельных элементов национального костюма, карпе-

¹ Абрамян Л. -2012. с.50.

² Мелкумян Г. –2011. с. 55.

³ Մէրմիւնի Հ. –2011, էջ 96:

⁴ Абрамян Л., Мелкумян Г. – 2012, с.с. 48-56, 61.

⁵ Դիւրմիւնի Ա. –2012, էջ 57; Марутян А. –1989. с. 114, табл. XXXI/1.

⁶ Խառնաւայրի, Անտրեւիւնի Հ. –2005, էջ 300; Բրդիւնի Վ. –1974, էջ 201:

⁷ Խառնաւայրի, Անտրեւիւնի Հ. –2005, էջ 122:

⁸ Խառնաւայրի, Անտրեւիւնի Հ. –2005, էջ 122:

тов или ковров⁹, а иногда, к сожалению с использованием совершенно чуждых, не имеющих ничего общего с традиционно армянским, элементов. Интересно, что ее имя осталось неизменным, но трансформировались внешний вид и расширились возможности, в соответствии с чем и было придумано новое заклинание (рис. 5)¹⁰.

Известно, что куклы в армянской действительности имели и празднично-ритуальное¹¹, и игровое, и сувенирное применение¹². В музеях они экспонировались или как таковые (Музей истории г. Еревана, Музей народной архитектуры и городского быта г. Гюмри), или для экспонирования особенностей культуры данного историко-этнографического региона (Музей этнографии армян - с 2010 г. музей называется «Мемориальный комплекс Сардарпатской битвы, национальный музей этнографии армян и истории освободительной борьбы»), Центр народного творчества имени Ованеса Шарамбеяна).

Следующая группа образцов декоративно-прикладного назначения, встречающаяся на ереванском «Вернисаже», в сувенирных магазинах, прототипом которых являются музейные артефакты¹³ или соответствующие изображения – это антропоморфные глиняные сосуды для хранения соли, которые отождествлялись с женским телом, символизировали богиню-Мать и традиционно считались трансформированным изображением языческой богини Анаит¹⁴. Серийное изготовление таких было налажено ещё в Советской Армении. Уже тогда многими осознавалось лишь их прикладное назначение. К этой теме обратились и некоторые профессиональные скульпторы (рис. 6). В продаже (реальной и виртуальной) появились многочисленные, иногда трансформированные, фигурки-солонки (рис. 7). Солонки сохранили только прикладное назначение, в некоторых случаях, потеряли форму, полностью утратили заключённые символику и смысл, что позволило придумывать любой новый: «Наши солонки-берегини – это скульптурные керамические сосуды, сделанные под впечатлением от увиденных нами древних армянских солонок-агаманов <...>. Женщина поддерживала, берегла огонь в очаге, кормила семью, род. Отсюда – берегиня (от «оберег» – предмет, оберегающий от чего либо)» (Солонки берегини); «Как соль придает приятный вкус деликатеса, так и будущая мать – к жизни» (рис. 8). Таким образом, со временем полностью утратив символическое, магическое значение, перейдя в ряд декоративно-прикладного искусства, сохранив при этом некоторые черты армянского традиционного сосуда для хранения соли, они продолжают и в интернет-магазинах, и в сувенирных, и на «Вернисаже» презентоваться как армянские солонки, связанные с богиней Анаит.

Изготовлением и продажей сувениров начали заниматься некоторые музеи (Музей истории Армении, Музей истории г. Еревана, Национальный музей этнографии и истории национально-освободительного движения армян, Центр народного творчества имени Ованеса Шарамбеяна). Однако, эта новая сфера деятельности сопряжена с трудностями технического и юридического характера. Ассортимент пока довольно ограничен: в основном, копии всего с нескольких экспонатов, по отношению к которым был высказан наибольший интерес со стороны посетителей: небольшие кулоны – копии с археологических артефактов, некоторые нетрудоёмкие в изготовлении деревянные изделия. Распространение элементов культуры посредством изготовления их при посредничестве музея, и продажи эксклюзив-

⁹ Մերմուխի Հ. -2011, էջ 132:

¹⁰ Քնշարյան Մ., Քնշարյան Ս.

¹¹ Петросян Э. -2011, сс. 14-15, 140.

¹² Хачманукян М. -2020.

¹³ Հովսեփյան Հ. -2011, էջեր 158-161.

¹⁴ Բրդյան Վ.–1986: Petrosyan H., Marutyan H. –2001. pp. 127-135; Овсепян А. -2012, с. 168.

ных сувениров-воспроизведений с оригиналов из коллекции музея позволяет проследить их верное копирование и истинную интерпретацию. Новое, перспективное направление деятельности музеев Армении – изготовление и продажа элементов культуры, которые могут быть воспроизведены по описательным этнографическим материалам. В Музее этнографии армян, например, планируется изготовление на продажу свадебного древа жениха, сабли дружка (*սիւղարհ բուր*) и др. (Մուրադյան Ս.) Это есть не только пропаганда этнографической коллекции, но и закрепление того воздействия на активизацию идентичности, которое в стенах музея уже получил посетитель.

С другой стороны, на том же «Вернисаже» и в антикварных магазинах встречаются подлинные бытовые и культовые предметы, ковры, украшения с совершенно различной датировкой (от III тыс. до н. э. до начала XX в.). Часть их появилась там не всегда законным путём, и истинное их место – в музеях Армении. Расположились продавцы «антиквариатом» в самом центре вернисажа, что свидетельствует о довольно прочном и престижном их положении на территории Вернисажа¹⁵.

Использование артефактов в интерьере. В последние годы уже стало бизнесом альтернативное использование этнографических артефактов и музейных площадок. Часто предмет, несущий на себе элементы традиционного материального наследия или повторяющий его, а иногда и подлинник, появляется на прилавках магазинов или в дизайне интерьеров ресторанов, гостиниц и офисов, в телевизионных передачах (Разгон А.– 1972, с. 6.), потеряв при этом заключённый в нем изначальный смысл. Те, кто извлекает из этого выгоду, в основном, не являются специалистами в данной области и не часто прибегают к помощи таковых. Предмет культуры превращается в орудие бизнеса, а «музейность» превращается в инструмент оформления интерьера и способ создания атмосферы: они располагаются произвольно, как элемент дизайна, без учёта истинного назначения. (рис. 9).

Скопление символов наблюдается независимо от их времени и степени принадлежности к армянам. Например, в ресторане Старый Эривань (рис. 10) по обе стороны от входа расположены копии урартских скульптур бога Халды (прототипом видимо служило изображение с фресок Эрбуни (Аветисян П., Мелконян У.– 2012, с. 26), которые стоят на спине льва – зооморфного символа бога Халды. Чувствуется влияние ассирийской скульптуры VIII-VII вв. до н. э.: бороды и головные уборы более близки к ассирийскому стилю, чем к урартскому. Таким образом, получилась смесь урартско-ассирийской скульптуры. Сразу над ними приспособленные под лампу весы конца XIX века, слева и макет раннесредневековой христианской церкви, и подлинные карас, маслобойка. Как видим, дизайнеры допустили не только тематические и хронологические погрешности, но и неверную интерпретацию этнической принадлежности элемента культуры. Такая «этнографическая выставка» способствует формированию довольно путанных представлений об армянской национальной идентичности.

Такое несоответствие исключается при организации так называемой «живой экспозиции», которая давно используется в скансенах, этнографических экспозициях музеев мира. В Музее этнографии армян со дня основания стоит ковроткацкий станок, на котором показывается процесс ткаения ковра. Даже самые пассивные посетители просят разрешения познакомиться. Таким образом презентация предмета в его естественной среде использования больше заинтересовывает посетителей, чем даже экспозиции, обогащенные современными мультимедийными интерактивными технологиями. Дидактическая система просветительс-

¹⁵ Մուրադյան Հ. -2011, էջեր 48-52:

кого музея плохо работает применительно к современному посетителю. Сегодняшнего посетителя можно охарактеризовать поговоркой: «Расскажите – и я забуду, покажите – и я запомню, дайте мне сделать – и я пойму». Понимание и запоминание происходит через непосредственное участие (Лебедев А.): надо дать посетителю поработать на гончарном круге в реконструированной мастерской, или выковать гвоздь в кузнице, или «примерить» через зеркало национальную одежду и украшения: вместо лица на манекене в национальном костюме можно расположить зеркало, в котором отразится лицо смотрящего, таким образом он визуально «примерит» костюм, или сфотографироваться в национальном костюме-новомделе.

Некоторые уже признанные символы армянской идентичности перешли из музейных залов в бизнес-пространство, в «живую экспозицию», которая вызывает неподдельный интерес и поток посетителей, активизирует внимание, так как здесь они презентуются в полном объеме: можно увидеть, пощупать, сфотографировать, попробовать.

Общество «Мегерян карпет», основной задачей которого является производство и продажа ковров, для привлечения покупателей и увеличения продаж использует маркетинговые ходы. Посетителям показывают весь процесс производства ковра: от получения и крашения нитей до процессов ткачества, мытья, сушки, реставрации ковра. Дополнением служит экспозиция частной коллекции ковров и зал, где можно отведать блюда традиционной армянской кухни. Отзывы после такой экскурсии самые эмоциональные.

В некоторых гостиницах и ресторанах: «Шелковый путь», «Таверна Ереван» на ул. В. Терьяна в Ереване, «Нораванк» недалеко от одноименного памятника и др., а также в продуктовых магазинах на трассах Ереван – Апаран, Ереван – Севан, супермаркете «Крытый рынок» в Ереване и др., организованы показательная выпечка лаваша с использованием традиционных орудий труда и технологии выпечки. Места расположения рассчитаны на туристов, действительно привлекают внимание, хотя далеки от комплексного показа всего процесса. В ресторанах «живая экспозиция» бывает расположена или в здании в специально отгороженном месте, или за ее пределами. В одной из таких «экспозиций» есть даже объяснительный текст и информация о том, что лаваш включён в список нематериального культурного наследия человечества, составляемый в рамках программы «Шедевры устного и нематериального культурного наследия» ЮНЕСКО (рис. 11).

Опасности, околмузейные образования. Увлечение новизной и востребованностью может стать опасным, если не соблюдать разумный баланс между культурой и бизнесом, информацией, знанием и удовольствием, организацией досуга. В некоторых случаях оценка сферы бытования, историко-этнической значимости и использование музейных предметов основано не на научной ценности предмета или события, а на том, насколько оно эффектно смотрится с дизайнерской точки зрения, пробуждает любопытство и воображение, создаёт возможности для времяпрепровождения при соответствующем обслуживающем персонале. Это и приводит к появлению так называемых национально-окрашенных¹⁶, а также квазиподобных явлений¹⁷, квази-¹⁸ и парамузеев¹⁹, экспериментаниумов, что соответствует веянию времени и, исходя из показателей посещаемости, они востребованы²⁰, но музеями в собственном смысле слова они не являются.

¹⁶ Дмитриев В., Калашникова Н. –1989. с. 87.

¹⁷ Дмитриев В., Калашникова Н. –1989. с. 89; Чистов К. –1975. с.с. 32-41.


¹⁸ Ляшко А. –2012. с. 27.

¹⁹ Музей –2001. с. 396.

²⁰ Там же.

Выводы. Такие «музейные» инициативы появляются и находят благодатную почву для получения дохода в странах с развитой индустрией туризма. Учитывая частичную переориентацию экономики Армении на неё, можно прогнозировать появление таковых в Армении, тем более что заметны уже их отдельные элементы.

Этнографические артефакты и схожие новоделы, национально окрашенные элементы материальной и нематериальной культуры, презентуемые не музейными средствами, их современная, не всегда обоснованная интерпретация, не всегда способствуют распространению и пропаганде истинного культурного наследия. Активизация деятельности музеев Армении, координация их научной, экспозиционной деятельности со стороны историков, археологов, этнографов, музееведов, а также сотрудничество с ними частных структур, может способствовать пропаганде среди населения страны и иностранных туристов научно обоснованной, неискаженной информации о национальном наследии.



ԱԶԳԱԳՐԱԿԱՆ ՆՅՈՒԹԵՐԻ ԱՅԼՆՏՐԱՆՔԱՅԻՆ
ՕԳՏԱԳՈՐԾՈՒՄԸ
Գևորգյան Լ. Պ.

Բանալի բառեր՝ ազգագրական իրեր, թանգարաններ, զարդեր, հագուստ, վերնիսաժ, պահպանակներ, տիկնիկներ, ադամաններ, ռեստորաններ:

Ժամանակակից հասարակության կյանքում ազգագրական արտեֆակտները ներկայացված են ոչ միայն թանգարանային ցուցադրություններում: Ազգային տարրեր օգտագործվում են ժամանակակից արտադրանքում: Բնօրինակ արտեֆակտներ կամ նմանատիպ կրկնօրինակներ ցուցադրվում են Երևանի «Վերնիսաժում», ռեստորանների, հյուրանոցների և գրասենյակների ներքին հարդարման մեջ: Միաժամանակ ավանդական մշակույթի արտեֆակտների և տարրերի մեկնաբանումն իրականացվում է ժամանակի մեջ դրանց իմաստի փոխակերպման և շուկայի պահանջներին համապատասխան:

Հոդվածում առանձնացված են ոչ թանգարանային միջավայրերում ազգագրական արտեֆակտների ներկայացման ձևերը, որոնք էապես տարբերվում են ավանդական թանգարանագիտության մոտեցումներից: Վերհանված են նաև այն վտանգները, որոնք առկա են մշակութային ժառանգության տարրերի այդ կարգի ներկայացման և պահպանման գործում:

ALTERNATIVE USE OF ETHNOGRAPHIC MATERIALS

Gevorgyan L. P.

Key words: *ethnographic artifacts, museums, jewelry, clothes, vernissage, amulets, dolls, earthenware vessels for storing salt, restaurants.*

Ethnographic artifacts in the life of modern society are represented not only in museum exhibitions. National elements are used in modern products. Original artifacts or similar copies are on display in “Vernissage” of Yerevan, in the interiors of restaurants, hotels, and offices. At the same time, the interpretation of artifacts and elements of traditional culture is carried out in accordance with their transformation of meaning, over time and market requirements.

In the article the types of presentation of ethnographic artifacts in various non-museum places are distinguished, which are significantly different from the approaches of traditional museology. The dangers that exist in this kind of presentation of cultural heritage elements are also revealed.

Б и б л и о г р а ф и я

1. **Բրդյան Վ. -1974**, Հայ ազգագրություն. համառոտ ուրվագիծ, ԵՀ հրատ., Երևան, 287 էջ:
2. **Բրդյան Վ. -1986**, Հայկական աղամաններ: Անսիտոլոգիայի ինստիտուտի կողմից կատարված հետազոտություններ, Երևան, «Սովետական գրող», հրատ., 164 էջ:
3. **Իսրայելյան Ա. -2012**, Հայկական հմայական պահպանակները XVIII-XX դդ., Երևան, 199 էջ:
4. **Խառատյան-Առաքելյան Հ. -2005**, Հայ ժողովրդական տոները, Երևան, «Զանգակ-97» հրատ., 360 էջ:

5. **Հովսեփյան Հ. -2011**, Հայաստանի պատմության թանգարանի կանաչիակերպ աղամանները // Թանգարան, Երևան, էջեր 158-161:
 6. **Մարության Հ.- 1955**, Վայոցձորյան զվհատան ներսույթը // Հանրապետական զիտական նստաշրջան, նվիրված 1990-94 թթ. ազգագրական և բանագիտական հետազոտությունների արդյունքներին. Զեկուցումների հիմնադրություն (խմբ. Ս. Բ. Հարությունյան, Դ. Ս. Վարդումյան), Երևան, 1995, էջեր 52-54:
 7. **Մելքումյան Հ. -2011**, Հայ մշակույթի պահպանման և զարգացման շարժընթացն արդի փուլում (ըստ Երևանյան վերնիսաժների մշակութաբանական հետազոտության). պատմական զիտությունների թեկնածուի զիտական աստիճանի հայցման աստենախոսություն, Երևան:
 8. **Պողոսյան Ս. -ձեռագիր**, Թանգարանի հուշանվերների արտադրության հայեցակարգ:
 9. **Քոչարյան Մ., Քոչարյան Ս. - 2022**, Վերնիսաժի զեղեցկուհիները, <http://surl.li/cqfgj> «ebook» (Дата посл. обр. 25.07. 2022):
 10. **Аветисян П., Мелконян У. -2012**. Археологические культуры на территории Армянского нагорья // Армяне (Народы и культуры), отв. редакторы: Л. М. Варданян, Г. Г. Саркисян, А. Е. Тер-Саркисянц, М. изд. "Наука". с.с.16-33.
 11. **Каулен М., Мавлеев Е. -2001**. Музей // РМЭ, ред. коллегия: В. Л. Яппи, В. А. Лебедева, М. Б. Пिटровский, Ю. П. Пищулин и др. М.: "Прогресс". т. 1, с.с..395-396.
 12. **Лебедев А. FAQ**: История музея, <http://postnauka.ru/faq/24977> «ebook» (Дата посл. обр. 25.07. 2022)
 13. **Ляшко А. -2012**. Музейный туризм в России. Эволюция формата // Вестник С-Пб университета, серия 6, вып. 3, СПб.: изд. СПб. с.с. 21-27.
 14. **Марутян А. -1989**. Интерьер армянского народного жилища (вторая половина XIX-начало XX в.) // АЭФ. вып. 17. Ереван, изд-во АН Арм.ССР. с.с. 65-142.
 15. **Мелкумян Г. -2011**. Ереванский вернисаж: между выставкой и ярмаркой // Город. Миграция. Рынок // Сборник статей (редакторы: С.Хуцишвили, Д.Хоран). Тбилиси. ФГБ. с.с. 48-66.
 16. **Овсеян А. -2012**. Гончарство // Армяне (Народы и культуры), отв. редакторы: Л. М. Варданян, Г. Г. Саркисян, А. Е. Тер-Саркисянц. М.: "Наука". с.с.162-169.
 17. **Петросян Э. -2011**. , Праздники армян в контексте европейской культуры. Ереван. Изд-во "Тигран Мец". 248 с.
 18. **Разгон А. -1972**. Финягина Н. П. (отв. ред). Изучение и научное описание памятников материальной культуры. М. Научно-исследовательский институт культуры. 272 с.
 19. **Хачманукян М. -2020**. Армянский путь куклы. Ереван. Изд-во "Зангак". 94 с.
 20. **Чистов К. -1975**. Традиционные и вторичные формы культуры // Расы и народы. М. изд. "Наука". № 5, с.с.32-41.
 21. **Petrosyan H., Marutyanyan H.**, “Artifacts and Artisans: Wood” in Armenian Folk Arts, Culture and Identity, pp. 127-135.
- Электронные ресурсы**
22. Folk Art Centre / <http://surl.li/cqffr> (Дата посл. обр. 25.07. 2022).
 23. Հայկական ՏԱՐԱԶ | Armenian TARAZ / <http://surl.li/cqffw/> (Дата посл. обр. 27.07.2022).
 24. Teryan Cultural Center / <http://surl.li/cqfga/> (Дата посл. обр. 25.07.2022).
 25. Հայկական տարազներ / <http://surl.li/cqfbm/>(Дата посл. обр. 25.07.2022).
 26. Տարազային Իրեր-Tarazayin Irer / <http://surl.li/cqfem/> (Дата посл. обр. 27.07.2022).
 27. Солонки берегини <http://www.mamclay.com/галерея/берегини/>(Дата посл.обр. 27.07.2022).
 28. Парамузеи, РМЭ, <http://www.museum.ru/rme/dictionary.asp?119>(Дата посл.обр. 27.07.2022).

Принята в: 08. 08. 2022
 Рецензирована: 25. 08. 2022
 Сдана в пч: 28. 11. 2022

Информация об авторе

Ляна ГЕВОРГЯН: "Служба по охране исторической среды и историко-культурных музеев-заповедников"-ГНКО, доцент кафедры музеологии и библиографии Армянского государственного педагогического университета им. Х.Абовяна, эл. адрес: glp61@mail.ru

ԲԱՏՈՒԱ ԾԻՍԱԿԱՆ ՊԱՐԵՐԳԻ ՊԱՐԱՅԻՆ ԱՎԱՆԴՈՒՅԹԸ

Մարգարիտ Մարգարյան

ՀՀ Գիտությունների ազգային ակադեմիայի արվեստի ինստիտուտ

Բանալի բառեր՝ *բատուլա, պարերգ, տարածաշրջան, անվանում, բնութագիր, տեքստ, մեղեդի, ար, տարբերակ, գուգահեռներ:*

Հոդվածը նվիրված է հայկական հնագույն «Բատուլա» պարերգի պարային ավանդույթին¹: Հետազոտության նպատակն է ներկայացնել հայկական ավանդական հարսանեկան ծեսում լայնորեն տարածված «Բատուլա» պարերգի ընդհանուր բնութագիրը, պարի տարբերակների կենցաղավարումը, ինչպես նաև պարաքայլերի և երաժշտական ֆրագների փոխհարաբերության խնդիրը: «Բատուլա»-ի թե՛ երգային, թե՛ պարային տարբերակների այսօր էլ դեռ կարելի է հանդիպել Հայաստանի տարբեր բնակավայրերում՝ ինչպես առօրյա ժամանցի, այնպես էլ խնջույքների, հավաքույթների ընթացքում:

Հետազոտության համար հիմք են հանդիսացել ՀՀ ԳԱԱ արվեստի ինստիտուտի Ա. Քոչարյանի անվան ձայնադարանում և Կոմիտասի անվան պետական կոնսերվատորիայի ֆոլկլորի ամբիոնի ձայնադարանում պահվող գիտարշավային ձայնագրությունները, Էթնոպարագետ Սրբ. Լիսիցյանի «Հայ ժողովրդի հինավուրց պարերը և թատերական ներկայացումները» հիմնարար աշխատության առաջին հատորում ընդգրկված նյութերը, ինչպես նաև՝ տարբեր բանասացներից մեր գրանցած տեղեկությունները:

Նախաբան. Պարերգի բնութագիրն ու մեկնաբանությունները

¹ Երգային ավանդույթին նվիրված մեր ուսումնասիրությունը կներկայացնենք առանձին հոդվածով (հեղ.):

«Բատոլա»-ն հնագույն ծիսական պար է, որ կատարել են հարսանիքների, հետագայում՝ նաև այլ տոների, հավաքույթների ժամանակ, հիմնականում պարերգի ժանրում: Պարի հնագույն արմատների և ծիսական բնույթի մասին վկայում են Սրբ. Լիսիցյանի հետևյալ տողերը. «... ձախ, աջ, ձախ, աջ ցատկերի ժամանակ կտրուկ ճռճումները, անկախ նրանից մեկ ոտքով, թե զույգ ոտքով են կատարվում ցատկերը, վկայում են այն մասին, որ «Բատոլա» շուրջպարը պտղաբերման և աճի ծեսերի մնացուկներից բացի, որոնց պատկանում են ճռճումները, կարող է իր մեջ նաև բովանդակություն պարունակել: Հավանաբար, այստեղ գործ ունենք նաև ոստոստելու՝ որևէ թռչնի ցատկոտելու նմանակման, կամ էլ օդում որևէ առարկայի ճռճումների պատկերման հետ»²:

Ազգագրագետ Հ. Պիկիչյանի գիտարշավային նյութերում, Մարտունու և Ապարանի որոշ բանասացների տեղեկությունների համաձայն, «Բատոլա»-ն հարսանեկան պարերգ է: 2004թ. մեր դաշտային հետազոտությունների ընթացքում տեսագրած նյութերը ևս փաստում են, որ այս պարերգը կատարել են ինչպես հարսանեկան ծեսի, այնպես էլ այլ առիթներով՝ տոների, ուրախ հավաքույթների ժամանակ, իսկ հարսանեկան ծեսում այն կատարել են հատկապես «Ծաղկոց տանը»՝ նորահարսի ընկերուհիները³:

Մյուս բանասացները չեն նշում, թե ինչ առիթով և երբ է կատարվում սույն պարատեսակը, որը վկայում է «Բատոլա»-ի, ինչպես և առհասարակ ավանդական պարերի, երբեմնի ծիսական արմատի մոռացության և ավանդույթի նահանջի մասին: Այդուհանդերձ, նշված պարերգը այսօր էլ տարածված է Հայաստանի տարբեր մարզերում՝ Շիրակում, Գեղարքունիքում, Արագածոտնում, Վայոց Ձորում, Արարատում և Վրաստանի հանրապետության հայաբնակ Ջավախքի բնակավայրերում: Պարը հայտնի է տարբեր անվանումներով՝ «Բատոլա», «Բաթոլա», «Բատալո», «Բատոլո», «Բաթ Օլա»: Ուշագրավ է, որ այն կատարման որոշակի առանձնահատկություններ ունի և կիրառվում է տարբեր ժանրերում. ա) իբրև պարերգ՝ երգն ու պարը միասին, ինչպես նաև առանձին-առանձին՝ բ) միայն պարի կամ գ) միայն երգի տարբերակներով: Բոլոր տարբերակներում էլ այն շուրջպար է, որին կարող են մասնակցել երկու սեռի երիտասարդներն ու տարեցիները: Պարաքայլերը «երկու գնալ, երկու դառնալ» հիմնական պարատեսակի տարբերակներ են: Երաժշտական և պարային ֆրագները համաչափ են, փոխհամաձայնեցված: Նշենք, որ ժողովրդական որոշ այլ շուրջպարերի ընթացքում այս համաչափությունը կարող է խախտվել:

«Բատոլա» բառի բացատրության վերաբերյալ տեղեկությունները շատ սուղ են, սակայն՝ հավանական: Սրբ. Լիսիցյանը Անգին Աբրահամյանի ցուցադրած տարբերակի կապակցությամբ գրում է. «Անվանումը վերծանել չհաջողվեց: ... Կրկներգում «Բատոլա»-ն կիրառվում է որպես անձնանուն, տղամարդու թե կնոջ՝ հայտնի չէ»⁴:

² Лисициан Срб. -1958, с. 388.

³ Սարգսյան Մ. - 2009, բանասաց՝ Լենա Գևորգյան, 78տ.:

Բանավոր տեղեկություններ են հաղորդել նաև ծնունդով Գյումրիից՝ Անահիտ Մառանջյանը, արվեստի ինստիտուտի գիտաշխատողներ՝ ազգագրագետ Հռիփսիմե Պիկիչյանը, երաժշտագետ-ֆոլկլորագետ, ծնունդով Ջավախքի Ծալկա գյուղից Լուսինե Նազարյանը, էթնոպարագետ-պարուսույց, Արտաշատի Դվին գյուղից Մերոբ Վարդանյանը:

⁴ Лисициан Срб. -1958. с. 389.

Մեր դիտարկած տարբերակներից մի քանիսում ևս «Բատոլա»-ն կիրառվում է որպես անձնանուն.

Ես Բատալոյ զորքից եմ,
Տծվրժանի զորքից եմ:

Մեր Բատալոն խիվանդ ա,
Երկու խնձորի բանդ ա⁵:

Նկատենք, որ էթնոպարագետ Ն. Կիլիչյանը նշում է, որ հայկական «Բատոլա»-ին շատ նման պոնտական (հունական Մ. Ս.) «Պատուլա» պարում Պատուլան աղջկա անուն է⁶: Այսպիսով, «Բատոլա»-ն կարելի է մեկնաբանել որպես անձնանուն, որը բանավոր փոխանցման ընթացքում տարբերակվել է՝ որոշ դեպքերում կորցնելով նրա իմաստը:

Պարի ընդհանուր բնութագիրն ուսումնասիրելու համար դիտարկել ենք պարերգի ամբողջական տեքստով (երգ-պար-խոսք) յոթ ձայնագրյալ օրինակ: Դրանցից երեքի նոտագրված օրինակները՝ բանաստեղծական տեքստերով (օր. 1, օր. 2, օր. 3)⁷ ներկայացված են ուսումնասիրության վերջում: Մնացած 4-ը⁸ վերջիններիս (օր. 2, օր. 3) գրեթե համընկնում են թե՛ մեղեդու, թե՛ պարային քայլերի առումով, ուստի առանձին չենք ներկայացրել:

Անշուշտ, նշված քանակով չի սահմանափակվում այս պարերգի տարբերակների քանակը, սակայն կարծում ենք, պարի ընդհանուր նկարագիրը դուրս բերելու համար մեր դիտարկած նմուշները միանգամայն բավարար են⁹:

«Բատոլա»-ի բանաստեղծական կառույցի քննություն

«Բատոլա» պարերգի բոլոր տարբերակներն ունեն ավանդական պարերգերին բնորոշ կրկնակ-խաղիկ փոխհարաբերությունը և որպես երգի անվանում վերցված է կրկնակի առաջին բառը: Կրկնակը բոլոր տարբերակներում գրեթե նույնն է, աննշան փոփոխությունները պայմանավորված են վերծանողի տրամաբանությամբ կամ բանասացի մեկնաբանությամբ: Այսպես՝ կրկնակի երկրորդ տողում «Շաքարու շար, Բատոլա» տողը մեկ այլ տարբերակում փոխակերվում է «Շաքար ու շարբաթ օլա»-ի, որտեղ օլա-ն Բատոլա բառին հարմարեցրած ձայնարկություն է:

Բատոլա ջան, Բատոլա,

Շաքարու շար, Բատոլա: / Երգ.-ց՝ Անգին Աբրահամյան, օր.1/

⁵ Մարգարյան Մ. -2009.

⁶ «Արևմտյան Պոնտոսում տարածված Պատուլան Արևելյան Պոնտոսում անվանում են Պիպիլոմատեններ (Πιπιλομάταινα): Պատուլա անվանումը տարբեր մեկնաբանություններ ունի, սակայն հիմնականում կապվում է աղջկա անվան հետ, որի վկայությունն է սիրային-կատակային երգը» (Կիլիչյան Ն. -2008, № 2, էջ 137):

⁷ (Օր.1) Лисициан Срб. -1958. с.с. 388-389., (օր.2)՝ Մարգարյան Մ.,-2009, (օր.3)՝ Գևորգյան Ա. -2015:

⁸ Այս նմուշների պարի նկարագրությունը փոխանցվել է բանասացներից՝ բանավոր. 2 նմուշ՝ Թագակցյան Չ. -2010, էջ 169, բանասացներ՝ Արեգ Գասպարյան, Մերոբ Վարդանյան: 1 նմուշ՝ Մարտունու գիտարշավից (տե՛ս հղում 5):

⁹ Հնարավորության դեպքում՝ «Թամգարա»-ի տարբերակների հետ մեկտեղ, ամբողջական ժողովածուի տեսքով կներկայացվեն սույն ուղագրավ պարերգի մեր ձեռքի տակ եղած բոլոր տարբերակները:

Կամ

Բատոլա ջան, Բատոլա,
Շաքար ու շարբաթ օլա,
Բատոլա ջան, Բատոլա,

Լուսնակն անուշ կցոլա: / Երգ.-ց՝ Անահիտ Մառանջյան, օր.2/

Որոշ տարբերակներում կայուն երկտող կրկնակին կարող են ավելանալ նոր տողեր (տե՛ս օր. 2, ավելացված տողը գրված է շեղագիր):

Այս պարերգի կրկնակն ավանդական պարերգերում հաճախ հանդիպող յոթվանկանի երկտող կամ քառատող է՝ խաղիկների հետ դասավորված տողընդմեջ կամ երկու տողընդմեջ: Խաղիկները ինչպես և կրկնակը, մեծ մասամբ երկտող են, ավելի քիչ՝ քառատող, բովանդակությամբ կատակային-սիրային են, այդուհանդերձ, յուրաքանչյուր տարածաշրջանում կան առավել սիրված և նախընտրելի խաղիկներ:

Պարերգի երաժշտական լեզուն՝ համառոտ

«Բատոլա» պարերգին բնորոշ է մեջընդմիջվող 9/8(4/8+5/8), 9/4(4/4+5/4) մետրական հիմքով երաժշտական տաղաչափության *դիպիրիիսի/ամֆիմակր* բանաձևը, որով պարերգը ճանաչելի է նույնիսկ առանց մեղեդու.

ε ε ε ε | θ ε θ

Հենց այս բանաձևով և 9/8 (9/4) մետրով «Բատոլա» ծխական պարերգը հաճախ գուգահեռվում, երբեմն նաև նույնացվում է ավանդական հարսանիքում տարածված ու սիրված մեկ այլ՝ «Թամզարա» պարերգի հետ¹⁰: Կենցաղավարման ընթացքում նկատելի է հետևյալ փոփոխությունը. «Բատոլա»-ի մեղեդուն միանում է «Թամզարա» պարերգի, մասնավորապես՝ կրկնակի տեքստը.

Թամզարա հայ, Թամզարա,

Ինչ բան ասես, հըմեն կա¹¹:

Նկատենք, որ «Թամզարա» պարերգը «Բատոլա»-ի հետ նշված տաղաչափական նմանությունից զատ ունի բազմաթիվ տարբերություններ ևս¹²:

«Բատոլա» պարերգն առավելապես հանդես է գալիս էոլական ձայնակարգային դրսևորումներում՝ կվարտային կամ կվինտային օժանդակ հենակետով էոլական հնգալարում, կվարտային օժանդակ հենակետով հիպոէոլական վեցալարում: Կան տարբերակներ, որոնք ձայնակարգային ընդհանուր առանձնահատկությունից դուրս են մնում. այսպես՝ քասախցի բանասաց՝ Լենա Գևորգյանի տարբերակը ծավալվում է հարմոնիկ քառալարում, իսկ Սրբ. Լիսիցյանի գիտարշավային նյութերից արթիկցի բանասաց Հ. Հարթենյանի կատարումը ծավալվում է փոփոխական՝ հարմոնիկ և էոլական հնգալա-

¹¹ 2002թ. ավանդական երգի և պարի «Կարին» համույթի երգացանկի համար երաժշտագետ Լ. Նազարյանը, «Թամզարա»-ի երեք տարբերակ համադրելով, ստացել է այդ պարերգի նոր՝ համերգային հետաքրքիր տարբերակ, որը հետագայում տարածվել և 2014թ. ընդգրկվել է հանրակրթական դպրոցների «Ազգային երգ ու պար» առարկայի 5-րդ դասարանի ծրագրում: Այս տարբերակի կրկնակի մեղեդին «Բատոլա»-ի կրկնակի մեղեդին է: Լ. Նազարյանն այս տարբերակը վերցրել է կոմպոզիտոր, երգիչ, բանահավաք Կ. Չալիկյանի անձնական գիտարշավային նյութերից, որտեղ այն գրառված է «Թամզարա»-ի խոսքերով:

¹² Սարգսյան Մ. -2009, էջեր 188-204:

րում, մինևույն հիմնաձայնով¹³: Չայնակարգային այսօրինակ շեղումներ երբեմն կարելի է հանդիպել և այլ գրառումներում: Դրանք առանձին հոդվածով կներկայացվեն առաջիկայում:

«Բատոլա»-ի բոլոր տարբերակներում կրկնակն ու խաղիկները ունեն մինևույն մեղեդին: Մեկ նախադասության կամ երաժշտական հիմնօղակի (երկու տող կրկնակ կամ մեկ տող կրկնակ-մեկ տող խաղիկ) մեղեդին ծավալվում է երկու տակտի սահմաններում՝ եթե մետրը նշված է 9/8, կամ չորս տակտի սահմաններում՝ եթե մետրը նշված է 4/8 - 5/8, պարզ մեկմաս ձևում: Հաջորդիվ կրկնվում է մինևույն կառույցը, (հաճախ ոչ զգալի ռիթմական կամ էլևեչային տարբերակումներով) այնքան ժամանակ, որքան ցանկանում է բանասացը, կամ ընթանում է պարը:

	A	A ₁	A	B
	1 կամ 2 տակտ	1 կամ 2 տակտ		
<i>Կամ</i>	1 կամ 2 տակտ	1 կամ 2 տակտ		

Առաջին նախադասությունը՝ A սկսվում է 3-րդ, 4-րդ կամ հազվադեպ՝ 5-րդ աստիճանով և հիմնականում ավարտվում է 4-րդ աստիճանով, որը հաճախ օժանդակ հենակետն է: Հազվադեպ մեղեդու զարգացման նման տրամաբանությունը կարող է խախտվել:

«Բատոլա» պարի նկարագիրը

Սրբ. Լիսիցյանը նկարագրել է «Բատոլա» պարի երկու տարբերակ՝ Անգին Աբրահամյանի և Ջավեն Աբրահամյանի ներկայացրած տարբերակները, որոնք գրեթե նույնն են. երկուսն էլ ունեն դանդաղ առաջին մաս՝ տեղնուտեղը կատարվող շարժումներով կամ դադարով՝ «Տեղն ու տեղը՝ մեկ էն կողքին, մեկ էն կողքին շուտ գալ, օրորվել», և երկրորդ մաս՝ ցատկերով և ոտքի հարվածներով տարբերակ¹⁴: Ուշագրավ է, որ այս երկու տարբերակներում պարը սկսվում է ձախ ոտքով՝ կարծես պարային ֆիգուրը կեսից սկսվի: Սովորաբար «երկու գնալ, երկու դառնալ» պարատեսակի պարերը սկսվում են աջ ոտքից, այդպես է նաև մեր կողմից գրառված «Բատոլա»-ի տարբերակներում:

Մեր օրերում վերը նկարագրված դանդաղ, ճոճումներով մասը գրեթե մոռացված է: Այդուհանդերձ, էթնոպարագետ Մերոբ Վարդանյանի հաղորդմամբ՝ Արտաշատում (գ. Ներքին Դվին) ընդունված Վասպուրականի¹⁵ «Բատոլա»-ին ևս բնորոշ են դանդաղ, ընդգծված թեքումները՝ աջ ու ձախ, ինչն էլ ծանր և հանդիսավոր բնույթ է հաղորդում պարին:

Շամաձայն մեր կողմից գրառված մյուս տարբերակների դիտարկման՝ առավել տարածված է պարի երրորդ տարբերակը՝ ոտքի գույգ կամ մեկ հարվածով (կան տեսագրությունները), որը գրեթե նույն մեղեդիով տարածված է Շիրակում, Ապարանում,

¹³ **Մարգարյան Մ. -2011**, պր. 6, էջ 103: Այս նմուշը ժամանակին վերծանվել է առանց պլատեացիայի նշանների և այդպես էլ հրատարակվել է՝ բանասաց՝ Հերիքնազ Հարթենյան նշված պրակում: Հետագայում՝ սույն ուսումնասիրության համար կրկին անդրադառնալով հրատարակված նմուշներին և լսելով ձայնագրությունները, նմուշում կատարել ենք ուղղումներ՝ 3-րդ և 4-րդ աստիճանների մոտ ավելացնելով պլատեացիայի նշաններ (հեղ):

¹⁴ **Лисициан Срб. -1958**, էջեր 386–393:

¹⁵ Տե՛ս **Թագակչյան Չ. -2010**, պր. 5, էջ 7:

Մարտունիում: Իսկ Ջավախքում այս նույն պարերգը՝ այլ տեքստով հանդիպում է տարբեր անվանումներով, «Տապպուրի»՝ Ջավախքի Ծալկա գյուղում (երաժշտագետ Լ. Նազարյանի վկայությամբ), «Քոչարի»՝ Ջավախքի տարբեր գյուղերում¹⁶: «Բատոլա»-ի այս՝ երրորդ տարբերակը՝ «Թամգարա»-ի կրկնակի խոսքերով թյուրիմացաբար հայտնի է դարձել նաև որպես «Թամգարա»¹⁷, սակայն մեղեդիների համադրման պարագայում այս երկու պարերգերի տարբերությունն ակնհայտ է, տարբեր են նաև պարի ձևերը: «Բատոլա» պարը կատարում են հիմնականում պարերգի ուղեկցությամբ, նվագարանային կատարումը ավելի քիչ է հանդիպում¹⁸:

«Բատոլա»-ում մասնակիցների դասավորությունը շրջանաձև է, ձեռքերը դրված են ուսերին կամ հազվադեպ՝ արմունկ արմնկի¹⁹: Շրջանը կարող է լինել փակ և բաց՝ կիսաշրջանաձև: Պարում են երկու սեռի երիտասարդները: Պարաքայլերը «Երկու գնալ, երկու դառնալ» հիմնական պարատեսակի տարբերակներ են՝ դեպի աջ տեղաշարժով: Ինչպես «Թամգարա»-ում, այստեղ ևս երաժշտական և պարային ֆրագները համաչափ են, փոխհամաձայնեցված: Նշենք, որ ժողովրդական որոշ այլ շուրջպարերի դեպքում այս համաչափությունը կարող է խախտված լինել:

Այս երկու պարատեսակներին հետաքրքրություն և ինքնատիպություն է հաղորդում պարաքայլերի 5-րդ և 10-րդ հաշիվներին փոքր դադարը կամ զույգ հարվածը՝ կոտրելով անընդհատ պարբերական շարժումը, ինչը բխում է խառը կամ մեջընդմիջվող մետրից կամ, ինչպես վերը նշվեց՝ երաժշտական տաղաչափության *դիպիրիսի/ամֆիմակր* բանաձևից. 9/8 մետրով տակտերն ունեն անհավասար ներտակտային բաժանում, որտեղ վերջին հնչյունը կարծես 1/8-ով երկարաձգված է կամ հնչող նոտայով կամ դադարով (պաուզայով).

4/8 ε ε ε ε | 5/8 θ ε θ

Ի դեպ, նշված դադարը Սրբ. Լիսիցյանի «Թամգարա» պարի նկարագրության դեպքում համընկնում է 5-րդ և 10-րդ հաշիվներին, ուստի՝ պարաքայլի հաշիվը ստացվում է 10, իսկ գրեթե նույն պարաքայլով «Բատոլա»-ի նկարագրության դեպքում համընկնում է 4-րդ և 8-րդ հաշիվներին, և պարաքայլի հաշիվը ստացվում է 8: Այսինքն՝ 1/8 տևողությամբ դադարը Սրբ. Լիսիցյանը «Թամգարա» - ի դեպքում արձանագրում է որպես առանձին պարային հաշիվ, իսկ «Բատոլա» - ի դեպքում՝ միացնում է նախորդ 1/8 (օր.1-ում՝ 1/4 է) տևողությանը և երկու 1/8-ները (կամ՝ 1/4-ները) համարում մեկ պարային հաշիվ: Իրականում վերջին 1/8 տևողության հետ պահվող պարային դադարը կարող է դիտվել որպես կես հաշիվ: Այսինքն՝ յուրաքանչյուր պարային հաշիվը համապա-

¹⁶ Տե՛ս **Թագակյան Զ.-2012**, պր. 9, թ. 102, էջ 77:

¹⁷ Տե՛ս հղում 11:

¹⁸ «Հայ ժողովուրդը հնում գյուղերում գրեթե միշտ պարում էր երգի ուղեկցությամբ: Ըստ պարողների՝ նվագարանները սկսեցին պարերին ուղեկցել համեմատաբար ավելի ուշ՝ դուրս մղելով երգն ու խոսքային տեքստը պարերգերից և այն վերածելով պարի, որում աստիճանաբար աղքատանում էր շարժման, խոսքերի և մեղեդու սինթեզը, ինչն էլ նպաստում էր շարժական տեքստի հին բովանդակության մոռացմանը /կորսմանը/: Բայց երգի հիմնական տեքստը, այնուամենայնիվ, ժողովրդի միջավայրում պահպանվում էր երկար և օգնության էր հասնում, երբ նվագածուներ չկային»: **Лисициан Срб.-1958**, էջ 21:

¹⁹ **Лисициан Срб. -1958**, էջ 390:

տասխանում է երաժշտական տակտում 2/8 (2/4) նոտայի, և եթե այդ դադարը ներառենք պարային հաշիվների մեջ, ապա պարային հաշիվների թիվը կստացվի 8,5 հաշիվ՝ 9/8 մետրի հենքով: Դրանից, իհարկե, չի փոխվի «Երկու գնալ, երկու դառնալ» պարատեսակը:

Ներկայացվող 1-ին օրինակը բանասաց Անգին Աբրահամյանի ապարանյան տարբերակն է, որն աննշան տարբերությամբ ցուցադրել է նաև վերջինիս զարմիկը՝ Չավեն Աբրահամյանը: Պարի նկարագրությունը մանրամասն բերված է Մրբ. Լիսիցյանի նշված աշխատությունում, իսկ ընդհանուր բնութագիրը մեջբերում ենք ստորև.

1. ԲԱՏՈԼԱ

(Ապարան)

Ս. Լիսիցյան, հ. 1, էջ 582

Երգ-ց՝ Անգին Աբրահամյան

Բա - տո - լա ջան, Բա - տո - լա,
 1 2 3 4

Դը - ոսան ա - ոնջ գա - թի է,
 5 6 7 8

Բա - տո - լա ջան, Բա - տո - լա,
 1 2 3 4

Գաղ - թա - կա - նի տա - թի է,
 5 6 7 8

Շա - րա - լու շար Բա - տո - լո,
 1 2 3 4

Բա - տո - լա ջան, Բա - տո - լա:
 5 6 7 8

«Անգին Աբրահամյանը ցուցադրեց Ապարանի շրջանի Բատոլա շուրջպարը: Անվանումը վերծանել չհաջողվեց: Այս ապարանյան պարը բաղկացած է 2 մասից: Կրկն-երգում Բատոլա-ն կիրառվում է որպես անձնանուն, տղամարդու թե կնոջ՝ հայտնի չէ:

Առաջին մասը դանդաղ է, երկու գնալ, երկու դառնալու տիպիկ ձև է, որի առաջին կեսում առկա են հենման կամ մարմնի ծանրության տեղափոխումներ:

Առաջին մասի պարային ֆիգուրի առաջին կեսը Ս. Աբրահամյանը բնութագրել է այսպես. «Տեղն ու տեղը՝ մեկ էն կողքին, մեկ էն կողքին շուտ գալ, օրորվել»²⁰:

²⁰ Лисициан Срб. -1958, էջ 388:

«Բնչպես երկրորդ, այնպես էլ երրորդ և չորրորդ մասերում նմանություն կա Վեր-վեր շուրջպարի արագ մասերի հետ, թեկուզև ավելի երկար պարային ֆիգուրների պարագային»:²¹

Նոտաների տակ նշված թվերը պարաքայլի հաշիվներն են: Գրառման այս ձևն առաջին անգամ կիրառվել է մեր կողմից՝ «Թամգարա» պարերգը ներկայացնելիս²². այն հարմար է պարային և երաժշտական ֆրագների փոխհարաբերությունը ակնառու դարձնելու համար: Տվյալ դեպքում դրանք համընկնում են.

2. ԲԱՏՈՒԼԱ

Շիրակ

Երգ.-ց՝ Անահիտ Մառանջյան
Չայնագր. և վերծ.՝ Մ. Սարգսյանի
2009թ.

Բա - տո - լա 2 ջան, Բա - տո - լա,
1 3 4

Շա - քար - ու 2 շար - քար 8 օ - լա,
5 6 7

Բա - տո - լա 2 ջան, Բա - տո - լա,
1 3 4

Լուս - նակն 5 ա - մուշ 6 կը - ցո - լա:
7 8

Աղ - ջիկ 1 կայ - նե 2 կար - մըն 4 ջին,
3

Բա - տո - լա 2 ջան, Բա - տո - լա,
5 6 7 8

Օս - կե 1 գըն - դեր 2 ա - կըն 4 ջին,
3

Շա - քար 5 ու 6 շար - քար 7 օ - լա:
8

Ստորև՝ «Բատուլա» պարի երրորդ տարբերակի նկարագրությունը ըստ Մ.Սարգսյանի:

1 հաշվին՝ աջ ոտքով քայլ դեպի աջ:

2 հաշվին՝ ձախ ոտքով քայլ դեպի աջ՝ ներքանը դնելով մի փոքր առաջ, այնպես, որ ձախ ոտքի կրունկը հավասարվի աջի թաթի գծին, նրա կողքը:

²¹ Նույն տեղում, էջ 389:

²² Սարգսյան Մ. -2009, էջեր 188-204:

3 հաշվին՝ աջ ոտքով քայլ դեպի աջ, ինչպես 1 հաշվին: Այս երեք (1, 2, 3) քայլերի ժամանակ քայլող ոտքը կատարում է ծնկածալ՝ գրեթե առանց ուղղելու:

4 հաշվին՝ ձախ ոտքի ներքանով զույգ հարված աջ ոտքի կողքին, բայց հարվածը՝ ձախ ոտքով:

5.6.7 հաշիվներին՝ մարմնի հենման փոխադրում՝ ձախ, աջ, ձախ՝ ճոճվել, աննշան թեքվելով հենման կետի ուղղությամբ (շուտ գալ): 1 հաշվի քայլը և հենման փոխադրումները (2, 3 հաշիվներին) ուղեկցվում են հենատոքի թեթևակի ծնկածալով, որն այնուհետև չի ուղղվում:

8 հաշվին՝ աջ ոտքի ներքանով զույգ հարված ձախի կողքը:

Պարի այս տարբերակը՝ 4 և 8 հաշիվներին զույգ հարվածով, ցուցադրել է բանասաց Անահիտ Մառանջյանը՝ հոդվածի հեղինակ Մ. Մարգարյանի մայրը: Ի դեպ՝ այս տարբերակում ձեռքերն իրար միանում են ձկույթներով, ինչն իրականում բնորոշ չէ «Բատուլա»-ին:

Քասախցի բանասաց Բավական Մնացականյանը ևս ցուցադրել է վերը նկարագրված երրորդ տարբերակը՝ աննշան փոփոխությամբ. պարի 4 և 8 հաշիվներին ներքանով զույգ հարվածի փոխարեն կատարվում է մեկ հարված և պահվում է 2/8 տևողությամբ դադար:

3. ԲԱԹ ՕԼԱ

գ. Քասախ

Երգ-ց՝ Բավական Մնացականյան
Վերածանություն՝ Ա. Գևորգյանի

Բա - թո - լա ջան, բա - - - թո - լա,
 Շա - քար ու շար - բաթ օ - լա,
 Գը - նա, գը - նա, գա - - լիս եմ,
 Բա - թո - լա ջան, բա - - - թո - լա,
 Քըր - տը - նած եմ, լա - - լիս եմ,
 Շա - քար ու շար - բաթ օ - լա:

Գրեթե նույն տարբերակն է կատարվում նաև հայտնի «Թամզարա»-ի ժամանակ, սակայն, ինչպես արդեն նշվել է, վերջինս երկու աջ, երկու տեղում քայլերից բացի

ունի նաև առաջ և ետ գնացող քայլեր²³, իսկ «Թամզարա»-ի Սեբաստիայի տարբերակում²⁴ կան ավելի բարդ պարային շարժումներ:

Եզրահանգում. «Բատոլա»-ն Հայաստանի տարբեր մարզերում՝ Շիրակում, Գեղարքունիքում, Արագածոտնում, Վայոց Ձորում, Արարատում և Վրաստանի հանրապետության հայաբնակ Ջավախքում տարածված, մինչ այսօր կենցաղավարող պար է՝ «երկու գնալ, երկու դառնալ» պարաձևի յուրահատուկ տեսակ է, որտեղ պարային ֆիգուրի 4-րդ և 8-րդ մասերում կան մեկ կամ երկու ոտքով հարվածներ և դրան հաջորդող դադարներ՝ 1/8 տևողությամբ: Կատարվում է հիմնականում պարերգի ուղեկցությամբ, բանաստեղծական տեքստի՝ կրկնակ-խաղիկ ավանդական կառույցով, կատակային-սիրային բովանդակությամբ խաղիկներով: Երաժշտական ձևը պարզ մեկմաս է, գրեթե կրկնվող նախադասություններով, ինքնատիպ է 9/8 մետրի հենքի վրա ձևավորված դիպիրիխի/ամֆիմակր տաղաչափական կայուն բանաձևով, ինչով նմանություն ունի «Թամզարա» և 9/8 մետրով մի քանի այլ պարերգերի հետ: Առավելապես բնորոշ է կվարտային և կվինտային օժանդակ հենակետով էռլական ձայնակարգը: Երաժշտական և պարային ֆրագմենտը համաչափ են, փոխհամաձայնեցված:

Այսպիսի պարերգ տարածված է նաև Արևմտյան Պոնտոսի հույն բնակչության մեջ՝ «Պատուլա» անվամբ, պարային շարժումներն ու բովանդակությունը նման են հայկական «Բատոլա»-ին:

ТАНЦЕВАЛЬНАЯ ТРАДИЦИЯ РИТУАЛЬНОЙ ПЛЯСОВОЙ ПЕСНИ БАТОЛА

Саргсян М.

Ключевые слова: *Батола, плясовая песня, регион, название, характеристика, текст, мелодия, танец, вариант, параллели.*

Батола – танец, бытующий по сей день в различных областях Армении – Шираке, Гегаркунике, Арагацотне, Вайоц Дзоре, Арарате, а также в грузинской Джавахетии – регионе с многочисленным армянским населением. Для *Батола* характерен собственный вариант танцевальной фигуры «два шага пойти, два вернуться» (т.е. два шага вправо, два на месте) в четвертой и восьмой элементах которой исполняется один или два удара ногой с последующей паузой в одну восьмую. Как правило, *Батола* исполняется в сопровождении плясовой песни, имеющей традиционную структуру «куплет-припев», с текстом шутливо-лирического содержания.

Музыкальная форма – простая одночастная, состоящая из практически одинаковых предложений, с характерным построением на устойчивой метрической форме *дипирихий-*

²³ Մանրամասն տե՛ս նաև՝

[https://hy.wikipedia.org/wiki/%D4%B9%D5%A1%D5%B4%D5%A6%D5%A1%D6%80%D5%A1_\(%D5%BA%D5%A1%D6%80](https://hy.wikipedia.org/wiki/%D4%B9%D5%A1%D5%B4%D5%A6%D5%A1%D6%80%D5%A1_(%D5%BA%D5%A1%D6%80) 28.04.2022, 10:30

²⁴ Սեբաստիայի տարբերակը ցուցադրել է, ամերիկահայ քաղաքական գործիչ, Հայաստանի Հանրապետության արտաքին գործերի առաջին նախարար և «Ժամանակություն» կուսակցության ղեկավար Բաֆֆի Հովհաննիսյանը, որի նախնիները Արևմտյան Հայաստանի Սեբաստիա քաղաքից են: Այս տարբերակը դեռևս գրառված չէ:

/амфимакр и размером 9/8, благодаря чему она схожа с танцем *Тамзара* и некоторыми другими плясовыми в размере 9/8. *Батола* чаще всего разворачивается в эолийском ладу с квартовой или квинтовой побочной опорой. Музыкальные и танцевальные фразы соразмерны и согласованны.

Похожая плясовая распространена также у греческого населения Западного Понта, под названием *Патула*, танцевальные движения и содержание которой схожи с армянской *Батола*.

DANCING TRADITION OF BATOLA RITUAL DANCE SONG

Sargsyan M.

Key words: *batola, dance song, region, name, characteristic, text, melody, dance, option, parallels.*

Batola is a dance still performed in various regions of Armenia, including Shirak, Gegharkunik, Aragatsotn, Vayots Dzor, and Ararat, as well as in the Javakheti region in Georgia, which has a large Armenian community. It is characterized by a distinct ‘two steps to the right, two in place’ dance figure, the fourth and eighth parts of which include one or two stamps followed by a 1/8 pause. *Batola* is primarily performed accompanying by a dance song in the traditional verse-chorus structure, with playful and lyrical texts. Its musical form is a simple period, consisting of nearly identical phrases, with a distinctive structure based on the stable metrical form of *dipyrrichium / amphimacer* and the 9/8 meter, which makes it similar to the *Tamzara* and some other dances that also use the 9/8 meter. Most often it uses the Aeolian mode with a secondary center on the fourth or fifth. The musical and dance phrases are proportional and consistent.

A similar dance is widespread among the Greek population of Western Pontus under the name *Patola*, the dance movements and content of which are similar to those of the Armenian *Batola*.

Գ ր ա կ ա ն ու թ յ ու ն

1. **Գևորգյան Ա. -2015**, Հայ ժողովրդական երգեր և նվագներ, Ապարան (2000-2001) պրակ 12, Երևան
2. **Թագակյան Չ. -2008**, Հայ ժողովրդական երգեր և նվագներ, 1927-1929 թթ. գիտարշավների նյութերի ընտրանի, ղեկավար՝ Քրիստապիտ Բուշնարյան //Հայ ավանդական երաժշտություն մատենաշար, պր. 3, կազմեցին՝ Դ. Դերոյանը և Չ. Թագակյանը, Երևան, «Ամրոց գրուպ» հրատ.:
3. **Թագակյան Չ. -2010**, Վասպուրականի ավանդական երգեր և նվագներ //Հայ ավանդական երաժշտություն մատենաշար, պր. 5, կազմեց և վերծանեց՝ Չ. Թագակյանը, Երևան, «Ամրոց գրուպ» հրատ.:
4. **Թագակյան Չ. -2012**, Ջավախքի պարեր և պարեղանակներ //Հայ ավանդական երաժշտություն մատենաշար, պր. 9, կազմեց և վերծանեց՝ Չ. Թագակյան, Երևան, «Ամրոց գրուպ» հրատ.:
5. **Կիլիյան Ն. -2008**, Հայկական պարերի համանուն պոնտական զուգահեռները // ԴԲՀ, № 2 Երևան:
6. **ՀԺԵՆ -2010**, Հայ ժողովրդական երգեր և նվագներ, Անի, պրակ 2, Երևան, «Ամրոց գրուպ» հրատ.:

7. **Սարգսյան Մ. -2009**, Թամգարա. ավանդույթ և արդիականություն: //Հայ արվեստի հարցեր: Գիտական հոդվածների ժողովածու, ՀՀ ԳԱԱ արվեստի ինստիտուտ, Երևան, էջեր 188-204:
8. **Սարգսյան Մ. -2009**, Դաշտային նյութեր, Քասախի և Մարտունու զիտարչավներ:
9. **Սարգսյան Մ. -2011**, Հայ ավանդական պարերգեր, 1953-1970 թթ. Սրբուհի Լիսիցյանի զիտարչավի նյութերի ձայներիզներից վերծանեց և նոտագրեց Դ. Դերոյանը, կազմեց Մ. Սարգսյանը // Հայ ավանդական երաժշտություն մատենաշար, պր. 6, Երևան, «Ամրոց գրուպ» հրատ.:
10. **Лисициан Срб. -1958**. Старинные пляски и театральные представления армянского народа, т. 1, Ереван т. 2, Ереван. изд. АН Арм. ССР.
11. **Лисициан Срб. -1972**. Старинные пляски и театральные представления армянского народа, т. 2, Ереван, изд. АН Арм. ССР.

Ընդունվել է՝ 27. 08. 2022
Գրախոսվել է՝ 13. 09. 2022
Հանձնվել է սպ. 28. 11. 2022

Տեղեկություններ հեղինակի մասին

Մարգարիտ ՄԱՐԳՍՅԱՆ

ՀՀ ԳԱԱ արվեստի ինստիտուտ

Էլ. huugh` margfolk63@gmail.com

ՏՈՀՄԻԿ ԶԻՆԱԳՈՐԾ ՉԻՖԹԱԼԱՐՅԱՆՆԵՐԻ
ԶԻՆԱԳՈՐԾՄԱԿԱՆ ԳՈՐԾԻՔՆԵՐԻ ՀԱՄԱԼԻՐԸ
(ըստ ՀԱԹ-ի «Ազգագրություն և կենցաղ-2» հավաքածուի)

Էմմա Այվազյան

Սարգսյանի հերոսամարտի հուշահամալիր
Հայոց ազգագրության և ազատագրական պայքարի պատմության ազգային թանգարան

Բանալի բառեր՝ *հայ զինագործություն, Կարին, Ախալցխա, զինագործ Չիֆթալարյաններ, աշխատանքային գործիք, գործարանային արտադրանք, հրազենի մաս, դրոշմիչ, դրոշմ:*

Աշխատանքի նպատակն է Հայոց ազգագրության թանգարանի Չիֆթալարյան տոհմիկ զինագործների հավաքածուի հիման վրա պատկերացում կազմել 19-րդ դարավերջի 20-րդ դարասկզբի հայ զինագործության մասին՝ ներկայացնելով մի ժամանակաշրջան, երբ վարպետ-արհեստավորի ավանդական աշխատանք էր մուտք գործել գործարանային արտադրության աշխատանքային գործիքը, որի օգտագործումը առավել բարձր տեխնիկական մակարդակի էր հասցնում զենքի նմուշը, և մինչև ժամանակ մեծապես պահպանվում էին ավանդական ու ազգայինը: Աշխատանքը կնպաստի հավաքածուի հանրահռչակմանը՝ ուսումնասիրող հանրության ուշադրությունը հրավիրելով թանգարանային նյութին:

Նախաբան. Հայոց ազգագրության թանգարանի հավաքածուում պահվող տոհմիկ զինագործ Չիֆթալարյանների նվիրատվությունների հավաքածուն ներառում է մոտ 2200 թանգարանային առարկա՝ հրացանի փող մշակելու գործիքներ, մամլիչներ, դրոշմիչներ, փամփուշտի, կոտորակի կաղապարներ, զնդաններ, խարտոցներ և այլն, ինչպես նաև՝ ատրճանակի, հրացանի փողեր, նշանառության սանդղակներ և հրազենի այլ մասեր: Հավաքածուն ձևավորվել է Ջավախք կատարված գիտարշավների ընթացքում

1978թ., 1987թ.¹: Չիֆթալարյանների հավաքածուն թեև ընդհատումներով, բայց շարունակաբար համալրվել է: Վերջին ձեռքբերումը Հայոց ազգագրության թանգարան է հասել պատմաբան, հրապարակախոս Հայկ Դեմոյանի միջոցով: Առարկաները գերազանցապես ձեռք են բերվել նվիրատվությամբ, փոքր հատվածը՝ գնմամբ: Հավաքածուն կարելի է բաժանել երկու մասի՝ աշխատանքային գործիքներ և առարկաներ, որոնք պատրաստել են տոհմիկ զինագործ Չիֆթալարյանները, և որոնք գործարանային արտադրության են:

Հայ զինագործությունը 19-րդ դարում

19-րդ դարի հայ զինագործության վերաբերյալ կցկտուր, բայց արժեքավոր տեղեկություններ կան դարի հայ պարբերական մամուլում, ռուսական տեղեկատու-վիճակագրական աղբյուրներում, հայ և օտար հետազոտողների աշխատություններում, Հայաստանի և հատկապես Վրաստանի տարբեր արխիվներում և այլն²:

Հայ և օտար գրավոր աղբյուրների վկայությամբ Հայաստանի գրեթե բոլոր խոշոր արհեստագործական կենտրոններում և հայկական գաղթօջախներում (Վան, Կարին, Կարս, Երևան, Շուշի, Նախիջևան, Ալեքսանդրապոլ, Ախալցխա, Ախալքալաք, Թիֆլիս, Կոստանդնուպոլիս և այլն) կային զգալի թվով զինագործներ, որոնցից շատերը պալատական արհեստավորներ էին՝ այդ երկրների սահմաններից դուրս եկած համբավով³ Խ.Մառանկոզյանը և Ս. Եղիազարյանը 19-րդ դարի առաջին կեսին Կարինում հիշատակում են զինագործական բազմաթիվ ինքնուրույն արհեստները (ճյուղերը)՝ չախմախչի (հրացանի զարկանը շինող), լուլաճի (հրացանի փող շինող), դոնդաղճի (հրացանի կոթ շինող), թիվենքճի (հրացանագործ), որը հրացանի բոլոր մասերը մեկ տեղ հավաքողն էր և այլն: Աշխատանքի այսպիսի բաժանումն, անշուշտ, խոսում է վերը բերված արհեստների ոչ միայն բարձր զարգացվածության, այլև վերջնական արտադրանքի բարձր պահանջարկի մասին: Ախալցխայում, Կարսում և Ալեքսանդրապոլում հրազենի արտադրության բնագավառում նեղ մասնագիտացում և աշխատանքի բաժանում գրեթե չէր նկատվում, ինչպես Կարինում: Հրացանագործն այստեղ արդեն բազմաբնույթ արհեստավոր էր և քիչ էր օգտվում հարակից արհեստների օժանդակությունից⁴:

Կարինի զինագործությունը վերաբերող նյութեր կան մի շարք հեղինակների մոտ: Այսպես հայ պատմաբան Ա-դոն (Հովհաննես Տեր-Մարտիրոսյան), խոսելով Էրզրումի (Կարին) հայերի մասին, նշում է, որ հայերը պարապում էին գլխավորապես վաճառականությամբ և արհեստներով. արհեստներն այստեղ շատ առաջ են գնացել: Կարինում ավելի քան 1000 հոգի պարապում են արհեստով, մի շարք արհեստների թվում նա հիշատակում է նաև զինագործությունը⁵:

Հարություն Հակոբյանն իր «Ախալցխա. Էրզրումի գաղթից մինչև մեր օրերը» աշխատության մեջ գրում է. «Կարին-Էրզրումցիների արհեստներից նշանավոր են ու-

¹ ՀԱԳԹ«ՓԳՕ» -1987, 350/1-2/«Ա»-38:

² Աղանյան Գ. -2000, էջ 130:

³ Варданян Л., Саркисян Г., Тер-Саркисянц А. -2012. с. 174.

⁴ Աղանյան Գ. -2000, էջ 131:

⁵ Ա-դոն -1912, էջ 163:

կերչությունը, զինագործությունը, կաշեգործությունը, բանալի պատրաստելու արվեստը, թրեր ու սրեր պատրաստելու արհեստը, գորգագործությունը և շատ ուրիշ արհեստներ, որոնց շնորհիվ նրանք մեծ անուն էին վաստակել ամբողջ Տաճկաստանում»⁶: Նա, հիշատակելով տարբեր արհեստներով զբաղվողների քանակը, նշում է 12 զինագործի⁷:

Շայ զինագործներից հռչակի էին հասել «յոթ եղբայրներ» անունով զինագործները, որոնց պատրաստած զենքերն իրենց որակով չէին զիջում եվրոպական զենքերին: Պ.Չիխաչյովը հայտնում է, որ զինագործ եղբայրներից կենդանի մնացած երկուսը, որպես պատասխան փաշայի ցույց տված նոր ատրճանակի, պատրաստում են նրա կրկնօրինակը, որն իսկականից կարող էին տարբերել միայն մասնագետները: Կարինի զինագործների պատրաստած զենքերը մասնակցել են 1867 թ. Փարիզի, 1873 թ. Վիեննայի, 1876 թ. Ֆիլադելֆիայի ցուցահանդեսներին և շահել մրցանակներ, պարգևներ⁸:

Տոհմիկ զինագործ Չիֆթալարյանները

18-րդ դարի երկրորդ կեսին Կարինում հայտնի է եղել զինագործ Այվազյանների ընտանիքը, որի ավագը՝ Աղալարը, այնպես էր վարպետացել իր գործի մեջ, որ սուլթան Մահմեդի հատուկ հրամանով նշանակվել էր Կոստանդնուպոլսի զինագործական հինգ տասնյակի հասնող արհեստանոցների գլխավոր մասնագետ՝ ղեկավար-տնօրեն: 1828-29 թթ. մեծ թվով հայեր Կարինից գաղթեցին և հաստատվեցին պատմական Ջավախքում՝ Ախալցխայում և Ախալքալաքում: Գաղթածների մեջ էր նաև վարպետ Աղալար Այվազյանը, որը 600 տարվա վաղեմություն ունեցող արհեստանոցի գույքը տեղափոխեց և Ախալցխայի Դամրչնոց թաղամասում հիմնեց զինագործության նոր, կատարելագործված կենտրոն: Նրա գործը շարունակեցին գույգ որդիները՝ Մկրտիչը և Հովհաննեսը, որոնք Կովկասում ձեռք բերեցին անվանի զինագործի համբավ: Եղբայրներն այնքան նման էին միմյանց, որ ժողովուրդը նրանց անվանեց «չիֆթալար»՝ գույգեր: Այստեղից էլ նրանց Չիֆթալարյան ազգանունը: Նրանք զինագործությունը համատեղում էին գլանողի, հյուսնի, դարբնի, զարդանկարչի ու զեղանկարիչ-արծաթագործի մասնագիտություններին, զեղարվեստորեն բարձրաճաշակ ձևավորում անհատական հրազենի բոլոր տեսակները: Նրանց պատրաստած կայծքարով զենքի հավաքածուները ցուցադրվել են Լոնդոնի, Փարիզի, Բրյուսելի և Սանկտ Պետերբուրգի միջազգային ցուցահանդեսներում և արժանացել ոսկե մեդալների: Մկրտչի կայծքարով զենքի բացառիկ հավաքածուն այսօր էլ պահվում է Էրմիտաժում⁹:

Ախալցխայի 1918 թ. ինքնապաշտպանության ժամանակ քաղաքում և նրա սահմաններից շատ հեռու զինագործների մեջ մեծ համբավ վայելող Չիֆթալարյան ընտանիքը հմտորեն կազմակերպեց ու գլուխ բերեց փամփուշտ պատրաստելու գործը: Չիֆթալարյան եղբայրները սովորական կարի մեքենաներն այնպես էին ձևափոխել, որ դրանցով մեծ արագությամբ պատրաստում էին փամփուշտներ: Մեքենաների վրա աշ-

⁶ Հակոբյան Հ. -2002, էջ 48:

⁷ Հակոբյան Հ. -2002, էջ 50:

⁸ Չատիկյան Հ. -2013, էջ 63:

⁹ Կանցյան Լ. -2007, մարտ, էջ 2:

խատում էին կանայք, օրիորդներ և երեխաներ: Որպեսզի նրանց գործը հեշտանար, պատվիրված էր կրակված փամփուշտների պարկուճները հավաքել և ուղարկել զինագործարան¹⁰:

Զինագործ Չիֆթալարյանների վերջին շառավիղը Արամն է: Տակավին վեց տարեկանում նա ոտք դրեց պապական արհեստանոց, և որպես ընտանեկան թանկագին մասունք պահպանվում է այդ տարիների նրա ձեռքի աշխատանքը՝ չախոն (դանակ), որի մոխրագույն կոթին դաջված է՝ «Արամ 6 տարեկան»: Իսկ արդեն երկու տարի հետո նրա անվանն ավելացավ «վարպետ» բառը: Շուտով Չիֆթալարենց զինագործական արհեստանոցում ստեղծվեցին գլանող մեքենաներ, ինքնաշարժ ջրաղացներ: Արամ Չիֆթալարյանը բազում գյուտերի և նորարարությունների հեղինակ է: Նրան են պատկանում կարծր ապարներում թունելներ փորելու համար նախատեսված նոր մեքենայի (կոչվում էր «Արամ» և առաքվել է աշխարհով մեկ), այգեգործի մկրատի գյուտերը¹¹:

Ծիրանենու փայտով, ոսկրով դրվագված արույրե փորձնական զենքեր է նվիրել մարշալ Բադրամյանին, Շառլ Ազնավուրին, մարշալ Գեորգի Ժուկովին, Նիկոլայ Ռիժկովին, Ջորջ Բուշին, Ֆրանսուա Միտտերանին, Բորիս Ելցինին, Մարգարետ Թետչերին, Աբել Ադանբեկյանին, Տիգրան Պետրոսյանին և այլոց¹²:

Հայոց ազգագրության թանգարանի հավաքածուն



ՀԱՊԹ 6824/ 522

Փամփուշտ լիցքավորելու գործիք
1874թ. ԱՄՆ, Նյու Հեյվեն



ՀԱՊԹ 6824/1228

Հրապատիճը պարկուճին ամրացնելու գործիք
1894թ. ԱՄՆ, Նյու Հեյվեն

Հավաքածուում մեծաթիվ են Մկրտիչ և Հակոբ Չիֆթալարյանների պատրաստած աշխատանքային գործիքները, որոնցից հատկապես այցի են ընկնում փամփուշտի, հրացանի ձգանի, զենքի այլ մասեր, արծաթյա զարդաթիթեղներ պատրաստելու կաղապարները, կոտորակի կաղապարները, նախշ-դրոշմները, դրոշմիչները: Հավաքածուի բացառիկ նմուշների մեծ մասը ներկայացվում է թանգարանի «Արհեստները» ցուցասրահի զինագործի արհեստանոցը ներկայացնող համալիրում:

Շատ դեպքերում աշխատանքային գործիքները վարպետների կողմից ձևափոխվել և կիրառվել են ըստ անհրաժեշտի, օրինակ՝ հրացանի և ատրճանակի փող

¹⁰ Սանոյան Ա.-1992, , էջ 36:

¹¹ Կանցյան Լ., -2007, մայրտ, էջ 3:

¹² Նույնը:

մշակելու գործիքները վերածվել են փամփուշտի կաղապարների, խարտոցները՝ փորագրիչների, ծակիչների, դրոշմների: Նմանօրինակ գործիքների հանդիպում ենք նշված խումբ-գործիքների մեջ:

Մեկ տասնյակից ավել փամփուշտ պատրաստելու կաղապարների մեջ ընդամենը երկուսն են գործարանային արտադրության, թվագրվում են 20-րդ դարի սկզբով, իրանին ունեն ռուսերեն արձանագրություն՝ «Фрезе Вьдорг»:



Փամփուշտի կաղապարներ (ձևափոխված) 20-րդ դարի սկիզբ



Փամփուշտի և պարկուճի կաղապարներ 20-րդ դարի առաջին կես



ՀԱՊԹ 6824/239

Փամփուշտի կաղապար, 20-րդ դար գործ Մ. Չիֆթալարյանի



ՀԱՊԹ 6824/1299

Կոտորակի կաղապար, 20-րդ դարի սկիզբ գործ Ն. Չիֆթալարյանի



ՀԱՊԹ 6824/1670

Կոտորակի կաղապար, 20-րդ դար գործ Մ. Չիֆթալարյանի

Զինագործությունը ներառում էր մետաղամշակությանը հարակից արհեստների բազմաթիվ տարրեր (դարբնություն, փականագործություն, խառատություն, ոսկրագործություն, հյուսնություն, ձուլագործություն, պղնձագործություն, արծաթագործություն, ոսկերչություն, ակնագործություն և այլն): Զենքը, լինի դա հրազեն, թե սառը

զենք, նաև պերճանքի առարկա էր: Այստեղից էլ բխում էին արհեստի մեջ ոսկերչության, արծաթագործության, փորագրության, ոսկրագործության և այլ արհեստներին հարակից տարրերի գոյությունը և անհրաժեշտությունը: Պատահական չէր, որ Կովկասում զինագործներին հաճախ նույնացնում էին ոսկերիչ-արծաթագործների հետ:¹³

Մինչև 19-րդ դարի վերջը հրացանները և ատրճանակները, ինչպես և ավանդական սառը զենքը, շնորհիվ իրենց շքեղ զարդարանքի, ունեին էական դեկորատիվ-զեղարվեստական արժեք:¹⁴

Միջնադարյան և նոր շրջանի օտար հեղինակները ևս հիացմունքով են խոսում հայկական թրերի և դաշույնների անթերի պողպատյա շեղբերի, դրանց բռնակների և պատյանների բարձրարվեստ գեղագարդման մասին: Ռուսական կայսրություն ներգաղթելուց հետո էլ կարինցի և կարսեցի զինագործներն իրենց նոր բնակավայրերում շարունակեցին զբաղվել ավանդական արհեստով: Նրանց արտադրանքը դիմացավ թե՛ բուն ռուսական գործարանային, և թե՛ հյուսիսկովկասյան բավականին բարձրարվեստ սառը զենքի հետ շուկայական սուր մրցակցությանը:¹⁵

Չիֆթալարյանների պատրաստած երկաթե և փայտե դրոշմիչները, մոտ երկու տասնյակից ավել, տարբեր չափի սղոցների մեջ եղած ոսկերչական նրբաաղոցները, ինչպես նաև կորզանները, վերը նշվածի վառ ապացույցն են: Դրոշմիչները պատրաստվել և կենցաղվարվել են Ախալցխայում՝ 19-րդ դարի վերջ-20-րդ դարի սկզբին: Դրոշմիչները հիմնականում բուսանախշ զարդահորինվածքներով են, հաճախ կենդանական և մարդկային պատկերներով և օգտագործվել են հրազենի, դաշույնի պատյանի, հրացանի կոթի վերդիր զարդատախտակները դրվագելու համար: Այս խմբում առանձնանում են հատկապես ՀԱՊԹ 8524/5, ՀԱՊԹ 8524/13, ՀԱՊԹ 8524/14, ՀԱՊԹ 8524/15 հաշվառանիշերով դրոշմիչները: ՀԱՊԹ8524/5 հաշվառանիշով դրոշմիչը փայտե ուղղանկյուն խորանարդաձև չորս կողմից ողջ երկարությամբ բուսանախշ զարդահորինվածքով է: Ներկայացվող դրոշմիչի զարդահորինվածքով հարդարված դաշույնի պատյանի օրինակի ենք հանդիպում Հայոց ազգագրության թանգարանի «Թանկարժեք մետաղ» ֆոնդում:



ՀԱՊԹ 8524/5, 19-20-րդ դդ.



ՀԱՊԹ 801, 19-րդ դար, Հս. Կովկաս

¹³ Варданян Л., Саркисян Г., Тер-Саркисянц А. -2012. с. 175.

¹⁴ Նույն տեղում, էջ 174.

¹⁵ Աղանյան Գ. -2000, էջ 133:

Հրացանի օժանդակ և ոչ մետաղյա մասեր պատրաստողներից առանձնանում էին դոնդախճիները և չախմախչիները: Ղոնդախճիները պատրաստում էին հրացանի խզակոթը և հրացանափողի փայտե բռնակը: Հին կայծքարային հրացանների փայտե խզակոթերը զարդարվում էին փորագրությամբ կամ ընդելուզվում ոսկորով, նաև արծաթե, պղնձյա նրբագեղ թիթեղներով¹⁶: Ստորև ներկայացվող ՀԱՊԹ 6923/95 հաշվառանիշով հրացանի խզակոթը նշվածի ուրույն օրինակն է: Հայկ Դեմոյանի կողմից 2017թ. թանգարանին են նվիրաբերվել Չիֆթալարյանների գործածած պողպատյա դրոշմիչներ՝ ՀԱՊԹ8524/13, ՀԱՊԹ8524/14, որոնց զարդահորինվածքներից մի քանիսը գրեթե համընկնում են նրանց պատրաստած խզակոթի հարդարանքին: Չարդահորինվածքները գրեթե նույնական են նաև չափսերով, ինչը թույլ է տալիս ենթադրել, որ խզակոթը զարդանախշվել է նույնպիսի դրոշմիչով, կամ հնարավոր է՝ հենց նույն դրոշմիչով¹⁷:



ՀԱՊԹ 8524/13



ՀԱՊԹ 8524/14



ՀԱՊԹ 6923/95



Հրացանի խզակոթ, 20-րդ դարի սկիզբ

Հավաքածուում մեծաթիվ են նախշ/կնիք-դրոշմները՝ 100-ից ավելի թանգարանային առարկա: Նախշ-դրոշմների մեջ ուշագրավ են հատկապես հետևյալ դրոշմները՝

¹⁶ Աղամյան Գ. -2000, էջ 134:

¹⁷ Կարևոր ենք համարում նշել այն փաստը, որ Չիֆթալարյանների աշխատանքային գործիքներից և դրոշմիչներից 6 թանգարանային առարկա ներկայացվում է Հայաստանի պատմության թանգարանի կողմից կազմակերպված «Չենք. պայքար և մշակույթ» ժամանակավոր ցուցադրությունում (հեղ.):

ՀԱՊԹ6824/743 հաշվառանիշով «ГРУЗТОРГ»-ը՝ պատրաստված Մկրտիչ Չիֆթալարյանի կողմից, ՀԱՊԹ6824/1281 հաշվառանիշով «АИП»-ն, ՀԱՊԹ6824/1000 հաշվառանիշով «ТІІК»-ն, իսկ «СТОЛОВАЯ О-ВА ДД» դրոշմից հավաքածուում առկա է 6-ից ավելի թանգարանային առարկա: Հատկապես հետաքրքրական են ՀԱՊԹ 6824/312 հաշվառանիշով դաշունաձև նախշ-դրոշմը (պատկերի կնքող մասի երկարությունը՝ 7 սմ), ՀԱՊԹ 6824/915 հաշվառանիշով երկու թագերի պատկերով (2 սմ տրամագծով) դրոշմը, ՀԱՊԹ 6824/490 հաշվառանիշով հրացանանման դրոշմը, պատկերի կնքող մասի երկարությունը՝ 1,3 սմ), պիտի նշենք այն փաստը, որ «ԹՍ» ֆունդի ՀԱՊԹ-7870/5 հաշվառանիշով թրի վրա, որը նվիրատվություն է հայ մետաղագործ վարպետ Արծրուն Բերբերյանից, կա (հավանաբար պատրաստող վարպետի) կնիք՝ երեք զենքերի համակցմամբ, որոնցից մեկը նմանատիպ հրացան է (առարկան ցուցադրվում է «Մայիսյան հերոսամարտեր» ցուցասրահում), ՀԱՊԹ 6824/982 հաշվառանիշով նախշ-դրոշմը (պատկերի կնքող մասի չափսը՝ 1.1*1.4) և ՀԱՊԹ 6923/108 հաշվառանիշով գերբաձև դրոշմը (պատկերի կնքող մասի չափսը՝ 1*8 սմ): Նախշ-դրոշմները պատրաստվել են 19-րդ դարի վերջ-20-րդ դարի սկզբին Մկրտիչ և Հակոբ Չիֆթալարյանների կողմից:



ՀԱՊԹ 6824/312



ՀԱՊԹ 6824/915



ՀԱՊԹ 6824/490



ՀԱՊԹ 7870/5



ՀԱՊԹ 6824/982



ՀԱՊԹ 6923/108

Հրագենի մետաղյա հիմնական մասերի, ավելի ճիշտ հրացանի և ատրճանակի փող պատրաստողները կոչվում էին լուլաճիներ: Այս արհեստն առավել մեծ տեխնիկատեխնոլոգիական հմտություններ պահանջող զինագործական ենթաճյուղ էր, և դրանցով զբաղվողների թիվը մեծ չէր: Հրացանափողն իր մեջ միավորում էր ոչ միայն դարբնի, այլև խառատի և ձուլագործի հմտությունները¹⁸:

Չիֆթալարյանների հավաքածուն ներառում է հրացանի և ատրճանակի փողեր, հրացանի և ատրճանակի հարվածային մեխանիզմներ, մեխանիզմի մասեր, հրա-

¹⁸ Աղանյան Գ. -2000, էջ 134:

ցանի խզակոթեր, փակադակի տուփեր, փակադակներ, փողակալներ, ձգաններ, ձգանատեղեր և այլն՝ 150-ից ավելի թանգարանային առարկա: Այստեղ ևս պետք է առանձնացնենք գործարանային և վարպետների կողմից պատրաստված առարկաները: Գործարանային արտադրության հրազենի մասերը պատկանում են այնպիսի համաշխարհային ճանաչում ունեցող զինագործական ընկերությունների ինչպիսին են՝ անգլիական «Բարնեթը»¹⁹, ֆրանսիական «Մենտ Էթյենը»²⁰, ռուսական «Տուլայի ցարական զինագործական գործարանը»²¹: 1796 թվականին Թոմաս Բարնեթի կողմից հիմնադրված և մինչև 1908 թվականը գործած անգլիական «Բարնեթ» ընկերությունը հիմնականում զբաղվում էր զենքի առանձին մասերի արտադրությամբ: Հավաքածուում են պահպանվում ընկերության արտադրած հարվածային մեխանիզմի մասերը, որոնցից մեկի վրա հստակ երևում են թագաձև դրոշմը և լատինատառ արձանագրություն՝ «TOWER BARNETT LONDON»: Մեծաթիվ են նաև Տուլայի ցարական զինագործական գործարանի կենդանական և բուսական պատկերներով զեղազարդված հարվածային մեխանիզմները՝ արտադրված 20-րդ դարի 50-ական թվականներին:

Ախալցխայի, Կարսի և Ալեքսանդրապոլի զինագործները բավական հաջող մրցակցում էին նաև Տուլայի հռչակավոր վարպետների հետ, իսկ Ղրիմի պատերազմի և 1877-1878 թթ. ռուս-թուրքական պատերազմի ժամանակ ախալցխացի և ալեքսպոլցի զինագործները նորոգում և կատարելագործում էին ռուսական գործարանային հրացանները²²:

Հավաքածուում պահպանվող հարվածային մեխանիզմների մեջ առանձնանում են Չիֆթալարյանների՝ 19-րդ դարի վերջին պատրաստած, ՀԱՊԹ 6824/557, ՀԱՊԹ 6824/576, ՀԱՊԹ 6824/745, ՀԱՊԹ 6824/1520 հաշվառանիշերով կաշքարային հրացանների հարվածային մեխանիզմները (պատրաստող վարպետներին անվանում էին չախմախչի)²³:



19-րդ դարի 70-ական թթ.

Մկրտիչ (ավագ) Չիֆթալարյանի պատրաստած արծաթե զեղազարդված խզակոթով հրացանը նվեր էր մատուցվել Աբասթույմանում հանգստացող Ալեքսանդր 2-րդ

¹⁹ «Բարնեթ» ընկերությունը հիմնադրել է Թոմաս Բարնեթը, որը 1796 թվականից Լոնդոնում զբաղվել է զենքի արտադրությամբ: Ընկերությունը վերջնականապես սնանկացել է 1908 թվականին:

²⁰ «Մենտ Էթյենը» հիմնադրվել է 1764 թվականին, 2001 թվականից միացել է ֆրանսիական պետական «GIAT Industries» կոնցլոմերատին (մոնոպոլիստական միավորում):

²¹ «Տուլայի ցարական զինագործական գործարանը» հիմնադրվել է Պետրոս Առաջինի հրամանով, 1712 թվականին:

²² Աղանյան Գ. -2000, էջ 136:

²³ Աղանյան Գ. -2000, էջ 134:

ցարին, որին շատ էր դուր եկել նրբագեղ աշխատանքը և 100 ոսկի պարգև էր տվել շնորհաշատ վարպետին (հրացանը պահվում է Ս. Պետերբուրգի Պետական Էրմիտաժում):²⁴

Եզրահանգում. Հայոց ազգագրության թանգարանի Չիֆթալարյան տոհմիկ զինագործների հավաքածուն թույլ է տալիս ամբողջական պատկերացում կազմել 19-րդ դարավերջի 20-րդ դարասկզբի հայ զինագործության մասին՝ ներկայացնելով մի ժամանակաշրջան, երբ վարպետ-արհեստավորի ավանդական աշխատանոց էր մուտք գործել գործարանային արտադրության աշխատանքային գործիքը, որի օգտագործումը առավել բարձր տեխնիկական մակարդակի էր հասցնում զենքի նմուշը, և մինևույն ժամանակ մեծապես պահպանվում էին ավանդականն ու ազգայինը:

КОМПЛЕКС ИНСТРУМЕНТОВ ДИНАСТИИ ОРУЖЕЙНИКОВ ЧИФТАЛАРЯН ПО КОЛЛЕКЦИИ «ЭТНОГРАФИЯ И БЫТ-2» МЭА

Айвазян Э. Д.

Ключевые слова: *армянское вооружение, Карин, Ахалцихе, оружейники Чифталаряны, рабочий инструмент, заводская продукция, часть огнестрельного оружия, клеймо.*

Хранящаяся в Музее этнографии армян коллекция дарений династии оружейников Чифталарян включает около 2200 музейных предметов - орудия для изготовления и обработки ствола, прессы, штампы, формы для патронов и дробей, напильники и т. д. а также ствола для пистолетов и винтовок, прицельные шкалы ружья, и другие части огнестрельного оружия. Коллекция была сформирована в ходе научных экспедиций в Джавахк в 1978 и 1987гг. Коллекция Чифталарянов, хоть и периодически, но постоянно пополнялась. Последним приобретением стал дар историка и публициста Айка Демояна Музеем этнографии армян. Предметы были преимущественно приобретены путем дарений и лишь небольшая часть - покупка. Коллекцию можно разделить на две части: рабочие инструменты и предметы, изготовленные оружейниками династии Чифталарян и фабричного производства.

THE COLLECTION OF THE DYNASTIC GUNSMITHS CHIFTALARYANS KEPT IN THE ARMENIAN ETHNOGRAPHIC MUSEUM

Ayvazyan E. D.

Key words: *Armenian gunsmithing, city of Karin, city of Akhaltsikhe, dynastic gunsmiths Chiftalaryans, working tool, manufactured, parts of firearm, stamp.*

The collection of the dynastic gunsmiths Chiftalaryans, kept in the Armenian Ethnographic Museum, includes about 2200 museum items: tools for making gun barrels, presses, stamps, bullet moulds, hammers, etc., as well as pistol, rifle barrels and other details of firearm.

²⁴ Աղանյան Գ. -2000, էջ 134:

The collection was formed mainly due to the scientific expeditions to Javakhk in 1978 and 1987. Although intermittently, the collection was constantly replenished. The latest achievement of the museum is the collection of donations from historian Hayk Demoyan. The collection could be divided into two parts: working tools and items made by the Chiftalarians and those of manufactured in European and Russian cities.

Գ ր ա կ ա ն ու թ յ ու ն

1. Ա-դո -1912, «Վանի, Բիթլիսի և Էրզրումի վիլայեթները», Երևան:
2. Ադանյան Գ. -2000, «Հայկական զինագործությունը 19-րդ դարում-20-րդ դարի սկզբին» // ՀՀ ԳԱԱ Ծիրակի հայագիտական հետազոտությունների կենտրոնի «Գիտական աշխատություններ», հ.3:
3. Չատիկյան Հ. -2005 «Կարինի նահանգը 19-րդ դարի 2-րդ կեսին», Երևան:
4. Սանոյան Ա. -1992, «Ախալցխայի և Ախալքալաքի գավառների 1918-ի ինքնապաշտպանությունը», Երևան, «Հայաստան» հրատ.:
5. Варданян Л., Саркисян Г., Тер-Саркисянц А. -2012, «Армяне». Москва.

Ընդունվել է՝ 31.08.2022
Գրախոսվել է՝ 22.09.2022
Հանձնվել է տպ.՝ 28.11.2022

Տեղեկություններ հեղինակի մասին

Էմմա ԱՅՎԱԶՅԱՆ՝ Սարդարապատի հերոսամարտի հուշահամալիր, Հայոց ազգագրության և ազատագրական պայքարի պատմության ազգային թանգարանի ֆոնդապահ, էլ. հասցե՝ emma.avvazyan.94@gmail.com

կառամարտիկներին և նրանց վերնախավը ներկայացնող խմբավորումներին: Ընթացող գործընթացներից գերծ չի մնացել Հայկական լեռնաշխարհը ևս: Տեղաբնիկ ցեղերի կառամարտիկների մի մասը լծված էր հայրենի տարածքները պաշտպանելու գործին, իսկ մյուս մասը դարձել էր խեթական, ապա ասորեստանյան բանակում ծառայող զինվորներ: Խեթերը սրանց հիշատակել են ըստ ծագման վայրերի կամ ցեղանունների՝ Halara (կամ Hatra), Manda, Sala, Tamalkija, Himaya¹: Մինչև մ.թ.ա. XIII դարի կեսերը սրանք ապահարկ էին:

1. Խուբուշկիան՝ զինվորական դասի երկիր

Ավանդական Վաղարշակ թագավորի կողմից Հայաստանում նախարարություններ հաստատելու առիթով պատմահայրն անդրադառնում է նաև Վանա լճից հարավ ընկած շրջաններին՝ Մեծ Հայքի Մոկք, Կորճայք նահանգներին և Վասպուրական նահանգի հարավային հատվածին: Նրա անգուգական երկում կարդում ենք. «Իսկ զՄոկացիս ի նոյն գաւառէ գտեալ այր, որ ունէր ընդ իւրեաւ սրիկայս բագումս՝ նախարարութիւն հաստատէ: Նոյնպէս և զԿորդուացիս, և զԱնձաւացիս, եւ զԱկէացիս ի նոյն (իմա՛ նոյնանուն- Ս.Պ.) գաւառաց»²: Իսկ Արտավազ թագավորին հաջորդած Տիրանի առթիվ պատմահայրը գրում է. «Յաւուրս սորա ասէն լեալ *զպատանի որմն յազգէն Անձաւացեաց...* Չոր սիրեալ արքայի՝ *տայ նմա զգահն երկրորդական*, զոր ունէրն Արտաւազդ. և զհոգս *արնելեան զորուն ի նա հաւատացեալ* առ նմա թողու զԻրուասպ ոմն պարսիկ զմտերիմ իւր»³: Ուրեմն, ինչպիսի հզորն էր լինելու Անձաւացի/Անձեւացի տոհմը, որ արքան նրա պատանի ներկայացուցիչին է վստահել տերության երկրորդ գահը և Հայոց բանակի չորս գորամիավորումներից մեկի՝ «Արևելյան դռան» հրամանատարությունը: Վերջին բարձր զինվորական պաշտոնը Անձաւացի նախարարներն զբաղեցրել են (ըստ երևույթին՝ փոփոխակի) նաև հաջորդ դարերում:⁴

Ուրարտական դարաշրջանում Արևելյան Տիգրիսի վերին և միջին հոսանքների շրջանները՝ հետագա Մեծ Հայքի Վասպուրական նահանգի Անձեւացիք գավառը և Մոկք նահանգը ներառյալ կազմում էին Ուրարտուին ենթակա, բայց ռազմունակ *Նաիրի* կամ *Խուբուշկիա* կոչված թագավորությունը: Ասորեստանի Սալմանասար III թագավորը պատմում է, թե մ.թ.ա. 859 թ. իր բանակը ինչպես է դժվարությամբ հասել Խուբուշկիա քաղաք: Քաղաքի մոտ ընթացած դաժան մարտերից հետո խուբուշկիացի մարտիկները իրենց Կակիա արքայի գլխավորությամբ նահանջել էին լեռները: Արձանագրության համաձայն՝ Սալմանասար III-ը հետապնդել էր նրանց և պարտության մատնել լեռներում: Ասորեստանի թագավորը պատմում է. «Ես հրդեհեցի Խուբուշկիա քաղաքը՝ շրջակա հարյուր քաղաքների (իմա՛ բնակավայրերի-Ս.Պ.) հետ միասին... *Մարտակառքեր, ձիեր, լծվածքներ*՝ այդ բոլորը ցած իջեցրի լեռներից»⁵: Խուբուշկիայի լեռնիների համառ դիմադրությունը կազմակերպած մարտաշունչ արքան համապատասխան անուն ուներ Kaki/Kakia, որի մեջ առանձնանում են *kak- արմատը և *-i/ia վերջածանցը: Այս վերջինը

¹ Տե՛ս WVDO -1916/1926. VI, 2, 3, 4, 6.

² Խորենացի -1981, գիրք Բ, գլ. Լ:

³ Նույն տեղում, գլ. ԼԲ:

⁴ Նույն տեղում, գիրք Գ, գլ. ԼԲ: Բիւզանդացի -1987, գիրք Ե, գլ. ԼԲ:

⁵ Ադոնց Ն. -1972, էջ 78; Арутюнян Н. -1970, сс. 70-71, 102-104, 111-113, 127-130.

նույնական է *Hubsškia* անվան *-ia* վերջածանցի հետ՝ ծագելով **(i)jā* վերջածանցից և լինելով համարժեքը հայերեն *-ի* վերջածանցի (հմմտ. *բարի, կոզի, հանի, սասի* և այլն): Իսկ **kak* արմատը նույնն է լինելու հայերեն *կազ* «վեճ, կռիվ» արմատի հետ, որից ունենք *կազիլ* «կռվել», *կազասեր* և *կազացող* «կռվարար» բառերը:⁶ Մեկազրում հիշատակված *Kaki(a)* և հետագայում հայտնի դարձած *Գազիկ* արքայանունների միջև ստուգաբանական կապի գոյությունը փաստվում է դյուցազնավեպի Կակիզ թագավորի տիրությունները նույնպես Կանա լճից հարավ տեղորոշված լինելու միջոցով: Այս Գազիկ-Կակիզը «կը թագավորեր Գավաշի, Խավի ծորի, Շատախի, Մոկաց, Մպարկերտու, Խիգանի, Կարկառի, Կարձկանի վրա»:⁷

Խուրուշկիա քաղաքը, հավանաբար, գտնվել է «Մասնա ծոեր» դյուցազնավեպի *Հովա դաշտ* կոչված վայրում, որովհետև *Hub-ušk-ia* բաղադրիչներից բաղկացած տեղանվան *hub-/*hny* բաղադրիչը կարելի է նույնը համարել *Հովա դաշտի* (ուղղ. հոլովը՝ *Հով*) անվան հետ: «Մասնա ծոեր» դյուցազնավեպի Մոկաց տիպի պատումներում *Հովա դաշտը* համարվում է Մասունցի Դավթի և Մսրա Մելիքի կովի վայրը:⁸ *Hubsškia* տեղանվան *hub-* և *Հովա դաշտի* անվան *Հով* բաղադրիչների հետնորդը պիտի լինի նույն վայրում գտնված և մինչև XX դ. սկզբները հայաբնակ Մամոտանք գավառի *Օվ* գյուղի անունը:⁹ *Hubsškia* տեղանվան *Hub* բաղադրիչը կարելի է կարդալ նաև *hny-* (սեպագիրը *h/hայ. hu, h, սեպ. u/hայ. nu, n/o, սեպ. b/hայ. p, v*) և նույնացնել ոչ միայն *Հովա դաշտ* տեղանվան, այլև հայ. *hny/hu* (<հովի-ւ) բառի առաջին բաղադրիչների հետ: *Հովի-*ը բառացիորեն «ոչխարապահ» է նշանակում, իսկ *hny/h-*՝ «ոչխար»: Նրա արմատակիցներից են լուվ. *hau-* «ոչխար», հին հնդկ. *a'vi* «ոչխար», լատին. *avis* «ոչխար», հուն. *ἄ(F)ις* «ոչխար» բառերը և «ոչխարապահ»/«հովիվ» նշանակող հին հնդկ. *avi-pāla*՝-ն:¹⁰

Մեր ոսկի բառն էլ կարելի է տեսնել *Hub-uškia* տեղանվան երկրորդ բաղադրիչի մեջ՝ բայց իր **oskia* նախաձևով (հիշենք, սեպ. *š/s* և *u/o* ընթերցման հնարավորությունը): Այս նախաձևը նույն տեսքով առկա է նաև *Uškia* սեպագիր լեռնանվան մեջ, որը Սոտքի *նսկեհանքը* պարունակող լեռան անունն էր:¹¹ Այս դեպքում *Hubsškia*-ն կլիներ *Հովա դաշտի* անունը և կնշանակեր «Ոսկյա ոչխարի (դաշտ)», որից քաղաքի անունը: Հիշենք հունական Ոսկե գեղմի առասպելը¹², որում ոսկե գեղմով ոչխարը խորհրդան-

⁶ Աճառյան Հ. -1973, հ. II, էջ 477: Կարծում ենք, որ արմատակիցներ են *կազ* բառը, *Kaki/kakia*, *Kakadanu* անձնանունները և *kakme* տերմինը: Վերջինի մասին տե՛ս *Дьяконов И. -1951, №№ 2-4, надп. № 46: ՀԺՊԸ -1981, հ. I, էջեր 26-27: Պետք չէ kakme-ներին առանձնացնել Ուրարտուի հայախոս բնակիչներից կամ նրանց համարել Զիկիրտուի և Անդիայի բնակիչներ (տե՛ս Дьяконов И. -1951, №46, ր. 8): Արդնց Ն. -1972, էջ 101, ծան. 1: Арутюнян Н. -1970, էջ 296, ր.472): Կակմները, ըստ ամենայնի, պատկանել են Ուրարտուի զինվորական դասին: Հմմտ. *kak-* բաղադրիչով կազմված այդ նույն ժամանակաշրջանի Ուրարտուի «առաջին սպարապետի» *Kakadanu* անունը (*Дьяконов И. -1951, №50*): Հակառակ ընդունված կարծիքի (*Арутюнян Н. -1970, ծան. 399*) աստիճանը զգազու «զլուխ» բառն այստեղ գործ չունի:*

⁷ ՄԾ -1936, հ. I, էջեր 475-480, 607-609 և 1091:

⁸ ՄԾ -1936, հ. I, էջեր 512, 572, 578, 802:

⁹ Ա-Գո -1912, էջ 95:

¹⁰ Աճառյան Հ. -1977, հ. III, էջ 117, *Гамкрелидзе Т., Иванов В. -1984, т. II, с.с. 577, 579.*

¹¹ *Меликишвили Г. -1960, с. 446, надп. N 155; Պետրոսյան Ս. -1984, 2, էջեր 178-179:*

¹² *Կուն Ն. -1956, էջեր 309-311, 329, 338:*

շում էր արևը (ոսկեգույնը նրա գույնն է, իսկ ոսկին՝ արևին ձուլված մետաղը), ինչպես նաև՝ Խուրուշկիայի հետևորդ Մոկքի հյուսիսային սահմանագլուխը կազմած լեռան *Արտու* (հմմտ. գրաբար *արտի/արտիկ* «վայրի էգ ոչխար») և հարավայնի սահմանագլուխը կազմած լեռան *Առնու* (հմմտ. գրաբար՝ *արն* «վայրի արու ոչխար») անունները:¹³ Այս դեպքում պետք է նկատի առնել, որ առասպելաբանորեն հյուսիսը՝ որպես ձախ կողմ (մեր նախնիների կողմնորոշումը դեպի արևելք էր) համադրվում էր իգական-մայրական սկզբունքի, իսկ հարավը՝ որպես աջ կողմ, համադրվում էր արական-հայրական սկզբունքի հետ:¹⁴ Արտոսն ու Առնոսը՝ մայր և հայր լեռներ ըմբռնվելիս, նրանց ծնունդն էլ կարող էր ըմբռնված լինել հայկական «ոսկե ոչխարը»՝ հունական ոսկե գեղմով ոչխարի գուրգուռը՝ Հովա դաշտի հովանավոր աստվածությունը: Ասորեստանի թագավորների կողմից նրան տրված *Նաիրի* անունը (այն Խուրուշկիա կոչվում էր իր մայրաքաղաքի անունով)¹⁵:

Kaki(a) սեպագրային արքայանվան և դյուցազնավեպի Գագիկ/Կակիգ թագավորի կերպարների միջև նկատվող ընդհանրության մասին է խոսում ոչ միայն նրանց անունների լեզվաբանական նույնությունը և նույն տարածքում (իրական թե մտացածին) իշխած լինելու հանգամանքները, այլև դրանք կապակցող օղակի գոյությունը՝ այն իրողությունը, որ այդ նույն տարածքները հասուն միջնադարում մասն էին կազմում Վասպուրականի Արծրունիների թագավորության, որի հիմնադիրը նույնպես *Գագիկ* էր կոչվում:¹⁶

Թե՛ Խուրուշկիայի Կակիա (Կակի) թագավորին, թե՛ «Մասնա ծոեր»-ի Կակիգ (Գագիկ) թագավորին, թե՛ Վասպուրականի առաջին՝ Գագիկ Արծրունի թագավորին ենթակա տարածքները գերազանցապես կազմում էին Վանա լճից հարավ և հարավարևելք տարածված միևնույն գավառները: Այս նույնությունը կարելի է բացատրել, մեր կարծիքով, միայն հազարամյակների խորքից անխափան եկած այն ընդհանրության զիտակցումով, որը հատուկ է եղել վերոհիշյալ շրջանների բնիկ բնակչությանը՝ նույնիսկ օտարերկրյա տիրապետության պայմաններում: Վասպուրական և Մոկք նահանգների հիշյալ գավառների բնիկները կազմում էին հայության *վոշիկ* կոչված ազգագրական խումբը: Անվան կազմության համար հմմտ. մեր ազգագրական մյուս խմբերին տրված անուններից *արմնիկ*, *գեղնիկ*, *գոգիկ* (իսկ օտարազգիներին տրված ցեղանուններից՝ *խափշիկ*, *կայսիկ*, *հնդիկ*, *պարսիկ* և այլն): *Վոշիկ* (<վոշ-իկ) անվան արմատը նույնն է *վոշնել* (<վոշ-ն-ել) բառի արմատի հետ, որն, անշուշտ, «կարմիր» է նշանակել, որովհետև *վոշնել* նշանակում է «կարմրատակել, շառագունել»¹⁷: Նրանով *վոշիկ* անվան կազմումը պայմանավորված էր լինելու հիշյալ շրջանների բնակչության նախնիների զինվորական դասը ներկայացնելու իրողությամբ: Հնդեվրոպական միասնու-

¹³ Պետրոսյան Ս. -1991, 2, էջեր 127-128:

¹⁴ Հմմտ. Hajasa և Azzi (տե՛ս: Петросян С. -1987, 3, էջեր 77-87):

¹⁵ Արոնց Ն. -1972, էջեր 79, 111:

¹⁶ Тер-Гевондян А. -1977, с.с. 243-244.

¹⁷ Մալխասյանց Ստ. -1945, IV, էջ 353:

թյան շրջանում կարմիր գույնը հատկացված էր զինվորական դասին, իսկ սպիտակը՝ քրմականին¹⁸:

2. Վառամարտիկներին առնչվող *Armiral* տեղանունը:

Եթե բերված անունների մեջ արտացոլված ենք տեսնում զինվորական դասի գոյությունը, ապա հավանականություն կա, որ այստեղ իրենց հիշատակը թողած լինեն նաև իրենք՝ կառամարտիկները: Այդպիսին մենք համարում ենք նույնպես սեպագրությամբ ավանդված *Armiral*-(a/u) երկրանունը¹⁹: Վերևում նշվեց, որ ասորեստանցիներից այս երկրին տրված *Նաիրի* և *Խուբուշկիա* անունները նրա բուն անունները չեն: Սրանցից առաջինը Հայկական լեռնաշխարհին տրված ընդհանրական անվան մասնավորեցումը, իսկ երկրորդը երկրի մայրաքաղաքի անունն էր: Երկրի իսկական անունը, դրանց նման, մեզ հասել է դարձյալ ասորեստանցու միջոցով, բայց տեղում եղած (ուրեմն նաև տեղում լսած) անձի միջոցով: Դա լրտեսներից մեկն էր Ուրարտուին սահմանակից ասորեստանյան նահանգի կառավարիչ, գլխավոր լրտես Աշուրիսուայի: Դրա և իր նմանների հաղորդած տեղեկությունների հիման վրա Աշուրիսուան գեկուցագրեր էր ուղարկում Սարգոն II-ին (721-705 թթ. մ.թ.ա.): Դրանցից մեկում թվարկված են Ուրարտուի հարավային նահանգների կառավարիչները, որոնց նահանգները հարևան էին Մուծածիրին և Ասորեստանին: Դրանցից վերջինը Արմիրալիուն է²⁰, նրա նախորդը՝ Ալզին (հետագա Աղձնիքը)²¹, որից արևելք էր գտնվելու Արմիրալիուն: Սրանց կառավարիչները հավաքվել էին Վանա լճի հարավային ափին գտնված Ուեսի նահանգում (կոչված նաև Ուայախս²², հետագա Երևարք և Ռշտունիք գավառները միասին)²³: Իսկ այս նահանգից հարավ՝ հետագա Մոկքն էր՝ Երևարքի և Ռշտունիքի հարևանը հարավից: Այսպիսով, պարզվում էր, որ հետագա Աղձնիքից արևելք, Երևարք-Ռշտունիքից հարավ և Մուծա ծիրից հյուսիս գտնված *Armiral*- նահանգը հետագա Մոկքն ու Անձևացիքը ներառած նույն Խուբուշկիան է: Անունների նմանության պատճառով այս Արմիրալին նույնացնում են Վանա լճի հյուսիսարևելյան ափամերձ շրջանները բռնած, Սարգոն II-ի կողմից հիշատակված Արմարիլի կամ Արմարիյալի նահանգի հետ²⁴: Բայց դա անհնար է, որովհետև 1. վերջինը նույնական է Սալմանասար III-ի հիշատակած Արամալիի հետ՝ Վանա լճից հյուսիս-արևելք, Արծաշկու (հետագա Արճեշը)²⁵ կենտրոնով, 2. սա

¹⁸ Гамкрелидзе Т., Иванов В. -1984. II, с. 788, стр. 3 и 5: Վարմիր գույնի ձիով էր պատկերացվում նաև տեղական Ս.Եղիշեն: Գ. Սրվանձոյանցը այս առթիվ գրում է, որ Մոկաց Վերին Տասոիկ գավառակի գյուղերից «Վերիսա եկեղեցին Ս. Եղիշեի անունով շինված է, նստմ և գծում շենք մը, դուռը միշտ բաց, ուր ուխտավորք և աղոթվորք կը հաճախեն՝ հայ և քյուրդ: «Շատ գորավոր է մեր Ս. Եղիշեն,- կը պատմեր ծերունի մը,- որ օգնության կը հասնի ամեն վասնգեղոց, և թե հերագի (ի երագի>յերագի-Ս.Գ.), և թե բաց աչքը շատ անգամ կը տեսնամք զինքն. ինքն է *կարմիր ձիավոր*, գրահավոր, ճերմակ մորուք վարդապետ, ճգնավոր» (Սրվանձոյանց Գ. -1978, էջ 146):

¹⁹ Дьяконов И. -1951, надп. № 50.

²⁰ Աղոնց Ն. -1972, էջ 114:

²¹ Дьяконов И. -1951, надп. №№ 3-7, 10-11, 23, 28, 40.

²² Նույն տեղում, №№ 46, 49:

²³ Երենյան Ս. -1963, էջեր 51, 79, 108:

²⁴ Աղոնց Ն. -1972, էջ 211; Дьяконов И. -1951, надп. № 50, пр. 5; Арутюнян Н. -1970, с. 284 пр. 402.

²⁵ ՀԺՊՔ -1981, էջեր 24, ծան. 7:

Ուրարտուի արքունի ոստանն էր, որովհետև այստեղ էին գտնվում Ուրարտուի (մեզ հայտնի) առաջին թագավոր Արամեի արքայանիստ Արծաշկուն, Մարդուրի II-ի քաղաք Ռիարը, Ռուսա I-ի «հայրենական տուն» Արբուն, որի շրջակա 7 բնակավայրերում էլ բնակվում էին Ռուսայի «եղբայրները, նրա թագավորական սերմը»²⁶, 3. Արմիրալին «կուսակալ»-նահանգապետ ուներ, որպիսին Արամալի-Արմարիլին, բնականաբար, չէր կարող ունենալ՝ որպես արքունի ոստան, 4. Արմիրալին հիշատակված է հարավային սահմանամերձ նահանգների շարքում, որոնց Ասորեստանի կողմից անմիջական հարձակման և ներխուժման վտանգ էր սպառնում, իսկ Արամալի-Արմարիլին գտնվում էր պետության կենտրոնում:

Ի՞նչ կարող է նշանակել Armirali-(u/a) երկրանունը: Փորձենք ստուգաբանել: Հստակ է, որ Arm-ir-ali-u/a բառը բաղկացած է arm- արմատից, -ir-, -ali- վերջածանցներից և -iu/-ia հոլովական վերջավորություններից: Դրանք բոլորը հնդեվրոպական ծագում ունեն: Անվան -ir- բաղադրիչը սեպագրային արտացոլումն է իրերի հակադրություն ցույց տվող հ.-ե. *er վերջածանցի²⁷, -ali-ն տեղանվանակերտ վերջածանց է առկա նաև Aramale/Aramali, Դարանաղի, Մանանաղի, Մարդաղի տեղանուններում: Իսկ -iu/-ia սեռական և ուղղական հոլովների վերջավորություններն են (հմմտ. Ուրմիոյ<Ուրմիա, Գերմանիոյ<Գերմանիա, Բոտալիոյ<Բոտալիա), եթե միայն արական (-iu) և իգական սեռի (-ia) ցուցիչները չեն դրանք²⁸: Այս դեպքում հմմտ. Ասորիք > սեռ հոլով. Ասորեաց, երբ խոսքը երկրի մասին է (երկիրն իգական սեռի է), և Ասորուց, երբ խոսքը մարդկանց մասին է (մարդիկ արական սեռի են)²⁹: Եթե Armirali- երկրանվան *arm- բաղադրիչը «մարտակառք» է նշանակել (հմմտ. հուն. ἄρμα), ապա նրանից -er վերջածանցով կազմված *armir-ը կնշանակեր «կառամարտիկ» (ի հակադրություն հետևակ զինվորի), իսկ տեղանվանակերտ վերջածանց -ali-ի հավելումով ստեղծված Armirali-ն՝ «Կառամարտիկ(ներ)ի տեղ, Կառամարտիկ(ներ)ի երկիր»:

Այժմ, *arm- արմատի մասին մանրամասն: *արմ-ը, հայերեն զուգահեռն է հին հունարեն ἄρμα «ձիակառք, մարտակառք» բառի: Հայկական լեռնաշխարհում մարտակառքի և նրա նախատիպ երկանիվ ձիասայլի շատ վաղ գործածության մասին խոսում են Հայաստանի ժայռապատկերները³⁰: Իսկ մեր *արմա-ի զուգահեռներից են նաև հայ. յարմար բառի արմ հիմքը, հուն ἄρμός «կցվածք, հավելված», լատին. arma «հարմարանք, սարք», ավեստ. arəm «հարմար, համապատասխան» և հին սլավ. jarimъ «լուծ» (որից՝ ռուս. ярем, ярмо «լուծ, լծասարք») բառերը³¹: Հայ. յարմար բառը կազմված է *արմ հիմքին / նախդիրի և -ար վերջածանցի հավելումով: Բերված բոլոր բառերը կազմվել են հ.-ե. *ar- «կցորդել, միացնել, արվեստով հորինել» արմատից -m աճականով³²: Մեր բառի -ար վերջածանցի համար հմմտ. արդ-ար, գալ-ար, դալ-ար, կերպ-ար և այլն:

²⁶ ՀԺՊՔ -1981, էջ 31:

²⁷ Աճառյան Հ. -1957, III, էջ 110: Ջահուկյան Գ.1987, էջ 234:

²⁸ Հմմտ. Կարապետյան Հ. -1978, 10, էջեր 62, 64-65, 72-73:

²⁹ Տե՛ս Աճառյան Հ. -1957, էջեր 293, 298-299, 302:

³⁰ Կարախանյան Գ., Սաֆյան Պ. -1970, նկ. 117-V և 276-II:

³¹ Гамкрелидзе Т., Иванов В. -1984, II, էջեր 723, 731; Աճառյան Հ. -1977, III, էջեր 389-390:

³² Աճառյան Հ. -1977, III, Եր., 1977, էջ 388:

3. Խուբուշկիայի վարձկանները

Վարձկան կառամարտիկներ խեթական բանակում կային նաև Հայասա-Ազիից և Հայկական լեռնաշխարհի մանդա, սալա, խեմուա, տամալկիյա և այլ ցեղերից: Այս տեսանկյունից ուշագրավ են եգիպտական որմնանկարները, որոնք խեթական բանակի զինվորներին պատկերում են տարբեր մարդաբանական տիպերով և տարբեր տեսքի մարտակառքերով³³: Դրանցից Ի. Մ. Դյակոնովի կարծիքով, սալա և խեմուա ցեղերին պետք է մոտավորապես տեղորոշել «Հայկական լեռնաշխարհում՝ Եփրատի և Վանա լճի միջև, հնարավոր է նաև ավելի արևելք»³⁴: Քանի որ սալայի տեղադրությունը ճշգրտված է՝ Տարոնում էր, ապա «հնարավոր է ավելի արևելք» տեղորոշումը կարող ենք վերագրել *խեմուա/սիսուվային*: Ինքը՝ Դյակոնովը, այս ցեղանվան հիմքում տեսնում է Մեծ Ջաբ գետի ավազանում գտնված Luha/Luhi և Alamun երկրների հետ հիշատակված Heme/Hemme երկրի անունը³⁵: Նա նշում է, որ դրանցից վերջինը նույնն է լինելու Ասորեստանի Սալմանասար I թագավորի (մ.թ.ա. 1274-1245 թթ.) կողմից Ուրուատրի ցեղամիության կազմում հիշատակված Hemme-ի և Աշուրբեկկալայի (մ.թ.ա. 1076- մոտ. 1059 թթ.) հիշատակված Hemmu-ի հետ³⁶: Ըստ Ն. Հարությունյանի, Խիմնե երկրի տեղադրությունը որոշվում է այն տարածքում, որը գտնվում էր Վանա լճից հարավ-արևելք, Էլամունիա գետից (Մեծ Ջաբ գետի վերին հոսանքից) արևմուտք՝ նրա և Տիգրիսի արևելյան ճյուղի միջև³⁷: Դժվար չէ կռահելը, որ դա այն նույն տարածքն է, որ հետագայում զբաղեցնում էին Մեծ Հայքի Մոկք նահանգը և Վասպուրական նահանգի Անձևացիք գավառը: Այստեղ էր *Խուբուշկիա* թագավորությունը՝ կոչված նաև *Արմիրայի* և *Նահրի*:

Մեր կարծիքով, Խուբուշկիա թագավորությունը փոխնիփոխ կառավարվել է զինվորական և քրմական դասերի ներկայացուցիչների կողմից: Ինչպես տեսանք, Խուբուշկիայի *Կակի/Կակիա* արքայաձուռնը խոսում է այն կրած անձի զինվոր-արքա լինելու մասին: Իսկ նրա հաջորդներից մեկի *Բանզու/Յանզու* անունը, ինչպես կտեսնենք ստորև, խոսում է այն կրած անձի քուրմ-արքա լինելու մասին: Սա Ուրարտուի թագավոր Ռուսա I-ի (մ.թ.ա. 735-713 թթ.) և Ասորեստանի թագավոր Սարգոն II-ի (մ.թ.ա. 721-705 թթ.) ժամանակակիցն էր³⁸: Հստակ է, որ Ianzu/Yanzu արքայանունը կազմված է* i-anz-u բաղադրիչներից: Սրանցից առաջինը *ի* նախդիրն է, որը «ձայնավորի մոտ դառնում է *յ* (երկուսն էլ հնչմամբ նախապես նույնն էին)³⁹», երրորդը կարող է լինել կամ *-ni* վերջածանցը (հմմտ. *աղու, թթու, խորովու, կծու, ճրագու*), կամ սեռական հոլովի *-ni* վերջավորությունը, իսկ երկրորդ բաղադրիչը՝ բառի արմատն է, հ.-ե. *anǵ-ը, որից *anǵen->*անձն*: Հնդեվրոպականի բուն արմատն է *anǵ-«փչել, շնչել», որից *անձն* բառի

³³ Տե՛ս Gurney O. -1970, էջ 261, նկ. 56a, 56b; Meyer Ed. -1928 (տե՛ս Խաչատրյան Ա.-1933, էջեր 107-108):

³⁴ Дьяконов И. -1968, с. 43.

³⁵ Նույն տեղում, էջ 87, ծան. 32:

³⁶ Дьяконов И. -1951, №№ 2, 10.

³⁷ Арутюнян Н. -1970, с.с.14, 16.

³⁸ ՀԺՊՔ -1981, հ. I, էջ 33:

³⁹ Անանյան Հ. -1973, հ. II, էջ 235:

«առաջին իմաստն եղել է «հոգի»․ հմմտ․ … *հոգի*, որ հիմա նշանակում է նաև «անձն»․ ինչ․ երկու հոգի, մի քանի հոգի են»⁴⁰։ Հիշենք *Անձևացիքի* Հոգուց վանքը⁴¹։

Եզրահանգում․ ա․ Ասորեստանյան արձանագրություններում երեք տարբեր անուններով՝ *Նահրի* (նեղ առումով), *Խուբուշկիա* (մայրաքաղաքի անունով) և *Արսիքալի* (իշխող կառավարողների անունով) հիշատակվել է միննույն երկիրը՝ հետագա Մոկքի Անձևացիքի տարածքն զբաղեցրած և Ուրարտուի հզորության դարաշրջանում նրան ենթարկված փոքր թագավորությունը։

բ․ Սեպագրության դարաշրջանում Խուբուշկիան ռազմաքաղաքական առումով բավականին ուժեղ է եղել՝ շնորհիվ զինվորական, մասամբ նաև քրմական դասերը ներկայացնող կառավարողների։ Սրանց մի մասը *Խեմուվա/Խիմուվա/Խիմուե* անվամբ Հայկական լեռնաշխարհի այլ կառավարողների հետ միասին՝ որպես վարձկաններ ծառայել է իսթական բանակում։

գ․ Հողվածում բերված, մեկնաբանված և ստուգաբանված նյութը խոսում է այն մասին, որ սեպագրային դարաշրջանի Խուբուշկիան եղել է առավելապես զինվորական դասի (մասամբ նաև քրմական) վերնախավը ներկայացրած կառավարողների կողմից կառավարվող և հայկական բնակչություն ունեցող երկիր՝ վաղպետական կազմավորում։

О ТОЖДЕСТВЕ И ХАРАКТЕРЕ СТРАН ХУБУШКИА И АРМИРАЛИ

Петросян С. Г.

Ключевые слова: *колесничий, классы, Армиральи, Мокк, Андзевацик, Армарук, Хова дашт, Хубушкиа, Хемува, Урарту.*

Среди мелких стран Армянского нагорья ассирийские источники упоминают также страну Хубушкиа (Hubuškia). Она охватывала часть южной Армении южнее озера Ван, в бассейне реки Восточный Тигр. По нашему мнению, одноименный город Хубушкиа-столица страны, находился в центре страны, на поле *Хова дашт*. С компонентом Hub-//*Нов- в топониме Hubuškia ср. топоним Հով (впосл. Օվ)>род. под. Հովա (> Հովա դաշտ “поле Хова”).

Древнеармянские княжеские роды Мокаци и Андзеваци вместе упомянуты в “Истории Армении” Мовсеса Хоренаци. По соседству, в бассейне реки Восточный Тигр, в Мокке и Андзевацике, были также их владения. Значит, и предки этих княжеских родов из племени Химува/Химме жили по соседству в этих местах, т. е. в клинописной стране Хубушкиа-

⁴⁰ Աճառյան Հ. -1971, I, էջեր 201-203:

⁴¹ *Անձ-կւ-սցի-ք/Անձ-սւ-սցի-ք* տոհմանուն/տեղանունը ծագումնաբանական կապի մեջ է Իանս/Իանս արքայական հետ, ինչպիսին է սրա կապը *սնձ-ն* «հոգի, անձ» բառի հետ։ Սրանց բոլորի իմաստաբանական հենքը պայմանավորված է եղել «<նցից վանք»-ին նախորդած հեթանոսական արքավայրի պաշտամունքով։ Տոհմանուն-տեղանվան և արքայական կապի առթիվ հիշենք, որ սեպագրերի «ու» ընթերցվող նշանը կարելի է ընթերցել նաև «օ», «ս», «ն» (հմմտ. Alištu//*Alistex>Աղստն և Անձնացի/Անձսացի, Pardu//*Parday>Պարսս) :

Армиральи. Для *Армиральи* <*arm-ir-ali ср. *Зармайр*<*z-arm-ayr где *arm- “колесница” (ср. др. греч. ἄρμα “колесница”). Союз стран – будущих областей древней Армении Мокка и Андзевацика являлся важнейшим очагом формирования не только индоевропейского социального института двух вождей, но и культа индоевропейских божественных близнецов (ср. Санасар и Багдасар в эпосе «Сасна црер»).

ABOUT THE IDENTIFICATION AND CHARACTER OF THE COUNTRIES KHUBUSHKIA AND ARMIRALI

Petrosyan S. G.

Key words: *charioteers, classes/social estates, Khubushkia, Armirali, Mokq, Andzevatsik, Armaruk, Hovadasht, Khemuva, Urartu.*

Assyrian sources mention the country Khubushkia (Hūbuškia). It was among the smaller countries situated on the Armenian Tavros. The Khubushkia occupied the part of Southern Armenia, to south of Lake Van, in the river basin of Eastern Tigris. According to the author, the capital of country-of the same name Khubushkia, was situated in the centre of country in *Hovadasht*. In the toponym Hūb-ušk-ia for component Hūb-//*Hov- compare with Armenian toponym Հով (next Օվ)>Հովա(>Հովա դաշտ “field of Hova”), possessive case: *Hova*.

Ancient Armenian princely families Mokatsi and Andzavatsi are mentioned together in the “History of Armenia” by Movses Khorenatsi. So, their possessions were in the neighbourhood in the river basin of Eastern Tigris, hence the ancestors of the tribe Khimuva/Khimme lived in the neighbourhood in the cuneiform Khubushkia-Armirali. For *Armirali*<*arm-ir-ali compare with *Zarmayr*<*z-arm-ayr, where *arm-“chariot” (compare ancient Greek ἄρμα “chariot”).

To deduce, the Union of the future regions of ancient Armenia – Mokq and Andzevatsik was the most important center of that time where Indo-European social institute of two leaders and Indo-European cult of godlike Twins were shaped (compare with Sanasar and Baghdasar from “Sasna tsrer”).

Պ ր ա կ ա ն ո յ յ ո լ ն

1. Ա-Գո -1912, Վանի, Բիթլիսի և Էրզրումի վիլայեթներ, Երևան:
2. Ադոնց Ն. -1972, Հայաստանի պատմություն. Ակունքները. X-VI դդ. մ.թ.ա., Երևան:
3. Աճառյան Հ. -1957, Լիակատար քերականություն հայոց լեզվի, հ. III, Երևան:
4. Աճառյան Հ. -1973, Հայերեն արմատական բառարան, հ. II, Երևան:
5. Երեմյան Ս. -1963, Հայաստանը ըստ «Աշխարհացոյց»-ի, Երևան:
6. Խաչատրյան Ա. -1933, Հայաստանի սեպագրական շրջանի պատմություն, Երևան:
7. Կարապետյան -1978, Արևելյան Հայաստանի ուրարտական տեղանունները // «Լրաբեր հասարակական գիտությունների» թիվ 10:
8. Կարախանյան Գ., Սաֆյան Պ. -1970, Սյունիքի ժայռապատկերները // «Հայաստանի հնագիտական հուշարձանները, 4, Ժայռապատկերներ», Երևան:
9. Կուն Ն. -1956, Հին Հունաստանի լեզներդներն ու առասպելները, Երևան:
10. ՀԺՊԸ -1981, «Հայ ժողովրդի պատմության քրեատմատիա», հ. I, հնագույն ժամանակներից մինչև IX դարի կեսերը, Երևան:
11. Մալխասյանց Ստ. -1945, Հայերեն բացատրական բառարան, հ. IV, Երևան:
12. Խորենացի -1981, Մովսիսի Խորենացույ պատմություն Հայոց, Երևան:

13. **Պետրոսյան Ս. -1984**, Սարդուրի II-ի անդրսևանյան արշավանքի երթուղու շուրջ // «Պատմա-բանասիրական հանդես», թիվ 2:
14. **Պետրոսյան Ս. -1991**, Երկգույն-երկհարկ աիեզերքի մասին առասպելաբանական պատկերացումը Հայկական լեռնաշխարհում // «Լրաբեր հասարակական գիտությունների» թիվ 2:
15. **Ջահուկյան Գ. -1987**, Հայոց լեզվի պատմություն. նախագրային ժամանակաշրջան, Երևան:
16. **ՄԾ -1936**, «Մասնա ծեեր» ժողովրդական վեպ, հ. I, Երևան:
17. **Սրվանձադան Գ. -1978**, Երկեր, հ. I, Երևան:
18. **Քիզանդազի -1987**, Փաստոսի Բիզանդացույ Պատմություն Հայոց, թարգմանությունը և ծանոթագրությունները Ստ. Մալխասյանցի, Եր., 1987:
19. **Арутюнян Н. -1970**. Бийниги (Урарту). Военно-политическая история и вопросы топонимики, Ереван.
20. **Гамкрелидзе Т., Иванов В. -1984**. Индоевропейский язык и индоевропейцы, т. II, Москва.
21. **Дьяконов И. -1968**. Предыстория армянского народа, Ереван.
22. **Дьяконов И. -1951**. Ассиро-вавилонские источники по истории Урарту//«Вестник древней истории».
23. **Меликишвили Г. -1960**. Урартские клинообразные надписи, Москва.
24. **Петросян С. -1987**. Племенной союз Хайаса-Аззи в системе двоичных противопоставлений // «Լրաբեր հասարակական գիտությունների», թիվ 3:
25. **Тер-Гевондян А. -1977**. Армения и арабский халифат, Ереван.
26. **Gurney O. 1970**. Hetyci, Panstwowe Wydawnictwo Naukowe, Werszawa.
27. **WVDO -1916/1926**. Keilschrifttexte aus Boghazkoi (Wissenschaftliche Veröffentlichung der Deutschen Orientgesellschaft), Leipzig-Berlin. VI.
28. **Meyer Ed. -1928**. Geschichte ägyptischen Grossmach.

Ընդունվել է՝ 07. 09. 2022
Գրախոսվել է՝ 29. 10. 2022
Հանձնվել է տպ.՝ 28. 11. 2022

Տեղեկություններ հեղինակի մասին

Սարգիս ՊԵՏՐՈՍՅԱՆ՝ պատմական գիտությունների դոկտոր,
ՀՀ ԳԱԱ Ծիրակի հայագիտական հետազոտությունների կենտրոնի
առաջատար գիտաշխատող, էլ. հասցե՝ vahe1996@mail.ru

ՀՏԴ՝ 93/94

DOI: 10.52971/18294316-2022.25.2-155

ԵՐՎԱՆԻ ՎԵՐՋԻՆԻ ՏՈՂԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՇՈՒՐՁ

Լուսինե Պետրոսյան

ՀՀ ԳԱԱ Շիրակի հայագիտական հետազոտությունների կենտրոն
Շիրակի Մ. Նալբանդյանի անվան պետական համալսարան

Բանալի բառեր՝ *Երվանդունի, Օրոնտես, թագավոր, քրմապետ, Տիր, Տիրի-բազ, Հյուդարնես, Աքեմենյան, հայկական, պարսկական:*

Հոդվածում քննարկվում են Երվանդ Վերջին թագավորի ծագումնաբանության վերաբերյալ անտիկ աղբյուրների և հայ պատմիչների երկերում պահպանված տեղեկությունները: Ցույց է տրվում, որ Երվանդ Վերջինը ոչ թե հայրական, այլ մայրական գծով է Երվանդունի արքայատոհմին պատկանել: Հակառակ մեր պատմագրության մեջ ժամանակին իշխած կարծիքի՝ Երվանդ Վերջինին փոխարինած Արտաշես 1-ինն է հայրական գծով նախկին արքայատոհմին (այսինքն՝ Երվանդունի /Հայկազանց տոհմին) պատկանել, ինչը ուղղակիորեն վկայված է Մովսես Խորենացու «Հայոց պատմության» մեջ:


Նախաբան. Գրավոր առաջին տեղեկությունը Երվանդ Վերջին թագավորի ծագումնաբանության վերաբերյալ տալիս է հայտնի հույն աշխարհագետ Ստրաբոնը: Նա մինչարտաշիսյան Հայաստանի առթիվ գրել է «Վերջին իշխողն էր Օրոնտեսը՝ շառավիղն Հյուդարնեսի, որ մեկն էր յոթ պարսիկներից»¹: Երկրորդ տեղեկությունը տալիս է մեր Պատմահայրը՝ նախ գրելով. «Երուանդ ոմն՝ որդի կնոջ Արշակունույ, թագաւորէ յութերորդ ամի Դարեհի վերջնոյ», ապա ավելացնում է «Եւ ունին զրոյցք յաղագս նորա այսպէս: Կին ոմն յազգէ Արշակունէաց... ծնանի երկուս մանկունս յանկարզ խառնակութենէ, որպէս Պասիփայէ զՄինոտովրոս: Եւ ի զարգանալն մանկանցն կոչեն անու-

¹ Ստրաբոն -1940, <http://ancientrome.ru/antlittr/t.htm?a=1260110000>

անս Երուանդ և Երուագ»:² Խորենացու հաղորդման առաջին մասը վերաբերում է Գավգամելայի ճակատամարտում (մ.թ.ա. 331 թ.) Աքեմենյան արքայից-արքա Դարեհ Վերջինի բանակում հայկական զորամասով հանդես եկած Հայաստանի սատրապ, ապա և թագավոր Օրոնտես/Երվանդին, իսկ երկրորդ մասը՝ մինչարտաշիսյան Հայաստանի վերջին թագավոր Երվանդ Վերջինին³ (մ.թ.ա. 222-201թթ.): Ինչպես պարզորոշ երևում է, Ստրաբոնի և Խորենացու հաղորդումների համընկնման կետը Երվանդ Վերջինի՝ հայրական գծով ոչ հայկական ծագում ունենալու մեջ է:

1. Հայոց քրմապետ Տիրիբազի մասին

Ստրաբոնի հաղորդման մեջ Հայոց Երվանդ Վերջին թագավորը Հյուդարնեսի *շատավիղ* համարվում է ոչ պատահական, քանի որ նրանց միջև շուրջ 200 տարվա անջրպետ գոյություն ունի: Եթե այդպես է, ապա Հայոց այս թագավորի և Դարեհ 1-ինի զինակից պարսիկ մեծատոհմիկ Հյուդարնեսի (պարս.՝ Վիդարնա) միջև գոյություն ունեցած ազգակցական շղթայի մի քանի օղակներից մեկը կապված էր լինելու Հայաստանի և հայության հետ, այսինքն՝ Հյուդարնեսի հետնորդներից մեկը ապրած պետք է լիներ Հայաստանում և դարձած լիներ Հայոց Երվանդ Վերջին թագավորի նախնին: Մեր կարծիքով, դա եղել է այն մեծատոհմիկ պարսիկ անձնավորությունը, որին է պատկերում Արին-բերդից (Էրեբունի) հայտնաբերված աքեմենյան դարաշրջանի արծաթե պտյակի հեծյալի քանդակը (տե՛ս նկ. 1):⁴



Սրա գլխանոցը նույնն է պարսիկ արքայից-արքաների թիկնազորի քրմական դասը ներկայացնող զինվորի հետ (ի տարբերություն զինվորական դասը ներկայացնող զինվորի) (տե՛ս նկ. 2)⁵, ինչպես նաև մեծատոհմիկ պարսիկ քրմի գլխանոցի հետ (տե՛ս նկ. 3-ի աջակողմյանը)⁶: Որ պտյակի հեծյալի քանդակը ներկայացնում է արևապաշտ քուրմ-աստծու, ցույց են տալիս նրա գլխանոցին պատկերված արծիվը⁷ և նրա հեծած ձին⁸: Դրանք խորհրդանիշներն էին Արևի աստծու՝ քուրմ աստծու⁹: Մենք կարծում ենք նաև, որ սա Երվանդ Վերջինի քուրմ նախնին է՝ մ.թ.ա. 5-4-րդ

դդ. սահմանագլխին Քսենոփոնի «Անաբազիս»-ում հիշատակված «Արևմտյան Արմենիա»-ի հյուպարքոս Տիրիբազը¹⁰:

² Խորենացի -1981, գիրք Բ, գլ. 1է:

³ Տիրացյան Գ. -1958, թիվ 6, էջ 66-68:

⁴ ՀԺՊ -1971, էջ 461-ի նկարը: Քսենոփոն -1970 էջ 176-177-ի ներդիր նկարը:

⁵ Дандамаев М. -1985. с. 215, рис. 12.

⁶ Քսենոփոն -1970, էջ 48-49-ի ներդիր նկարը:

⁷ Հմայակյան Ս. -1990, էջ 45:

⁸ Քսենոփոն -1970, էջ 98, 262, ծան. 26: Հմայակյան Ս. -1990, էջ 4: Իսրայելյան Ս. -1971, էջ 73:

⁹ Гамкрелидзе Т., Иванов В. -1984, т. 2, с.с. 793-794.

¹⁰ Քսենոփոն -1970, էջ 93:.



Նկ. 2



Նկ. 3

Մինչև Տիրիբազի անձին ու գործունեությանն անդրադառնալը խոսենք այնպիսի երևույթի մասին, որը կարելի է որակել որպես քրմապետի «արքայական կարգավիճակ»: Արտաշեսյան դարաշրջանի Հայաստանում Տոսպ-Վանը լայն ինքնավարություն ուներ, որի վկան նրա կառավարչի կրած «արքա» տիտղոսն էր: Դրանցից մեկն իր թողարկած դրամի մակագրության մեջ իրեն կոչում է «Տոսպի Միհրդատ արքա»:¹¹ Քանի որ Վանի (և նրա Տոսպ գավառի) իշխող Միհրդատի նման սեփական դրամ հատելու իրավունք ուներ նաև Տիրիբազը՝ պահպանվել են նրա անվամբ թողարկված մի շարք արծաթե դրամներ¹², ուրեմն նա ևս եղել է «արքայական կարգավիճակ» ունեցած քուրմ արքա, ավելի ճիշտ՝ քրմապետ:

Հին Հայաստանում քրմապետը պետության երկրորդ դեմքն էր համարվում, իր հզորությամբ (ուներ սեփական զինված ուժեր, ենթակա քրմություն) և հարստությամբ (անձնական ու քրմական տիրույթներ) քիչ էր զիջում թագավորին:¹³ Երբ դրանց հավելվում էր նաև երկրի հոգևոր կյանքում նրա ունեցած կարևորագույն դերը, քրմապետը դառնում էր թագավորին հավասար անձնավորություն: Արմավիրը նստավայր ունեցած Երվազ քրմապետի (գահանունը՝ Միթրաս)¹⁴ Երվանդ Վերջինի (գահանունը՝ Էբրոնտես)¹⁵ եղբոր համար Հ. Մանանդյանը գրում է, որ այս «քուրմը գտնվում էր թագավորին համարյա հավասար աստիճանում (նա իրեն անվանում է βασιλεύς), ցույց է տալիս Արմավիրի թիվ 4 հունարեն արձանագրությունը, որը քրմապետ Միթրասի նամակն է Էբրոնտես թագավորին»¹⁶: Հունարեն βασιλεύς նշանակում է «արքա, թագավոր»:

¹¹ Խուրշուդյան Է. -1998, XVII, էջեր 167-174:

¹² Մուշեղյան Խ. -1983, էջեր 18-21:

¹³ Կրկյաշարյան Ս. -2005, էջ 133:

¹⁴ Մանանդյան Հ. -1946, էջեր 19, 29:

¹⁵ Պետրոսյան Ս. -2006, էջ 334:

¹⁶ Մանանդյան Հ. -1946, էջ 29:

Ճիշտ է, Քսենոփոնը Տիրիբազին ոչ թե որպես քրմապետ է հիշատակում, այլ որպես հյուպարքոս: *Հյուպարքոս* բառը հունարեն է, նշանակում է «օգնական, կառավարիչ, փոխարքա»¹⁷, որ Հայաստանում պիտի համապատասխաներ երկրի երկրորդ դեմքը համարված պաշտոնյայի կարգավիճակին: Այդպիսին, ինչպես Հայաստանում, այնպես էլ հարևան երկրներում¹⁸, սովորաբար, քրմապետն էր լինում: Բնականաբար, Տիրիբազի գործունեությանը ոչ թե կրոնական, այլ պաշտոնական հարցերով առնչված լինելով՝ Քսենոփոնը չէր կարող իմանալ, որ Տիրիբազի անունն արդեն խոսում է նրա քրմապետ լինելու մասին, որովհետև նրա առաջին բաղադրիչը Տիր քուրմ աստծու անունն է՝ ընտրված գահանուն: Այս տեսանկյունից ուշագրավ են Տիր աստծուն և նրա մեհյանին Ագաթանգեղոսի երկում տրված բնութագրումները՝ առկա այդ մեհյանի, իբրև թե Տրդատ 3-րդի կողմից ավերելու նկարագրության հետևյալ հատվածում. «Ապա ինքն իսկ թագաւորն խաղայր գնայր ամենայն զօրօքն հանդերձ ի Վաղարշապատ քաղաքէ երթալ յԱրտաշատ քաղաք... Նախ դիպեալ ի ճանապարհի *երազացոյց երազահան պաշտաման Տրի դից՝ դպրի գիտութեան քրմաց, անուանեալ Գիւան գրչի՝ Որմզդի, ուսման ճարտարութեան մեհեան*. Նախ ի նա ձեռն արկեալ՝ քակեալ այրեալ աւերեալ քանդեցին»:¹⁹

Ըստ Քսենոփոնի՝ Հայաստան մտած հույն վարձկանների ավելի քան 10.000-անոց բանակը մ.թ.ա. 401-400 թթ. ձմռանը հասել էր «մի վայր, որը կոչվում էր Արևմտյան Արմենիա: Նրա հյուպարքոսն էր Տիրիբազոսը, որը լինելով արքայի (իմա՝ Արտաքսերքսես 2-րդի – Լ.Պ.) բարեկամը, երբ ինքն էր ներկա գտնվում, ուրիշ ոչ ոք արքային ձի չէր նստեցնում»:²⁰ Սա վկայություն է Տիրիբազոսի՝ մեծատոհմիկ պարսիկ լինելու մասին: Տիրիբազի ազգությունը և բարձր ծագումը երևում է նաև վարձկաններին գերի ընկած պարսիկ զինվորի հաղորդումները վերարտադրող դրվագում: Սա «կրում էր պարսկական աղեղ, կապարճ և երկսայրի սակր, ինչպես ունեն ամազոնուհիները: Երբ սրան հարցրին, թե որտեղացի է, պատասխանեց, թե պարսիկ է ու գալիս է Տիրիբազոսի բանակից՝ պաշար վերցնելու համար: Շելլենները հարցրին նաև, թե ինչքա՞ն է զորքը և ի՞նչ նպատակով է հավաքված: Նա ասաց, որ Տիրիբազոսն է, որն ունի և՛ իր զորքը, և՛ վարձկան խալյուրներ ու տառիներ»:²¹

«Արևմտյան Արմենիա»-ի գավառը, որտեղ որ Տիրիբազը հանդիպել է հույներին, Տարոնն²² էր՝ հայտնի իր քրմապատկան (ավելի ուշ՝ կաթողիկոսական) հարուստ կավվածքներով:²³ Դրանք ավերածություններից փրկելու մտադրությամբ նա դիմել էր բանակցությունների: Ըստ Քսենոփոնի՝ հույն զորավարներին «նա ասաց, թե ցանկանում է պայմանավորվել, որպեսզի ոչ ինքը վնասի հելլեններին, ոչ էլ նրանք այրեն տները, իսկ

¹⁷ ДРС -1958, 2, с. 667.

¹⁸ Տե՛ս Կրկյաշարյան Ս. -2005, էջեր 129-151:

¹⁹ Ագաթանգեղոս -1983, ՃԸ. 777: Տիրի՝ քուրմ աստված լինելու վերաբերյալ տե՛ս նաև Պետրոսյան Ս., Պետրոսյան Լ. -2000, էջեր 82-83:

²⁰ Քսենոփոն -1970, էջ 93:

²¹ Նույն տեղում, էջ 94:

²² Հմմտ. Քսենոփոն -1970, էջ 93 և էջ 260, ծան. 17:

²³ Պետրոսյան Ս. -2020, էջեր 75, 79-80, Պետրոսյան Ս. -2006, էջեր 220-222:

պարեն կարող են վերցնել, ինչքան անհրաժեշտ է: Ձորավարները համաձայնվեցին այդ բոլորին և այդպիսի պայման կնքեցին»:²⁴ Տիրիբագն իրավունք ուներ այդպիսի քայլի դիմելու, որովհետև քրմապետ լինելով, նաև Արինի աստծու քուրմ էր: Հայտնի է, որ Առաջավոր Ասիայի երկրներում Արնի անձնավորում աստվածները՝ ՄՄՄ, Շամաշ, Շիվինի, Միթրա/Միիր և նրանց երկրային մարմնավորում քրմերը համարվում էին իրավական ոլորտի բոլոր գործառույթների տնօրինողները: Նրանք էին երդման և տարատեսակ պայմանավորվածությունների, պայմանագրերի նախաձեռնողները, դրանց վկաները և պահպանման երաշխավորները:

Վերևում խոսք եղավ Արին բերդից հայտնաբերված արծաթե պոյակի մասին, որին քանդակված հեծյալ անձը, Արնի աստծու բարձրաստիճան քուրմ լինելով, կարող էր պատկերել հայոց քրմապետին: Այս տեսանկյունից ուշագրավ է Տիրիբագի՝ արծաթի նկատմամբ ունեցած և Քսենոփոնի աչքից չվրիպած հակումը: Երբ հույն վարձկանները Տիրիբագին հանկարծակիի բերելով հարձակվեցին նրա կայանի վրա, «բարբարոսները աղմուկը լսելով, չդիմացան ու փախան, բայց բարբարոսներից ոմանք սպանվեցին, և ձեռք բերվեց մոտ քսան ձի, միաժամանակ գրավվեց Տիրիբագոսի վրանը և նրա մեջ *արծաթե ռոքերով մահիճներ և ըմպանակներ*, ինչպես նաև մարդիկ, որոնք ասացին, թե հացարարներ են ու մատովակներ»:²⁵

Տիրիբագը Աքեմենյան տոհմից չէր, բայց որպես Հյուդարնեսի սերունդ արտոնյալ էր, որովհետև նրա նախնին սյուս հինգ պարսիկ մեծամեծների հետ Դարեհ 1-ինի հավատարիմ զինակիցներից էր՝ Գաուսատայի սպանության մասնակիցը և Դարեհի դեմ բարձրացրած ապստամբությունները ճնշողներից մեկը: Տիրիբագն էր լինելու Հյուդարնեսին Երվանդ Վերջինի հետ կապող ազգակցական օղակը: Տիրիբագը Օրոնտաս սատրապի հետ միասին մոտ հինգ տարի (մ.թ.ա. 383թ. սկսած) պատերազմ էր մղում Աքեմենյաններին չինազանդված Կիպրոսի Էվագորաս արքայի դեմ²⁶: Օրոնտեսի նոր պաշտոնավարումները Փոքր Ասիայի արևմուտքում, ըստ երևույթին, պատճառ էին դարձել Հայաստանում Տիրիբագի իրավունքների ընդլայնմանը: Դրա մասին են վկայում կիլիկյան Իսոսս, Մալլոս և Տարսոն քաղաքներում նրա թողարկած սատրապական արծաթե դրամները:²⁷

2. Կարծիքներ Երվանդունի արքայատոհմի ծագման մասին

Հայտնի է, որ Արտաշես 1-ինը իր սահմանաքարերի արձանագրություններում իրեն իրոնդոն (Երվանդակյան)²⁸, այսինքն՝ *Երվանդյան, Երվանդունի* է կոչում: Հայագիտության մեջ ճանաչում գտած կարծիքի համաձայն՝ նա իր գահակալմանը օրինական տեսք տալու համար է դա արել, որովհետև իբրև թե հոր կողմից (հայրական գծով) Երվանդունի չէր, այլ մոր կողմից: Այս տեսակետը պաշտպանած Գ. Մարգարյանը գրում է. «Արտաշեսը, ճիշտ է, Երվանդյաններից է սերվում, ինչպես ինքն է պնդում, բայց սեր-

²⁴ Քսենոփոն -1970, էջ 93:

²⁵ Նույն տեղում, էջ 94:

²⁶ Дандамаев М. -1985, էջեր 238-239.

²⁷ Մուշեղյան Խ. -1983, էջեր 18-21:

²⁸ Периханян А. -1965, 4, էջեր 108, 128:

վում էր նրանցից ոչ թե ուղիղ գծով, այլ կողմնակի՝ մոր միջնորդությամբ»:²⁹ Ուղիղ գծով Երվանդունի նա, հակառակ Մովսես Խորենացու, համարում էր Երվանդ Վերջինին՝ որպես օրինական իշխող արքայատոհմի վերջին ներկայացուցիչ:³⁰ Ստրաբոնը որևէ խոսք չի ասում Օրոնտեսի օրինական կամ ոչ օրինական իշխող լինելու մասին, իսկ «վերջին իշխողը» վերաբերում է ոչ թե նրա՝ Երվանդունի արքայատոհմի վերջին ներկայացուցիչը լինելուն, այլ *վերջին թագավորը* լինելուն, որովհետև Ստրաբոնն անմիջապես շարունակում է. «Դրանից հետո Արտաշես և Զարեհ՝ հռովմայեցուց հակառակորդ Անտիոքոս Մեծի զորավարները, երկուսի բաժանեցին երկիրը. առաջ իշխում էին թագավորի (իսկ՝ Անտիոքոսի – Լ.Պ.) հրամանի տակ...»³¹:

«Հայ ժողովրդի պատմության» ակադեմիական առաջին հրատարակության 1-ին հատորում կարդում ենք. «Ստրաբոնն իր հերթին Երվանդունիներին սերված էր համարում Դարեհ Ա-ի զինակիցներից մեկից՝ Հիդարնեսից»:³² Բայց Ստրաբոնի խոսքը ոչ թե Երվանդունի արքայատոհմի, այլ Երվանդ Վերջին թագավորի մասին է, որին մեր Պատմահայրը մոր կողմից է նախկին արքայատոհմից սերած համարում:³³ Ըստ նրա՝ Երվանդ Վերջինի գահակալումը սպօրինի է եղել, մանավանդ որ Բագրատունի թագադիր չի ունեցել³⁴: Հակառակ դեպքում ինչո՞ւ պետք է Արտաշես 1-ինը վերցնել իր կողմից սպօրինի համարված և իր զինվորների սպանած Երվանդ Վերջինի տոհմանունը: Ժամանակին նույնիսկ նրա *Երուանդ* անունը կրելու իրավունքն է կասկածի տակ դրվել: Խորենացու հավաստմամբ Երվանդ և Տիգրան անուններ կրելը հատուկ էր Հայկազանց տոհմի ներկայացուցիչներին, իսկ «զվերջին Երուանդ և զՏիգրան ի սոցանէ ըստ յուսոյ կոչեցեալ»³⁵ էին:

Երվանդ Վերջինի՝ Հյուդարնեսի շառավիղը լինելու մասին Ստրաբոնի հաղորդումը ժ. Էլչիբեկյանը համադրում է մի կողմից Պլուտարքոսի բերած, իսկ մյուս կողմից Կոմմագենեի Նեմրոթ լեռան սալաքարերից մեկին՝ Արտաքսերքսես 2-րդին վերաբերող հաղորդումների հետ: Դրանցից առաջինում Արտաքսերքսես 2-րդի պալատական բժիշկ Կոտեսիասի հետևությամբ Պլուտարքոսը հաղորդում է, որ արքայազն Արշակը ամուսնացել էր Հյուդարնեսի դուստր Ստատեիրայի հետ և հետագայում վերանվանվել Արտաքսերքսես³⁶, իսկ երկրորդում ուղղակի ասվում է. «Արուանդեսին՝ որդուն Արտասուրայի, որ ամուսնացած էր թագուհի Հոդոգունեի հետ՝ դստեր արքայից-արքա Մեծն Արտաքսերքսես Մենմոնի»:³⁷ Այս համադրումներից ելնելով՝ ժ. Էլչիբեկյանը եզրակացնում է. «Այսպիսով, Ռոդոգունեի միջնորդությամբ, որը Հյուդարնեսի թոռն էր և Արտաքսերքսեսի աղջիկը, Օրոնտեսը ազգական է դառնում միաժամանակ և՛ Հյուդարնյաննե-

²⁹ Սարգսյան Գ. -1966, էջ 205: Տե՛ս նաև Կրկյաշարյան Ս. -2005, էջեր 57-58: ՀԺՊ -1971, հ. I, էջ 529:

³⁰ Սարգսյան Գ. -1966, էջ 204:

³¹ Ստրաբոն, 1940, էջ 65:

³² Տիրացյան Գ. -1971, I, էջ 504):

³³ Խորենացի -1981, Բ, լե:

³⁴ Նույնը:

³⁵ Խորենացի -1981, Բ, լե, Ա, իր:

³⁶ Плыраpx - <http://ancientrome.ru/antlittr/t.htm?a=1439004500>

³⁷ Սարգսյան Գ. -1966, էջ 30:

րին, և՛ Աքեմենյաններին: Ուրեմն, Ստրաբոնի վկայությունն ու Կոմագենեի Նեմրոթ լեռան արձանագրության վկայությունը լրացնում են միմյանց և ոչ թե հակասում»:՝³⁸ Այն՝ բայց սա Երվանդունիների տոհմաբանություն կլիներ, եթե նրանք իրենց տոհմական ժառանգության մեջ գերապատվությունը տալին ոչ թե արական, այլ իգական արյունակցությանը. իսկ դա այդպես չէր:

Երվանդունիների ծագման վերաբերյալ առաջացած խառնաշփոթը փորձել է հստակեցնել Ս.Կրկյաշարյանը: Իր տեսակետն այս հարցում նա ամփոփում է՝ գրելով, որ Երվանդունի/Հայկազանց «հարստությունն ընդհատվում է Աքեմենյանների տիրապետության ու Երվանդունիների թագավորության (շուրջ 320-190թթ.) ժամանակ: Արտաշես Ա-ը, մեր կարծիքով, տապալելով Երվանդ Վերջինին, վերականգնում է VI դարի հայկական հարստությունը»:՝³⁹ Այստեղ ճշմարտությունը երկրորդ նախադասության մեջ է. Արտաշես I-ինը, ապօրինի գահակալ համարված Երվանդ Վերջինին տապալելով, վերականգնել է *մ.թ.ա. 6-րդ դարից սկսած* հիշատակվող Երվանդունի արքայատոհմի օրինական իշխանությունը: Ուրեմն օտար (հայրական գծով) ծագում ունեցել է ոչ թե Երվանդունի արքայատոհմը, այլ Երվանդ Վերջին թագավորը՝ հանձին իր նախնի՝ Հայոց քրմապետ Հյուդարնյան Տիրիբազի:

Եզրահանգում.

- ա. Ստրաբոնի հաղորդումը Հայոց Երվանդ Վերջին թագավորի մասին՝ որպես «Հյուդարնեսի շառավղի», վերաբերում է նրա անձին, ո՛չ թե Երվանդունի արքայատոհմին:
- բ. Այդ անձանց միջև եղած 200 տարվա անջրպետում Տիրիբազն է եղել հայրական գծով դրանց կապակցող հանգույցը:
- գ. Տիրիբազը Քսենոփոնի «Անաբազիս»-ում հիշատակվում է որպես «Արևմտյան Արմենիա»-ի հյուպարքոս, բայց եղել է նաև Հայոց քրմապետ:
- դ. Արին բերդից հայտնաբերված արծաթե պոսյակի հեծյալի քանդակը Տիրիբազին է պատկերում:
- ե. Մովսես Խորենացու վկայությամբ, Երվանդ Վերջինը մայրական գծով էր նախորդ արքայատոհմից (Արշակունի/Երվանդունի), իսկ Արտաշես I-ինը՝ հայրական գծով: Հակառակ պնդումները հիմնավոր չեն:

К ГЕНЕОЛОГИИ ЕРВАНДА ПОСЛЕДНЕГО

Петросян Л. С.

Ключевые слова: *Ервандиды, Оронтес, царь, Верховный жрец, бог Тир, Тирибаз, Гидарн, Ахемениды, армянский, персидский.*

Сообщение Страбона об армянском царе Ерванде Последнем, как «из рода Гидарна» касается только царя Ерванда, а не династии Ервандидов. В промежутке 200 лет между Гидарном и Ервандом Последним, соединяющим родословным звеном по отцовской линии

³⁸ Էլշիրեկյան Ժ. -1971, 2, էջ 112:

³⁹ Կրկյաշարյան Ս. -2005, էջ 59:

являлся Тирибаз. Тирибаз упоминается в «Анабасисе» Ксенофонта как гипарх (областена-чальник, наместник) «Западной Армении» и близкий родственник Артаксеркса II: "когда он присутствовал, никто другой не сажал царя на коня". Это свидетельство того, что Тирибаз был персом высокого происхождения.

По нашему мнению он был также Верховным жрецом Армении. Скульптура всадника ахеменидского серебряного ритона из Арин-берда (Эребуни) изображает его. Головной убор всадника такой же, как и у воина из жреческого сословия телохранителей персидских царей - в отличие от воина, представляющего военное сословие. Этот головной убор одинаков также с головным убором персидского жреца. Ксенофонт, имея отношение к деятельности Тирибаза не в религиозных, а в официальных делах, не мог знать, что имя Тирибаза уже говорит о том, что он был жрецом, ибо *Tir* - первый компонент имени *Тирибаз* есть имя Бога-жреца Тир. Арташес I сверг Ерванда Последнего, считавшегося незаконным правителем Армении и восстановил законную власть Ервандидской (из Гайказунов) династии. Она упоминается в источниках с VI в. до нашей эры. Следовательно, из рода Гидарна (т. е. чужого, иностранного, персидского происхождения) была не династия Ервандидов, а царь Ерванд Последний в лице своего предка, Верховного жреца Армении Тирибаза.

Как свидетельствует Мовсес Хоренаци, Ерванд Последний был из предыдущей династии (у него Аршакиды//Ервандиды) не по отцовской, а по материнской линии, а Арташес I – наоборот, по отцовской линии. Утверждения об обратном необоснованы.

ON THE GENEALOGY OF YERVAND THE LAST

Petrosyan L. S.

Key words: *Yervandids, Orontes, King, High priest, God Tir, Tiribaz, Hydarnes, Achaemenids, Armenian, Persian.*

Strabo's message about the Armenian king Yervand the Last, as from the "genus of Hydarnes" refers only to King Yervand, and not to the Yervandid dynasty. In the interval of 200 years between Hydarnes and Yervand, Tiribaz was the last ancestry link on the paternal side. Tiribaz is mentioned in Xenophon's "Anabasis" as a hiparchos (regional chief, viceroy) of "Western Armenia" and close relative of Artaxerxes II: "when he was present, no one else put the king on a horse." This witnesses the fact that Tiribaz was a Persian of high birth.

To our firm belief, he was also the High Priest of Armenia. The sculpture of rider on Achaemenid silver rhyton from Arin-berd (Erebuni) depicts him. The headdress of the rider is the same as that of a warrior from the priestly class of the bodyguards of the Persian kings, in contrast to the warrior representing the military class.

Xenophon, having relationship with Tiribaz not in religious, but in official affairs, could not know that the name Tiribaz conveyed the meaning of priest, because the first component of the name *Tiribaz* is the name of the God-priest *Tir*. Artashes I overthrew Yervand the Last (who was considered an illegal ruler) and restored the legal rule of the Yervandid (from the Haykazuns) dynasty, which is mentioned in the sources from the 6-th century BC. Consequently, from the Hydarnes genus (foreign, Persian origin) was not the Yervandid dynasty, but King Yervand the Last represented by his ancestor, the High Priest of Armenia Tiribaz.

According to Movses Khorenatsi, Yervand the Last was from the previous dynasty (Arshakids//Yervandids) not on the paternal, but on the maternal side and Artashes I, on the contrary, on the paternal side. Claims to the contrary are unfounded.

Գ ր ա կ ա ն ո թ յ ո ն

1. Ագաթանգեղոս -1983, Ագաթանգեղայ պատմություն Հայոց, Քննական բնագիրը Գ. Տեր-Մկրտչյանի և Ս. Կանայանցի, Երևան, 1983:
2. Էջիբենկյան Ժ. -1971, Երվանդունիների ծագման հարցի շուրջը // «Պատմա-բանասիրական հանդես», 1971:
3. Իսրայելյան Մ. -1971, Էրեբունի բերդ-քաղաքի պատմություն (ըստ արձանագրական ու հնագիտական տվյալների), Երևան:
4. Խուրշուդյան Է. -1998, Տոսպի արքա Միհրդատի դրամը, «Մերձավոր և Միջին Արևելքի երկրներ և ժողովուրդներ», XVII, Երևան:
5. Կրկյաշարյան Ս.-2005, Հին Հայաստանի պետական կառուցվածքը (մ.թ.ա.VI- մ.թ.IVդդ.), Երևան:
6. ՀԺՊ -1971, «Հայ ժողովրդի պատմություն», ՀԽՍՀ ԳԱ հրատ., հ. I, Երևան:
7. Հմայակյան Ս. -1990, Վանի թագավորության պետական կրոնը, Երևան:
8. Մանանդյան Հ.-1946, Արմավիրի հունարեն արձանագրությունները նոր լուսաբանությամբ, Երևան:
9. Խորենացի -1981, Մովսիսի Խորենացու պատմություն Հայոց, Քննական բնագիրը Մ. Արեղյանի և Ս. Հարությունյանի, Երևան:
10. Մուշեղյան Խ.-1983, Դրամական շրջանառությունը Հայաստանում մ.թ.ա. Vդ.-մ.թ. XIVդ., Երևան:
11. Պետրոսյան Ս.-2006, Դասերը և եռադասության դրսևորումները հին Հայաստանում, ՀՀ ԳԱԱ ՊԻ, «Մերոպ Աշնեան մատենաշար», 21, Երևան:
12. Պետրոսյան Ս. -2020, Հնագույն Տարոնի քրմության մասին // ՀՀ ԳԱԱ ԳՀՀ կենտրոնի «Գիտական աշխատություններ», հ. 23, պլակ 2, Գյումրի:
13. Պետրոսյան Ս., Պետրոսյան Լ.-2000, Հովհաննես-Սմբատի թագավորության երեք բաղադրամասերի շուրջ // ՀՀ ԳԱԱ ԳՀՀ կենտրոնի «Գիտական աշխատություններ», հ. III, Գյումրի:
14. Սարգսյան Գ.-1966, Հելլենիստական դարաշրջանի Հայաստանը և Մովսես Խորենացին, Երևան:
15. Սարաբոն -1940, Քաղեց և թարգմանեց Հ. Անադյան, Երևան:
16. Տիրացյան Գ.-1971, Հայաստանը վաղ հելլենիզմի ժամանակաշրջանում // «Հայ ժողովրդի պատմություն», հ. I, Երևան:
17. Տիրացյան Գ. -1958, Երվանդունիները Հայաստանում // «Տեղեկագիր Հայաստանի ԳԱ (Հասարակական գիտություններ)», թիվ 6, Երևան:
18. Քսենոփոն -1970, Անարախի, թարգմ. Ս. Կրկյաշարյանի, Երևան:
19. Гамкрелидзе Т., Иванов В.-1984, Индоевропейский язык и индоевропейцы, т. 2, Тб.5.Ереван.
20. Дандамаев М.-1985, Политическая история Ахеменидской державы. Москва.
21. ДРС -1958, «Древнегреческо-русский словарь», Составил И. Х. Дворецкий, т. 2, Москва.
22. Периханян А.-1965, Арамейская надпись из Зангезура (некоторые вопросы среднеиранской диалектологии) // «Պատմա-բանասիրական հանդես», թիվ 4:
23. Плутарх, Сравнительные жизнеописания, Артаксеркс, <http://ancientrome.ru/antlittr/t.htm?a=1439004500>
24. Страбон, География, <http://ancientrome.ru/antlittr/t.htm?a=1260110000>

Ընդունվել է՝ 01. 09. 2022
Գրախոսվել է՝ 28. 09. 2022
Հանձնվել է տպ.՝ 28. 11. 2022

Տեղեկություններ հեղինակի մասին

Լուսինե ՊԵՏՐՈՍՅԱՆ՝ պատմական գիտությունների թեկնածու, ՀՀ ԳԱԱ Գիրակի հայագիտական հետազոտությունների կենտրոնի գիտաշխատող, Գիրակի Մ. Նալբանդյանի անվան պետական համալսարանի ասիստենտ, էլ. հասցե՝ vahe1996@mail.ru

ՀՏԴ՝ 93.94

DOI: 10.52971/18294316-2022.25.2-164

ԱԼԵՔՍԱՆԴՐԱՊՈԼ-ԿԱՐՄ ԵՐԿԱԹՎԾԻ ՇԻՆԱՐԱՐՈՒԹՅԱՆ
ԲԱՆՎՈՐՆԵՐԻ ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ՎԻՃԱԿԸ¹

Արմեն Հայրապետյան

ՀՀ ԳԱԱ Շիրակի հայագիտական հետազոտությունների կենտրոն
«Շիրակի պետական համալսարան» հիմնադրամ

Բանալի բառեր՝ Հայկական երկաթուղիներ, Թիֆլիս-Ալեքսանդրապոլ-Կարս, շինարարություն, բանվոր, կապալառու, կամայականություններ, սոցիալական վիճակ:

Շարունակելով «Հայկական երկաթուղիների» շինարարության պատմության ուսումնասիրությունը՝ սույն հոդվածի շրջանակներում գիտական գրականության, արխիվային վավերագրերի և պարբերական մամուլի հարդորումների համադրմամբ ընթերցողի դատին ենք ներկայացնում արևելահայ աշխատավորության ամենամեծ խմբի՝ երկաթուղային բանվորների սոցիալական վիճակի՝ մեր կողմից կատարված քննությունը: Հոդվածում փորձել ենք վեր հանել այն պատճառները (իրավագուրկ վիճակ, ցածր վարձատրություն, արտադրական տրավմատիզմ, սոցիալական երաշխիքների և անվտանգության կանոնների բացակայություն և այլն), որոնք նպաստեցին XIX դ. վերջին և XX դ. սկզբին երկրամասում սոցիալական շարժումների ակտիվացմանը:

Նախաբան. XIX դ. վերջին քառորդին կապիտալիստական հարաբերությունների զարգացումը էական փոփոխություններ մտցրեց արևելահայության սոցիալական կա-

¹ Հետազոտությունն իրականացվել է ՀՀ ԳԱԱ ԳՀՀ կենտրոնում «Շիրակի հնագիտական և պատմագրական ուսումնասիրություններ-3» բազային ֆինանսավորմամբ ծրագրային թեմայի շրջանակներում:

ռուցվածքում: Գյուղացիության քայքայումն ու շերտավորումը նպաստեցին արտադրող նոր ուժի՝ բանվոր դասակարգի ձևավորմանը: Այս գործում մեծ դերակատարություն ունեցավ նաև դարի 90-ական թվականներից երկրամասում մեծ թափով սկսված երկաթուղու շինարարությունը: Այն աչքի ընկավ ոչ միայն իր ծավալներով, աննախադեպ նյութական միջոցների ներդրմամբ ու երկրի տնտեսական զարգացման համար ունեցած կարևորագույն նշանակությամբ, այլև այստեղ կենտրոնացած բանվորական ուժի մասշտաբներով: Այսպես կոչված, «դարի շինարարությունը» ժամանակակիցների հիշողության մեջ մնաց կապալառուների աննախադեպ անօրինականություններով, աշխատավորների իրավագրվությամբ ու սոցիալական խիստ շերտավորմամբ և որպես այդ արատավոր երևույթներին հակակշիռ՝ բանվորական շարժումներով ու գործադուլներով:

Շինարարության մեջ ընդգրկված բանվորներն ըստ խմբերի, թվի և էթնիկ կազմի

Ի տարբերություն ճանապարհաշինական աշխատանքների, որ հնուց ի վեր կատարվել են տեղական գյուղացիության կողմից՝ պարհակի շրջանակներում, երկաթուղու շինարարությունն իրականացվեց պայմանագրային եղանակով: Մոտ 300 կմ երկաթուղամբ շինարարությունը վերահսկում էր Թիֆլիսում տեղակայված վարչությունը: Կառուցվելիք ճանապարհը բաժանվել էր հինգ տեղամասերի, որոնցից յուրաքանչյուրն ուներ պետ, ինժեներ-աշխույժներ, աշխատանքի հրահանգիչներ, ճանապարհը սպասարկող վարպետներ, գծի նորոգման բանվորներ և պահակներ: Որպես պետական ծառայողներ՝ սրանք, ըստ զբաղեցրած պաշտոնի, վարչությունից ստանում էին ամսական 18-ից մինչև 225 ռուբլի աշխատավարձ²:

Բոլորովին այլ էր շինհրապարակում աշխատող բանվորի կարգավիճակը: Շինարարության ողջ ընթացքում հողային և ժայռային աշխատանքները, ռելսերի տեղադրումը, կայարանների և ենթակառուցվածքների կառուցումը, շինանյութի և աշխատուժի մատակարարումը կատարվում էին կապալառուների միջոցով: Կապալառուն տեղամասի պետի հետ կնքում էր պայմանագրեր, որով հստակեցվում էին կողմերի պարտականություններն ու պարտավորությունները: Առանձին կետով մատնանշվում էր նաև նրա պարտավորությունները վարձու բանվորի նկատմամբ: Մակայն, պայմանագրի այդ հատվածը գործնականում չէր կիրառվում, և բանվորը հայտնվում էր կապալառուից ուղղակի կախման մեջ: Վարչությունը չէր զբաղվում ո՛չ նրա վարձատրությամբ, ո՛չ էլ սոցիալական խնդիրներով: Այլ կերպ ասած՝ ազատված էր ավելորդ հոգսերից և «հարություն էր առնում» միայն այն ժամանակ, երբ շինհրապարակ էին ժամանում բարձրաստիճան պաշտոնյաներ, կամ հայտնաբերվում էին աղաղակող խախտումներ³:

Երկաթուղու շինարարության մասնակիցների աշխարհագրությունը տարբեր էր. գալիս էին Արևելյան Հայաստանի տարբեր շրջաններից, Թիֆլիսի և Ելիզավետպոլի նահանգներից, Ռուսաստանի կենտրոնական նահանգներից, Օսմանյան կայսրությունից և Եվրոպայից⁴:

² ՀԱԱ, Ֆոնդ 136, ցուցակ 4, գործ 3, թ. 97:

³ ՀԱԱ, Ֆոնդ 136, ցուցակ 3, գործ 11, թթ. 118:

⁴ ՀԱԱ, ֆոնդ 133, ցուցակ 1, գործ 5691, թ. 54:

Ամենամեծ խումբը տեղաբնակներն էին՝ հիմնականում հայեր, մասամբ նաև ռուսներ, թաթարներ և թուրքեր, որ հավաքագրվում էին երկաթուղուն հարևան գյուղերից⁵: Այս խմբի մեջ էին մտնում նաև Արևելյան Հայաստանի տարբեր շրջաններից եկածներն ու արևմտահայ գաղթականները, որոնք ծայրահեղ աղքատությունից դրդված՝ աշխատում էին իբրև սևագործ բանվորներ⁶:

Երկրորդ խումբը Ռուսաստանի ներքին նահանգներից ժամանածներն էին, հիմնականում՝ ռուսներ: Սրանք ունեին շինարարական աշխատանքի հարուստ փորձ, սակայն չդիմանալով կլիմայական ծանր պայմաններին ու կյանքի դժվարություններին՝ կարճ ժամանակ անց վերադարձան հայրենիք:

Վերջապես՝ երրորդ խումբը օտարերկրացիներ էին՝ իտալացիներ, ֆրանսիացիներ և օսմանահայատակներ (հույներ, թուրքեր, հայեր): Աղբյուրների հավաստմամբ, եվրոպացիներն արհեստավարժ որմնադիրներ ու քարտաշներ էին և բարձր վարձատրությամբ աշխատում էին Ջաջուռ գյուղից ոչ հեռու՝ թունելի շինարարության վրա⁷: Այստեղ էին կենտրոնացել նաև Տրապիզոնի նահանգից ժամանած հարյուրավոր հույները⁸: Ինչ վերաբերում է թուրքերին ու արևմտահայերին, ապա սրանք գտնվում էին հավասարապես անտանելի վիճակում: Կարիքն ու աղքատությունը ստիպում էին սրանց, ընտանիքները կերակրելու համար, նվազագույն վարձատրության դիմաց կատարել ցանկացած աշխատանք:

Ցավոք, պետական պաշտոնյաների հանցավոր անփութության պատճառով շինարարությանը մասնակցածների թվի ու ազգային կազմի վերաբերյալ այսօր որևէ ստույգ տվյալ նշելն անհնար է: Արխիվային վավերագրերի ու ժամանակի պարբերական մամուլի հաղորդումների մեր կողմից կատարված համադրումը թույլ է տալիս միայն ենթադրել, որ Թիֆլիս-Ալեքսանդրապոլ-Կարս երկաթուղու շինարարության վրա աշխատել է մինչև 10.000 մարդ⁹: Սակայն պարզել բանվորների թվաքանակն ըստ ազգությունների՝ ուղղակի անհնար է: Եվ այդ փաստը ժամանակին ընդունում էին նույնիսկ շինարարության կազմակերպիչները: Օրինակ, III տեղամասի պետն իր 1896 թ. փետրվարի 27-ի զեկույցում նշում է, թե չի կարող պարզել Փամբակի կիրճում աշխատող 300 բանվորների ինքնությունը, որովհետև նրանք անընդհատ շարժման մեջ են: «Իսկ թե ի՞նչ կլինի գարնանը, երբ նրանց (իմա՝ բանվորների-Ա.Հ.) թիվը կհասնի 5000-ի, - գրում է նա, - նույնիսկ դժվար է պատկերացնել»¹⁰: Նույն պատճառաբանությամբ IV տեղամասի պետը 1898թ. սեպտեմբերին հրաժարվել էր Շինարարության վարչությանը ամսական տեղեկություններ հաղորդել իր մոտ աշխատողների վերաբերյալ¹¹:

⁵ Միայն Ալեքսանդրապոլի գավառում երկաթուղին անցնում էր 22 գյուղերով՝ Յաղուբլի, Մեծ Դարաքիլիսա, Դշլաղ, Դարբազ, Արջուտ, Սարալ, Դուրսալի, Համամլի, Գյուլյուջա, Թափանլի, Նալբանդ, Բերանդ, Գյուղյուխուշ, Աղբուլաղ, Ջաջուռ, Աղբիլիսա, Սարիար, Դոնախարան, Ծահալի, Օրթաքիլիսա, Թոփառլի, Դահարլի (Տե՛ս ՀԱԱ, ֆոնդ 136, ցուցակ 4, գործ 16, թ. 41, 38, 220, 224, 256):

⁶ ՀԱԱ, ֆոնդ 102, ցուցակ 1, գործ 953, թթ. 40-41:

⁷ «Обзор Эриванской губернии за 1896 г.» -1897. с. 19.

⁸ Ծիրակեցի -1896, էջ 2:

⁹ «Обзор Эриванской губернии за 1896 г.» -1897. с. 19: Ծիրակեցի -1896, էջ 2:

¹⁰ ՀԱԱ, ֆոնդ 269, ցուցակ 2, գործ 5691, թ. 54:

¹¹ ՀԱԱ, ֆոնդ 271, ցուցակ 1, գործ 17, թթ. 749:

Այս խառնաշփոթը հիմնականում առաջանում էր բանվոր դարձած գյուղացու մեղքով: Բանն այն է, որ միննույն ընտանիքից աշխատանքի էին ընդունվում 2-3 հոգի, սակայն տարբեր օրերի նրանց փոխարեն շինհրապարակ էին ներկայանում ընտանիքի մյուս անդամները: Այսինքն՝ շինարարության վրա աշխատում էր նա, ով այդ օրն ազատ էր տնային հոգսերից, և հետո գյուղացին մի օր աշխատում էր մի կապալառուի մոտ, իսկ հաջորդ օրը կարող էր աշխատանքի անցնել մեկ ուրիշի մոտ:

Անհնար է ճշտել նաև շինարարությանը մասնակցած օսմանահպատակների թիվը: Փաստաթղթերի բացակայության պատճառով թուրքերի և արևմտահայերի մեծ մասը համապատասխան մարմինների մոտ չէր գրանցվում, իսկ թուրք կապալառուներն էլ թաքցնում էին իրենց համերկրացիներին: Շինհրապարակում օսմանահպատակների առկայությունը բացահայտվում էր միայն դժբախտ պատահարների՝ սողանքների, փլուզումների ու պայթյունների ժամանակ: Օրինակ՝ նման մի դեպքից հետո բացահայտվել է, որ միայն կապալառու Դե-Մոսիի մոտ աշխատել են որևէ տեղամասում չգրանցված 600 օսմանահպատակ քաղաքացիներ¹²:

Ակնհայտ է մեկ բան, անկախ ազգությունից ու դավանանքից՝ հազարավոր մարդիկ կարիքից ու աղքատությունից դողված աշխատեցին և ապրեցին հավասարապես դժվարին պայմաններում, ենթարկվեցին անխնա շահագործման, խաբվեցին ու կողոպտվեցին՝ գալիք սերունդների համար երկաթուղին դարձնելով իրականություն:

Աշխատավարձի վճարման կարգը

Բանվորների շահագործման եղանակները

Ինչպես արդեն նշեցինք, երկաթուղու շինարարությունն իրականացվեց պայմանագրային եղանակով: Շինարարության վարչությունը կապալառուի հետ կնքում էր պայմանագիր և աշխատանքը փոխանցում նրան: Սա իր կողմից 15-20%-ի իջեցմամբ պատվերը փոխանցում էր մեկ այլ կապալառուի: Այս գործարքը կրկնվում էր 2-3 անգամ, ինչի արդյունքում նույնքան անգամ կրճատվում էր բանվորի աշխատավարձը: Օգտվելով առիթից, որ տնտեսապես քայքայված գյուղացին իր ընտանիքը սովից փրկելու համար պատրաստ է ցանկացած զիջման՝ կապալառուն ստիպում էր նրան աշխատել նվազագույն վարձատրությամբ: Օրինակ՝ փափուկ հողում 1 խորանարդ սաժեն (2.134մ³) փորվածքի համար կապալառուն ստանում էր 2 ռ. 50 կ., իսկ բանվորին վճարում 1 ռ., քարքարոտ տեղամասում նույն աշխատանքի համար ստանում էր 8-13 ռ., իսկ բանվորին վճարվում 4-6 ռ.: Դե, իսկ օրավարձու բանվորն ընդհանրապես ստանում էր 50-70 կոպեկ¹³:

Եվ նույնիսկ այս պայմաններում կատարված աշխատանքի դիմաց ամիսներով աշխատավարձ չէր վճարվում: Հուսահատության հասած բանվորները հրաժարվում էին աշխատելուց. մի մասը, չսպասելով խոստացված գումարին, վերադառնում էր տուն, մյուսները փորձում էին իրենց վաստակած գումարը ստանալ ուժով: «Կարս» օրաթերթը, որ ուշիուշով հետևել է շինարարության ընթացքին, այս կապակցությամբ

¹² Վրաստանի կենտրոնական պետական պատմական արխիվ (ՎԿԴՊԱ), ֆոնդ 285, ցուցակ 1, գործ 480, թ. 101:

¹³ Ավետիսյան Վ. -1962, էջ 62:

գրում է. «Կապալառուների և բանվորների միջև աշխատավարձի վճարման հարցում ստեղծված աննորմալ հարաբերությունները մեռցնում են աշխատելու ցանկությունը նույնիսկ ամենակարիքավորների մեջ»¹⁴:

Բանվորի հաշվին հարստանալու մեկ այլ եղանակ էր «կամավոր նվիրատվություն» կոչվածը: Յուրաքանչյուր բանվոր պարտավոր էր իր ստացած աշխատավարձի մի մասը փոխանցել կապալառուին: Եթե որևէ մեկը հրաժարվում էր կաշառք տալուց, անմիջապես կորցնում էր աշխատանքը և հայտնվում «սև ցուցակում», որից հետո այլևս չէր կարող վարձվել գծի երկայնքով տեղակայված տեղամասերից որևէ մեկում:

Երբ կապալառուների ապօրինությունները հասնում էին աղաղակող չափերի, Շինարարության վարչությունը ստիպված էր լինում միջամտել՝ իրավիճակը շտկելու համար¹⁵: Մակայն գործադրված ջանքերը որպես կանոն արդյունք չէին տալիս, որովհետև վարչությունն ինքն էր կապալառուների հովանավորը, ուրեմն նաև ինքն էլ շահագրգռված էր անօրինությունները թաքցնելու գործում: Այսպես, 1899 թ. հունվարի 22-ին՝ Թիֆլիսի ժանդարմական ոստիկանության Ալեքսանդրապոլի բաժանմունքի ենթասպա Ալ. Ռուսինը Բորչալուի գավառի Շահալի գյուղի բնակիչներ Ե. Մանուկյանի և Մ. Բուլղաղարյանի բողոքների հիման վրա կազմում է արձանագրություն այն մասին, որ III տեղամասի II կարգի ճանապարհային վարպետ Վ. Նովիցկին ստիպում է բանվորներին հոգուտ իրեն կատարել «նվիրատվություններ»: 1899թ. հունվարի 11-ին վերջինս աշխատավարձ ստանալու էր ուղարկել տեղամասում չգրանցված 5 անձանց, որոնցից յուրաքանչյուրը նրան էր հանձնել 18ռ.: Այնուհետև Վ. Նովիցկին նույնը պահանջել էր նաև մյուս բանվորներից: Նրանք, ովքեր հրաժարվել էին կաշառք տալուց, հեռացվել էին աշխատանքից¹⁶:

Ալ. Ռուսինը քրեական գործին ընթացք տալու համար արձանագրությունը ներկայացնում է Շինարարության վարչություն: Վերջինս սակայն պահանջում է գործը կարճել, իսկ Վ. Նովիցկուն զբաղեցրած պաշտոնից հեռացնել:

Բանվորների հաշվին հարստացողների մյուս խումբը խանութպաններն ու պանդոկատերներն էին: Աշխատողներին մատչելի գնով որակյալ սնունդ մատակարարելը կապալառուների պարտականություններից մեկն էր: Այդ մասին առանձին դրույթներ կային Վարչության և վերջիններիս միջև կնքված պայմանագրերում: Մակայն գործնականում գծի երկայնքով էժան և որակյալ սնունդ գտնելն անհնար էր: Ըստ ժամանակակիցների՝ ապրանքներն այստեղ ավելի թանկ էին, քան Թիֆլիսում¹⁷: Գնաճը կանխելու նպատակով տեղամասերի պետերը երբեմն հարկադրված էին լինում առաջին անհրաժեշտության ապրանքների համար սահմանել առավելագույն գներ: Մակայն, կամայականություններին վերջ տալ չէր հաջողվում, որովհետև խանութների ու պանդոկների տերերը հենց կապալառուներն էին, որոնք օգտվելով առիթից, որ աշխատողներն ամիսներ շարունակ աշխատավարձ չէին ստանում, բարձր գներով տրամադրում էին

¹⁴ «Кавк» -1897. с. 2.

¹⁵ ՀԱԱ, ֆոնդ 271, ցուցակ 1, գործ 1, թ. 325:

¹⁶ ՀԱԱ, ֆոնդ 136, ցուցակ 3, գործ 31, թ. 5:

¹⁷ ՀԱԱ, ֆոնդ 136, ցուցակ 3, գործ 11, թ. 85:

առաջին անհրաժեշտության ցածրորակ ապրանքներ, իսկ աշխատավարձ բաժանելիս ստանում եռապատիկ շահույթ: Շատ դեպքերում բանվորն իր ողջ աշխատավարձը թողնում էր կապալառուի պանդոկում կամ խանութում¹⁸:

Խայտառակ վիճակում էր նաև սպասարկման ոլորտը: Ժանդարմական ոստիկանության Ալեքսանդրապոլի բաժանմունքի ենթասպա Լումակինը, 1896թ. ամռանը ստուգումներ անցկացնելով 3-րդ տեղամասում գործող սննդի կետերում, օգոստոսի 27-ին վարչությանը ներկայացրած զեկուցագրում իր տեսածը նկարագրել է հետևյալ կերպ. «Պանդոկներն ու ճաշարանները գործում են բացարձակ հակասանիտարական պայմաններում, դրանք թաղված են կեղտի ու գաշահոտության մեջ: Սակայն առավել անմխիթար է հացի փռերի վիճակը՝ այստեղ չեն պահպանվում հիգիենայի տարրական կանոնները, խմորի տաշտերն ամիսներով չեն մաքրվում և չեն լվացվում, ամենուրեք հանդիպում ես աղբի մեծ կույտերի, իսկ շենքերի պատերը ծածկված են կանաչ բորբոսի հաստ շերտով...»¹⁹:

Բանվորների սանիտարահիգիենիկ և կենցաղային պայմանները Բժշկական գործի կազմակերպումը

Երկաթուղու շինարարության ողջ ընթացքում բանվորն ապրեց ու արարեց կենցաղային անտանելի պայմաններում: Աշխատանքային ծանր օրվա ավարտին նա ստիպված էր վերադառնալ բնակության համար ոչ պիտանի բարաք, որը շատ դեպքերում գետնափոր մի խուց էր՝ առանց պատուհանների, իսկ երբեմն նաև՝ առանց դռան²⁰: Այնպես որ ամռան ամիսներին նախընտրելի էր գիշերել բակում՝ բաց երկնքի տակ, քան թե մարդաշատ, խոնավ, վատ օդափոխվող և բնակության համար բոլորովին անպիտան այդ խցերում²¹: Դրությունն օրհասական էր դառնում աշնանը, երբ անձրևաջրերի պատճառով դրանք վերածվում էին մեծ ջրափոսերի: Առանց վառարանի ու թաց հագուստը չորացնելու հնարավորության, բանվորը ցրտահարվում էր և կարճ ժամանակ անց շարքից դուրս գալիս:

Նման մի բանավան կատարած շրջայցից հետո III տեղամասի բժիշկ Վեֆիլովն իր վերադասին ներկայացրած զեկուցագրում գրել է. «Այդ բարաքները ծայրաստիճան կեղտոտ են ու բնակության համար ոչ պիտանի: Անհրաժեշտ է անհապաղ միջոցներ ձեռնարկել դրանք մաքրելու և կահավորելու համար: Չհապաղելու դեպքում հնարավոր է դրանց մի մասը փրկել, իսկ բնակության համար ոչ պիտանիները անհրաժեշտ է ժամ առաջ վերացնել՝ ապագայում համաճարակային հիվանդություններից խուսափելու համար»²²:

1895-ի հոկտեմբերին Շինարարության վարչությունը փորձեց շտկել իրավիճակն ու շրջաբերականով տեղամասերի պետերից պահանջեց ստեղծել սանիտարական հանձնաժողովներ: Սանիտարահիգիենիկ պահանջների կատարման վերահսկո-

¹⁸ ՀԱԱ, ֆոնդ 270, ցուցակ 1, գործ 2, թ. 35, 53:

¹⁹ ՀԱԱ, ֆոնդ 136, ցուցակ 3, գործ 4, թ. 322:

²⁰ Ավետիսյան Վ. -1962, էջ 71:

²¹ Նույնը:

²² ՀԱԱ, ֆոնդ 136, ցուցակ 3, գործ 43, թ. 255:

դուրսը դրվեց կապալառուների վրա²³: 24 հոդվածից բաղկացած կանոնակարգն աշխատավորների բարեկեցության մասին մտահոգության յուրահատուկ նմուշ էր: Օրինակ, XIII հոդվածը կապալառուից պահանջում էր «...յուրաքանչյուր նույն ազգության 50 բանվորի համար կազմակերպել ճաշարան՝ տաք, սննդարար ու մատչելի գնով սնունդ մատակարարելու համար»²⁴: Այլ հարց է, որ բանվորը դրանից հետո էլ շարունակեց ապրել միանգամայն անընդունելի պայմաններում՝ «մերկ, սոված և կյանքից դառնացած»:

Խայտառակ իրավիճակում էր նաև բուժսպասարկման ոլորտը: Թիֆլիս-Ալեքսանդրապոլ-Կարս երկաթուղու շինարարությունն ընդունող կառավարական հանձնաժողովը ստիպված էր խոստովանել, որ հիվանդանոցների կառուցման համար ի սկզբանե միջոցներ չէին նախատեսվել, իսկ Սանահինի, Ղարաքիլիսայի և Ալեքսանդրապոլի կայարաններում կազմակերպված շտապօգնության կայանները թեև կառուցված էին, սակայն կահավորված չէին և զուրկ էին վիրաբուժական սարքավորումներից ու առաջին անհրաժեշտության դեղորայքից: 1897թ. հունիսի դրությամբ գծի ողջ երկայնքով գործում էին ընդամենը երկու շենքային (Ալեքսանդրապոլում՝ 8 մահճակալով և Կարսում՝ 5 մահճակալով) և 7 վրանային հիվանդանոցներ (21 մահճակալով)՝ խիստ սահմանափակ բուժանձնակազմով: Օրինակ՝ III տեղամասն ուներ մեկ բժիշկ և 4 բուժակ: Ի դեպ, բուժօգնությունն ցուցաբերելու համար բանվորից պահվում էր նրա վաստակի 1%-ը²⁵: Բնականաբար այս իրավիճակը նպաստավոր պայմաններ ստեղծեց համաճարակային հիվանդությունների տարածման համար: 1896թ. ամռանը բանվորների շրջանում մեծ տարածում ստացավ մալարիան, 1897 թ. փետրվարից՝ որովայնային տիֆն ու ժանտախտը²⁶, 1899թ. հունվարից՝ ջրծաղիկն ու դիֆտերիան²⁷: 10-40 հոգով մեկ բարաքում ապրելը, թերսնումը, անտանելի կենսապայմաններն ու բուժսպասարկման ցածր որակը նպաստեցին մահացությունների թվի աճին: 1895-1896 թթ. ձմռանը երկաթգծի երկայնքով հայտնվեցին առաջին գերեզմանները:

Շույժ կարևոր խնդիր էր նաև աշխատավորների հոգևոր պահանջների բավարարումը: 1896 թ. փետրվարին Վարչությունն առանձին շրջաբերականով տեղամասերի պետերից պահանջեց աշխատավորների «կրոնական կարիքների համար» տեղամասերում աշխատանքի ընդունել տարբեր դավանանքների պատկանող հոգևորականների, մահացածների հուղարկավորումը կատարել եկեղեցական ծիսակարգով, իսկ ծախսերը դնել կապալառուների վրա²⁸:

Սակայն վարչության այս պահանջը ևս մնաց թղթի վրա: Գծի երկայնքով քահանա կար միայն Մեծ Ղարաքիլիսայում, այն էլ՝ ուղղափառ: Մնացած տեղամասերում

²³ ՀԱԱ, ֆոնդ 136, ցուցակ 3, գործ 1, թ. 124:

²⁴ ՀԱԱ, ֆոնդ 136, ցուցակ 4, գործ 6, թթ. 115-116:

²⁵ ՀԱԱ, ֆոնդ 136, ցուցակ 4, գործ 26, թ. 87:

²⁶ ՎԿՊՊԱ, ֆոնդ 285, ցուցակ 1, գործ 252, թ. 46:

²⁷ «Тифлисский листок» -1899. с. 2.

²⁸ ՀԱԱ, ֆոնդ 136, ցուցակ 3, գործ 2, թ. 24:

քահանաներ չկային և մահացածներն օրերով մնում էին անթաղ, մինչև կժամանեին հարազատներն ու դիակը կտեղափոխեին հայրենի գյուղ թաղելու²⁹:

«Նովոյե Օբոզրենիե» թերթի հավաստամբ, «առավել տարածված էր թաղման, այսպես կոչված, «պարզեցված եղանակը»։ Բանվորը մահացել է. փոս են փորում, մահացածին հազցնում ու իջեցնում են փոսը՝ առանց քահանայի, առանց եկեղեցական ծիսակարգի, առանց մուսերի, ապա աղոթում են ու լցնում փոսը»³⁰:

Տեխնիկական առումով՝ Թիֆլիս-Ալեքսանդրապոլ-Կարս երկաթուղու շինարարությունն իրականացվեց բնական բարդ ռելիեֆ ունեցող տարածքում՝ ծովի մակերևույթից միջինը 1000-3000 մ բարձրության վրա: Տեղանքի առանձնահատկություններից էլնելով՝ կառուցվեցին մեծ թվով կամուրջներ, պատնեշներ ու թունելներ: Դրանց մեջ ուրույն տեղ ունի Վարչության պետ Ե.Ռ. Վուրցելի նախագծած Ջաջուռի թունելը, որն այսօր էլ աշխարհում երբևէ կառուցված թունելների մեջ համարվում է ամենաբարձրադիրներից մեկը: Բնականաբար, Փամբակի լեռնաշղթայում թունել կառուցելու համար պահանջվեցին ինժեներական նորարարական լուծումներ: Պայթուցիկ նյութերից զատ՝ այստեղ առաջին անգամ օգտագործվեցին հորատման էլեկտրական մեքենաներ³¹: Մակայն, շինհրապարակներում անվտանգության կանոնների բացակայությունն ու ոչ արհեստավարժ բանվորների զանգվածային օգտագործումը աննախադեպ պայմաններ ստեղծեցին դժբախտ պատահարների (այդ թվում նաև մահվան էլքով) թվի աճի համար: Արխիվային վավերագրերի համաձայն՝ գործող հինգ տեղամասերից միայն մեկում 1897-1899 թթ. ընթացքում պաշտոնապես գրանցվել է (ընդգծումը մերն է-Ս.Հ.) արտադրական տրավմատիզմի 46 դեպք, որից 14-ը՝ մահվան էլքով³²: Նման դեպքերում Շինարարության վարչության և կապալառուների միջև կնքված պայմանագրի 40-րդ հոդվածը պարտավորեցնում էր վերջիններին արագ արձագանքել և տուժածին հասցնել հիվանդանոց: Արգելվում էր առողջական խնդիրներ ունեցող աշխատակցին պահել բարաքում կամ հիվանդանոց ուղարկել ոտքով: Վարչությունն իր հերթին պարտավորվում էր տեղափոխման գործընթացն արագացնելու համար տրամադրել ֆինանսական միջոցներ կամ ձիակառք³³:

Թե աշխատանքային պայմանագրի այս պահանջը գործնականում ինչպես էր կիրառվում, երևում է III տեղամասի բժիշկ Վեքիլովի 1896 թ. ապրիլ ամսով թվագրված նամակից: «Անտեսելով վարչության հստակ ցուցումը, -գրում է նա,-կապալառուն հիվանդին բժշկի մոտ է ուղարկում կրկին ոտքով կամ ձիով: Օրերս նման մեկը ճանապարհին մի քանի անգամ ուշաթափվելուց և ձիուց ցած ընկելուց հետո ինձ մոտ բերվեց արդեն անգիտակից վիճակում»³⁴:

Որպես կանոն՝ արձանագրված դժբախտ պատահարների ճնշող մեծամասնության համար որևէ մեկը պատասխանատվություն չի կրել: Ղեկավարությանն ու օրինա-

²⁹ ՀԱԱ, ֆոնդ 136, ցուցակ 3, գործ 2, թ. 60:

³⁰ Новое Обозрение, N4287 -1896 г.

³¹ Котов А. http://www.kipsinfo.ru/index.php?Mode=article_full&id=62&cat_id=4

³² ՀԱԱ, ֆոնդ 271, ցուցակ 1, գործ 16:

³³ ՀԱԱ, ֆոնդ 136, ցուցակ 3, գործ 2, թ. 134:

³⁴ ՀԱԱ, ֆոնդ 136, ցուցակ 3, գործ 4, թ. 200:

պահ մարմիններին միշտ հաջողվել է մեղքը բարդել գոհերի վրա: Այսպես, շինհրապարակներից մեկում 1898-ի հուլիսին տեղի ունեցած փլուզման հետևանքով զոհվում են Ալեքսանդրապոլի գավառի Արղիսվալի գյուղի երկու բնակիչներ: Վարչություն ներկայացրած բացատրագրում կապալառու Յվետկովն ու ժանդարմ Դանիլովը միաբերան հաստատում են, որ շինհրապարակում անվտանգության կանոնները պահպանվում են, իսկ պատահարը տեղի է ունեցել զոհվածների անզգուշության պատճառով³⁵: Հաջորդ դեպքը տեղի է ունեցել Ջաջուռի թունելում. բարձած վագոնը տեղափոխող չորս բանվորները արգելակի անսարքության պատճառով վթարի են ենթարկվել, որի հետևանքով նրանցից մեկը ստացել է ծանր մարմնական վնասվածքներ: Սակայն պատահարը հետաքննող ենթասպա Ի. Միրոշնիկովը, տեղի ունեցածում հանցագործության նշաններ «չտեսնելով», արձանագրել է. «դեպքը տեղի է ունեցել բանվորի անփութության պատճառով»³⁶:

Մեկ այլ դեպքում հինգ բեռնված վագոնների խորտակման հետևանքով տեղում զոհվել է Ալեքսանդրապոլի գավառի Աղբուլաղ գյուղի բնակիչը, իսկ Ղարաբոյա գյուղի երկու բնակիչներ ստացել են տարբեր աստիճանի մարմնական վնասվածքներ: Դեպքի առնչությամբ իրականացված հետաքննության արդյունքում մեղքն ամբողջությամբ բարդվել է տուժածների վրա: Ըստ Վարչության կազմած եզրակացության՝ վագոնների խորտակումը տեղի է ունեցել սխալ իրականացված արգելակման պատճառով: Իրականում բեռնված վագոնների «արգելակում» կոչվածը խիստ վտանգավոր գործ էր. առջևից գնացող բանվորները դեռ կանգ չառած վագոնների անիվների տակ պիտի հասցնեին քարեր դնել և անմիջապես մետաղյա ձողեր մտցնեին անիվների ճառագայթների արանքը: Նման բան կարող էր անել արհեստավարժ վագոնավարը, մինչդեռ թունելում աշխատողների մեծ մասը նույնիսկ ծանոթ չէր տեխնիկայի սպասարկման տարրական կանոններին³⁷:

Եզրահանգում. 1890-ականներին թվականների սկզբից մեծ թափով սկսված երկաթուղու շինարարությունը նպաստավոր պայմաններ ստեղծեց արևելահայ աշխատավորության ամենամեծ ու ազդեցիկ խմբի ձևավորման համար: Չնայած թվական գերակշռությանը՝ երկաթուղային բանվորներն ապրեցին ու արաբեցին սոցիալական ծանրագույն պայմաններում: Բացարձակ իրավագուրկ վիճակը, ցածր վարձատրությունը, գործատուների կամայականությունները, սոցիալական երաշխիքների և անվտանգության կանոնների բացակայությունը նպաստավոր պայմաններ ստեղծեցին սոցիալական շարժումների ակտիվացման համար: Չանգվածային ելույթները, սկիզբ առնելով 1896 թ. դեկտեմբերից, երբեմն ինքնաբուխ, իսկ ավելի հաճախ կազմակերպված, շարունակվեցին մինչև Առաջին աշխարհամարտը՝ իշխանություններին մշտապես պահելով լարված վիճակում:

³⁵ ՀԱԱ, ֆոնդ 136, ցուցակ 4, գործ 16, թ. 236:

³⁶ ՀԱԱ, ֆոնդ 136, ցուցակ 4, գործ 16, թ. 212:

³⁷ ՀԱԱ, ֆոնդ 136, ցուցակ 4, գործ 16, թ. 17-18:

СОЦИАЛЬНОЕ ПОЛОЖЕНИЕ РАБОЧИХ НА СТРОИТЕЛЬСТВЕ ЖЕЛЕЗНОЙ ДОРОГИ АЛЕКСАНДРАПОЛЬ-КАРС

Այրապետյան Ա. Ս.

Ключевые слова: *Армянские железные дороги, Тифлис-Александрополь-Карс, строительство, рабочий, подрядчик, самоуправство, социальное положение.*

В последней четверти XIX в. развитие капиталистических отношений внесло существенные изменения в социальную структуру восточных армян. Распад крестьянства способствовал формированию новой производительной силы - рабочего класса. Большую роль в этом сыграло и строительство железной дороги, начатое в регионе с 90-х годов XIX в.. Так называемая «стройка века» создала благоприятные условия для формирования самой крупной и влиятельной группы восточноармянских рабочих. Совокупность архивных документов и сообщений периодической печати того времени позволяет предположить, что на строительстве железной дороги Тифлис-Александрополь-Карс работало до 10 000 человек. Несмотря на численное превосходство, рабочие жили и работали в тяжелейших социальных условиях. Полное бесправие, низкая заработная плата, произвол работодателей, производственный травматизм, отсутствие социальных гарантий и правил техники безопасности создавали благоприятные условия для активизации общественных движений среди строителей железной дороги. Иногда стихийные, а чаще организованные, массовые выступления продолжались до Первой мировой войны, держа власть в постоянном напряжении.

THE SOCIAL CONDITION OF THE WORKERS UNDER THE CONSTRUCTION OF THE ALEXANDRAPOL-KARS RAILWAY

Hayrapetyan A. S.

Key words: *Armenian railways, Tiflis-Alexandrapol-Kars, construction, worker, contractor, arbitrariness, social condition*

The development of capitalist relations in the last quarter of the 19th century introduced significant changes in the social structure of Eastern Armenians. The disintegration and stratification of the peasantry created favorable conditions for the formation of a new productive force - the working class. The construction of the railway, which started in the region in the 90s of the XIX century, also played a big role in it. The so-called "construction of the century" created favorable conditions for the formation of the largest and most influential group of Eastern Armenian workers. Combining the archival documents and periodical press reports of the time allows us to assume that up to 10,000 people worked on the construction of the Tiflis-Alexandrapol-Kars railway. Despite their outnumbering, the railway workers lived and worked in the most challenging social conditions. Absolute disenfranchisement, low pay, the arbitrariness of employers, lack of social guarantees, and safety rules created favorable conditions for the activation of social movements. The mass demonstrations, sometimes spontaneous, yet more often organized, began in December 1896 and continued until World War I, keeping the authorities in a constant state of tension.

Գ ր ա կ ա ն ո թ յ ո ն

1. **Ավետիսյան Վ.-1962**, Մի էջ Հայաստանի բանվորական շարժումների պատմությունից, Երևան, ՀՄՍՌ ԳԱ հրատ, 120 էջ:
2. ՀԱԱ, ֆոնդ 102, Ցուցակ 1- գործ 953, թթ. 40-41: գործ 5691, թ. 54:
3. ՀԱԱ, ֆոնդ 136, Ցուցակ 3 - գործ 1, թ. 124: գործ 2, թթ. 24, 60: գործ 4, թթ. 200, 322: գործ 11, թթ. 85,118: գործ 31, թ. 5: գործ 43, թ. 255: Ցուցակ 4- գործ 3, թ. 97: գործ 6, թթ. 115-116: գործ 16, թթ. 17-18, 41, 38, 212, 220, 224, 236, 256: գործ 26, թ. 87:
4. ՀԱԱ, ֆոնդ 269, ցուցակ 2, գործ 5691, թ. 54:
5. ՀԱԱ, ֆոնդ 270, ցուցակ 1, գործ 2, թ. 35, 53:
6. ՀԱԱ, ֆոնդ 271, Ցուցակ 1- գործ 1, թ. 325: գործ 16: գործ 17, թ. 749:
7. «Մշակ»-1896, Թիֆլիս, N 90, 6 օգոստոսի:
8. Վրաստանի կենտրոնական պետական պատմական արխիվ (ՎԿԴՊԱ), ֆոնդ 285, ցուցակ 1, գործ 252, թ. 46: գործ 480, թ. 101:
9. «Карс»-1897., Карс, N 45, 11 ноября.
10. **Котов А.** Из истории Южно-Кавказской железной дороги, http://www.kipsinfo.ru/index.php?Mode=article_full&id=62&cat_id=4
11. «Новое Обозрение», Тифлис, N4287, 22 июня.
12. «Обзор Эриванской губернии за 1896 г.» -1897. Эривань, Типография-скоропечатания Р.К. Эдельсона, с. 19.
13. «Тифлисский листок»-1899. Тифлис, N7, 10 января.

Ընդունվել է՝ 07.09.2022
Գրախոսվել է՝ 20.09.2022
Հանձնվել է տպ.՝ 28.11.2022

Տեղեկություններ հեղինակի մասին

Արմեն ՀԱՅՐԱՊԵՏՅԱՆ՝ պատմական գիտությունների թեկնածու,
ՀՀ ԳԱԱ Շիրակի հայագիտական հետազոտությունների կենտրոնի տնօրեն,
Շիրակի Մ.Ն.Արարեղյանի անվան պետական համալսարանի պատմության և
իրավագիտության ամբիոնի դոցենտ,
Էլ. հասցե՝ a.hayrapetyan@shirakcenter.sci.am

ՀՏԴ՝ 930,1

DOI: 10.52971/18294316-2022.25.2-175

ՄԱՀԱԿ ՊԱՐԹԵՎ՝ ՄԵԾՍԱԳՈՒՅՆ ՏԵՄԱՆՈՂՆԵՐԻՑ ՄԵԿՐ

Հայկանուշ Հովհաննիսյան

ՀՀ ԳԱԱ Հր. Աճառյանի անվան լեզվի ինստիտուտ

Բանալի բառեր՝ *Սահակ Պարթև, Ղազար Փարպեցի, Անանիա Շիրակացի, Վահան Մամիկոնեան, տեսանող, մարգարե, կանխասացություն, տեսիլ, արյունահեղություններ, պատերազմներ.*

Ներկայացվում է 5-րդ դարի առաջին կեսի մեծ հոգևոր գործիչ, կաթողիկոս Սահակ Պարթևի այն գերմարդկային հատկանիշը, որը հազարամյակների մեջ շատ քչերին է վիճակվել ստանալ բնությունից որպես պարզ և անակնկալ հայտնություն: Խոսքը նրա մարգարեությունների մասին է, որն ընդգրկում է սկսած իր ապրած ժամանակաշրջանից և հարյուրամյակների, նույնիսկ հազարամյակների միջով ձգվում-հասնում է մինչև մեր ապրած ժամանակները: Այդ մարգարեությունները տեղի են ունեցել տեսիլների ձևով Վաղարշապատի եկեղեցում նրա աղոթքի պահին: Եվ եթե հետևելու լինենք ու զուգահեռ անցկացնենք այդ տեսիլների մեկնաբանությունների և դարերի ընթացքում կատարված աշխարհաքաղաքական անցքերի միջև, կտեսնենք, որ բոլոր մարգարեությունները իրականացել են:

Նախաբան. «Սահակ Պարթև՝ որդի Մեծին Ներսիսի, որդույ Աթանագինայ, որդույ Վրթանիսի...թողին Գրիգորի՝ Լուսաւորիչ կոչեցելոյ, Հայրապետ Հայոց»: Ղազար Փարպեցու «Պատմութիւն Հայոց» աշխատությունը բացահայտում է Սահակ Պարթև մարդու, բարձրաստիճան հոգևոր գործիչ առանձնահատուկ էությունը, որի մասին իսկապես գուցե շատ քչերն են տեղյակ: Խոսքն այն արտակարգ ունակությունների մասին է, որ հնում անվանվել է մարգարեություն, տեսանողություն: Մարդը, ապրելով իր ժամանակաշրջանում, կարողացել է երևույթներն այնպես մեկնաբանել, որ նրանք նախանշել են գալիքը, ապագայում տեղի ունենալիք հասարակական ու քաղաքական փո-

փոխություններն ու իրադարձությունները ոչ միայն մոտ ապագայում, այլև հարյուրամյակներ հետո՝ ոչ միայն ազգային, այլև համամարդկային, համաշխարհային, և կանխորոշել դրանց ընթացքը:

Մահակ Պարթևի՝ որպես մեծագույն մարգարեի ու տեսանողի էությունը երբեք չի քննված որևէ մեկի կողմից, թեև շատերն են անդրադարձել Փարպեցուն և նրա գործերին: Առաջին անգամ մենք անդրադարձել ենք այս հարցին՝ կապված Անանիա Շիրակացու հետ (Անանիա Շիրակացին և նրա «Տիեզերագիտություն և տոմար» գործի Համաբարբառը՝ հոդվածում), ի մասնավորի նրա տեսիլի՝ Արևի հետ իր գրույցի առիթով, որում նա նախապես թախանձում է իրեն լսողներին, ընթերցողներին, որ իր ասածները երևակայության արդյունք, մտքի խաղ չհամարեն, որ ինքը չի ստում, այլ պատմում է այն, ինչ տեսել և արել է կիսաթթմանի վիճակում՝ կամենալով իրեն հուզող հարցերը, մտքերը պարզաբանել Արևի հետ: Եվ մենք էլ նրան գորակցելու նպատակով, թեև Շիրակացին այլևս դրա կարիքը չուներ, հաստատելու համար, որ հնարավոր է այդպիսի երևույթների տեղի ունենալը, զուգահեռ էինք բերել Փարպեցու գործում առկա Մահակ Պարթևի տեսիլները, նրա հետ տեղի ունեցածը:

Քանի որ այսուհետև խոսքը վերաբերելու է Մահակ Պարթևին, և որպեսզի միանգամից անհող չներկայացնենք նրա տեսիլը, կուզենայինք խոսքը մի ավելի խորքից սկսել:

Վռամշապուհի և նրա վերաթագավորյալ ծերացած եղբայր Խոսրովի մահից հետո թագավոր է դառնում Վռամշապուհի որդի Արտաշեսը, որը շատ ցոփ ու շվայտ կյանք է վարում՝ անտեսելով պետական և ազգային շահն ու գործը: Այդ հանգամանքը խիստ է զայրացնում երկրի բարձրադիր իշխաններին, և նրանք ստիպված են լինում ամբաստանագիր ներկայացնել Պարսից Վռամ շահին՝ հեռացնելու նրան Հայոց գահից: Եվ իրենց խոսքն ավելի ծանրակշիռ դարձնելու համար դիմում են Հայոց Հայրապետ Մահակ Պարթևին, որ նա էլ միանա իրենց ամբաստանությանը: Սակայն Հայրապետը համոզվելով, ամեն գնով փորձում է հետ պահել նրանց՝ իրենց նման վարվելակերպով Հայոց երկրին սպառնացող մեծ վտանգից՝ պետականության կորստից: Բայց քանի որ նրանք վճռական էին տրամադրված, անտեսում են Հայրապետի հորդորները և արդեն նրա հետ են սկսում վերջնագրի լեզվով խոսել, որ եթե ինքը չհամաձայնվի իրենց հետ, ապա թագավորի հեռացման հետ մեկտեղ նա էլ կհեռացվի Հայրապետական Աթոռից: Այդպես էլ լինում է: Վռամը թեև ձևականորեն քննություն է անցկացնում Պարսից դիվանում, սակայն պարսիկներին հենց այդ էլ պետք էր, մի փոքր առիթ՝ զրկելու Հայաստանը պետականությունից: Դրանից հետո Հայաստանը ղեկավարվում էր պարսիկ մարզպանների կողմից:

Քիչ անց, զգալով կորուստի ահավորությունը, ազգի մեծավորները, գալով Մահակ Պարթևի ոտքը, ողբագին աղաչանքներով խնդրում են նրան ներել իրենց մեղքը, կարճամտությունը և նորից ստանձնել Հայոց Հայրապետական Աթոռը: Բայց նա զայրացած մերժում է նրանց խնդրանքը, կամենում է հեռացնել իր մոտից՝ ասելով, թե ինքն ինչպե՞ս կարող է հովվապետել մարդկանց, որոնք մատնիչներ ու բանսարկուներ են և իրենց հարազատին մատնում են օտարի ձեռքը: Միաժամանակ բացատրում է, որ այն,

ինչ տեղի ունեցավ, ինքն արդեն գիտեր, քանի որ իրեն ցույց էր տվել վերին կանխասացությունը: «Վասն զի զանցս աղետիս այտորիկ յառաջ քան զձեռնադրելն զիս յեպիսկոպոսութիւն՝ եցոյց ինձ վերին կանխասացութիւն ... գիտելութիւն իրաց առ ի յապայ եղելոցս»¹:

Եվ նա ստիպված է լինում բարձրաձայնել այն, ինչը տասնամյակներ շարունակ լռությամբ պահել էր բոլորից: Ներկայացնում է իր տեսիլքը, որ ունեցել էր տասնամյակներ առաջ Վաղարշապատ քաղաքի եկեղեցում՝ նստած Աստծո սուրբ սեղանի մոտ, երբ դեռ Հայրապետական Աթոռին իր հայրն էր՝ Մեծն Ներսեսը, և Հայոց թագավորությունը վարում էին Արշակունի թագավորները:

Միտումնավոր ներկայացնում ենք Սուրբ Սահակի տեսիլների մեկնաբանություններն ամբողջությամբ: **Մեկնութիւն տեսլեան սրբոյն Սահակայ ի հրեշտակէ Աստուծոյ, գոր եցոյց յայտնի ըստ իւրաքանչիւր գլխոց և միոյ միոյ տանց, վասն կենաց մարդկան և կատարածի աշխարհի: Տեսիլ Սրբոյն Սահակայ:**

«Զբանալ հաստատութեան երկնից գոր տեսեր և գտարածել լուսոյն սաստիկ ընդ ամենայն երեսս երկրի. քանզի ահա ի գալստենէ կենարարի Որդւոյն Աստուծոյ բացեալ է դուռն շնորհի ողորմութեան նորա առ ամենեսեան, որ սիրեն զնա և պահեն զբան հրամանի նորա, յորս ծագեալ լուսաւորէ լոյս փառաց վարդապետութեան նորա: Եւ բեմբն չորեքկուսի կանգնեալ որ երևեցաւ քեզ, բարձր յերկրէ մինչև յերկինս՝ հավատն ճշմարտութեան է, որով վերանան արդարքն ի ծանրութենէ աշխարհիս կենաց ի թեթևութիւն երկնից բնակութեանն: Եւ զի ամպեղէն գունով երևեցաւ բեմբն՝ վասն զի որ վերացաւ ամպով՝ նոյն գալոց է վերացուցանել ընդ իւր զարդարս, ուր բազում օթնանք են ի տան արքայութեանն Հօր. գոր և դու տեղեկացեալ ուսար ի սուրբ Հոգւոյն, որ խօսէր ընտիր արամբն Պօղոսիս, թէ, «Ամպովք յափշտակիմք ընդ առաջ Տեառն յօղս»: Եւ տեսարակեղն ոսկի, որ ի վերայ բեմբին, գորով էր արկեալ մաքուր կտան բարակ, որով ծածկեալ էր սուրբ սեղանն և որ ի նմա խորհուրդն՝ զիտեա՛ և ծանի՛ր, զի ծածուկ և անյայտ է խորհուրդ աստուածային գիտութեանն, պատուականութեամբ և մաքրութեամբ՝ ըստ պատուականութեան մաքուր ոսկւոյն և լուսափայլ մաքրութեան կտաւոյն. յորոյ վերայ կանգնեալ նշան կենդանացուցիչ խաչին որ երևէր՝ կենդանացեալ կանգնեցան ամենայն արարածք, զորեալք մեղօք. և դարձեալ, զի նախ խաչն երևի ի գալստեանն Քրիստոսի, և ապա յայտնի խորհուրդ դատաստանին և հատուցման ըստ իւրաքանչիւր գործոց: Եւ զի եղեալ օղ քաղցրաշունչ, որ եբաց մասն ինչ կտաւոյն՝ ի մի՛տ առ, զի ցուցաւ քեզ ի սուրբ Հոգւոյն քաղցր խաղացմունք, որ յայտնէ սրբոց իւրոց զխորհուրդ ծածկեալ՝ աստուածութեան իւրոյ: Ընդ որով կայր սեղանն ոսկի ի պատուական ականց ընդդէլուզեալ սրբոյ Երրորդութեանն ծանուցանի միասնականութիւն. որ զվարս և զճգնութիւն արդարոցն որպէս զպատուական ականց զանազանումն առ ինքեան տպաւորեալ զուարճացուցանէ, որք զմարմին և զարիւն Փրկչին արժանաւորապէս ճշմարտութեամբ, բազմեալք ընդ նմա, ճաշակեն ի սուրբ սեղանոյն. ըստ երևելոյ քեզ հացն և ողկոյզն ի վերայ սեղանոյն՝ օրինակ մարմնոյ և արեան կենարար չարչարանացն Տեառն ցուցանի: «Իսկ երևումն քեզ սքանչելատեսիլ ձիթենւոյն, որ էր հուպ առ տերունեան

¹ Փարպեցի -1982, էջ 64:

խորհուրդն, բարձր և վարսաւոր բազմաբեր պտղալից՝ զտուրս և զողորմութիւն և զսէր մարդկան որ առ միմեանս՝ եցոյց քեզ: Քանզի մօտ և առաւել ևս պատուական է աստուածսիրութեանն աղքատասիրութիւն յամենայն բարեգործութիւնս, որով և առաջին արդարքն ընտիրք երևեցան, Աբրահամ, Իսահակ և Յակոբ. առանց որոյ և կուսանացն արհամարհեալ վաստակք կուսութեան՝ արտաքոյ հարսանեացն ընկեցան: Սովաւ ճանաչի յանձինս մարդկան կնիք քարոզութեանն Քրիստոսի, որ ասացն թէ «Յայսմ ծանիցեն ամենեքեան /գրքում՝ ամենեքեն. Հ.Հ./ թէ իմ աշակերտք էք՝ եթէ սիրեցէք զմիմեանս». և մանաւանդ որ առատապէս զուարթամտութեամբ կամաւ կատարեսցէ զսիրոյն պատուիրան, ոչ միայն յաղքատս, այլև յընկերս և յեղբայրս և առ ամենեսեան, որով հաստատի խաղաղութիւն յաշխարհիս, և տէրն փառաց բնակէ ի մէջ նոցա, շնորհելով զհանգիստ և զառատաբերութիւն երկրի, որպէս տեսանէիր բարձր զձիթենիին լիապտուղ և վարսաւոր: «Եւ ոստք չորք ձիթենւոյն, որ ի խոնարհ կողմ երկրի ձգտէին երևելովն, երեք ոստք հասարակատեսք չափով, և այն առաւել միաթիւք պտղովք, և չորրորդն ի նոսա, զոր կիսաչափ ըստ հասարակութեան երիցն և պակասաւոր ըստ պտղաբերութեանն տեսեր, որոց չորեցունց պտուղքն վտիտք էին և թառամք, և բերքն պակասք և աննմանք քան զայլ առոքատեսիլ պտուղս ձիթենւոյն՝ արդ ամփոփեա՛ զունկնդրութիւն մտաց քոց. լու՛ր և ասացից քեզ՝ զոր ինչ սահմանեացն Բարձրեալն. յայսմ հետէ մինչև ի վախճան աշխարհիս՝ երեք տասներեակ ամաց և կէս տասներեկի համառօտեսցի ի վերայ ամենայն աշխարհի, մինչև յերևումն պղծոյն անապատի, զոր Դանիէլ մարգարէի ասացեալ է սուրբ Հոգւոյն. և լինին սոքա յայտնապէս թուով ամբ երեք հարիւր յիսուն, ըստ միազոյգ պտղոց երից ոստոցն և կիսոյն: Եւ զի տեսեր զպտուղ ոստոցն թառամս և ծնկեալս և ոչինչ բնաւ նմանս ա՛յլ պտղոցն որ ի ձիթենւոջն էին. տէ՛ս ճշգրտապէս և ծանի՛ր, զի բարձեալ է սէր և արդարութիւն յամենայն մարդոց, որք ստութեամբ և ոչ ստուգութեամբ կարծեցուցանեն զանձինս սիրունս և պատուիրանապահս, և այն յայտնի գրեալ կայ և կնքեալ ի դպրութեան ամենագիտին Աստուծոյ, որ ներէ երկայնմտութեամբ և հատուցանէ անաչառութեամբ: «Եւ ընդ ահեկէ բեմբին որ ցուցաւ քեզ աթոռ չորեքկուսի ծովագոյն, սառնակերպ՝ զնստումն գահու քահանայութեանն և թագաւորութեանն ցուցանէ, զոր արդարն Բանն Աստուած հաստատէ: Յորոյ վերայ կայր սկուտեղն արծաթի, քանզի իբրև զարծաթ ընտիր և փորձ լուսափայլ՝ յամենայն ազգս ընդունողաց սփռեալ տարածեցաւ բանն. զոր և սաղմոսերզն վարդապետէ սուրբ Հոգւովն, յասելն, թէ «Բանք Տեառն որպէս զարծաթ ընտրեալ և փորձեալ յերկրէ», և զասելն յերկրէ՝ զհտասցես, եթէ զերևումն Որդւոյ Աստուծոյ մարմնով ի սուրբ կուսէն յայտ առնէ մարգարէն: Եւ զի երևեցաւ քեզ ծովագոյն սառնանման տեսիլ աթոռոյն՝ նշանակեալ ցուցանէ զծփումն ալեկոծութեան աշխարհիս Հայոց: Քանզի և թխագոյն թանձր կտաւացն ծածկումն՝ զօրինակ բերէ զթանձրամած սգոյն, որ ունելոց է զաշխարհս ամենայն. վասն զի տեսիլդ ի վախճան է: Եւ նափորտն բեհեզեայ, զոր տեսանէիր ծալեալ և եղեալ ի վերայ սկտեղն, և զունդն ոսկի որ կայր մերձ նափորտանն՝ նշանակէ մինն զքահանայութիւն, և միսն զթագաւորութիւնն: Եւ զի ոչ ոք էր արկեալ զհարեաւ զնափորտն, և ոչ այն ոք էր որ զգունդն ունէր ի ձեռին՝ լու՛ր ստուգապէս, զի լռեսցէ մերձ ընդ մերձ թագաւորութիւն յազգէդ Արշակունեաց, և քահանայութիւն ի ցեղէ արժանաւոր քահանայապետին Գրի-

գործի: «Եւ մագաղաթն հաստուածաձև, որ ցուցաւ քեզ գրեալ ի սկզբանն կարգս ինչ ոսկեղէն գրով զձեռնադրութիւն արանց սրբոց եցոյց քեզ շնորհք Հոգւոյն սրբոյ, որք ի զաւակէ երանելոյն Գրիգորի յաջորդեսցեն արժանապէս զաթոռ քահանայապետութեան. նոքա են արք ընտիրք, գրեալք ոսկետեսիլ գրով ի դպրութեան կենաց: Եւ զի երևեցաւ ի միջոյ կողմն մագաղաթին, հեռի յոսկեգիր կարգացն, կարգք ինչ խանգարեալք և ջնջագիրք՝ զիտեա՛ զի նստելոց են քահանայապետք ոմանք յաթոռ սրբոյն Գրիգորի, որք ոչ ըստ հրամանի սրբոց առաքելոցն և ոչ ըստ կանոնի սուրբ ժողովոյն երեքհարիւր ութուսասանիցն լինին ձեռնադրեալք յերկնաւոր պատիւ, այլ ըստ փառաց աշխարհիս ձգտին ի պատիւն յանդգնութեամբ, որք են արծաթասերք առաւել քան աստուածասերք: Եւ վասն զի խոտան է քահանայութիւնն և ոչ ըստ հաճոյից Բարձրելոյն՝ ջնջեալ են նոքա ի դպրութենէ երկնից բարութեանն, տալով դատաստան, գեհենին այրմամբ, զանձանց և ժողովրդոցն կորստեան: Եւ այլ կարգն և միւս ևս կէս կարգին, որ երևեցաւ քեզ գրեալ սքանչելապէս ոսկի գրով ի ստորին եզեր մագաղաթին՝ ծանի՛ր հաւաստեաւ, զի մերձ յերևումն պղծոյն անապատի դարձեալ յառնէ թագաւոր յազգէդ Արշակունեաց և նորոգի աթոռ հայրապետութեան ի շառաւեղէ սրբոյն Գրիգորի: Եւ վասն զի ոչ էին արհամարհեալք և ընկեցեալք յերկիր ի կոխումն, այլ յայտական երևմամբ կայր գունդն, և ծալեալ պատուականութեամբ ցուցաւ նափորտն, որ ևս առաւել հաստատապէս ցուցաւ քեզ. և ծանոյց զայս վերին ազդեցութիւնն սքանչելատեսիլ ոսկեգիր կարգովն և կարգակիսան, որ ի ժամանակս գոռոզացելոյ թշնամոյն արդարութեան նստի քահանայապետ արդար, ի ցեղէ սրբոյն Գրիգորի. և քահանայացեալ առաջինն կատարէ զաւուրս իւր, կրեալ ճգնութիւնս բազումս ի սուտ առաքելոց իշխանին կորստեան, և վախճանի խաղաղական հանգստի և ոչ սրով: Եւ միւս զաւակ նորին յաջորդեալ զաթոռ քահանայապետութեանն՝ բազում և ազգի ազգի համբերեալ քերանաց և զանից, սովոյ և հալածանաց և դառն նեղութեան ժամանակս բազումս՝ յանօրէն իշխանին դահճացն սրով ընկալցի զվճիռ մարտիրոսութեան: Այն զի ցուցաւ քեզ ի կարգին մասն մի ի գրելոցն կարմրադեղով՝ ստուգեալ հաւատարմութեամբ դաւանեաց զկատարումն մարտիրոսութեանն, որ դիպելոց է սրբոցն: «Եւ որ երևեցաւ քեզ բազմութիւնք տղայոց շուրջ կալով ի վերայ արծաթի սկտեղն, զուարթացի՛ր ցնծալից ուրախութեամբ. զի ահա յարգանդէ զաւակիդ, որ տուաւ քեզ յԱրարչէն, ելցեն բազում շառաւեղք, արք ընտիրք, զօրութեամբ. ընդ որս միարբանեալ և այլ բազմութիւնք լաւ արանց, յազգէ նախարարացդ Հայոց, որք զօրացեալք սուրբ բանին Աստուծոյ և զյարուցմունս թագաւորաց և զսպառնալիս իշխանաց առ ոչինչ համարեալ՝ միացուցանեն զանձինս ընդ յոյսն բաղձալի երկնաւոր կոչմանն, չհայելով ի մեծութիւնս սնոտիս և ոչ ի փառս առժամայնս. ընդ որոյ վաճառեալ ոմանց զփառս անեղծին Աստուծոյ, ընդ սնոտի և ապականացու կենաց աշխարհիս՝ ուրացողք լինին. վասն զի մօտ է առ դուռս վաճառ՝ թուլացելոցն ի կորուստ, և հասեալ կայ հուպ օգնութիւն՝ զօրացելոցն ի փրկութիւն: Յորս և դու հայեցեալ տեսեր շուրջ զաստուածածին սեղանովն պարելով զտղայսն. չհայելով բնաւ ի սայթաքմունս սնոտի հեթանոսական պաշտամանն, յորոց ոմանք կատարելութեան հասեալք՝ մարտիրոսական պսակին լինին արժանիք: Եւ այլք յարանց բազմաց, և ոչ միայն յարանց, այլ գտանին և ի կանանց, որք թէպէտ և ոչ սրով, այլ ի շնորհաց սուրբ Հոգւոյն զօրացեալք՝ բազում բարեգործութե-

ամբք կատարին: Որպես երևեին քեզ լուսափայլ նշոյլք արձակեայք ի մանկուտյն. յորոց ոմանց կարմրագոյն փայլմամբ երփն երփն էր գոյնն՝ զկատարելոցն արեամբ գուշակէ զնահատակութիւն. և զայլոցն պէսպէս ճառագայթիւք ցուցանէր զշողումն՝ որպէս զբազմափայլ գոյնս լուսաւորութեան առաքինի մարդոց. վասն զի բազում և անթիւ են ճգնութիւնք և վաստակք արանց արդարոց: Եւ վասն զի շարժեցաւ սաստիկ դողորմամբ աթոռն զոր տեսեր, և որ երբեմն տղայք քեզ երևեին, յաճումն կատարելութեան բովանդակեայք, յերկրէ յերկինս թռուցեալ համբարձան՝ բովանդակապէս զերկրիս կենցաղս արդարոցն և ի յերկինս զլինելոց նոցա զհրեշտականման փոխումն եցոյց քեզ պարզատուն բարեաց: Քանզի իբրև զտղայս կացին յաշխարհիս արդարքն անմեղութեամբ, չդարձուցանելով ուրեք զհայեցուածս մտաց իւրեանց՝ ի զբաղմունս նանրութեան, այլ ուշադրեայք ի հրաւիրումն երկնաւոր կոչմանն ուրախութեան հային: Քանզի բազում և խիստ դողորմունք յայսմ հետէ լինելոց են յաշխարհիս. յարուցմունք թագաւորաց ի վերայ միմեանց, սովք և սասանութիւնք և բազում նեղութիւնք, որ զգալուստ որդւոյն կորստեան նշանակեն, որ եկեալ նստիցի ըստ գրեցելումն ի տեղոջն սրբութեան, ցուցանելով զինքն Աստուած, որ հաշի և մաշի ի վերին զօրութենէն. զոր տէր Յիսուս սատակեցէ հոգւով բերանոյ իւրոյ: Եւ յայնժամ կատարեալ վարուք առաքինութեամբ թոյցեն արդարքն ի յախտենից յարկսն և այնպէս յամենայն ժամ ընդ Տեառն լինիցին: Եւ ապա յայտնապէս կատարի առ նոսա բանն Տեառն, որ ասէ, թէ «Ուր են ես՝ անդ և պաշտօնեայն իմ եղիցի»: Եւ դու կնքեա՛ զտեսիլդ, որ ցուցաւ քեզ յայտնութիւն ի բարձանց. Քանզի ոչ վրիպեսցի այտի բան մի՝ մինչև կատարեսցի ամենայն: «Եւ ես որպէս ի քնոյ զարթուցեալ ի տեսլենէ, զոր եցոյց ինձ Բարձրեալն որպէս արթնութեամբ յայտնապէս, և ի զարմացման մեծի եղեալ՝ փառաւորեցի զմարդասէրն Աստուած, որ արժանի արար զանարժանութիւնս իմ այսպիսի սահաւոր տեսլեան: Եւ լռեալ դադարեցի յայտնել զայս ումեք մինչև ցայսօր: Եւ արդ պատմեցի ձեզ ոչ միայն առ նեղել սրտիս, այլև թաքուցանել երկուցեալ. զի մի՛ երբեք իբրու զլացող պատուհասեալ դատեցայց ի ցուցողէ յայտնութեանս այսորիկ, որ և գրով իսկ հրամայեաց ինձ զաւանդս զայս թողուլ յաշխարհի:»²

Մենք, որ ապրում ենք Սահակ Պարթևի տեսիլի հայտնությունից մոտ 1640 տարի հետո, տեղյակ ենք համաշխարհային մակարդակով պատմական այդ հսկայական ժամանակաշրջանում տեղի ունեցած ռազմաքաղաքական անցուդարձերին՝ արաբական, հարյուր տարուց ավելի ձգվող խաչակրաց ու մոնղոլական արշավանքներ և այլ բազում արյունահեղ պատերազմներ, մինչև իսկ Առաջին և Երկրորդ Համաշխարհային պատերազմները, որոնք մարդկային հսկայական զանգվածներ էին ոչնչացնում, կարող ենք գուգադրել Սահակ Պարթևի տեսիլքի և կատարված սահմոկեցուցիչ երևույթների համընկնումը, թեև հարյուրամյակներ, նույնիսկ հազարամյակներ հետո: Արիստակես Լաստիվերտցին, երբ նկարագրում է հարուստ ու շքեղ Արծն քաղաքի գրավումն ու ավերումը, ասում է, որ այնքան մարդիկ էին կոտորվել, որ փողոցներով արյան գետեր էին հոսում և քշում-տանում էին մարդկանց դիակները: Պակաս սարսափազդու չէ նաև այն, ինչ նկարագրում է Սամվել Անեցին՝ շքեղաշուք Անիի գրավման մասին, որ ամբողջ անդաստանը ծածկված է եղել մարդկային դիակներով: Իսկ Գրիգոր Ապիրատը՝ Ներ-

² Փարպեցի -1982, էջեր 72-82:

սես Շնորհալու եղբորորդին, ներկա գտնվելով փառահեղ Եդեսիայի համար մղվող մարտերին ու նրա անկմանը, մի կերպ, մագապուրծ, ինչպես իրենք են ասում՝ Բարձրյալի շնորհիվ փրկվելով, գալիս է Միս-Հռոմկլայ, պատմում հորեղբորը՝ Ներսես Շնորհալուն, իր աչքով տեսած արհավիրքները և առաջարկում է գրել այդ մասին: Եվ Շնորհալին հանձն է առնում ու գրում է «Ողբ Եդեսիոյ» իր մեծագույն պատմական և գեղարվեստական հրաշալի պոեմը: Իսկ Կիրակոս Գանձակեցին էլ իր «Պատմութիւն Հայոց» մեծածավալ աշխատության մեջ փաստում է երեք տարի ձգվող սովի մասին, որի ժամանակ անգամ մարդակերությունն է տարածվել:

Եվ կամ, եթե ժամանակային առումով մի քիչ մոտենանք տեսիլքի հայտնության ժամանակաշրջանին, թեկուզ նրանից 350 տարի հետո, տեսնում ենք, որ տեսիլի լուսեղեն մեկնաբանողի բառերով ասած, հենց «պղծոյն անապատի» տիրապետության ժամանակներում, վերահաստատվում է Հայոց կործանված թագավորությունը Բագրատունիների, ապա և Ռուբինյանների ջանքերով, ինչպես նաև Գրիգոր Լուսավորիչի հիմնած Հայրապետական Աթոռը նրա շառավիղների կողմից: Անգամ տարիների քանակն է նշում՝ 350 տարի հետո՝ ըստ ձեռագրի չորս առանձնացված ճյուղերի պտուղների քանակի:

Էլի մի քիչ մոտենանք տեսիլի հայտնության ժամանակին: Դրանից մի քանի տասնամյակներ հետո վերանում է Հայոց Արշակունյաց թագավորությունը, ինչպես նաև Հովվապետությունը Գրիգոր Լուսավորչի ցեղի:

Առավել մոտենանք տեսիլի բուն ժամանակին: Ինչի՞ համար էր աղոթում Մահակ Պարթևը Բարձրյալին Վաղարշապատի մայր եկեղեցում: Որ իրեն էլ մի արու գավակ տա: Լուսեղեն մարդը հայտնում է նրան, որ ամենայն ինչ, ինչ կատարվում է, տեղի է ունենում ըստ համաչափության, և թող նա երբեք էլ չտրտմի, որ արու գավակ չունի, քանի որ իր գավակից ծնվելու են մարդիկ՝ համարձակ, զորեղ, որոնք փառք կբերեն ցանկացած ազգի և իրենց կյանքն անգամ չեն խնայի հայրենիքի փրկության համար: Այդպես էլ չի՞ լինում: Մահակի դուստրն ամուսնանում է հայրենիքին նվիրված մեկի՝ Համազասպ Մամիկոնյանի հետ, որից էլ ունենում է երեք որդի՝ Ավարայրի հերոս Վարդանը, նույն նպատակի համար նահատակված Հմայակը և Համազասպեանը, որոնք երեքն էլ կանգնած են եղել հայրենիքի ամրության ու փրկությանն ի պաշտպան: Իսկ Հմայակն էլ ունենում է Վահանին՝ Գայլ Վահանին, որը մեծանալով, երկարատև պայքարի գնով իր կամքն է թելադրում, ստիպում է Պարսից շահին, Ավարայրի ճակատամարտից հետո ավերված, պարսկական ատրուշաններով ողողված Հայոց աշխարհը մաքրել այդ ամենից և հային վերադարձնել ինքնուրույն, իր կրոնով և իր ցանկացած ձևով ապրելու իրավունքը: Ինչպես տեսնում ենք տեսիլի յուրաքանչյուր դրվագ, նրա մեկնաբանությունն իրական է դարձել, անկախ ժամանակային հեռավորությունից:

Եզրահանգում. Ինչպե՞ս են նախկինում վարվել տեսիլների վերաբերյալ նյութերի հետ: Ընդունել են որպես բացարձակ ճշմարտություն, «կամքն Աստուծոյ», կամ քամահրել, ինչպես Անանիա Շիրակացու դեպքում: Իսկ խորհրդային ժամանակներում՝ աթեիզմի դարաշրջանում նման գրվածքները համարվել են հրաշապատումների շարքից, անհող, անլուրջ մտքի, երևակայության արդյունք և անտեսվել, առանց խորը ուսումնա-

սիրության: Այդ պատճառով էլ Սահակ Պարթևի տեսիլին ոչ բավարար, էթե ոչ անտեսվող վերաբերմունք է ցուցաբերվել, և ոչ մի գրականագետ կամ պատմաբան չի անդրադարձել դրան, ինչպես հարկն է: Եթե մի բան անտեսվում է, էլ ի՞նչ անդրադարձ:

СААК ПАРТЕВ ОДИН ИЗ ВЕЛИКИХ ПРОРОКОВ

Оганисян А. А.

Ключевые слова: *Саак Партев, Лазар Парпетци, Анания Ширакаци, Ваан Мамиконян, провидец, пророк, предсказание, видение, кровопролитие, войны.*

Как обращались с визионерскими материалами в прошлом? Они принимали «волю Божию» как абсолютную истину или замалчивали ее, как в случае с Ананией Ширакаци. А в советское время, в эпоху атеизма, подобные писания считались чудесами, беспочвенными, плодом легкомысленной мысли и воображения и игнорировались без глубокого изучения. Вот почему видению Саака Партева уделялось недостаточное, если не игнорировалось, внимание, и ни один литературный критик или историк не обратился к нему должным образом. Если что-то упущено, то что еще?

SAHAK PARTEV AS ONE OF THE GREATEST PROPHETS

Hovhannisyan H. A.

Key words: *Sahak Partev, Ghazar Parpetsi, Anania Shirakatsi, Vahan Mamikonian, seer, prophet, prediction, vision, bloodshed, wars.*

How have visionary materials been handled in the past? They accepted "the will of God" as absolute truth or suppressed it as in the case of Ananias Shirakatsi. And in Soviet times, in the era of atheism, such writings were considered to be miracles, groundless, the result of frivolous thought and imagination and were ignored without deep study. That's why Sahak Parthev's vision has been given insufficient, if not ignored, attention, and no literary critic or historian has addressed it properly.

Ք Ր Ա Կ Ա Ն Ո Ւ Թ Յ Ո Ւ Ն

1. **Ծիրակացի -1940**, Անանիա Ծիրակացի «Տիեզերագիտություն և տոմար», Յերեւան, Հայպետհրատ. 95 էջ:
2. **Գանձակեցի -1961**, Կիրակոս Գանձակեցի, «Պատմություն Հայոց». Երևան, ՀՄՄՌ-ԳԱ հրատ., 425 էջ:
3. **Փարպեցի -1982**, Ղազար Փարպեցի «Հայոց պատմություն», Երևան. ԵՀ հրատ., 537 էջ:
4. **Խորենացի -1913**, Սովկիսի Խորենացույ «Պատմութիւն Հայոց». Տփլիս, ՀԽՍՀ ԳԱ հրատ. Երևան, 485 էջ:

Մահակ Պարթև՝ մեծագույն տեսանողներից մեկը

5. **Ծնորհալի -1982**, Ներսես Ծնորհալի. Երևան, «Մովեաական գրող» հրատ. 213 էջ:
6. **Լաստիվերոցի -1901**, «Ռատմություն» Արիստակեսյ վարդապետի Լաստիվերոցույ ի Վենետիկ, 144 էջ:
7. **Անեցի -1892**, Մամուլի քահանայի Անեցույ «Հասարմունք ի գրոց պատմագրաց» Վաղարշապատ, 301 էջ.

Ընդունվել է՝ 05. 08. 2022
Գրախոսվել է՝ 07. 10. 2022
Հանձնվել է տպ.՝ 28. 11. 2022

Տեղեկություններ հեղինակի մասին

Հայկանուշ ՀՈՒՀԱՆՆԻՍՅԱՆ՝ ՀՀ ԳԱԱ Հր. Անառյանի անվ.
լեզվի ինստիտուտի կիրառական լեզվաբանության բաժնի
գիտաշխատող, էլ. հասցե՝ hajkanush@list.ru

ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԲՆԱԿՉՈՒԹՅԱՆ ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ԿԱԶՄԻ
ՇԱՐԺԸՆԹԱՅԸ (XXդ. վերջ - XXIդ. սկիզբ)

Արտաշես Բոյաջյան

ՀՀ ԳԱԱ Շիրակի հայագիտական հետազոտությունների կենտրոն

Բանալի բառեր՝ սոցիալական կազմ, բանվոր, գյուղացի, մտավորական, կրթության ոլորտ, արդյունաբերություն, ծառայող, գործազուրկ, աղքատ, հարուստ:

Հոդվածում ներկայացվել է Շիրակի մարզի բնակչության սոցիալական կազմի շարժընթացը XXդ. վերջին և XXIդ. սկիզբին: Ուսումնասիրության համար սկզբնաղբյուր են հանդիսացել հիմնականում մարդահամարի արդյունքները, ՀՀ ազգային վիճակագրական կոմիտեի տվյալները և դաշտային ազգագրական նյութերը: Հոդվածում տրվել են մարզի բնակչության սոցիալական կազմի փոփոխության ժողովրդագրական, կրթական և մասնագիտական բնութագրիչները:

Նախաբան. Անկախության տարիներին կապիտալիստական արտադրահարաբերությունների զարգացումը Հայաստանի Հանրապետությունում, այդ թվում՝ Շիրակի մարզում, արմատապես փոխեց բնակչության կյանքի պայմանները և կենսամակարդակը, կենսագործունեության ձևերը և արժեքային համակարգը, ինչը հանգեցրեց բնակչության սոցիալական կազմի արմատական փոփոխության: Սույն ուսումնասիրության նպատակն է՝ վերլուծել և ներկայացնել Շիրակի մարզի բնակչության սոցիալական կազմի փոփոխության առանձնահատկությունները, տարածքային տարբերությունները, ինչպես նաև բացահայտել այդ փոփոխությունը պայմանավորող գործոնները: Գլխավոր խնդրներից է գնահատել բնակչության առանձին սոցիալական խմբերի տարիքային կառուցվածքին վերաբերող ցուցանիշները: Հայտնի է, որ հասարակության սոցիալական և դասային շերտավորումն արտահայտվում է տնտեսական, ազգակցական, հա-

մայնավարական, կրոնական, քաղաքական և հասարակական այլ հարաբերությունների բնույթով: Խորհրդային Հայաստանի արտադրության միջոցներն ազգայնացված էին, և, դրանով պայմանավորված, հասարակության կառուցվածքը ներառել է երեք բաղադրիչ. առաջինը՝ երկու դասակարգեր՝ բանվորներ և գյուղացիներ (արդյունաբերության և գյուղատնտեսության ոլորտներում զբաղվածներ), երկրորդը՝ մտավորականության, ծառայողների և այլ շերտեր, երրորդը՝ ապադասակարգային տարրեր (անօթևաններ, մարմնավաճառներ, պորտաբույծներ և այլն)¹:

Հայաստանի Հանրապետության անկախացումից և ԽՍՀՄ-ի փլուզումից հետո պետական գույքի սեփականաշնորհման գործընթացի հետ կապված նոր իշխանությունների որդեգրած քաղաքականությունը երկրում բերում է հասարակության՝ մեջ արտադրության միջոցների սեփականատերերի և վարձու աշխատուժի կազմավորման, որի ընթացքում ի հայտ են գալիս նոր բևեռացված դասակարգեր: Մեր հանրապետությունում 1991թ. նոր ձևավորվող «բուրժուազիան» անջատվեց կուսակցական նոմենկլատուրայից և ստացավ սեփականատերի նոր կարգավիճակ: Սեփականատերեր դարձան նաև խորհրդային հասարակության խավերից, այսպես կոչված, «ցեխավիկների» և անհատ ձեռնարկատիրությամբ զբաղվողների մեծ մասը: Բնակչության սոցիալական կազմում տեղի ունեցան արմատական տեղաշարժեր. սեփականաշնորհման գործընթացով պայմանավորված՝ գրեթե դադարեց արդյունաբերական ձեռնարկությունների աշխատանքը, ինչը հանգեցրեց աշխատունակ բնակչության ինստիտուցիոնալ գործազրկությանը և բանվոր դասակարգի մասնակի վերացմանը: Հանրապետության բանվորների և մտավորականների ճնշող մեծամասնությունը փոխեց իր մասնագիտական ուղղվածությունը. մի հատվածը սկսեց զբաղվել առևտրով, մյուսը՝ անհատ ձեռնարկատիրությամբ, իսկ զգալի մասը, զրկվելով աշխատանքից, մեկնեց սեզոնային արտագնա աշխատանքի կամ էլ դրսում մշտական բնակչության:

Ներկայացվող ժամանակահատվածում, մասնավորապես Գյումրի քաղաքի բնակչության թվի շեշտակի անկումն էական ազդեցություն ունեցավ մարզի բնակչության սոցիալական կազմի փոփոխության վրա: Աղյուսակ 1-ի թվային ցուցանիշների վերլուծությունից պարզ է դառնում, որ մարզում 1989-2019 թթ. աշխատունակ տարիքի բնակչության բացարձակ թիվը (15-64 տարեկան) նվազել է 25.3%-ով, այդ թվում՝ քաղաքայինը՝ 35.2%-ով, գյուղականը՝ 4.7%-ով: Հատկանշական է, որ ներկայացվող ժամանակահատվածում մարզի բնակչության բացարձակ թվի նվազման մոտ 40%-ից ավելին բաժին է ընկնում աշխատունակ տարիքի բնակչությանը: Վերջինիս թվի նվազման մեջ մեծ է եղել բանվորների տեսակարար համաթիվը: Այսպես, մինչև 1988 թ. դեկտեմբերի 7-ի աղետալի երկրաշարժը մարզի արդյունաբերական ձեռնարկություններում աշխատողների թիվը 50.2 հազ. էր, որտեղ ճնշող մեծամասնություն էին բանվորները², 2011 թ. նույն ցուցանիշը կազմել է 14.2 հազ., 2020թ. չի գերազանցել հինգ հազարը³: Այսինքն՝ 22 տարիների ընթացքում արդյունաբերական ձեռնարկություններում աշխատողների թի-

¹ Մելքումյան Յու. -2012, էջ 266:

² Բոյաջյան Ա. - 2007, էջ 122:

³ ԱՎԿ - www.armstat.am, 01.02. 2022թ.:

վր նվազել է ավելի քան 10 անգամ: Հիշատակենք, որ արդյունաբերական ձեռնարկություններում աշխատողների, մասնավորապես բանվորների թվի շեշտակի անկումը պայմանավորված էր ոչ միայն հասարակարգի փոփոխությամբ, այլև 1988 թ. դեկտեմբերի 7-ի երկրաշարժի հազարավոր զոհերով, ԽՍՀՄ-ի լուծարումից անմիջապես հետո միութենական արդյունաբերական ձեռնարկությունների տնտեսական կապերի խզումով և այլ գործոններով: Իսկ հետևանքը եղավ այն, որ հազարավոր գյումրեցի գործազուրկ բանվորներ, ինժեներներ և այլ որակյալ մասնագետներ մշտապես արտագաղթեցին արտասահմանյան երկրներ:

Շիրակի բնակչության սոցիալական կազմի փոփոխության վրա որոշակի ազդեցություն են ունեցել բնակչության բնական վերարտադրության գործընթացները: Այսպես, 1989-2019 թթ. մարզի բնակչության մեջ ծնվածների գումարային թիվը կազմել է շուրջ 138,9 հազ. մարդ, մահացությունը՝ 78,6 հազ., իսկ բնական աճը՝ 60,3 հազ.: Այսինքն՝ 2019 թ. դրությամբ մարզի բնակչության ընդհանուր թվի մոտ 60 %-ը ծնվել է անկախության տարիներին, մեծացել և կրթվել կապիտալիստական հասարակարգում, որն իր արժեհամակարգով և սոցիալական կազմով էապես տարբերվում է սոցիալիստականից:

Աղյուսակ 1

Շիրակի մարզի բնակչության տարիքային կազմի շարժընթացը

	1989թ. ⁴		2001թ.		2011թ.		2019թ.	
Շիրակի մարզ								
Մինչև 15 տարեկան	92695	29.1	71278	27.7	46187	19.8	49242	21.1
15-64 տարեկան	211859	66.3	160288	62.3	162540	69.7	158336	67.8
65 և բարձր	15069	4.6	25676	10.0	24581	10.5	25667	11.1
Ընդամենը	319623	100	257242	100	233308	100	233245	100
Քաղաքային								
Մինչև 15 տարեկան	60870	28.5	41107	25.4	25921	18.8	27274	19.9
15-64 տարեկան	142687	66.9	104449	64.8	95733	69.6	92421	67.5
65 և բարձր	9838	4.6	15742	9.8	15828	11.6	17201	12.6
Ընդամենը	213395	100	161298	100	137482	100	136896	100
Գյուղական								
Մինչև 15 տարեկան	31825	29.9	30171	31.4	20266	21.1	21968	22.8
15-64 տարեկան	69172	65.1	55839	58.2	66807	69.7	65915	68.4
65 և բարձր	5231	5.0	9934	10.4	8753	9.2	8466	8.8
Ընդամենը	106228	100	95944	100	95826	100	96349	100

Աղյուսակը կազմելիս օգտագործվել են՝ Մանասյան Մ. և այլք -2002, էջ 61: ՀՀ ԱՎԿ
www.armstat.am 13.07.2021թ.:

Շիրակի մարզում մինչաշխատունակ տարիքի բնակչության թվի նվազումը պայմանավորված է նախևառաջ 1990-ական թվականներին բնակչության ծնելիության

⁴ ԽՍՀՄ վերջին համամիութենական մարդահամարը Սպիտակի աղետալի երկրաշարժի պատճառով Շիրակում անցկացվել է արտակարգ պայմաններում:

շեշտակի անկմամբ, որը XXIդ. սկզբին հանգեցրեց ամուսնությունների թվի նվազման: Այսպես, ըստ ՀՀ 2001թ. մարդահամարի արդյունքների՝ Շիրակում 15-34 տարեկան բնակչության ընդհանուր թվաքանակում երբեք ամուսնացած չեն եղել 54,4%-ը, ամուսնացած են եղել 43,8%-ը և ամուսնալուծված՝ 1,8%-ը, իսկ 2011թ. նույն ցուցանիշը համապատասխանաբար կազմել է 59.0%, 39.8% և 1.2%⁵: Մարզում ամուսնությունների անկումը պայմանավորված է ոչ միայն ամուսնական տարիքի բնակչության թվի նվազումով, այլ նաև երիտասարդ ընտանիքների համար նոր բնակարան ձեռք բերելու դժվարամատչելիությամբ: Այդ են վկայում նաև մեր կողմից անցկացված էթնոսոցիալական հարցումները⁶: Արժե հիշատակել, որ ՀՀ իշխանություններն այդ հարցում չեն ցուցաբերում խնդրի լուծման արմատական մոտեցումներ: Իսկ երիտասարդ ընտանիքներին առաջարկվող բնակարանի ձեռքբերման հիպոթեքային վարկերից ավելի շատ շահում են ունենոր ընտանիքների ամուսնական տարիքի երիտասարդները, որոնց ճնշող մեծամասնությունը հիմնականում ձգտում է բնակվել Երևանում: Այսինքն՝ երիտասարդ ընտանիքներին տրվող հիպոթեքային վարկերը նպաստում են, որ մարզերում բնակվող ունենոր երիտասարդները տեղափոխվեն մայրաքաղաք կամ նրա մերձակա նորակառույց թաղամասեր: Շիրակի մարզում բարձր է երիտասարդների գործազրկության մակարդակը, ինչն էլ ամուսնանալու խոչընդոտներից մեկն է: Այսպես, մարզում 2001թ. -ին գործազուրկների ընդհանուր թվի 48.9% (քաղաքային բնակավայրում՝ 46.6%, գյուղական բնակավայրերում՝ 61.5%) և 2011թ.՝ 59.3%-ը (քաղաքներում՝ 54.8%, գյուղերում՝ 81,2%), 2019թ.՝ 62.5% (քաղաքներում՝ 57.8%, գյուղերում՝ 84,2%) բաժին է ընկել 15-34 տարեկաններին: Այսինքն՝ այդ տարիներին մարզում գրանցվել է գործազրկության երիտասարդացում: Երիտասարդների շրջանում գործազրկության բարձր ցուցանիշը նույնպես իր գործուն ազդեցությունն ունեցավ արտագաղթի և ամուսնությունների թվի նվազման վրա:

Գյուղական բնակավայրերում երբևէ չամուսնացածների թվի աճը պայմանավորված է առաջին հերթին ամուսնական տարիքի բնակչության մշտական աշխատանքի բացակայությամբ⁷: Մեր կողմից իրականացված էթնոսոցիալական հարցումներից պարզվել է, որ գյուղերում բնակվող երիտասարդ ընտանիքների մեծ մասը ցանկանում է արտագաղթել արտասահմանյան երկրներ կամ մայրաքաղաք⁸: Գյուղական բնակավայրերում մեծ թիվ են կազմում արտագնա աշխատանքի մեկնող երիտասարդները, որոնք հիմնականում ներգրավվում են շինարարական աշխատանքներում⁹, և այսպիսով տարեցտարի նվազում է երիտասարդների զբաղվածությունը գյուղատնտեսական աշխատանքներում:

⁵ Տե՛ս www.armstat.am (13.07.2021):

⁶ **Բոյաջյան Ա. -2019**, ԳԱՆ, տետր 1, թ.12:

⁷ **Բոյաջյան Ա. -2018**, ԳԱՆ, տետր 3, թ.14:

⁸ Նույնը:

⁹ Նույնը:

Բնակչության սոցիալական կազմի փոփոխության վրա ազդեցություն ունի աշխատուժի շարժը¹⁰: Շիրակի մարզում 1997-2020 թթ. բնակչության ընդհանուր թվի փոփոխության հետ կապված՝ աշխատանքային ռեսուրսների համաթվում որոշակի տեղաշարժ է գրանցվել: Ներկայացվող ժամանակահատվածում տնտեսապես ակտիվ բնակչության թիվը նվազել է 31.6%-ով, զբաղվածություն ունեցողներինը՝ 25.1%-ով, գործազուրկներինը՝ շուրջ 2.3 անգամ, իսկ տնտեսապես ոչ ակտիվ բնակչության թիվն ավելացել է 64.4 %-ով: Այս միտումների շարունակվելու դեպքում մարզի աշխատաշուկայում ապագայում գրանցվելու է աշխատուժի պահանջարկի աճ:

Զբաղվածությունն ըստ ոլորտների և գործազրկության մակարդակը որոշակի պատկերացում են տալիս բնակչության սոցիալական կազմի մասին: Մինչ անկախացումը 1988թ. Շիրակի մարզի աշխատունակ բնակչության ընդհանուր թվի 62.8%-ը զբաղված է եղել տնտեսության տարբեր ոլորտներում, նույն ցուցանիշը 1997թ. կազմել է 75.0%, 2001թ.՝ 77.1%, 2011թ.՝ 80.7% և 2020թ.՝ 82.5%: Զբաղվածության տեսակարար համաթվի աճի պատճառն առաջին հերթին աշխատունակ բնակչության թվի նվազումն է և արտագաղթը:

Շուկայական հարաբերությունների պայմաններում ուրույն տեղ են զբաղեցնում սոցիալական ոլորտի կառույցները: Չանտեսելով մյուս ոլորտների կարևորությունը՝ կենտրոնացել ենք հատկապես կրթության ոլորտի վրա՝ հաշվի առնելով, որ վերջինս մարդկային կապիտալի ձևավորման անհրաժեշտ և կարևոր նախապայման է: Շիրակի մարզի գիտակրթական ոլորտը ներառում է նախադպրոցական հաստատությունները, հանրակրթական, երաժշտական, գեղարվեստի դպրոցները, միջնակարգ մասնագիտական հաստատությունները, բարձրագույն ուսումնական հաստատությունները:

Շիրակում 1997-2019 թթ. ընկած ժամանակահատվածում ոլորտում աշխատողների թիվը: Կրթօջախների թվի ավելացում գրանցվել է բացառապես ոչ պետական նախադպրոցական հաստատությունների հաշվին, իսկ մյուս կրթական հաստատությունների թվաքանակը պակասել է:

Աղյուսակ 2-ի թվային ցուցանիշների վերլուծությունից պարզվում է, որ կրթական ոլորտում սովորողների բացարձակ թիվը 1997-2020թթ. նվազել է 26,2 հազ. կամ 38.2%-ով: Այսպես, 1997 թ. կրթական ոլորտում սովորողների թիվը կազմել է մարզի բնակչության ընդհանուր թվի 24,4%-ը, 2007թ.՝ 19,7%, իսկ 2020թ.՝ 18,7%-ը: Կրթական ոլորտում սովորողների հիմնական մասը բաժին է ընկնում հանրակրթությանը, որտեղ ներկայացվող ժամանակահատվածում գրանցվել է սովորողների թվի շեշտակի անկում: 1997-2020 թթ. հանրակրթական դպրոցներում սովորող աշակերտների թիվը նվազել է շուրջ 26.7 հազարով կամ 38.2%-ով: Համեմատության համար նշենք, որ նույն ցուցանիշը ՀՀ-ում կազմել է մոտ 207.3 հազար կամ 34.5%: Ներկայացվող ժամանակահատվածում ՀՀ հանրակրթական դպրոցներում սովորողների ընդհանուր թվի նվազման

¹⁰ Աշխատուժը ներառում է զբաղվածներին և գործազուրկներին, որոնք ստեղծում են աշխատանքի շուկան (աշխատուժի առաջարկի մասով)՝ ապրանքների արտադրության և ծառայությունների արամադրման համար:

12.9%-ը բաժին է ընկնում Շիրակի մարզին, և դա բավականին բարձր ցուցանիշ է: Թե՛ ՀՀ-ում և թե՛ Շիրակի մարզում հանրակրթական ոլորտում սովորողների թվի շեշտակի նվազումը պայմանավորված XXI դ. սկզբին բնակչության ծնելիության մակարդակի անկումով:

Ըստ մեզ՝ ժողովրդագրական կայուն զարգացման պայմաններում 2019-2020 ուսումնական տարում ՀՀ հանրակրթական ոլորտում սովորողների թիվը կազմելու էր շուրջ 800 հազար, իսկ Շիրակի մարզում՝ 85 հազար, այնինչ 2019-2020 ուսումնական տարում Շիրակի հանրակրթական դպրոցներում սովորողների թիվը նշաձողից մոտ երկու անգամ պակաս է:

Աղյուսակ 2

Շիրակի մարզի կրթական ոլորտի հաստատություններում սովորողների թվի շարժընթացը

	Նախադպրոցական հաստատություններ հաճախող երեխաների թիվը	Հանրակրթական դպրոցներ	Երաժշտական, արվեստի և գեղարվեստի դպրոցներ	Միջնակարգ մասնագիտական հաստատություններ	Բուհեր	Ընդամենը
1997թ.	6562	55239	3546	2432	2103	69882
2002թ.	3023	53093	2545	2454	4355	65470
2007 թ.	3516	41545	2415	1092	7940	56508
2012թ.	3809	32201	1938	1328	4959	44235
2017 թ.	5200	30287	2065	1060	2988	41600
2018 թ.	5455	30314	2481	1003	2671	41924
2019 թ.	5695	30191	2461	963	2537	41847
2020թ.	3552	31967	3563	1074	3066	43222

Աղյուսակը կազմելիս օգտագործվել է ՀՀ ԱՎԿ, www.armstat.am (23. 07.2021):

Տեսանելի փոփոխություններ են գրանցվել նաև մարզի բուհերում սովորող ուսանողների թվի շարժընթացում: 1997-2020 թթ. ուսանողների թիվն աճել է 45.8%-ով: Աղյուսակ 2-ի թվային ցուցանիշների հաշվարկից երևում է, որ 1997-2007 թթ. բուհերի ուսանողների թիվն աճել է մոտ 3.8 անգամ, իսկ 2007-2020 թթ. նվազել՝ 2.6 անգամ: Ուսանողներ թվի փոփոխության այդպիսի տատանումները բացատրվում են մի շարք գործոններով: Նախ 2007 թ-ից բուհեր ընդունված արական սեռի ուսանողները գորակոչվում են բանակ: Դրանով նվազել է արական սեռի ուսանողների թիվը: Երկրորդ՝ ուսանողների թվի նվազումը կապված է դպրոցների շրջանավարտների թվի անկման հետ: Երրորդ՝ շուկայական հարաբերությունների պայմաններում բուհերի շրջանավարտների թվաքանակում գործազրկության մակարդակը շատ բարձր է, որպես հետևանք՝ կորել է դպրոցն ավարտողների ցանկությունը՝ ընդունվել բուհ: Ըստ 2001թ. մարդահամարի արդյունքների՝ Շիրակի մարզում բարձրագույն կրթություն ունեցողները կազմել են 15 և բարձր տարիքի բնակչության ընդհանուր թվի 13.6 %-ը, 2011թ.՝ 17.9 %: Նույն ցուցանիշը ՀՀ-ում կազմել է համապատասխանաբար՝ 17.1 և 22.5%: Այսինքն՝ տասը տարիների ընթացքում բարձրագույն կրթություն ունեցողների տեսակարար հա-

մաթվի աճ է գրանցվել: Հիշատակենք, որ ՀՀ բուհերի ուսանողների ընդհանուր թվի 85%-ից ավելին բաժին է ընկնում Երևան քաղաքին: Իսկ նույն ցուցանիշը հանրապետության երկրորդ քաղաք Գյումրիում կազմում է միջինը 4-5%: Ի վերջո ուսանողության գերկենտրոնացումը մայրաքաղաք մեծ վնաս է հասցնում հանրապետության բարձրագույն գիտական և կրթական համակարգի համաչափ զարգացմանը: Շուկայական հարաբերություններին անցումը նպաստեց վճարովի համակարգի ձևավորմանը, ինչը բնակչության ցածր եկամուտներով պայմանավորված, ազդել է նաև ընտանեկան բյուջեի վրա: Մեր անցկացրած էթնոսոցիալական հարցումներից պարզվել է, որ ծնողները երեխաների կրթության վրա ամսական միջինը ծախսում են ընտանեկան բյուջեի 10-30%-ը¹¹: Այդ առումով նշենք, որ Շիրակի մարզում աշխատողների միջին ամսական անվանական աշխատավարձը 2009 թ. կազմել է 74,4 հազ., 2015 թ.՝ 124.2 հազ. և 2020 թ.՝ 117,9 հազ. դրամ¹²: Ներկայումս, ծնողներն իրենց եկամտի մի զգալի մասը ծախսում են երեխաների կրթության վրա:

Շիրակի մարզում 1997-2002 թթ. կրթական հաստատություններում գրանցվել է մանկավարժների և պրոֆեսորադասախոսական անձնակազմի թվի աճ, իսկ 2002-2020 թթ.՝ շեշտակի անկում: Դպրոցներում ուսուցիչների թիվը նվազել է 41.8%-ով, իսկ պրոֆեսորադասախոսական անձնակազմի թիվը՝ 11,5%-ով: Ներկայացվող ժամանակահատվածում դպրոցներում մանկավարժների և բուհերի դասախոսների թվի նվազումը պայմանավորված է նախևառաջ աշակերտների և ուսանողների թվի անկումով: Այսպես, 2002-2020 թթ. աշակերտների թիվը մարզում պակասել է տարեկան միջինը 2.2%-ով, իսկ բուհերի ուսանողներինը՝ 1.6%-ով, ինչը բավականին բարձր ցուցանիշ է և գերազանցում է հանրապետական միջին ցուցանիշը:

Ըստ ՀՀ ԱՎԿ պաշտոնական թվային տվյալների՝ 1997թ. Շիրակի դպրոցների շրջանավարտների 11.7% է ընդունվել մարզի բարձրագույն ուսումնական հաստատություններ, 2007թ.՝ 55.3%-ը, 2017թ.՝ 27.2 %-ը և 2020թ.՝ 30.8%-ը: Ավելացել է թեկնածուի գիտական աստիճան ունեցողների թիվը՝ հատկապես գյուղական բնակավայրերում: Թե ինչպիսիք է դա պայմանավորված, դժվարանում ենք բացատրել: Այսպես, 2001-2011 թթ. ընկած ժամանակամիջոցում մարզի գյուղական բնակչության բարձրագույն կրթություն ունեցողների թիվն ավելացել է շուրջ 3.1 հազարով կամ 51.6%-ով, իսկ գիտական աստիճան ունեցողներինը՝ համապատասխանաբար՝ 92-ով կամ 2.7 անգամ¹³: Ջարմանալին այն է, որ բարձրագույն ուսումնական հաստատություններն ավարտածների և գիտական աստիճան ունեցողների թվի աճը ուղեկցվել է ուսուցիչների թվի, գիտաշխատողների և պրոֆեսորադասախոսական անձնակազմի թվի անկումով: Տպավորություն է ստեղծվում, որ գիտական աստիճան ունենալը, այսպես կոչված, «վարկանիշը բարձրացնելու» հարց է, այլ ոչ գիտությամբ ավելի հիմնավոր զբաղվելու անհրաժեշտություն: Այսպես, Շիրակի պետական համալսարանի շրջանավարտների միայն 15-20%-ն է իր

¹¹ ԴԱՄ-2019, տետր 1, թ. 5:

¹² Տե՛ս [https://www.armstat.am/am/\(23.12.2021\)](https://www.armstat.am/am/(23.12.2021)):

¹³ ՀՀ ԱՎԿ, ՀՀ 2001 և 2011 մարդահամարի արդյունքներ, <https://www.armstat.am/am/?nid=195>, <https://www.armstat.am/am/> (07.11.2021):

մասնագիտությամբ աշխատում, իսկ 35-40%-ը՝ ոչ իրենց մասնագիտական ոլորտում, մնացածը գործազուրկ է կամ արտագաղթել են¹⁴:

Եզրահանգում. Շիրակի մարզի բնակչության սոցիալական կազմի վերաբերյալ շարադրվածից կարելի է հանգել հետևյալ եզրահանգումներին.

- Հայաստանի Հանրապետության անկախացումից և ԽՍՀՄ-ի փլուզումից հետո նոր իշխանությունների որդեգրած քաղաքականության պայմաններում, կապված պետական գույքի սեփականաշնորհման գործընթացի հետ, մեր երկրում, այդ թվում՝ Շիրակի մարզում, տեղի ունեցավ արտադրության միջոցների սեփականատերերի և վարձու աշխատուժի կազմավորում, որի ընթացքում ի հայտ եկան նոր բնեռացված դասեր՝ հարուստներ, միջին խավ, աղքատներ և չքավորներ:
- Մարզի բնակչության սոցիալական կազմում տեղի ունեցան արմատական տեղաշարժեր. սեփականաշնորհման գործընթացով պայմանավորված՝ գրեթե դադարեց արդյունաբերական ձեռնարկությունների գործունեությունը, ինչը հանգեցրեց ինստիտուցիոնալ գործազրկության և բանվոր դասակարգի մասնակի վերացմանը:
- Արդյունաբերական ձեռնարկությունների սեփականաշնորհման արդյունքում Շիրակի մարզն արդյունաբերական հասարակությունից անցում կատարեց ագրարային, ծառայություններ մատուցող և սեզոնային արտագնա աշխատանքի մեկնողների հասարակության:
- Տարեցտարի նվազում է մինչաշխատունակ և աշխատունակ տարիք մուտք գործող բնակչության թիվը, իսկ կենսաթոշակային տարիքի բնակչության տեսակարար համաթիվը մեծանում է, ինչն էլ լարվածություն է ստեղծում ոչ միայն աշխատաշուկայում, այլև ավելացնում է պետության կողմից հատկացվող սոցիալական ծախսերը:
- Վերջին 30 տարիներին ՀՀ-ում, այդ թվում՝ Շիրակի մարզում իրականացված սոցիալ-կրթական քաղաքականությունը նպաստել է բնակչության ծնելիության նվազմանը, աղքատացմանը և արտագաղթին:

ДИНАМИКА СОЦИАЛЬНОГО СОСТАВА НАСЕЛЕНИЯ ШИРАКСКОГО МАРЗА (конец XX в. - начало XXI в.)

Бояджян А. Г.

Ключевые слова: *социальный состав, рабочий, крестьянин, интеллигент, сфера образования, промышленность, служащий, безработный, бедный, богатый.*

В статье представлен прогресс социальной структуры населения Ширакского марза в конце XX века и начале XXI века. Представлены демографические, образовательные и профессиональные характеристики изменений социальной структуры населения региона.

После обретения Арменией независимости и распада СССР политика, проводимая новыми властями в нашей стране, в том числе и в Ширакском марзе, вызвала процесс при-

¹⁴ ԳԱՆ -2020:

ватизации государственной собственности, формирования общественного образования-собственников средств производства и наемного труда, в ходе которого в обществе появляются новые поляризованные классы: богатые, средний класс, бедняки и попрошайки. Ежегодно количество трудоспособных и нетрудоспособных людей сокращается, из-за этого увеличивается пенсионный возраст в населении, что создает напряженность не только на рынке труда, но и увеличивает социальные отчисления, выделяемые правительством.

**SOCIAL STRUCTURE MOVEMENT OF THE POPULATION
OF SHIRAK REGION
(The end of XX century - the beginning of XXI century)**

Boyajyan A. G.

Key words: *social composition, worker, peasant, intelectual class, educational sphere, industry, employee, unemployed, poor, rich.*

The article presents the social structure progress of the population of Shirak region in the end of XX century and the beginning of the XXI century. The paper highlights the demographic, educational and professional characteristics of social structure changes of the population of the region.

After Armenia gained independence and the USSR was collapsed, the policy pursued by the new authorities in our country, including in Shirak region, arose a process of privatization of state property, formation of public education-owners of means of production and hired labor, during which new polarized classes appear in society the riches, the middle class, the poor and the beggars. Annually, the number of employable and unemployable people is decreasing, due to it the percent of retirement age in population is increasing, which creates tension not only in the labor market, but also increases social charges allocated by government.

Գ ր ա կ ա ն ո լ թ յ ո ն

1. ԱՎԿ՝ ՀՀ ազգային վիճակագրական կոմիտե, Զբաղվածությունն արդյունաբերական ձեռնարկություններում, [www. armstat.am](http://www.armstat.am) (01.02.2022):
2. ԱՎԿ՝ ՀՀ ազգային վիճակագրական կոմիտե, ՀՀ 2001 և 2011 մարդահամարի արդյունքներ, <https://www.armstat.am/am/?nid=195>, <https://> (07.11.2021):
3. Բոյաչյան Ա. -2007, Ծիրակի մարզի սոցիալ-տնտեսական զարգացման մի քանի հարցեր (մաս II), ՀՀ ԳԱԱ Ծիրակի հայագիտական կենտրոնի «Գիտական աշխատություններ», հ. X, Գյումրի:
4. ԳԱՆ -2018, Բոյաչյան Ա., Ամուսնությունը և ամուսնալուծությունը Ծիրակի մարզում, տեսք 3, թ.14, Գյումրի:
5. ԳԱՆ -2019, Բոյաչյան Ա., Ամուսնությունը և ամուսնալուծությունը Ծիրակի մարզում, Դաշտային ազգագրական նյութեր, տեսք 1, թ.12, Գյումրի:
6. ԳԱՆ-2019, Բոյաչյան Ա., Ծիրակի մարզի կրթական համակարգի վիճակը, Դաշտային ազգագրական նյութեր, տեսք 1, թ. 5, Գյումրի:

Շիրակի մարզի բնակչության սոցիալական կազմի շարժընթացը (XXI դ. վերջ-XXII դ. սկիզբ)

7. **ԳԱՆ -2020**, Ա. Բոյաջյան, Շիրակի մարզի կրթական համակարգի վիճակը, Դաշտային ազգագրական կյոթեր, տետր 2, թ. 10, Գյումրի:
8. **Մանասյան Մ. և այլք -2002**, Մանասյան Մ.,
9. **Մելքումյան Յու. -2012**, Միջին դասի ձևավորման տեխնոլոգիաների զարգացման հեռանկարները Հայաստանում, ՀՀ ԳԱԱ Լրաբեր հասարակական գիտությունների, N 2-3, Երևան:
10. **www.armstat.am** (13.07.2021), Շիրակի մարզի բնակչության ամուսնության և ամուսնալուծության տարիքային կազմը:

Ընդունվել է՝ 10. 08. 2022
Գրախոսվել է՝ 06. 09. 2022
Հանձնվել է տպ.՝ 28. 11. 2022

Տեղեկություններ հեղինակի մասին

Արտաշես ԲՈՅԱՋՅԱՆ՝ պատմական գիտությունների թեկնածու,
ՀՀ ԳԱԱ Շիրակի հայագիտական հետազոտությունների կենտրոնի
ավագ գիտաշխատող, դոցենտ, էլ հասցե՝ a.bojayyan@mail.ru

ՀՏԴ՝ 7.072.2

DOI: 10.52971/18294316-2022.25.2-194

ՀԵՏԵՐԿՐԱՇԱՐԺՅԱՆ ՔԱՂԱՔԻ ՊԱՏԿԵՐԱԳԻՐԸ

ԳՐԻԳՈՐ ՆԱԼԲԱՆԴ

Արաքս Մարգարյան

Հայաստանի գեղարվեստի պետական ակադեմիայի Գյումրու մասնաճյուղ

Բանալի բառեր՝ երկրաշարժ, Լենինական, փաստագիր, աղետյալ քաղաք, 1980-ական թվականներ, վառ գունապնակ, պոստիմպրեսիոնիզմ, Թերլեմեզյանի ուսումնարան, ինքնատիպ ձեռագիր, դրամատիզմ:

Հրապարակման մեջ ներկայացնում ենք գյումրեցի գեղանկարիչ Գրիգոր Հարությունյանի՝ հայտնի Նալբանդ անվամբ, ստեղծագործությունը, որը մնում է անհայտ անգամ արվեստագետների հանրության համար: Մարդ, որի մասին գրեթե չկան տեղեկություններ, ով կենդանության օրոք չի ցուցադրվել, իսկ արվեստը գրեթե չի ներկայացվել: Այդուհանդերձ, Գրիգոր Նալբանդը մնում է հետերկրաշարժյան Լենինականի ամենաբնորոշ ու վառ փաստագիրներից, որին հաջողվել է վրձնի ու կտավի օգնությամբ պատմել աղետյալ քաղաքի խավարի ու ցրտի, կորուստների և վերագտնումի, նրա բնակիչների քարացած ու սառած հոգիների անվերջանալի դեգերումների, մարդկային տկար մարմնի ու հոգևոր լույսի, մարդ մնալու կարոտի մասին...

Նախաբան. 1960-ականներին ասպարեզ եկան նկարիչներ, որոնց աշխատանքներում ընդգծվում էր նախնառաջ արվեստագետի ինքնատիպ մտածողությունը, սուբյեկտիվ աշխարհընկալումը, ուրույն նկարչական ձեռագիրը, արտահայտչական անսովոր զինանոցը: Գուցե պատահական չէր, որ Հայաստանի ժամանակակից արվեստի նորարար ու վառ ներկայացուցիչները, որոնք կանգնած էին արվեստի հիմքերի վերափոխման ճանապարհին, ծնունդով շիրակցիներ էին՝ գեղանկարիչներ Մինաս Ավետիսյանը, Աշոտ Հովհաննիսյանը, իսկ 1980-ականներից արդեն՝ Այվազ Ավոյանն ու Գրիգոր

Նալբանդը: Այն, ինչ հայտնի է «Շիրակի գունագագառություն» անվամբ, առավել բնութագրական է այս նկարիչների ստեղծագործություններին, որոնցում գույնը ստանում էր դրամատիկ հնչեղ երանգավորում, իսկ կերպարները՝ խորհրդանշական բովանդակություն: Չէ՞ որ Մինասի «Ջաջուռ» կտավը առավել ամբողջական է արտացոլում Շիրակի բնաշխարհի էությունը՝ վեհացնելով տաք ու սառը գույների հակադրամասնությունը, գույնի սիմվոլիկ, հնչեղ էությունը: Վառ գունապանակով էր օժտված նաև Նալբանդը, որին իրավամբ կարելի է անվանել հայկական Գոգեն: Նրա կտավներն այքի են ընկնում տարածաձավալական կառուցվածքով, գունեղ, վառ, թանձր, լուկալ քսվածքներով հագեցած և ուրույն եզրագծերով ագուցված մակերեսներով: Դեղինն ու դարչնագույնը մոգական լույսով են առլեցուն. դրանք ներթափանցում են դիտողի հոգու խորքերը՝ առանձնահատուկ փայլ ու հնչեղություն հաղորդելով կտավներին: Այդ վառվռուն դեղինը տեսնելու համար Վան Գոգը, ժամանակակիցների վկայությամբ, ներշնչվում էր արքենտով և աշխատում բարկ արևի տակ, իսկ Նալբանդը ոգեշնչվում էր հարազատ մարդկանցից ու շրջապատող իրականությունից: Նա, իր սերնդակիցների նման իմաստավորելով պոստիմպրեսիոնիստների արվեստի ուժը, նրանց հռչակեց իրեն ուսուցիչ: Սակայն Նալբանդը երբեք չընդօրինակեց մեծ վարպետներին, այլ վերցրեց նրանց արվեստի սկզբունքը՝ աշխարհին նայել բաց այքերով ու սրտով. սիրել, տրվել, տառապել ու անկեղծորեն պատմել այդ ամենի մասին...

Նալբանդը չափազանց անկեղծ է. ինչպես բոլոր նվիրյալ արվեստագետները, նա էլ պատմում է իր կյանքի պատմությունը, կյանքի իր հայեցակետի մասին, որը մասամբ իդեալականացված է (օրինակ՝ «Ադամ և Եվա», «Առավոտ»), մասամբ էլ՝ դրամատիկ ու տխուր (օրինակ՝ «Մպասում», «Գաղթ»): Նրա համար ներշնչման աղբյուր էր առաջին հերթին իր ընտանիքը՝ կինը, որդիները: Նա հյուսում էր իր կյանքի հեքիաթը, որտեղ տիրում էր սերը: Եվ այդ պատմությունը վեր է հառնում սովորական մարդկային կյանքից, ստանում վերժամանակյա իմաստներ ու խորհուրդներ: «Ադամ և Եվա» կտավում կինն ու տղամարդը եղեմական այգում խայտում են անհոգ ու խաղում դրախտի պտուղների հետ: Նրանք իրենց անգիտության մեջ նույնքան գեղեցիկ են, որքան և հմայված... Նույն շարքի մեկ այլ պատկերում նկարված են այր ու կին՝ թիկունք թիկունքի տված՝ կազմելով մեկ ամբողջություն՝ ասես վերարտադրելով «Այր ու կին՝ մեկ մարմին» արտահայտությունը: Մա մեկ էություն է, տարբեր ծավալների համադրությամբ ստեղծված հիերոգլիֆային պատկեր: Դեղինի ու կարմիրի մինիմալիստական գունային հարաբերությունը ավելի է ընդգծում նկարչի ասելիքը, իսկ սև ուրվագիծը՝ ամբողջացնում պատկերը:

Կնոջ դերը մեծ է եղել Նալբանդի կյանքում: Տիկին Կարինեն սիրով ու ջերմությամբ է պարուրել սիրելի ամուսնուն, եղել է նրա հավատարիմ ընկերը թե՛ լավ օրերին, թե՛ հիվանդության ու նեղության մեջ: Պատահական չէ, որ նրա կերպարը առանձնահատուկ տեղ է զբաղեցնում Նալբանդի արվեստում. նա պատկերված է իբրև ամոթխած փերի («Առավոտ»): Մյուս պատկերում տիրամայր է, որ գուրգուրում է իր զավակին («Մայրություն»): Երրորդ նկարում՝ վշտից կքված տառապող էակ («Մպասում»)... Որպես կանոն՝ նա կնոջը պատկերում է դեղինով, որը այս դեպքում համահունչ է

արևի, կյանքի, լույսի, սրբության հետ: Կինը կենարար աղբյուր է, կյանքի իմաստների ու զգացածի սուրբիմացիա:

Նկարչի կյանքի մասին տեղեկությունները աղբատիկ են, թեպետ ապրում են նրա ընկերները, հարազատները, զավակները: Գրիգոր Նալբանդը ծնվել է 1955 թ. փետրվարի 26-ին Լենինականում: Հայտնի է միայն, որ նա ավարտել է Թերլեմեզյանի ուսումնարանը, ցանկություն է ունեցել ուսումը շարունակել Լենինգրադի գեղարվեստի ակադեմիայում: Բայց ինչ-ինչ պատճառներով երազանքները իրականություն չեն դարձել: Լենինգրադում թողնելով իր լավագույն գործերը, որոնց մասին միշտ հիշում էր ավստասանքով՝ նա վերադարձել էր հայրենի քաղաք ու տարիներ շարունակ դասավանդել Ախուրյանի շրջկենտրոնի արվեստի դպրոցում: Եղել է չհասկացված, ունեցել է մի քանի աշակերտներ: Մեկ-երկու անորոշ տեղեկություններ, գրեթե ոչ մի փաստաթուղթ, հուշ: Մա միստիկա է հաղորդում նկարչի կերպարին, ավելի հետաքրքիր դարձնում նրա արվեստի վերծանումը: Փորձում ենք հասկանալ՝ ո՞ր պահին է Նալբանդի արվեստում եղել բեկումնային, ե՞րբ է նա «արտաքսվել» իր իսկ կերտած դրախտից և հայտնվել իրականության հետնաբեմում: Օգնության եկավ նրա աշակերտներից մեկը՝ արվեստագետ Կարեն Բարսեղյանը, որն իր հուշերում ամրագրել էր նկարչի կերպարը. այն առնչվում է հետերկրաշարժյան դժվար տարիներին¹:

....1988 թվականի ավերիչ աղետը դարձավ 33-ամյա նկարչի կյանքի ջրբաժանը, ինչպես շատերի համար: Երկրաշարժը դարձավ անջրպետ, որը բաժանեց գյումրեցի նկարիչների անցյալը և ներկան: Նկարիչների մի մասը անդրադարձավ կրոնին /Գ. Մանուկյան, Գար. Մանուկյան/՝ փորձելով գտնել իրեն տանջող հարցերի պատասխանները: Եղան նկարիչներ, որոնք աղետի մասին խոսելիս ձևավորեցին իրենց պատկերային սիմվոլիկ լեզուն, արտահայտչամիջոցները /Հ. Ղուկասյան/: Մյուսներն էլ գերադասեցին լքել քաղաքը՝ հեռանալով փնտրելով իրենց սիրելի բնօրրանի ուրվագծերը /Է. Եղիգարյան, Հ. Աղամյան/: Նալբանդի համար, ասես, փուլ էր եկել իրեն քաջ ծանոթ աշխարհը. փոխվել էր երկիրը, փոխվել էր սիրելի քաղաքը, կորցրել էր հարազատ մարդկանց: Զգայուն նկարիչը հայտնվել էր նոր իրականության մեջ՝ տառապագին փորձելով վերագտնել իր «եսը»՝ բազում կորուստների ու տանջալից հարցերի հորձանուտում: Նրա հավատամքը՝ զգալ ու նկարել ապրած ժամանակը, ակամայից դարձնում էր նրան ժամանակագիր: Փոխվում են նաև Նալբանդին բնորոշ գուններանգներն ու պատկերները: Երազանքների աշխարհից նա հայտնվում է իրականություն, որ նրան նայում էր անպատուհան տների կույր խոռոչներով, մերկացած ծառաբներով ու հուսահատության թանձր փոշով: Անշունչ առարկաների մեջ Նալբանդը դնում է էություն ու «խոսեցնում» դրանք, պատմում հետերկրաշարժյան Գյումրու ցուրտ ու սոված ձմեռների, անհույս ու անլույս զարունների մասին... Երբ նրան ակնարկել էին թեմաների միօրինակության մասին, նա պատասխանել է. «Ուրիշ էլ ի՞նչ նկարեմ, սա է իրականությունը»:

Հետերկրաշարժյան քաղաքային պատկերները («Գյումրի», «Նրբանցք N9») կատարված են սեզանական պնդությամբ ու ծավալատարածական լուծումներով: Այստեղ

¹ Կ. Բարսեղյանի հետ զրույցից՝ 11. 03. 2016:


երևում են նկարչի գրագիտությունն ու ամուր ձեռքը: Նա չի կորցնում իրականության զգացողությունը, որը փոխանցվում է հենց իր՝ Նալբանդի պատկերացումով: Փոխվում է նաև նրա ներկայանակը: «Մտորումներ», «Անձրևից հետո», «Գյումրի», «Պարիսպ» կտավներում վառ դեղինի կողքին հայտնվում են մուգ կապույտ երանգներ, ասես նկարչի կտավներում տեղի է ունենում պայքար լույսի ու խավարի միջև, կյանքի ու մահվան, գոյության ու կործանման... Այս շրջանին բնորոշ ներկայակնով նա պատկերել է Լենինականը՝ քաղաքին ոչ բնորոշ գունաշարով: Դա հենց 1990-ականների Լենինականն է՝ սառնությամբ ու խավարով ներծծված: Սակայն նկարիչը երբեք չի կորցնում հույսը քաղաքի ապագայի հանդեպ: «Փողոց», «Նրբանցք N9» կտավներում դարձյալ հայտնվում է երբեմնի դեղինը /միայն թե ոչ անխառն ու ցնծուն/, հագեցնում կտավները լույսով ու ջերմությամբ:

Իսկ մարդիկ... մարդիկ մի թե նախկին դրախտի բնակիչներն են, որոնք չէին ենթարկվում ձգողականության սովորական օրենքներին... «Գաղթականներ» կտավում նրանք կքել են ապրումներից ու հոգսերից, հոգնել գոյության անվերջանալի պայքարից, երբ հանապազօրյա սև ու կոպիտ հացը երազանք էր ու փափագ: Այս ամենը կարող է հասկանալ միայն 90-ականներին Գյումրիում ապրած սերունդը: Այդ օրերի լավագույն հանրագումարն է «Լուռ վիշտ» կտավը: Բնորոշ պատկերված է ինտերիերի կապույտ անկյունում. ասես կյանքի հորձանուտը նրան զրկել է տարածությունից: Մարմինը կքված է, սեղմված, դիրքը՝ գլխիկոր... Նա ծածկել է դեմքը, ասես կորցրել է այն: Առաջին պլանում պատկերված կոպիտ ձեռքերն ու ոտքերն ընդգծում են կերպարի ֆիզիկական ուժն ու հոգու անգորությունը: Ծնկներին դրված բեռը հիշեցնում է քար: Ինքը՝ բնորոշը ևս քարացել է վշտից ու տառապանքից: Նկարը խորհրդանշում է սառնություն ու հուսահատություն. մեկ կերպարով նկարիչը արտահայտել է ողջ սերնդի տրամադրությունը:

Նալբանդը սուր էր վերապրում իրականությունը. իր ապրած ամեն վայրկյանը նա իմաստավորում էր մարդկային կրքերի ու հույզերի հորձանուտում: Իսկ հետերկրաշարժյան քաղաքում դրանք անչափելի էին, և Նալբանդի նման տիեզերական բարության ու սիրո պահանջով ապրող մարդը ի գորու չէր ամբարելու և իմաստավորելու չարիքի ահռելիությունը: Պատահական չէ, որ նրա նուրբ ու զգայուն հոգին չի դիմանում բաժին ընկած տաժանելի բեռին... Նալբանդին, ինչպես և իր պաշտելի հուլանդացուն, բաժին ընկան հոգեկան ցավն ու հիվանդությունը... Մերթ ընդ մերթ նրան թվում էր, որ ինքը Գրիգոր Նարեկացին է... ու փորձում էր այս կերպարով օգտակար լինել մարդկանց: Նա կյանքից հեռացավ 2005թ., իսկ նրա առաջին անհատական ցուցահանդեսը որդին՝ Գոռը, կազմակերպեց 2010 թվականին, Մալմազյան քույրերի պատկերասրահում: Բացմանը ներկա էին նրա հարազատներն ու բարեկամները. հնչում էին գնահատականի ու հարգանքի խոսքեր մարդու հանդեպ, որն իր ողջ կյանքը անմնացորդ նվիրել էր արվեստին:

Եզրահանգում. Նկարչի արվեստի ուսումնասիրությունից հանգում ենք հետևյալ եզրակացությունների.

Գրիգոր Նալբանդի կյանքն ու ստեղծագործությունը երկու առանցքների շուրջ են՝ սեր ու տառապանք... Խավարից հետո մարդ առավել պայծառ է տեսնում լույսը և տառապանքի բովից ելած՝ է՛լ ավելի է փարվում կյանքին, գնահատում նրա ամեն մի վայրկյանը: Այս երկու բևեռների միջև է հյուսվել Գրիգոր Նալբանդի արվեստը: Արվեստ, որը լայն առումով նորարարական է և ինքնատիպ, լուսավոր ու ողբերգական: Նա ապրեց կարճես աննկատ կյանքով, հեռու փառքից ու ճանաչումից, գուրկ հեշտ կյանքի բարիքներից: Նա որոնում էր իր դրախտը և որոնում երկրաշարժից կիսավեր Գյումրիում...



«Ադամ և Եվա» շարքից/ Կտավ, յուղաներկ /80x80



«Առավոտ»/ Կտավ, յուղաներկ /68x68// «Մայրություն» / Կտավ, յուղաներկ /82x110



«Նրբանցք N9» /Կտավ, յուղաներկ /80x60 //«Անձրից հետո»/ Կտավ, յուղաներկ /50x70



«Լուռ վիշտ» /Կտավ, յուղաներկ /80x80//«Գաղթականներ»/ Կտավ, յուղաներկ/100x100

**ХУДОЖНИК ПОСТЗЕМЛЕТРЯСЕННОГО ГОРОДА:
ГРИГОР НАЛБАНД
Маргарян А. В.**

Ключевые слова: Ленинакан, землетрясение, документалист, израненный город, 1980-ые, постмодернизм, училище им. Терлемезяна, яркая палитра, своеобразный почерк, драматический.

Рассматривается творчество гюмрийского живописца Григора Арутюняна, который известен под именем Налбанд. Он остается неизведанным даже для искусствоведов. О нем отсутствует информация, его творчество неизучено. И все же... Григор Налбанд является самым типичным представителем постземлетрясенного Ленинакана, ярким документалистом, кому удалось с помощью красок и кисти рассказать о тьме и холоде разрушенного города, об утрате и об обретении, про окоменевших от горя жителей, о вечных поисках, о тщедушном человеческом теле и свете души, про мечту оставаться человеком ...

**GRIGOR NALBAND - THE DOCUMENTARIAN OF THE
POST-EARTHQUAKE CITY**

Markaryan A. V.

Key words: *Leninakan, documentarian, earthquake, disaster city, 1980s, postimpressionism, Terlemezyan's study, bright palette, original manuscript, dramatic.*

The artworks of Gyumri painter Grigor Harutyunyan known as Nalband remain unknown among the artists' community. There is almost no information about him, there haven't been any exhibitions of his artworks during lifetime and his art has never been presented. Nevertheless... Grigor Nalband remains the quintessential documentarian of post-earthquake Leninakan. With the help of canvas and brush he managed to present the dark and the cold, loss and regain, the endless wander of citizens' frozen and petrified soles, the frail body and spiritual light, the longing to remain human...

Գ ր ա կ ա ն ո լ թ յ ո ն

1. **Աղասյան Ա. -2009**, «Հայ կերպարվեստի զարգացման ուղիները 19-20-րդ դարերում (1828-1991), Երևան, «Ոսկան Երևանցի» հրատ., 292 էջ:
2. **Աղասյան Ա., Հակոբյան Հ., Հասարթյան Մ., Ղազարյան Վ. -2009**, Հայ արվեստի պատմություն, Երևան, «Զանգակ-97», 575 էջ:
3. **Մարգարյան Ա. -2022**, Գրիգոր Նալբանդ, «Գյումրեցի նկարիչներ» շարք, 32 էջ:
4. **Մարգարյան Ա. -2016**, Ծիրակ աշխարհի ստեղծագործողներ, Երևան, 60 էջ:
5. **Մարգարյան Ա. -2018**, Գյումրեցի նկարիչների ստեղծագործությունները՝ 1988թ. աղետի 30-ամյա տարելիցի համատեքստում, Գիտական տեղեկագիր Ծիրակի Մ.Նալբանդյանի անվ. պետական համալսարանի, Գյումրի, 1, էջեր 109-115:

Ընդունվել է՝ 25. 08. 2022
Գրախոսվել է՝ 12. 10. 2022
Հանձնվել է տպ.՝ 28. 11. 2022

Տեղեկություններ հեղինակի մասին՝

Արաքս ՄԱՐԳԱՐՅԱՆ՝ արվեստագիտության թեկնածու, դոցենտ
ՀԳՊԱ Գյումրու մասնաճյուղի կերպարվեստի տեսության ամբիոնի վարիչ,
Ծիրակի Մ. Նալբանդյանի անվ. պետական համալսարանի դասախոս,
Էլ. հասցե՝ araxmargaryan@gmail.com

ՀՏԴ՝ 78.01

DOI: 10.52971/18294316-2022.25.2-201

ԳԵՈՐԳԻ ՏԻԳՐԱՆՈՎԸ «ՆԱՄՈՒՍ» ՕՊԵՐԱՅԻ ՄԱՍԻՆ

Անի Ասատրյան

ՀՀ ԳԱԱ Շիրակի հայագիտական հետազոտությունների կենտրոն
Երևանի պետական կոնսերվատորիայի Գյումրու մասնաճյուղ

Բանալի բառեր՝ *Լ. Խոջա-Էյնաթով, Գ. Տիգրանով, «Նամուս», օպերա, Շիր-վանզադե, վեպ, կոմպոզիտոր, ստեղծագործություն, մեկնաբանություն, երաժշտական թատրոն:*

Իր գիտական երկարամյա գործունեության ընթացքում Լենինգրադի կոնսերվատորիայի պատմատեսական ֆակուլտետի նախկին սան Գ. Տիգրանովը հեղինակեց արտասահմանյան, ռուսական և հայ երաժշտությանը նվիրված մեծաթիվ աշխատություններ, կազմեց և խմբագրեց ժողովածուներ՝ նվիրված Բ. Ասաֆևի, Ա. Խաչատրյանի, Կ. Սարաջևի և այլոց կյանքին ու գործունեությանը:

Մերօրյա երաժշտագետների համար հատկապես մեծ արժեք են ներկայացնում ժամանակակիցների առանձին երաժշտական ստեղծագործությունների տիգրանովյան վերլուծականները կամ, այսպես կոչված, մեկնաբանությունները: Այդ շարքում ուրույն տեղ է զբաղեցնում Լ. Խոջա-Էյնաթովի «Նամուս» օպերային նրա տված գնահատականը, ինչին էլ կանդիդատական և սույն հոդվածի շրջանակներում:

Նախաբան. Լևոն Ալեքսանդրի Խոջա-Էյնաթովը (Լ.Ա. Խոջա-Էյնաթյանը) Լենինգրադի կոմպոզիտորական դպրոցի հայագիտական ներկայացուցիչներից է, որի ստեղծագործական գործունեությունը բուռն վերելք ապրեց 1930-1950թթ.¹: Նա ծնվել է 1904 թ. Թիֆլիսիում, որտեղ և ստացել է նախնական երաժշտական կրթություն: 1926-1927 թթ. Լ. Խոջա-Էյնաթովը տեղափոխվել է Երևան կոմպոզիցիայի տեսություն ուսանել Ա.

¹ Друскин М. -1956, с. 18.

Սպենդիարյանի մոտ, ապա կրթությունը շարունակել Լենինգրադի (այժմ՝ Սանկտ Պետերբուրգ) «Երաժշտական առաջին ուսումնարանում»՝ պրոֆեսոր Պ. Ռյազանովի մոտ (1928-1931թթ.)²: Ուսումնական տարիները հետո աշխատել է Լենինգրադի դրամատիկական թատրոնում որպես դիրիժոր և երաժշտական մասի ղեկավար: Հենց Լենինգրադում էլ սկիզբ է առել նրա ստեղծագործական գործունեությունը: Արդեն 1931-1941թթ. Լ. Խոջա-Էյնաթովը գրել է տարբեր ժանրերի մի քանի հետաքրքիր ստեղծագործություններ՝ «Քառասունմեկերորդ» սիմֆոնիկ պատմվածքը (ըստ Բ. Լավենի), «Կուլեկտիվ ֆերմա» սյուիտը սիմֆոնիկ նվագախմբի համար, երգեր, ռոմանսներ և այլն: Բայց երիտասարդ ստեղծագործողին ամենաշատը հետաքրքրում էր երաժշտական թատրոնի ոլորտը: Եվ նա սկսում է երաժշտություն գրել խորհրդային դրամատուրգների պիեսների համար: Նույն տարիներին Ի. Չերժինսկու, Վ. Ժելոբինսկու և Լենինգրադի մի քանի այլ կոմպոզիտորների հետ Խոջա-Էյնաթովն ակտիվ գործունեություն է ծավալում խորհրդային թեմաներով օպերա ստեղծելու նպատակով: 1931 թ. երաժշտական տեխնիկումի ուսանողների ջանքերով բեմադրվում է նրա դիպլոմային աշխատանքը՝ «Դարպաս» օպերան՝ նվիրված հեղափոխության առաջին տարիներին Ուրալում սոցիալիստական շինարարությանն ու դասակարգային պայքարի թեմային: Յոթ տարի անց՝ 1938 թ., Լենինգրադի օպերայի ակադեմիական փոքր թատրոնում բեմադրվում է նրա «Ապստամբություն» օպերան, իսկ 1940 թ. Վ. Ի. Նեմիրովիչ-Դանչենկոյի անվան թատրոնում՝ «Երջանկություն փնտրողները» ֆիլմի սյուժեի հիման վրա «Ընտանիք» օպերան³:

Չխորանալով Լ. Խոջա-Էյնաթովի ստեղծագործական ողջ գործունեության վերլուծության մեջ՝ նշենք միայն, որ արդեն 1930-1940-ական թվականներին դրսևորվեց կոմպոզիտորի բուռն հետաքրքրությունը խորհրդային թեմատիկայի նկատմամբ, նրա ցանկությունն իր ստեղծագործություններում արտացոլելու մարդկանց կյանքն ու դարաշրջանի իրադարձությունները, հետաքրքրությունը խորհրդային օպերայի զարգացման խնդիրների նկատմամբ, մղումը խոսելու պարզ ու արտահայտիչ երաժշտական լեզվով, որը հիմնված կլինի ժողովրդական երաժշտության ինտոնացիաների և գերակշռող խորհրդային մասսայական երգի վրա:

«Նամուս» օպերան Գեորգի Տիգրանովի մեկնաբանությամբ

Հայրենական մեծ պատերազմի տարիներին լինելով նախ Լենինգրադում, ապա տարհանման մեջ՝ Մոլոտովում⁴, Խոջա-Էյնաթովը շարունակաբար աշխատում է նոր գործերի վրա. Լենինգրադի հերոսական պաշտպանության թեմայով գրում է «Երեք հանդիպում» օպերան, ապա «Բալթիկ ծովում» սիմֆոնիկ պոեմը և երաժշտություն մի շարք դրամատիկական ներկայացումների համար: 1945թ.-ին նա վերադառնում է Լենինգրադ, միանում տեղի կոմպոզիտորների միության ստեղծագործական կյանքին և ավարտին հասցնում «Նամուս» օպերան: Կյանքի վերջին տարիներին դաշնամուրի և

² Հետագայում այդ տեխնիկումը կոչվեց Մ.Պ. Մուսորգսկու անվամբ:

³ Լ. Խոջա-Էյնաթովի մասին մանրամասն տե՛ս **Կարագյուլյան Է. -1975**, էջ 3-27:

⁴ Խոսքն այժմյան ՌԴ Պետրո քաղաքի մասին է: ԽՍՀՄ Գ.Խ նախագահության 1940 թ. մարտի 8-ի որոշմամբ քաղաքն ի պատիվ ԽՍՀՄ կառավարության նախագահի վերանվանվեց Մոլոտով: Քաղաքի հին անունը վերականգնվեց միայն 17 տարի անց՝ 1957 թ. հոկտեմբերի 2-ին http://www.libussr.ru/doc_ussr/ussr_5231.htm

նվագախմբի համար Լ. Խոջա-Էյնաթովը ստեղծում է նաև «Միմֆոնիկ հեքիաթ» կոնցերտը՝ նվիրված Հոկտեմբերյան հեղափոխության 30-ամյակին⁵:

«Նամուս» օպերան գրվել է հայ նոր գրականության դասական Շիրվանզադեի համանուն վեպի հիման վրա: Դա մի տխուր պատմություն է՝ բռնի բաժանված երիտասարդների՝ Մուսանի և Մեյրանի դժբախտ սիրո, տառապանքի և մահվան մասին: Ինչպես Շիրվանզադեի մյուս ստեղծագործություններում («Քառոս», «Պատվի համար», «Չար ոգի»), այնպես էլ «Նամուս»-ում անձնական սիրային ողբերգությունը վերաճում է սոցիալական ողբերգության: Իր ստեղծագործության մեջ Շիրվանզադեն բացահայտում է XX դ. սկզբի հայ հասարակական կյանքի հակասություններն ու արատները, ճշմարտացիորեն ներկայացնում գավառական քաղաքի սովորույթները, ժամանակի հոգեբանությունը, ապացուցում, որ տեղի ունեցած ողբերգության պատճառը սոցիալական համակարգն է:

Վեպում առանձնակի ուժով զարգանում է հայ կնոջ իրավագուրկ լինելու թեման: Ներկայացնելով նրա հոգևոր գեղեցիկ կերպարը՝ հեղինակը բարձրաձայնում է նրա սիրելու և երջանիկ լինելու իրավունքի մասին:

Վեպի հումանիստական բարձր պաթոսը, բարձրացված սոցիալ-էթիկական և հոգեբանական խնդիրների կարևորությունը, մարդկային կերպարների խորը և ճշմարտացի բացահայտումը, առօրյա կյանքի վառ պատկերումը և վերջապես գործողության զարգացման բուռն դրաման ու արտահայտիչ լեզուն այն դարձրին հայ գրականության ամենահետաքրքիր և ժողովրդի կողմից սիրված ստեղծագործություններից մեկը: Միաժամանակ, վեպը բեմական և, մասնավորապես, օպերային գործողությունների համար պարունակում էր ուշագրավ նյութ: Հեղինակն ինքը վեպը վերամշակել է դրամայի, որի սյուժեով էլ 1925թ. նկարահանվել է Հայֆիլմի առաջին գեղարվեստական ֆիլմը: Այս ամենը, անշուշտ, չէր կարող չգրավել կոմպոզիտորին ու այս սյուժեի հիման վրա օպերա գրելու գաղափար չառաջացնել⁶:

Լ. Խոջա-Էյնաթովը «Նամուս» օպերայի վրա աշխատեց վեց տարի՝ 1939-1945 թթ.: Օպերայի առաջին մասն ավարտին է հասցվել 1941թ., իսկ մնացածը՝ 1942-1944 թթ. Լենինգրադում և Մոլոտովում: Օպերան ավարտական տեսքի է բերվել և առաջին անգամ բեմադրվել Երևանում՝ 1945թ.⁷:

Աշխատելով օպերայի լիբրետոյի և պարտիտուրի վրա՝ Լ. Խոջա-Էյնաթովը փորձել է իր ուշադրությունը կենտրոնացնել կյանքի դրամայի, ողբերգական ճակատագրի ու կերպարների խորը հուզական ապրումների վրա, երաժշտական ու բեմական կերպարներում մարմնավորել Շիրվանզադեի վեպի հիմնական գաղափարը: Նա շրջանցել է դրամատուրգիական կողմնակի գծերը, երկրորդական կերպարներն ու առօրյա մանրամասները և գործողությունները կենտրոնացրել գլխավոր հերոսների (Մեյրան, Մուսան, Ռուստամ, Բարխուդար) ու նրանց հարաբերությունների շուրջ⁸:

⁵ Кабалеvский Д. -1955, N 5, с.с. 8-9.

⁶ Тигранов Г. -1960. с. 137.

⁷ Կարապոլյան Է. -1975, էջ 38:

⁸ Друкян М. -1956., Ходжа Эйнатов. -1956. с. 49.

Օպերայի գործողությունները տեղի են ունենում XX դարասկզբին Շամախի քաղաքում⁹: Ուսումն ավարտած Մեյրանը երկար բացակայությունից հետո վերադառնում է հայրական տուն և հանդիպում հարևան Բարխուդարի դստերը՝ Սուսանին, որին սիրում էր և որի հետ նշանված էր մանկուց: Աղջկա հետ մենակ մնալով՝ խորը զգացումներով տարված երիտասարդը, խախտելով ավանդույթը, համբուրում է նրան: Ակնթարթորեն քաղաքով մեկ լուրեր են տարածվում, թե իբր Մեյրանը պատվազրկել է Սուսանին ու խայտառակել Բարխուդարին: Վերջինս հրաժարվում է իր աղջկան Մեյրանին կնության տալուց և խզում բարեկամությունը նրա հոր՝ Հայրապետի հետ: Հակառակ իր կամքին՝ Սուսանին ամուսնացնում են Ռուստամի հետ: Մեյրանը խնդրում է սիրելիին փախչել իր հետ, բայց դժբախտ աղջիկը չի համարձակվում հակառակվել հոր կամքին: Ռուստամի հետ Սուսանի հարսանիքի ժամանակ անսպասելիորեն հայտնվում է Մեյրանը, փորձում է խանգարել, բայց նրան վննդում են: Հուսահատության մեջ նա լքում է հայրենի քաղաքը:

Սկսվում են Մեյրանի թափառումները: Դադստանում նա հանդիպում է Ռուստամին: Վերջինիս ընկեր Հովհաննեսը փորձում է հաշտեցնել երիտասարդներին և առաջարկում է գինետանը խմել Ռուստամի երջանիկ ամուսնության կենացը: Մեյրանն իմանում է, որ Սուսանը շուտով որդի է պարգևելու Ռուստամին: Վշտից ու մեղքի զգացումից իրեն կորցրած երիտասարդը Ռուստամին հասկացնում է, թե ինքը մտերիմ է եղել Սուսանի հետ: Երիտասարդների միջև վեճ է սկսվում, ապա Ռուստամը շտապում է տուն՝ իրեն անարգած անհավատարիմ կնոջից վրեժ լուծելու:

Կատաղած երիտասարդը ստիպում է Սուսանին խոստովանել, որ սիրում է Մեյրանին, բայց Սուսանը երդվում է, որ հավատարիմ է եղել Ռուստամին: Վերջինս չի հավատում: Միայն արյունը կլվանա նրա ամոթը: Խանդի պոռթկումի մեջ նա սպանում է Սուսանին: Այդ պահին ներս է վազում Մեյրանը: Վերջինս սթափվելով հասկացել էր, որ զրպարտել է Սուսանին: Կանխատեսելով, որ Ռուստամը դաժանորեն կվարվի աղջկա հետ, նա շտապում է կանխել դժբախտությունը, բայց արդեն ուշ էր: Մեռնող Սուսանից Մեյրանը խնդրում է իրեն ներել, ապա ինքնասպանություն է գործում:

Օպերայի հիմքում Սուսանի և Մեյրանի կերպարներն են: Կոմպոզիտորը վառ և արտահայտիչ գույներ է գտել իր հերոսներին ճշմարտացի պատկերելու, նրանց հոգեկան ապրումները փոխանցելու համար: Նրանց երաժշտական կերպարները բացահայտվում են աստիճանաբար՝ զարգացման մեջ: Առաջին գործողության սկզբում դրանք պատկերված են վառ լիրիկական գույներով՝ հովվերգական հանդարտ միջավայրում: Մեյրանի սերենադում և հատկապես նրա ու Սուսանի սիրային զուգերգում փոխանցվում են Մեյրանի ոգևորությունն ու երիտասարդական խանդավառությունը, Սուսանի կանացիությունը, քնքշությունն ու անմիջականությունը, նրանց զգացմունքների ամբողջությունը: Մեյրանի և Սուսանի զուգերգը օպերայի ամենագունեղ հատվածներից է: Նվագախմբում հնչում են վալտռոնների թախծագործով «հառաչները», ծնվում է «կրքոտ սիրո» լեյթ թեման:

⁹ Մանրամասն տե՛ս **Շիրվանզադե Ալ. -1901:**

Թվում է, թե ոչինչ չի կարող ստվերել երիտասարդների երջանկությանը: Սակայն գործողությունը զարգանում է սրընթաց, խախտվում է անդորրը, փլուզվում են Սուսանի ու Մեյրանի բոլոր հույսերը: Սոխյադաբար բաժանված սիրահարները հոգեկան խորը տառապանք են ապրում: Փոխվում է նաև երաժշտությունը: Այն դառնում է առավել հուզիչ ու դրամատիկ: Արդեն Սուսանի փոքր մեներգը (ариезо) և նրա դուետը Մեյրանի հետ (բաժանման տեսարանը) առաջին գործողության եզրափակիչ մասում հնչում են տխուր ու ողբալի: Սուսանի փոքր մեներգով սկսվում է երկրորդ՝ «տառապանքի» լեյթ-թեման:

Մեյրանի մենախոսությամբ կոմպոզիտորը ունկնդրին է փոխանցում նրա հակասական ապրումները, ցավը, վրդովմունքը, հուսահատությունն ու զայրույթը: Մեղեդու կրքոտ ելևէջները փոխվում են հուսահատության թախծոտ բացականչությունների, առկայծում է խեղված «սիրո թեմա»-ն: Կոմպոզիտորը հաջողությամբ կիրառում է երաժշտական և դրամատիկ հակադրության տեխնիկա. մենախոսության բարձրակետին հանկարծ միանում է դրան հակադրվող պանդուկի հարբած այցելուների երգը: Այն պահին, երբ Մեյրանին պատում են Ռուստամի հետ Սուսանի հարսանիքի մասին ծանր մտքերը, նվագախմբում վերստեղծվում է հարսանեկան խնջույքի երաժշտական պատկերը, հնչում է գուռնան:

Առավել տպավորիչ է օպերայի եզրափակիչ տեսարանը՝ ողբերգական հանգուցալուծումը (Ռուստամի բացատրությունը Սուսանի հետ և Սուսանի ու Մեյրանի մահը): «Պատվի թեմայի» մռայլ ու ողբալի հնչյունների ֆոնին օպերան ավարտվում է «սիրո թեմայի» լուսավոր հնչողությամբ:

Լ. Խոջա-Էյնաթովն ընդգծված է պատկերել նաև Ռուստամի և Բարխուդարի կերպարները: Ըստ Գ. Տիգրանովի՝ նրան հաջողվել է յուրաքանչյուրի համար գտնել անհատական լեզու: Դա երևում է բարկացած Բարխուդարի արհայում (I գործողության մեջ), ինչպես նաև հազիվ զսպված զայրույթով տոգորված Ռուստամի վերջնաբառում¹⁰:

Հետամնաց գավառական քաղաքի սոցիալական միջավայրը ներկայացնելու համար կոմպոզիտորը դիմել է երաժշտական կերպարների այլ շրջանակի՝ բամբասկոտ կանայք, խնամախոսներ, խնջույքի սեղանի շուրջը հավաքված հյուրեր և այլն: Այս առումով հետաքրքիր է և յուրօրինակ II գործողության մեջ հարսանիքի երաժշտական պատկերը. Ռուստամի հետ Սուսանի հարսանիքը անարգանք է Մեյրանի հանդեպ: Այս տեսարանը պատկերված է սառը երանգներով, զվարճանքն այս տեսարանում վայրենի է, տոնական հանդիսավորությունը՝ սպառնալից, իսկ եզրափակիչ խմբերգը սգերթի բնույթ ունի: Կենդանի զգացումով են համակցված միայն անսպասելիորեն հայտնված Մեյրանի վերջնաբառն ու Սուսանի և աղջիկների խմբերգը:

Գ. Տիգրանովի կարծիքով, օպերայի երաժշտական դրամատուրգիայում մեծ դերակատարություն ունի սովորույթների և նախապաշարմունքների սարսափելի, մարդկանց հանդեպ թշնամական ուժի լեյթմոտիվը, որը արտացոլված է «Նամուս» վեպում:

¹⁰ Тигранов Г. -1960. с. 140.

Նա Լ. Խոջա-Էյնաթովի այս մտահաղացումը պայմանականորեն բաժանել է «պատվի» և «ճակատագրի» լեյթոմոտիվների¹¹:

Երթի ծանր ռիթմը, մեղեդու զգայացունց ու ազդու բացականչությունները, «սարը» ներդաշնակ նվագախմբային երանգավորումը նրան տալիս են հանդիսավոր ու չարաբաստիկ բնույթ. իր իմաստային նշանակությամբ ու ձայնի բնույթով այն համադրվում է Վերդիի օպերաներում և Չայկովսկու սիմֆոնիաներում հանդիպող «ճակատագրի» թեմաներին: Ինչպես Շիրվանզադեի վեպում «պատիվը» մեկ հանգույցի մեջ է կապում հերոսների փոխհարաբերությունները և կանխորոշում նրանց ճակատագիրը, այնպես էլ «պատվի» մոտիվը մտնում է օպերայի հերոսների երաժշտական կերպարների «ճակատագրի» մեջ՝ դառնալով երաժշտա-թատերագրական զարգացման կարևորագույն գործոններից մեկը: Առաջին անգամ այն հայտնվում է օպերայի նախերգանքում և հակադրվում է «սիրո» լեյթ-թեմային, ապա հնչում այն պահին, երբ Բարխուդարը բացատրություններ ստանալու համար գնում է Հայրապետի ու Սեյրանի մոտ և ևս մեկ անգամ տազնապալի ու հեզնական «առկայծում» Սեյրանի՝ հարսանիքին հայտնվելու տեսարանում: III գործողության ժամանակ այն ներխուժում է արդեն ինտոնացիոն ոլորտ՝ հերոսների երաժշտական լեզվի մեջ, լսվում Սեյրանի հուսահատ ճիչերում (Սեյրանի մենախոսությունը III գործողության առաջին տեսարանում): Վերջապես, եզրափակիչ տեսարանում այն հնչում է ողբալի, չարագուշակ ու սպառնալից (սգո երգչախմբային հյուսվածք, նվագախմբի մոռյալ ու ցածրաձայն ռեգիստր):

«Նամուսը» քնարական-հոգեբանական օպերա է՝ իր ժանրային առանձնահատկություններով ու երաժշտական դրամատուրգիայի մեթոդներով սերտորեն կապված Պ. Չայկովսկու և Ս. Ռախմանինովի օպերային ավանդույթներին:

Գ. Տիգրանովի կարծիքով, Լ. Խոջա-Էյնաթովը զգում և հասկանում է օպերային արվեստի օրենքներն ու յուրահատկությունները, տիրապետում է օպերային արտահայտչամիջոցներին¹²: Ըստ դրամատուրգիայի անհրաժեշտության՝ նա դիմում է հուզական արտահայտիչ ռեչիտատիվին ու պարզ երկտող երգի ձևերին (խնամախոսի և հարբած հյուրերի երգեր, Սեյրանի սերենադ), արիաներին, երաժշտական և դրամատիկական մենախոսություններին (Մուսանի փոքր մեներգը, Բարխուդարի մեներգը, Սեյրանի մենախոսությունը III գործողության մեջ) և, վերջապես, անսամբլային ձևերին (դուետներ, տրիոներ, քառյակներ): «Նամուս» օպերայի ժանրային առանձնահատկություններով պայմանավորված՝ կոմպոզիտորը զգալիորեն կրճատում է խմբերգերի օգտագործումը, վերջինս հանդիպում է միայն II գործողության մեջ՝ հարսանիքի տեսարանում:

Կառուցվածքային առումով «Նամուսը» առանձին «համարներից» բաղկացած ստեղծագործություն է: Դրանք միավորվում են ավելի զարգացած տեսարանների մեջ և ընդգրկվում երաժշտական-դրամատիկական գործողությունների շարունակական հոսքի մեջ: Օպերայի գործողությունները զարգանում են արագ՝ լուսավոր առաջին տեսա-

¹¹ Тигранов Г. -1947. N 4, с. 40.

¹² Тигранов Г. 1960. с. 142.

րանից դրամատիկ հակադրությունների միջով մինչև աղետալի հանգուցալուծումը վերջում:

Օպերայում գերիշխում է վոկալ-մեղեդիական սկզբունքը: Հեղինակը զգում է երգող ձայնի արտահայտիչ հնարավորությունները: Պատկերավոր, կոնկրետ, մարդկային փորձառությունների բազմազան շրջադարձերը փոխանցող, մեղեդայնությունը ստեղծագործության լավագույն կողմերից են:

Զգալի է նաև նվագախմբի դերակատարությունը: Նա մեկնաբանում է երաժշտական-բեմական գործողությունները, նպաստում հոգեբանական դրամայի բացահայտմանը, հանդես է գալիս իբրև օպերայի երաժշտական դրամատուրգիայի և լեյթմոտիվների զարգացման արդյունավետ գործոն:

«Արտաքին էֆեկտներին խորթ՝ Լ. Խոջա-Էյնաթովը ձգտում է երաժշտական հյուսվածքի յուրաքանչյուր տարրի դրամատիկական և հոգեբանական հիմնավորմանը», - գրում է Տիգրանովը¹³: Օպերայի պարզ ու արտահայտիչ լեզուն ասոցացվում է հայկական ժողովրդական երաժշտության հետ: Մակայն կոմպոզիտորը չի դիմում ժողովրդական երաժշտության մեջբերմանը: Փոխարենը ժողովրդական երգի հիմքը զգացվում է օպերայի երաժշտության մոդալ-ինտոնացիոն և մետրո-ռիթմիկ առանձնահատկությունների մեջ՝ վերջինիս տալով ազգային բուրմունք: Այն օգտագործվում է ինչպես ժանրային առօրյա դրվագների ու բնության էսքիզների պատկերման, այնպես էլ հերոսների հոգևոր աշխարհի բացահայտման ժամանակ: Գ. Տիգրանովը նման երևույթներ է առանձնացնում «տառապանքի» լեյթմոտիվում: Այն իր ինտոնացիաներով մոտ է «Տուն արի» ժողովրդական երգին ու պարին (II գործողություն) և կոմպոզիտորը ստեղծագործության այս հատվածում հմտորեն օգտագործել է հայկական ժողովրդական պարերին բնորոշ մետրոռիթմները¹⁴:

Նույն սկզբունքով՝ հարսանեկան արարողության տեսարանում կոմպոզիտորին հաջողվում է հասնել նվագախմբի յուրօրինակ հնչողության. լսվում է հայկական ժողովրդական գործիքների (զուռնա, դուդուկ, դհոլ) ձայնը: Առանձին հատվածներում զգացվում են հայկական երաժշտության լադային առանձնահատկություններ:

«Նամուս» օպերայում ժողովրդական երգի ձևերը հարստացված են եվրոպական և ռուսական օպերային դասականներից որդեգրված կոմպոզիտորական տեխնիկայով ու հայկական ազգային օպերայի ավանդույթներով (հիմնականում զգացվում է Ալ. Մպենդիարյանի ազդեցությունը):

«Նամուս»-ն առաջին անգամ բեմադրվել է 1945թ. նոյեմբերին՝ Երևանի Ալ. Մպենդիարյանի անվան օպերայի և բալետի թատրոնում (ղիրիժոր՝ Ս. Չարեկյան, ռեժիսոր՝ Վ. Աճեմյան): Մեկ տարի անց՝ 1946 թ., այն բեմադրվել է նաև Լենինգրադում (ղիրիժոր՝ Ի. Շերման, բեմադրող ռեժիսոր՝ Երմակով):

Եզրահանգում. Գեորգի Տիգրանովի համոզմամբ, «Նամուս»-ը Լ. Խոջա-Էյնաթովի ստեղծագործական հաջողությունն է, նրա լավագույն, զեղարվեստական առումով ամենաամբողջական և հասուն ստեղծագործությունը և իրավունք ունի իր արժանի տե-

¹³ Тигранов Г. 1960. с. 143-144:

¹⁴ Тигранов Г -1947. N 4, с. 42.

ըը զբաղեցնելու հայ երաժշտական թատրոնի պատմության մեջ: Իր ստեղծագործության մեջ կոմպոզիտորին հաջողվել է փոխանցել վեպի հիմնական գաղափարը, նրա սոցիալ-հոգեբանական սկիզբը, ստեղծել հերոսների հիշարժան երաժշտական կերպարներ, փոխանցել մարդկային խորը մտահոգությունները: Իր երաժշտությամբ Խոջա-Էյնաթովը ստիպում է ունկնդրին անկեղծ համակրանք զգալ Սեյրանի և Սուսանի ճակատագրի նկատմամբ: Միաժամանակ, նրա ստեղծագործությունն ուշադրություն է հրավիրում օպերային արվեստի ամենաթույլ զարգացած քնարա-հոգեբանական ժանրի վրա: Ըստ Գ. Տիգրանովի՝ Խոջա-Էյնաթովը «Նամուս»-ի միջոցով զալիս է ապացուցելու այս ժանրի կենսունակությունն ու զարգացման անհրաժեշտությունը:

ГЕОРГИЙ ТИГРАНОВ ОБ ОПЕРЕ «НАМУС»

Асатрян А. О.

Ключевые слова : *Л. Ходжа-Эйнатова, Г. Тигранов, "Намус", опера, Ширванзаде, роман, композитор, произведение, интерпретация, музыкальный театр.*

Опера написана на основе романа Ширванзаде. По словам Г. Тигранова высокий гуманистический пафос романа, правдивое раскрытие человеческих характеров, драматизм развития действия и натолкнула Ходжа-Эйнатова на мысль написать оперу.

"Намус" - лирико-психологическая опера, связанная своими жанровыми особенностями, приемами музыкальной драматургии с оперными традициями Чайковского и Рахманинова. Ходжа-Эйнатова понимает специфику оперного искусства, владеет оперными формами и выразительными средствами. В зависимости от драматургической необходимости он прибегает к эмоциональному выразительному речитативу, к простым куплетным песенным формам, ариям, музыкально-драматическим монологам. Чуждый внешних эффектов, Ходжа-Эйнатова стремится к драматургической и психологической оправданности каждого элемента музыкальной фактуры. Простой и выразительный язык оперы связан с армянской народной музыкой. Однако композитор не прибегает к цитатному использованию народной музыки; вместо этого народно-песенная основа ощущается в ладо-интонационных и метроритмических особенностях музыки оперы, придавая последней национальный колорит. Народнопесенные формы в опере обогащены приемами композиторской техники, воспринявшей особенности европейской и русской оперной классики.

По мнению Г. Тигранова "Намус" творческая удача Л. Ходжа-Эйнатова, его лучшее, наиболее художественно законченное и зрелое сочинение и достойно занять свое место в истории армянского музыкального театра.

GEORGI TIGRANOV ON "NAMOUS" OPERA

Asatryan A. H.

Key words: *L. Khoja-Einatov, G. Tigranov, "Namus", opera, Shiravanzade, novel, composer, work, interpretation, musical theatre.*

The opera was written based on Shirvanzade's novel of the same name. According to G. Tigranov, the high humanistic pathos of the novel, the truthful disclosure of human characters, and the dramatic development of the action motivated L. Khoja-Einatov to write an opera.

With its genre features and musical dramaturgy methods "Namous" is a lyrical-psychological opera closely related to the operatic traditions of Tchaikovsky and Rachmaninoff. "Namus" is a lyrical-psychological opera, closely related to the operatic traditions of Tchaikovsky and Rachmaninoff with its genre features and musical dramaturgy methods. A stranger to external effects, Khoja-Einatov strives for the dramatic and psychological justification of every element of the musical texture. The simple and expressive language of the opera is associated with Armenian folk music. The composer does not resort to quoting folk music. Instead, the basis of the folk song is felt in the modal-intonational and metro-rhythmic features of the opera music, giving the latter a national flavor. Folk song forms in opera are enriched with compositional techniques adopted from European and Russian operatic classics.

According to G. Tigranov, "Namous" is L. Khoja-Einatov's creative success, his best, artistically most complete, and mature work, and deserves its place in the history of Armenian musical theatre.

Գ ր ա կ ա ն ո լ թ յ ո ն

1. **Վարագյուկյան Է. -1970.**, Խոջա-Էյնատյան. կյանքը և ստեղծագործությունը, Երևան, «Հայաստան» հրատ., 124 էջ:
2. **Շիրվանզադե Ալ. -1901**, Նամուս, Թիֆլիս, տպ. «Տ.Մ. Ռօսինեանցի», 265 էջ:
3. **Друскин М. -1956.** Леон Александрович Ходжа Эйнатов. Л., "Гос. Муз. Изд-во". 377 с..
4. **Кабалевский Д. -1955.** Дискуссионные заметки о симфонизме // "Советская музыка" N 5, с.с. 4-15.
5. **Тигранов Г. -1960.** Армянский музыкальный театр. Очерки и материалы, т.2, Ереван. "Айпетраг" 308 с..
6. **Тигранов Г. -1947.** Опера «Намус» Ходжа Эйнатова, "Советская музыка". N 4. с.с. 38-42.
7. http://www.libussr.ru/doc_ussr/ussr_5231.htm

Ընդունվել է՝ 28. 09. 2022
Գրախոսվել է՝ 21. 10. 2022
Հանձնվել է տպ.՝ 28. 11. 2022

Տեղեկություններ հեղինակի մասին

Անի ԱՍԱՏՐՅԱՆ՝ Երևանի Կոմիտասի անվան կոնսերվատորիայի
Գյու.մրու. մասնաճյուղի տնօրենի տեղակալ,
<< ԳԱԱ Ծիրակի հայագիտական հետազոտությունների
կենտրոնի հայցորդ, էլ հասցե՝ aniani79@mail.ru

ՀՏԴ՝ 781.7

DOI: 10.52971/18294316-2022.25.2-210

ՈՂԲԵՐԳԻ ԺԱՆՐԸ ՇԻՐԱԿԻ ԱՐԴԻ ԵՐԱԺՇՏԱԿԱՆ
ԲԱՆԱՀՅՈՒՍՈՒԹՅԱՆ ՄԵՁ

Հասմիկ Հարությունյան

ՀՀ ԳԱԱ Շիրակի հայագիտական հետազոտությունների կենտրոն
Երևանի Կոմիտասի անվան պետական կոնսերվատորիայի Գյումրու մասնաճյուղ

Բանալի բառեր՝ Շիրակի մարզ, երաժշտական բանահյուսություն, ողբերգ, ժանր, ոճ, արտահայտչամիջոցներ:

Հողվածը նվիրված է հայ երաժշտական բանահյուսության կարևորագույն ժանրերից մեկի՝ ողբերգի կամ սգո երգերի արդի գրառումներին, որոնք իրականացվել են Շիրակի մարզում: Քննության են առնվել ոչ միայն ժանրային առանձնահատկությունները, այլև այն կարևոր կոմպոզիցիոն բաղադրիչները, որոնք ժամանակի ընթացքում պահպանել են կենսական կայունություն:

Նախաբան. Շիրակի երաժշտական ժառանգությունը բացառիկ կարևոր տեղ ունի ունի հայ ազգային երաժշտական արվեստի զարգացման մեջ: Ժողովրդական հարուստ բանահյուսությունը, որ ներծծված էր Արևմտյան Հայաստանի երաժշտական բարբառներից ծնված ժանրային ոճական առանձնահատկություններով, ինքնատիպ հանգրվան գտավ Շիրակի տարբեր համայնքներում և շարունակեց կրել հայ ազգային ինքնության վառ տարրեր:

Ժողովրդական երգի կենսատու միջավայրի փոփոխման և մշակութային բարդ հիմնախնդիրների համատեքստում անդրադարձել ենք *ողբերգի* կամ *սգո երգի* ժանրի արդի գրառումներին՝ կարևորելով այս ժանրի կենսունակության, կարևորագույն բնորոշիչների պահպանման կամ փոխակերպման առանձնահատկությունները:¹

¹ Ողբերգի ժանրի պատմաբնական դիտարկումներին անդրադարձել ենք մեր հոդվածում (տե՛ս *Հարությունյան Հ. -2022, էջեր 184 -189*):

Հիմնվել ենք 2015-2021թթ. ՀՀ ԳԱԱ Շիրակի հայագիտական հետազոտությունների կենտրոնի երաժշտագիտական խմբի կողմից իրականացրած ազգագրական, բանահյուսական արշավախմբերի նյութերի վերլուծության վրա: Այս երգերի մի մեծ խումբը պետք է դիտարկել որպես նախորդ սերունդներից հաջորդին փոխանցված ժառանգություն: Հետևաբար, որպես ինքնատիպ ժառանգություն՝ դրանք մեծ մասամբ ապրում ու գոյատևում են որպես հիշողություն: Սրանով է պայմանավորվում երգերի ժանրային համակարգի փոխակերպված պատկերը. պահպանվել են ընտրովի, նախասիրված ժանրերը:

Գրառված, ձայնագրված ժողովրդական երգը կարող է գոյատևել բավական երկար ժամանակ: Սակայն ավանդույթը՝ երգաստեղծության ստեղծարար մեխանիզմը, որը հիմնված է դարավոր գենետիկ հիշողության և փորձի վրա, կարող է գոյատևել միայն նոր երգերի ստեղծման և կատարման պայմանների առկայության դեպքում: Շիրակի արդի բանահյուսության մեջ այսօր կան երգաստեղծության կենդանի ավանդույթով ստեղծված երգերի նոր նմուշներ: Դրանք, անշուշտ, անհատ երգասացների տաղանդի արգասիքն են: Կարևոր է այն, որ այդ երգերը, ստեղծվելով համայնքային միջավայրի մեջ, կատարվում են որպես ավանդական նմուշներ:

Ինչպես հայտնի է, հայոց հինավուրց *հուղարկավորության* կամ *ողբական արարողության* մեջ կան բնորոշիչներ, որոնք ներկայացել են տարբեր ոլորտներում՝ պարերում, պարերգերում, երգերում: «Չնայած անտարանջատ բնույթին, երաժշտությունը՝ որպես յուրօրինակ հնչյունակերտ տարր, ներկայացել է յուրովի: Արմատներով խորանալով հայ մշակույթի հինավուրց շերտերի մեջ, խիստ ավանդականությամբ, ծիսական այս համալիրը պահպանել է ոչ միայն իր կենսունակությունը, այլև ժամանակի ընթացքում խթանել է նոր՝ վիպական դրամատիկական մշակույթի զարգացումը»²:

Որպես հնագույն ծիսական բաղադրիչ՝ սգո երգերը կենսականորեն պահպանել են գործառույթն ու ոճական կարևոր տարրերը: Ըստ Մ.Աբեղյանի՝ դրանք հայրենի չափով հյուսված անդրանիկ տաղերն են:³ «Դրանք /կոճի երգերը/ ժամանակի միակ պատմական հիշատակարաններն են եղել կամ ճիշտ ասած՝ նույն դերն են կատարել, ինչ որ մեր ժամանակ լրագրերը կատարում են՝ լուր տալով եղած դեպքերի համար և մահաբան /նեկրոլոգ/ գրելով նշանավոր անձերի մահվան առիթով»:⁴

Ծիսական նկարագրի պարզության հետ մեկտեղ, նկատելի է այս երգերի ոճական բազմազանությունը, ինչը ներքին կապ է ստեղծում բանահյուսական այլ ժանրերի հետ:

Բազմազան է նաև երգերի կատարման համատեքստը: Ա.Ղանալանյանն այսպես է նկարագրել սգո երգերը. «Սգո կամ լալիքի երգեր են կոչվում հայ ժողովրդական քնարերգության այն նմուշները, որոնք հորինվել են մահվան առթիվ և կատարվել հուղարկավորության ժամանակ ննջեցյալին ողբալիս»:⁵

² Հարությունյան Հ. -2010, էջեր 16 -17:

³ Տե՛ս Աբեղյան Մ. -1940:

⁴ Աբեղյան Մ. -1966, էջ 489:

⁵ Ղանալանյան Ա. -1946, էջ 42:

Ե. Հարությունյանը, անդրադառնալով այս բնութագրին, իրավացիորեն նկատել է, որ այն թերի է, քանի որ սգո երգերը կատարվում են ոչ միայն հուղարկավորության, այլև հետագա արարողությունների ժամանակ, բայց աներկբայելի տարբերակիչ գիծ է դրանց՝ մահվան առիթով հորինվելը:⁶ Ավելին, «Ողբասացներն այցելուներին պատմում են պատահած դժբախտության, նրան մահից խլելու մերձավորների ջանքերի, նրա փոխարեն մեռնելու պատրաստակամության մասին, բացահայտում են իրենց ապրումները նրա մահվան կապակցությամբ, անիծում մահվան պատճառը, բնութագրում հանգուցյալի կիսատ թողած գործերը, անկատար երազները և գովում նրա արտաքին ու ներքին բարեմասնությունները: Իբրև կայուն բնորոշիչ ողբերգերի մեջ *վիպականության* /ընդգծումը մերն է - Հ.Հ./ դրսևորումներին՝ նրանք մխիթարողներին պատասխանում են իրենց վշտի անփարատելիության փաստարկներով, հորդորում վախճանվածին հանգիստ ու անքեն ուղևորել այն աշխարհը [...] և իր ետևից մարդ չտանել, իսկ եթե դա անխուսափելի է, տանել որևէ անհույս հիվանդի կամ ծերի: Մերթ կրկին հանդիպելու հույս են հայտնում, մերթ ընդմիջտ բաժանվելու հուսահատություն»:⁷

Առավել խորքային է Մ. Բրուսյանի դիտարկումը. «Ողբերն իրենց թեմատիկայով կարող են աղերսվել ժողովրդական երգաստեղծության տարբեր ժանրերի հետ: Օրինակ՝ ողբերգերը մոտ են դյուցազներգերին, երբ մեռնողը ժողովրդական հերոս է և արժանի է գովքի, իսկ օրորներին՝ այն դեպքում, երբ մեռնողը երեխա է, և արվում է երեխային համապատասխանող ողբ-գովեստ: Ողբերն իրենց բանաստեղծական որոշ պատկերներով կարող են աղերսվել նաև պանդխտության ու պատմական երգերին, նույնիսկ հարսանեկան երգի ժանրին, լավիքին: Ողբերը չունեն կոնկրետ կառուցվածք և չեն ենթարկվում որևէ կոմպոզիցիոն օրենքի:

Կառուցվածքային ազատությունը բխում է ողբերին բնորոշ անկանոն պատմողականությունից, քանի որ ողբացողը վշտից խելակորույս, արտահայտում է երբեմն մեկը մյուսի հետ կապ չունեցող մտքեր. դրանք բորբոքվում են հասկապես ցավակցելու համար եկողների երևալով, որոնցից յուրաքանչյուրը ողբացողի մեջ արթնացնում է մի նոր հիշողություն, որը և նա սկսում է անմիջապես պատմել»:⁸

Կոմիտասը հայ գեղջուկ երգի տեսակների երրորդ խմբում՝ պատմական երգերի մեջ առանձնացնում է վիպասականն ու հերոսական մահերգը,⁹ և դրանք դասում է ամենաբարդ երգերի շարքին. «Տեսական եւ դիմացկուն են շինական, ծիսական, վիպական, վիպաքնարական, անտունի եղանակները, որոնք դարերով եւ ամուր կապուած են ժողովրդական սովորութիւնների եւ ասանդութիւնների հետ: Բայց, որովհետեւ բարդ են, գիւղացիներից շատին անմատչելի են: Այժմ իմացողներին մատով են ցոյց տալի: Սովորութիւնների հետ այս կարգի եղանակներն էլ են կորչում:

Վիպականը բարդ է, որովհետեւ անբաժան է եւ վեպը եղանակից: Պատմական վիպաքնարականը թէպէտ պարզ եղանակ ունի, բայց երկար պատմերգութիւն է»:¹⁰

⁶ Հարությունյան Ե. -2007, էջեր 129 -130:

⁷ Նույն տեղում, էջեր 168 - 169:

⁸ Բրուսյան Մ. -2014, էջ 136:

⁹ Կոմիտաս -2005, էջ 331:

¹⁰ Նույն տեղում, էջ 373:

Այսպիսով, ակնհայտ են ողբական արարողության կայուն բաղադրիչների մեջ այլ ժանրերի հետ աղերսները: Դրանցից առավել կայուն են *դյուցազներգերի, պատմական և պանդխտության* երգերի, ինչպես նաև *օրորների* հորինվածքային կամ արտահայտչական տարրերը:

Նկատի առնելով այն իրողությունը, որ ժամանակի հոլովույթում առավել տուժել է վիպական բանահյուսությունը, հետևաբար սգո երգերը մեծ հետաքրքրություն են ներկայացնում հենց վիպականության տարրերի ու բնորոշիչների շնորհիվ:

Հիմնվելով Շիրակի տարածաշրջանում ներկայումս պարբերաբար իրականացվող բանահավաքչական աշխատանքների արդյունքների վրա՝ կարող ենք նշել, որ ողբական արարողությունն ու դրան ուղեկցող սգո երգերը Շիրակի տարածաշրջանում ոչ միայն պահպանել են իրենց ծիսական գործառույթները, այլև համատեքստի շնորհիվ հարստացել ու բազմազան են դարձել:

Չխորանալով ծիսական համալիրի բաղադրիչների նկարագրի մեջ, կարող ենք խմբավորել սգո երգերը հետևյալ կերպ.

- Երգեր, որոնք հորինվում և կատարվում են հանպատրաստից՝ ողբական արարողության ընթացքում:
- Երգեր, որոնք նախապես ընտրվում կամ հատուկ հորինվում և նաև կատարվում են ողբասացների կողմից:
- Երգեր կամ նվագներ, որոնք ծիսականացվում և կատարվում են հոգեհանգստյան արարողությունների ժամանակ:

Այստեղ մենք անդրադարձել ենք երգերի վերոնշյալ խմբերից երկրորդին՝ ուշադրությունը սևեռելով այն կարևոր իրողության վրա, որ Շիրակի մարզի բազմաթիվ գյուղական համայնքներում կան ողբասացներ, որոնք մասնակցում են ողբական արարողություններին՝ հատուկ հորինված կամ ընտրված երգերի կատարումներով:

Բովանդակության շրջանակները բավական լայն են. «սգի հրավեր, ննջեցյալի գովք, մահվան հանգամանքների նկարագրություն, մահվան առաջ բերած վշտի մեծության պատկերում: Սգում են պանդխտության մեջ մեռած հարազատին կամ հյուսված են նրա անունից: Ամենահուզիչ հատվածները ներկայացնում են թաղումից որոշ ժամանակ անց գերեզման այցելած մոր երկխոսությունը մեռած որդու հետ, ընդհանուր բնույթի սգերգ, որ հնարավոր է երգել յուրաքանչյուր հարազատի մահվան դեպքում»:¹¹

Անշուշտ, սգո երգերի մեջ պահպանվել են ավանդաբար՝ սերնդեսերունդ փոխանցվածները: Դրանք վերաբերում են 20-րդ դարասկզբի պատմական իրադարձություններին և հատկապես 1918-1920-ականներին թուրքական զինակալման ընթացքում Շիրակի գավառի ազգաբնակչության կրած ողբերգություններին:

Թուրքի ճամփեն բավական տարածված երգ է, և հորինված է աշուղական սիրավեպերի երգերի դարձվածքների ազդեցությամբ: Փռուզիական քառալարի տոնիկայի հաճախակի կիրառումն ու փոքր սեկունդային քայլի վրա հիմնված հանգամանքները ողբականության հիմնական կրողներն են:

¹¹ Հարությունյան Ե. –2007, էջ 42:

Թուր-քի ճամ - փեն քա-ռա - քու-ռա, գյուլ-լեն մե-ջը կը-ֆըռ -
 ֆը-ռա, սըր - տիս յա - րեն կը - մըռ - մը-ռա, խա - փեք
 մո - ղըս վի - ռա - վոր եմ, խա - փեք մո - ղըս վի - ռա -
 վոր եմ, վի - ռա - վոր եմ, տուն գա - լու չեմ:

Նույն պատմական իրադարձությունների մասին է *Տաճիկը նոր ջուրն անցավ* երգը.¹²

Տա-ճի - կը նոր ջուրն ան - ցավ, իմ մու - խըս մա - րեց,
 տա-րավ թառ-լան բա - լն - - - ս,
 դըռ-նե-րը շա րե - - - ց, ա-ման վառ-վում եմ:
CODA
 Ա - ման վառ - վու - - - մ եմ, տեղ ու
 ճար չու - նե - մ, էլ ինչ - պես սպ - րեմ:

Վարդի պես պահեցի,
 Մինչև մարդ էրի,
 Բարբարոս թուրքերին,
 Տվեցի գերի,
 Աման, վառվում եմ:

¹² Ողբասացն է Օֆիկ Մանասի Ավագյանը՝ ծնվ. 1948 թ. Փանիկ գյուղում: Նախնիները Փանիկից են: Կրթությունը միջնակարգ:

Եթե նախորդ երգը հիմնված է թախծոտ մեղեդու վրա, ապա այս ողբերգը, որը հագեցած է հառաչանքներից բխող ելևէջների վրա, հանկարծաստեղծ հորինվածք է՝ ասերգային դարձվածքներով:

Մահացածի անունից հորինված երգերի տիպական նմուշներից է *Մնաս բարով, կանաչ գարուն* երգը,¹³ որը սգակիր հարազատների վիշտը առավել խորացնելու միտում ունի: Սգո երգի այս ձևը այսօր էլ հաճախ են կիրառում ողբասացները:

Մը - նաս բա - րով կա - նաչ գա րուն, մը - նաս բա - րով բա - լա
 3 ջան, հե - ռա - նա - լով ես ձե - գա - նից կիջ - նեմ խո - րունկ գե - րեզ - ման,
 6 հե - ռա - նա - լով ես ձե - գա - նից մայ - րիկ ջան, կիջ - նեմ խո - րունկ գե - րեզ - ման:
 9 Հան - կար - ծա - կի հի - վան - դա - ցա, գոս - ալի - տա - լում պառ - կե - ցա, ե - կեք, տե - սեք ազգ
 12 բա - րե - կամ, որ ես կիջ - նեմ գե - րեզ - ման, գե - րեզ - մա - նիս բա - րի վը - բա
 14 ծա - դիկ ցա - նիր մա - մա ջան, ծա - դիկ ցա - նիր ար - ցունք
 16 թա - փիր, ես ջա - հել եմ մա - մա ջան:

Հիմնականում փռուզիական քառալարի սահմաններում ծավալվող նույն *ծանր* սեկունդային հանգաձևերը դարձյալ հագեցած են ասերգային դարձվածքներով:

Հաճախակի պտտվող վարքնթաց ինտոնացիաները ողբի ու հեծեծանքի նմանակումներ են: Մակայն դրանք հորինված են ոչ միայն վարպետորեն, այլև լիովին համահունչ են ժողովրդական երաժշտամտածողությանը: Համեմատելու համար դիտարկենք Կոմիտասի գրառած ողբերգերից մեկը՝ *Մի, աման, յաման*.¹⁴

¹³ Ողբասացն է Լիզա Գուրգենի Մարգարյանը՝ ծնվ. 1935թ. Քարաբերդ գյուղում: Ունի ութամյա կրթություն: Նախնիները գաղթել են Մուշից 1915թ.:

¹⁴ Կոմիտաս - 2000, էջ 90:

Ա՛յն: Ա - ման, յա - ման,
 ա - ման,
 ա - ման, յա - ման, ա - ման, յա - ման...

Թեև երգը ծավալվում է եղևկան մինորում, սակայն *հեծեծանք դարձվածքների* կրկնությամբ գրեթե նույնական է:

Նույն լադում է ծավալվում, սակայն ասերգային տարրերի առատությամբ առավել աչքի է ընկնում նաև կոմիտասյան մեկ այլ ողբերգ՝ գրառված Վանում. *Ելեր կայներ խորոտիկ Մրտոն*.¹⁵

[Զափակոր. Andante con moto, amoroso]

Ե - լեր կայ - ներ խորոտիկ Մըր - տոն
 նա - նե՛, կա - սա, դո՞ր ա իմ ա - փոն...
 վա՛յ լե, լե, վա՛յ լե, լե,
 վա՛յ լե, լե:

Սկատելի տիպական տարրերից մեկը դարձյալ երգի դարձվածքային հանգաձևերում տոնիկայի կրկնողությունն է: Մա շատ հետաքրքիր հորինվածքային քայլ է, որտեղ երգի հիմնաձայնը կարգավորում է կառույցի բոլոր սեգմենտները:

¹⁵ Կոմիտաս -2000, էջ 108:

Ինչպես վերևում նշվեց, հատուկ ողբական արարողության համար հորինված երգերում նկատվում են ժողովրդական այլ ժանրերի՝ քնարական, պատմական երգերին բնորոշ դարձվածքներ: Սա միանշանակ, ողբասացի ընտրության շրջանակներում է: Ահավասիկ, Քարաբերդ գյուղում այսօր կատարվող ողբերգերից մեկը. *Քնա մայրիկ, մահս տես երագով*.¹⁶

Աշխարհու-մըս ես մեկ այ-գի ու նե - ցա, ծառ-նե - ըրս ող-բա-լով,
 4 այ-գե - պա-նը խեղճ, մը - տա այ-գիս ան-տուն,
 7 վար - դը, մա - նու - շա-կը ու շու - շա-նը խեղճ:
 10 Ես մի ձայն լը - սե ցի, շատ ող-բա-լի է, տե-սա, որ
 14 սո - խակն է ող-բում լա-լա-գին: Բը-նի չորս բո - լո - ըր
 17 օ-ձը ման գու-կար մայ-րը բը - նից թը ռավ, ձա- գուկ - նե - ըր խեղճ,
 21 թա-գը մը-նաց գա-հին սը-գա-լով, լա - լով, սի-րե - լի հայ -
 24 ըի - կըս, ինձ կըս - կիծ տա - լով, սի-րա-տուն մայ - ըի- կիս
 27 հե- տե - վից լա-լով, պի - տի մըտ-նեմ գե- ըեզ - մանս ող- բա - լով:

¹⁶ Ողբասացն է Լիզա Գուրգենի Մարգարյանը:

Մորից հավերժ բաժանվողի մորմոքով լեցուն բովանդակությունը հիմնվում է պատմական երգերում հանդիպող դեպքերի ու իրադարձությունների թվարկումների վրա: Այս երգում տեքստի եղանակավորումը հիշեցնում է հենց այդ երգերին բնորոշ շարունակ վերադարձող դարձվածքները: Փոքր ձայնածավալը, մածոր լադը, տոնիկայի զգալի ներկայությունը՝ տերցիային օժանդակ հենակետի զգալի ներգործության պայմաններում, նպաստում է երգի բովանդակային-հուզական նկարագրի ամբողջացմանը:

Թվարկված առանձնահատկություններն առավել թանձրացած են *Աշխարհումս մեկ այգի ունեցա* ողբերգում:¹⁷

Երգի արտահայտչական հենքը հարմոնիկ քառալարի սահմաններում ծավալվող ինտոնացիոն դարձվածքների հնարավոր բազմազանությունն է: Կրկնվող, նաև տարբերակված ողբական մոտիվները, որոնք ողբասացությունից են բխում, մինևույն ժամանակ այդ միօրինակության շնորհիվ շեշտում են հեծեծանքի զգացողությունները:

Ինչպես տեսնում ենք, ողբասացները, հմտորեն վերցնելով ողբերգերի ավանդական արտահայտչամիջոցները, կարողացել են ազատ ստեղծագործել իրենց կարողությունների և երևակայության սահմաններում:

Շիրակյան մերօրյա գրառումներում բավական թվով ողբերգեր նվիրված են *մահվան խոհափիլիխտիայությանը*: Ահավասիկ, *Էս աշխարհն էլ երագի պես* երգը¹⁸, որը կրում է ողբերգերին բնորոշ բոլոր առանձնահատկությունները:

Էս աշխարհն էլ ե-րա-գի պես, ես էլ մեկ անց - վոր եմ, կեր-թամ,

5 ու-սու- մից տը - կար եմ էս - պես, մա-հըս է - կավ, թող-նիմ կեր-թամ:

9 Գիտ-նա-կան - ներ հաս-կա - ցել են, ումն է աշ - խարհն

12 ի - մա - ցել են, 6 բո-լորն է - կել

14 գը-նա - ցել են, ես էլ մեկ անց - վոր եմ, կեր - թամ:

¹⁷ Երգը գրառվել է Օֆիկ Մանասի Ավագյանից՝ ծնվ. Փանիկ գյուղում, 1948թ.: Կրթությունը՝ միջնակարգ: Նախնիները Փանիկից են:

¹⁸ Երգը ողբասացից սովորել է Անահիտ Արտաշեսի Ճվթյանը՝ ծնվ. Փանիկ գյուղում 1956 թ.: Նախնիները Կարինից են:

Բացի լադային, մետրական, ռիթմական բնորոշ տարրերից, զգացվում է նվագարանային զարդելիւէջների ազդեցությունը, ինչը, ամենայն հավանականությամբ, աշուղական երգերի ազդեցությունից է:

Հիմնվելով այս դիտարկումների վրա՝ կարող ենք նկատել ավանդական ողբերգերի ծիսական գործառույթից բխող կայուն ժանրային բնորոշիչներ, որոնք՝ որպես հորինվածքային կարևորագույն բաղադրիչներ, պահպանվել են նաև այսօր: Իբրև կայուն մեխանիզմներ, այդ բաղադրիչները անվնաս են պահում բանահյուսական հորինվածքային ավանդական համալիրը՝ հնարավորություն տալով զգալու անհիշելի ժամանակներից մեզ հասած ծիսական սգո երգերի ծիսական արտահայտչականությունը: Մա բանահյուսական երգաստեղծության շարունակական գոյատևման գրավականներից մեկն է:

Եզրահանգում. Ամփոփելով՝ նշենք հետևյալը. հայոց հինավուրց ողբական արարողությունը ժամանակի ընթացքում թեև փոփոխվել է, սակայն ծիսական կարևոր տարրեր փոխակերպվել ու յուրովի են արտահայտվել: Ժողովրդական սգո երգերը կամ ողբերգերը, ակնհայտ է, կրում են արխաիկ շերտեր և արտահայտչաձևեր: Այստեղ հանդիպում են թե՛ վաղնջական մշակույթից հիշվող արտահայտչաձևեր, թե՛ ծիսական որոշակի տարրեր:

Անդրադառնալով սգո երգերի մերօրյա գրառումներին՝ ուշադրությունը սևեռեցինք այն կարևոր իրողության վրա, որ Շիրակի մարզի բազմաթիվ գյուղական համայնքներում կան ողբասացներ, որոնք մասնակցում են ողբական արարողություններին՝ հատուկ հորինված կամ ընտրված երգերի կատարումներով: Կարևորում ենք նշել այս ժանրի գործառույթներից բխող ուրույն համալիրի մասին, որի հորինվածքային մեխանիզմները ժամանակի հոլովությամբ զարմանալի կենսունակություն են հանդես բերել:

ЖАНР СКОРБНОЙ ПЕСНИ В СОВРЕМЕННОМ МУЗЫКАЛЬНОМ ФОЛЬКЛОРЕ ШИРАКА

Արուտյոյան Ա. Գ.

Ключевые слова: *Ширакский регион, музыкальный фольклор, песня скорби, жанр, стиль, средства выразительности.*

Статья посвящена современным записям одного из важнейших жанров армянского музыкального фольклора – скорбным или траурным песням, которые исполнялись в Ширакской области. Были рассмотрены не только жанровые особенности, но и те важные композиционные компоненты, которые сохранили жизненную устойчивость во времени.

GENRE OF LAMENT SONG IN MODERN MUSICAL
FOLKLORE OF SHIRAK

Harutyunyan H. H.

Key words: *Shirak region, musical folklore, song of sorrow, genre, style, means of expression.*

The article is devoted to the study of modern records of one of the most important genres of Armenian musical folklore, the dirge or mourning songs, which were performed in the Shirak region. Not only genre features were examined, but also those important compositional components that have maintained vital stability over time.

Պ ր ա կ ա ն ո լ յ ո ն

1. **Աբեղյան Մ. -1940**, Գուսանական ժողովրդական սաղեր, ժողովրդական խաղիկներ, Երևան:
2. **Աբեղյան Մ. -1966**, Երկեր, հ.Ա, Երևան:
3. **Քրուսյան Մ. -2014**, Հայ ժողովրդական երաժշտական ստեղծագործություն, Երևան:
4. **Կոմիտաս -2000**, Երգերի ժողովածու, հ.11, Երաժշտական ազգագրական ժառանգություն. Հայ ժողովրդական երգեր, Գիրք Գ, Երևան:
5. **Կոմիտաս -2005**, Հայ զեղջուկ երաժշտություն, Ուսումնասիրություններ եւ հոդուածներ, Գիրք Ա, Երևան:
6. **Հարությունյան Ե. -2007**, Հայ ժողովրդական սգո երգեր // «Հայ ազգագրություն և բանահյուսություն», հ. 24, Երևան:
7. **Հարությունյան Հ. -2010**, Երաժշտությունը V- XV դ.դ. հայ մատենագրության մեջ, Երևան:
8. **Հարությունյան Հ. -2022**, Ողբերգի ժանրային մի քանի առանձնահատկությունների շուրջ, ՀՀ ԳԱԱ ԵՀՀ կենտրոնի «Գիտական աշխատություններ», հ. 25, սր. 1, Գյումրի:
9. **Ղանալանյան Ա. -1946**, Հայ ժողովրդական բանահյուսություն, Երևան:

Ընդունվել է՝ 19. 09. 2022
Գրայնագրվել է՝ 14. 10. 2022
Հանձնվել է տպ.՝ 28. 11. 2022

Տեղեկություններ հեղինակի մասին

Հասմիկ ՀԱՐՈՒՆՅԱՆԻՆՅԱՆ՝ արվեստագիտության թեկնածու, դոցենտ,
ՀՀ ԳԱԱ Ծիրակի հայագիտական հետազոտությունների կենտրոնի ավագ գիտաշխատող,
Երևանի Կոմիտասի անվան կոնսերվատորիայի Գյումրու մասնաճյուղի տնօրեն,
Էլ հասցե՝ hasmik.har@mail.ru

Գ Ր Ա Խ Ո Ս Ո Ւ Թ Յ Ո Ւ Ն
РЕЦЕНЗИЯ
BOOK REVIEW

ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ԱՐԺԵՔՎՈՐ ԲԱՌԱՐԱՆՆԵՐ

Լ. Մ. Խաչատրյան, Մ. Վ. Միրումյան, «Հայերենագիտական տերմինների ուսումնական բառարան», Երևան, ՀՀ ԳԱԱ «Գիտություն» հրատ., 2020, 440 էջ:

Լ. Մ. Խաչատրյան, «Լեզվաբանական տերմինների ուսումնական բառարան», Երևան, ՀՀ ԳԱԱ «Գիտություն» հրատ., 2021, 446 էջ:

ՀՀ ԳԱԱ «Գիտություն» հրատարակչությունը 2020 թվականին լույս է ընծայել Խ. Աբովյանի անվան Հայկական պետական մանկավարժական համալսարանի Լեզվաբանական հետազոտությունների գիտական լաբորատորիայի վարիչ, բանասիրական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր Լայիկ Խաչատրյանի և մանկավարժական գիտությունների թեկնածու, դոցենտ Մարգուշ Միրումյանի «Հայերենագիտական տերմինների ուսումնական բառարանը», իսկ 2021-ին՝ պրոֆ. Լ. Խաչատրյանի «Լեզվաբանական տերմինների ուսումնական բառարանը»: Սրանք միասին ամբողջացնում են ընդհանուր լեզվաբանության տերմինների համակարգային նկարագրությունը: Տողերիս հեղինակն այս երկու բառարանների մասնագիտական խմբագիրն է:

Լեզվաբանական ընդհանուր և մասնավոր բառարաններ շատ չեն եղել մեզանում: Նշենք մի քանիսը՝ Մ. Հարությունյանց, «Հայ-ռուսերեն լեզվաբանական բառարան» (Երևան, 1963), Հ. Պետրոսյան, Մ. Գալստյան, Թ. Ղարազյուլյան, «Լեզվաբանական բառարան» (Երևան, 1975), Ա. Նազարյան, «Լեզվաբանական տերմինների ֆրանսերեն-ռուսերեն-հայերեն ուսումնական բառարան» (Երևան, 1993), Ֆ. Խլղաթյան, «Ոճաբանական տերմինների բառարան-տեղեկատու» (Երևան, 1976), «Ոճաբանական բառարան» (Երևան, 2000): Հանրագիտարանային բնույթ ունի Հ. Պետրոսյանի մեծարժեք «Հայերենագիտական բառարանը» (Երևան, 1987):

Հայերենագիտական և լեզվաբանության տերմինների նշված բառարանները կազմվել են ժամանակակից կրթական բարեփոխումների թելադրանքով: Լեզվաբանական վերջին բառարանի հրատարակչությունից տասնամյակներ են անցել. զգացվում էր նոր բառարան կազմելու անհրաժեշտություն, այնպիսի բառարանի, որը համահունչ

կլիներ հայագիտական ու լեզվաբանական դպրոցական և համալսարանական դասընթացների նոր պահանջներին:

Լ. Խաչատրյանի և Մ. Միրումյանի «Հայերենագիտական տերմինների ուսումնական բառարանը» կազմվել է վերոհիշյալ բառարաններից տարբեր՝ փնջային սկզբունքով. հայերենագիտական տերմինները տրվում են ըստ լեզվի բնագավառների, թեմատիկ խմբավորմամբ: Տրվում է հայերենագիտական տերմինների բացատրությունը. Յուրաքանչյուր եզր մեկնաբանվում է բովանդակային համակողմանի ընդգրկումով, տերմինային շրջապատով, որը բառարանին հաղորդում է ուսումնական ձեռնարկի արժեք: Օգտակար կարող է լինել բանասիրություն ուսանողներին, հայոց լեզվի և գրականության ուսուցիչներին:

Հնչյունաբանություն բաժնում տրվում են լեզվի առաջին մակարդակի առանցքային միավորները, և բնութագրվում են դրանց հատկանիշները: Ըստ բառահոդվածների մեկնաբանվում են *հնչյունն ու հնչույթը*, կատարվում են հնչյունների դասակարգումներ. *ձայնավորները*՝ ըստ լեզվի և ըստ շրթունքների դիրքի, բաղաձայնները՝ ըստ ձայնի և աղմուկի հարաբերության, ըստ արտաբերման տեղի և եղանակի, տրվում են *հնչյունափոխության դրսևորումները* (դիրքային, շեշտափոխական, փոխազդեցական, ընդհանուր-պատմական), բնութագրվում են *վանկը, երկբարբառը, եռբարբառը, շեշտը* և այլն:

Գրաբանություն բաժնում դիտարկվում են ընդհանուր ճանաչողության հարցեր՝ *գիրը* (պատկերագրություն, գաղափարագրություն, հնչյունագրություն), *այբուբենը, հայկական գրատեսակները* (գրչագիր, երկաթագիր, բոլորագիր, բոլորագիծ, նոտրգիր, շղագիր, զարդագիր, փակագիր) և այլն:

Ձևայինբանություն բաժնում բնութագրվում են ձևային տեսակներն ու տարբերակները, ածանցների կիրառական արժեքը, ձևաիմաստային խմբերը և այլն:

Բառակազմություն բաժնում ուշադրություն է դարձվում *բառակազմական հիմքերին, արմատին, բառակազմական փնջերին, բառակազմական կաղապարներին*: Տրվում են բառակազմության եղանակները՝ *ածանցում* (նախածանցում, վերջածանցում, համածանցում), *բարդություն* (վերլուծական և համադրական), *հապավում*: Մեկնաբանվում է տարժամանակյա բառակազմությունը:

Բառագիտություն բաժնում դիտարկվում է *բառը*՝ որպես լեզվական միավոր, բնութագրվում են լեզվի բառային կազմն ու *բառապաշարի շերտերը*, կատարվում են դասակարգումներ, մեկնաբանվում են *տերմինը, փոխառությունները, պատճենումները*: Կարևորվում են *իմաստաբանության* հարցերը՝ մենիմաստ և բազմիմաստ բառեր, բառերի ձևաիմաստային խմբեր, իմաստափոխություն և այլն: Համակողմանի ներկայացվում են լեզվի դարձվածքներն ու նրանց տեսակները:

Բառարանագիտություն բաժինն ունի ընդհանուր լեզվաբանական նշանակություն. տրվում են *բառարանագիտության տեսության* հիմնական հարցերը (բառարանի կառուցվածք, բառացանկի մատուցման եղանակներ, բառիմաստի բացատրություն, անդրլեզու), կատարվում են *բառարանների դասակարգումներ* (հանրագիտական և

լեզվաբանական), մատուցվում հայկական, ռուսական և եվրոպական բառարանագրության նվաճումները:

Ձևաբանություն բաժնի տերմինները քերականական գիտելիքների նախադրուհի են. մեկնաբանվում են *բառաձևը, հարացույցը, ձևաբանական հիմքը, քերականական կարգը* (թիվ, հոլով, սեռ, եղանակ, ժամանակ, դեմք, խոնարհում): Խորությամբ բնութագրվում են *խոսքի մասերն* ու նրանց հատկանիշները, որոնք նախապատրաստում են շարահյուսական գիտելիքների յուրացումը:

Շարահյուսություն բաժնի տերմինները նախապատրաստում են խոսքի և տեքստի ենթաբաժինների յուրացումը. մեկնաբանվում են *բառակապակցությունն ու նախադասությունն* իրենց տեսակներով, *նախադասության անդամները* (գլխավոր և երկրորդական), *գոյականական և բայական անդամների լրացումները, բարդ նախադասության կառուցատիպերը, ստորադասական կապակցությամբ նախադասությունները, մեջբերվող խոսքի տեսակները, միջանկյալ նախադասություններն ու ներդրյալ կառույցները* և այլն:

Լեզվի պատմություն բաժինն ունի ընդհանուր ճանաչողական արժեք. տրվում է *լեզվի պատմության շրջանաբաժանումը՝* նախագրային և գրային (հին հայերեն, միջին հայերեն և արդի հայերեն), մեկնաբանվում են այն տերմինները, որոնք բնորոշում են լեզվի ձևաբանական և շարահյուսական պատմական փոփոխությունները:

Խոսք բաժնում դիտարկվում են այն տերմինները, որոնք բնութագրում են խոսողական գործունեությունն ու խոսքային դրսևորումները (արտաքին, ներքին, համառոտ, միջին ծավալի, ընդարձակ, մտավոր, զգացական, պատկերավոր, արձակ, չափածո, դատողական, գնահատող և այլն):

Տեքստ բաժնի տերմիններն ընդարձակում են շարահյուսության ոլորտի ըմբռնումները. դիտարկվում են *տեքստաբանությանը, տեքստի կառուցվածքին, պարբերությանը, հիպերտեքստին և խոսույթին* վերաբերող գիտական եզրույթները:

Ոճաբանություն բաժնում մեկնաբանվում են ոճաբանության հիմնական հասկացություններն ու *գործառական ոճերը* (առօրյա-խոսակցական, վարչա-գործառական, գիտական, հրապարակախոսական, գեղարվեստական), *պատկերավորման և արտահայտչության միջոցները* (այլաբանություն, անձնավորում, ավելադրություն, պեսպիսություն, մակդիր, համեմատություն, փոխաբերություն, չափազանցություն, դարձույթ, շրջասույթ և այլն):

Ուղղախոսություն բաժնում տրվում են արևմտահայերենի և արևելահայերենի ձայնավորների, բաղաձայնների, երկհնչյունների, կրկնակ բաղաձայնների և վանկի ուղղախոսության հիմնական կանոնները:

Ուղղագրություն բաժնում մատուցվում են հայերենի ուղղագրության սկզբունքները (հնչյունային, ձևաբանական, բառակազմական, պատմական), մեկնաբանվում է ձայնավորների, բաղաձայնների, երկհնչյունների և կրկնակ բաղաձայնների՝ հայաստանյան կրթական համակարգում ընդունված (նոր) ուղղագրությունը:

Կեսադրություն բաժնի տերմինների միջոցով մեկնաբանվում են հայերենի կեսադրության սկզբունքները. տրվում են տրոհության, առոգանության, բացահայտության նշանների գործածության դեպքերը, բերվում են բնագրային նմուշներ:

Բառարանում յուրաքանչյուր բաժնից հետո տրվում է քերականական իրողությունների վերլուծության կարգը, բերվում են վերլուծությունների նմուշօրինակներ: Վերջում տրվում է հայերենագիտական տերմինների ցանկը, որ ներառում է ավելի քան հազար միավոր:

Գրախոսվող բառարանը բուհական յուրահատուկ ձեռնարկ է, որը գիտական չափանիշներով և մանկավարժական հմտությամբ ներկայացնում է հայոց լեզվի բոլոր բաժինները՝ հիմքում ունենալով հայերենի տերմինային համակարգը: Հայերենագիտական տերմինների ուսումնասիրությունը կարևորվում է այն առումով, որ տերմինների ամբողջության միջոցով ներկայացվում են լեզվի մասին գիտության առանցքային հարցերը, ստեղծվում է յուրատեսակ համապատկեր:

2021-ին լույս տեսավ Լ. Խաչատրյանի «Լեզվաբանական տերմինների ուսումնական բառարանը», որն իր բնույթով «Հայերենագիտական տերմինների ուսումնական բառարանի» տրամաբանական շարունակությունն է: Բառարանի նպատակն է համակարգել ժամանակակից դպրոցական և համալսարանական դասընթացներում գործածվող լեզվաբանական տերմինները, տալ դրանց նկարագրությունն ու մեկնաբանությունը:

Լեզվաբանական այս ուսումնական բառարանը ներառում է ընդհանուր լեզվաբանության համալսարանական դասընթացի տերմինները, որոնք կազմում են համանուն գիտակարգի տեսության հիմքը: Լեզվաբանական տերմինները ներկայացնելու տարբեր սկզբունքներ կան: Հեղինակը նախընտրել է դրանք մեկնաբանել *ուսումնական բառարանի սկզբունքով*՝ հաշվի առնելով այն հանգամանքը, որ բառարանն ուղղված է ուսանողությանը: Այդ նպատակով էլ տերմինները մատուցվել են դաս-դասախոսության կառուցվածքով, որպեսզի ուսանողը համակողմանի պատկերացում կազմի լեզվաբանական տվյալ տերմինի և նրա թեմատիկ դաշտի վերաբերյալ:

Խնդիր է դրվել ուսանողներին մատուցել ընդհանուր լեզվաբանության ինքնատիպ մի ձեռնարկ, որտեղ տերմինները մեկնաբանվում են ըստ լեզվաբանության ուսումնասիրության բաժինների և ենթաբաժինների: Տերմիններն ընտրված են ըստ լեզվի կառուցվածքային մակարդակների, մեկնաբանվում են նաև յուրաքանչյուր մակարդակից տրոհված միկրոհամակարգերի տերմիններ՝ ամբողջացնելով լեզվական տվյալ մակարդակի տերմինահամակարգը:

Լեզվաբանական այս բառարանը ուղեցույցի դեր կարող է կատարել լեզու և լեզվաբանություն ուսումնասիրողների, ինչպես նաև լեզվաբանական գիտելիքները խորացնողների համար:

Լեզվաբանական բառարանին ներկայացվող առաջնահերթ պահանջներից է մասնագիտական տերմինների ընտրությունը, այլ կերպ ասած՝ լեզվաբանական *տեղ-միևնարանի ստեղծումը*: Հեղինակը կարողացել է ըստ լեզվի և լեզվաբանության բաժինների ստեղծել ամբողջական տերմինարան՝ առանձնացնելով լեզվաբանության բնագա-

վառները: Հաշվի է առնվել այն հանգամանքը, թե ո՞ր բաժիններն են նպաստում լեզվաբանական գիտության վերաբերյալ համակողմանի գիտելիքներ ձեռք բերելուն, և ինչքանով են դրանք օգնում հայագիտական առարկաները յուրացնելուն:

Լ. Խաչատրյանը բառարանի տերմիններն ամփոփել է տասը բաժիններում: Դրանք այսպիսի ընդգրկում ունեն.

1. **Լեզու** (լեզվամտածողություն, լեզվաքաղաքականություն, լեզվի փիլիսոփայություն, լեզվական ճաշակ, լեզվագործածություն, լեզվական իրադրություն, լեզվավիճակ ևն).
2. **Հնչյունական համակարգ** (պատմահամեմատական հնչյունաբանություն, հնչյուն և հնչույթ, հնչյունների դասակարգում, հնչյունական օրենք, հնչյունի դիրք, վանկ, հնչյունափոխություն ևն).
3. **Բառագիտություն** (բառ, բառիմաստ, ներբառայթային իմաստներ, միջբառայթային իմաստներ, իմաստափոխություն, բառային կազմ, տերմին, բառակազմություն, դարձվածքներ ևն).
4. **Բառարանագիտություն** (բառացանկ, բառահոդված, հանրագիտական (ընդհանուր և մասնավոր / ճյուղային), լեզվաբանական (բանասիրական), բարբառային, ստուգաբանական, անձնանունների և ազգանունների բառարաններ ևն).
5. **Լեզվի քերականական կառուցվածք** (բառաձև, հարացույց, նյութական և սպասարկու խոսքի մասեր, բառակապակցություն, նախադասություն ևն).
6. **Քերականական իմաստ և քերականական կարգ** (քերականական իմաստ և ձև, ներքին թեքում, մասնիկավորում, տարահիմքություն, շարադասություն ևն).
7. **Լեզվաբանություն** (լեզվաաշխարհագրություն, լեզվաաշակութաբանություն, կիրառական լեզվաբանություն, լեզվավիճակագրություն, հոգելեզվաբանություն, հաղորդակցական լեզվաբանություն ևն).
8. **Լեզվաբանական մեթոդներ** (պատմահամեմատական, համեմատական-գուգադրական, նկարագրական ևն).
9. **Լեզվաբանական տիպաբանություն** (լեզուների ձևաբանական տիպերը, շարահյուսական տիպաբանություն ևն).
10. **Լեզուների ցեղակցություն և ծագումնաբանական դասակարգում** լեզվաընտանիք (հնդեվրոպական, ուրալյան, ալթայյան, հնասիական, դրավիդյան...), լեզվախումբ, լեզվաճյուղ ևն):

Այս բաժանումն անշուշտ պայմանական է: «Լեզվաբանական տիպաբանություն» բաժինը, օրինակ, կարող էր միավորված լինել այլ բաժնի հետ: Բայց սա կարծիք է, որին բառարանագիրը կարող է համամիտ չլինել:

Յուրաքանչյուր մակարդակի կամ բաժնի տերմինները ներկայացնում են որոշակի միկրոհամակարգեր, որոնք իրենց հերթին ամբողջացնում են տվյալ լեզվական մակարդակի տերմինային համակարգը: Տերմինները բացատրվում են, ինչպես հայերենագիտական տերմինների բառարանի կապակցությամբ նշեցինք, թեմատիկ (փնջային) եղանակով:

Բառարանի վերջում տրվում է լեզվաբանական տերմինների ցանկը: Թերևս կարիք կար բառարանից օգտվողի գործը դյուրացնելու նպատակով այբբենական կարգով

կազմված առարկայացանկ (տերմինացանկ) ևս դնելու: Դա կարվի հաջորդ հրատարակության ժամանակ:

Ընդհանուր լեզվաբանության բաժինները, անշուշտ, ավելի լայն ընդգրկում ունեն. դրանք պարունակում են զգալի քանակությամբ տերմիններ, սակայն հեղինակը նկատի է ունեցել լեզվաբանական գիտության այն բաժինների շրջանակները, որոնք համապատասխանում են համալսարանական կրթության ծրագրային պահանջներին:

Լ. Խաչատրյանը աշխատանքում ներառել է մի շարք նոր տերմիններ, որոնք ցարդ ներկայացված չեն եղել հայերեն բառարաններում, ինչպես՝ *աշխարհի լեզվական քարտեզ, լեզվական կրթություն, լեզվական ճաշակ, լեզվախառնություն, լեզվական իրադրություն, լեզվական միջավայր, լեզվաքարտեզագրություն, լեզվասպագայագիտություն, լեզվասագագրություն, լեզվաերկրագիտություն* և այլն: Լեզվի գործառական տիպերի բաժնից հիշատակենք *ճիսական լեզու, պետական լեզու, աշխատանքային լեզու, տոտալիտար լեզու, միայնակ լեզու* և այլ տերմինային բառակապակցություններ:

Ուսումնական բառարանում առաջին անգամ տրվում են լեզվաբանական նորագույն ուղղությունները բնութագրող տերմիններն իրենց տերմինային շրջապատով, ինչպես՝ *լեզվամշակութաբանություն, հաղորդակցական լեզվաբանություն, ճանաչողական լեզվաբանություն, համակարգչային լեզվաբանություն, քաղաքական լեզվաբանություն, հարալեզվաբանություն, էկոլեզվաբանություն, տեքստի լեզվաբանություն, կորպուսային լեզվաբանություն* և այլն: Այս առումով բառարանն իսկապե՛ս նոր է, արդիական:

Բառարանի որոշ բաժիններ ունեն նաև ճանաչողական որոշակի նշանակություն, ինչպես՝ *լեզուների ծագման տեսությունները* (դիցաբանական, աստվածաշնչյան, բանահյուսական, բնագիտական և այլն), իսկ *բառարանագիտություն* բաժինն հանրագիտարանային բնույթ ունի. բառարանի յուրաքանչյուր տեսակի մասին ամբողջական պատկերացում ձևավորելու նպատակով բերվում են բնագրային նմուշօրինակներ:

Բառարանն ընդգրկում է ընդհանուր լեզվաբանական տերմինները, և լեզվական իրողությունների համար թեև օրինակներ են բերվում տարբեր լեզուներից, այնուամենայնիվ լեզվական տարբեր իրականություններ մեկնաբանելիս հեղինակը նախապատվությունը տալիս է հայերենին. առանցքը հայերենն է, քանի որ բառարանը նախատեսված է հայ ուսանողների համար:

Լեզվաբանական սույն բառարանը կարելի է գործածել ինչպես լեզուն ընդհանրապես, այնպես էլ լեզվաբանության այս կամ այն բաժինն ուսումնասիրելու նպատակով: Լեզուն ամբողջությամբ ուսումնասիրելիս բառարանով կարելի է պատկերացում կազմել լեզվի հատկանիշների, նրա կառուցվածքային մակարդակների վերաբերյալ, սովորել նրանց միավորների ներքին կապերի բնույթն ինչպես միևնույն համակարգի, այնպես էլ ենթահամակարգի ներսում: Լեզվաբանության բաժիններն ուսումնասիրելիս կարելի է պատկերացում կազմել աշխարհի լեզուների, նրանց դասակարգման մեթոդների ու մեկնաբանման եղանակների, լեզուների տիպաբանական և ծագումնաբանական դասակարգման, լեզվաընտանիքների, լեզուների խմբերի և հարակից այլ հարցերի մասին:

Բառարանը կարող է օգտակար լինել համալսարանների հասարակագիտական ֆակուլտետների ուսանողներին, դասախոսներին, լեզվաբաններին և առհասարակ բոլոր նրանց, ովքեր հետաքրքրվում են լեզվի և լեզվաբանության հարցերով:

Հավելենք նաև, որ պրոֆ. Լ. Խաչատրյանը մանկավարժական համալսարանի մագիստրատուրայում ներդրել է «Հայերենագիտական տերմինների համակարգը» դասընթացը: Այդ առումով սույն բառարանը մեծապես կարող է օգնել ուսանողներին առարկան համակողմանի յուրացնելու գործում:

Արձանագրենք. հրապարակի վրա են հայերենագիտական և լեզվաբանական տերմինների բառարաններ, որոնք կարևոր ներդրում են ժամանակակից հայ ուսումնական բառարանագրության մեջ:

Ղավիթ Գյուրջինյան

ՀՀ լեզվի կոմիտեի նախագահ

ԳԻՏԱԿԱՆ ԼՐԱՏՈՒ НАУЧНАЯ ИНФОРМАЦИЯ
SCIENTIFIC INFORMATION

ՀԱՅԱԳԻՏԱԿԱՆ ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ԳԻՏԱԺՈՂՈՎ ԳՅՈՒՄՐԻՈՒՄ

Աշնանային Գյումրին Շիրակի պատմամշակութային ժառանգությանը նվիրված հերթական միջազգային գիտաժողովի հարյուրավոր մասնակիցներին դիմավորեց գյումրիական ջերմությամբ: Մեկտեմբերի 23-ին բացվող այս գիտաժողովին կազմակերպիչը՝ ՀՀ ԳԱԱ Շիրակի հայագիտական հետազոտությունների կենտրոնը ինչպես միշտ, նախապատրաստվել էր պատասխանատվությամբ ու սիրով: Նախ, որ այն մեր երկրի պատմության վերջին 30-ամյակում անընդմեջ՝ 11-րդ անգամ գումարվող հայագիտական եզակի միջոցառումներից մեկն է՝ իր մշտական ու անընդհատ ավելացող մասնակիցների մեծ քանակով, արտերկրի մի քանի տասնյակ հայագետների ամենագործուն մասնակցությամբ, այն նաև Գյումրու մտավորականության կյանքում սպասվող կարևոր իրադարձություն է, որի շնորհիվ Գյումրին՝ արվեստների ու արհեստների, ազգային երգ-երաժշտության ու սպորտի քաղաքը, այսօր նաև գիտության քաղաքի ազնիվ անունն է կրում:

«Մեր նախորդ հանդիպումից անցել է երեք տարի.- իր ողջույնի խոսքում նշեց հայագիտական կենտրոնի անօրեն Ա. Հայրապետյանը, - Այս ընթացքում աշխարհում շատ բան է փոխվել: Անփոփոխ է մնացել թերևս մեր կամքը՝ երեք տարին մեկ հավաքվել Գյումրիում, քննարկելու համար Շիրակի պատմամշակութային ժառանգության ուսումնասիրության արդի վիճակը, ուրվագծելու հայագիտության ընդհանուր համատեքստում գավառի հարուստ ազգագրության, բանահյուսության, պատմության, արհեստների ու արվեստների ուսումնասիրության հետագա ընթացքն ու առաջնահերթությունները:»



Միջազգային գիտաժողովի հարյուրավոր մասնակիցները իրենց խոնարհումը բերեցին ադրբեջանական վերջին ագրեսիայի արդյունքում զոհված հայորդիների հիշատակին, սպա մասնակիցներին ողջունեցին ու գիտաժողովին հաջող ընթացք ու արդյունավետություն մատթեցին ՀՀ ԳԱԱ հայագիտության և հասարակական գիտությունների բաժան-

կան ու մշակութային կյանքի, նաև բարոյահոգեբանական վիճակի՝ վայրիվերումներով լի պատկերի գիտական ուրվագծում:

Ալեքսանդրապոլի տնտեսական զբաղմունքների, տնտեսվարման օժանդակ ձևերի, արհեստների, համքարությունների, կենցաղի, բնակարանի, ծխատոնական համակարգի, բառուբանի յուրահատկությունների վերաբերյալ կատարված ուսումնասիրությունների հիմքի վրա Ալեքսանդրապոլ-Լենինական-Գյումրի պատմագագարական ծավալուն հետազոտություն, «աղետի բանահյուսություն» ու նրա փոխակերպումների, ժողովրդական տոների ու ծխակատարությունների ձևափոխությունների հարցերի քննություն, Ալեքսանդրապոլի աշուղական դպրոցի, XX դ. կեսին Լենինականում ստեղծագործած գուսանների վաստակի ըստ ամենայնի արժևորում, Գյումրիում և գյուղական բնակավայրերում ժողովրդական երգի ու պարի կատարումների արդի փոխակերպումների քննություն, կենտրոնի վաղամեջիկ գիտաշխատողներին նվիրված հանրապետական ամենամյա հայագիտական ընթերցումների, ազգագրական և ծխական տոնակատարությունների կազմակերպում, բազմաթիվ մենագրությունների, գիտական հոդվածների, գիտաժողովների նյութերի, վերջապես ՀՀ ԲՈԿ-ի ցուցակում գտնվող «Գիտական աշխատություններ» պարբերականի շուրջ 3 տասնյակ հատորների հրատարակում, արդյունավետ համագործակցություն տարբեր գիտական կենտրոնների հետ և այլն: Կենտրոնի կողմից կազմակերպվող միջոցառումներից շատերը վերածվել են բարի ավանդույթի. հայագիտության դասեր մարզի տարածքում տեղակայված զինմասերում, ամեն աշուն Գյումրին զարդարող «Հացի տոն» ազգագրական փառատոներ, երիտասարդ գիտնականի ամառային դպրոցներ, ազգագրական գիտարշավներ, գիտական ընթերցումներ և այլն:

Թվարկված և բազմաթիվ այլ իրողություններով է հյուսված 25-ամյա կենտրոնի պատմությունը, որը սեպտեմբերի 23-24-ին հարստացավ հոբելյարին արժանի ևս մեկ ձեռքբերումով՝ ավանդաբար հրավիրվող «Շիրակի պատմամշակութային ժառանգությունը. հայագիտության արդի հիմնահարցեր» խորագրով միջազգային 11-րդ գիտաժողովով: Ողջունելով այն՝ ԳԱԱ հայագիտության և ՀԳ բաժանմունքի ղեկավար, ակադեմիկոս Յու. Սուվարյանը կարևորեց նման գիտաժողովների նշանակությունը հայագիտության զարգացման բնագավառում, մարզպետ Ն. Բաղդասարյանի խոսքում առանձնակի կարևորվեց մարզում երիտասարդ հայագետների պատրաստման գործում այսպիսի գիտական միջոցառումների և նրա կազմակերպիչ՝ Շիրակի ակադեմիական կենտրոնի ղեկը: Սամցխե-Ջավախքի պետական համալսարանի ռեկտոր Մ. Բերիձեն ընդգծեց իրենց բուհում Շիրակի կենտրոնի գիտնականների դասավորության կարևոր նշանակությունը և իրենց լավագույն շրջանավարտներին կենտրոնի հետ կապելու անհրաժեշտությունը:

Անդրանիկ լիագումար նիստում մեծ ուշադրությամբ լավեցին բան. գիտ. դոկտոր, պրոֆեսոր Դ. Գասպարյանի «Չարենցն ու պատմականությունը», Գ. Աղանյանի «Ալեքսանդրապոլի քաղաքային համայնքը 1890-1910-ական թվականներին», արվ. դոկտոր, պրոֆեսոր Ա. Ասատրյանի «Գ. Լևոյանը և երաժշտության հարցերը «Գեղարվեստ» հանդեսի էջերում» զեկուցումները: Գիտական արդյունավետ աշխատանքի համար կենտրոնի մի շարք գիտաշխատողներ արժանացան ՀՀ ԳԱԱ նախագահության, Շիրակի մարզպետարանի ու Գյումրու քաղաքապետարանի պարգևների:

Կենտրոնի աշխատակազմի և գիտաժողովի մասնակիցների անունից անօրեն Ա. Հայրապետյանը խորին երախտագիտություն հայտնեց գիտաժողովի կայացմանն էսպես աջակցած ՀՀ Նախագահ Վ. Խաչատրյանին, ԳԱԱ նախագահ Ա. Սաղյանին, Շիրակի մարզպետ Ն. Բաղդասարյանին, Գյումրու քաղաքապետ Վ. Սամանյանին գիտության հանդեպ նրանց ցուցաբերած հոգատարության համար:

Ընդմիջումից հետո գիտաժողովի աշխատանքներն ընթացան 5 մասնաճյուղերում.

Հնագիտության և վիճակագրության մասնաճյուղային նիստը տևեց մինչև ուշ երեկո: Տրամադրող էին և՛ գիտնականներով ու ուսանողներով լի խարանք, և՛ օրվա 10 զեկուցումների ուշագրավ թեմաները, որոնց շուրջ ծավալվեցին արդյունավետ քննարկումներ:



Բանավեճի և ակտիվ քննարկման ոգով անցավ պատմագիտության մասնաճյուղի առաջին օրվա նիստը, որին մասնակցելու էին եկել նաև ԵՊՀ հումնիստար մասնագիտությունների և պատմության ֆակուլտետի բազմաթիվ ուսանողներ, մարզի դպրոցների պատմության ուսուցիչներ:

Ազգաբանության մասնաճյուղի առաջին նիստը նույնպես բովանդակալից անցավ լավեցին 9 զեկուցումներ, որոնցից 7-ի հեղինակները ԳԱԱ ՀԱԻ ազգագրագետներն էին, զեկուցումների առյուծի բաժինը՝ շիրակյան թեմաներով էր՝ տնտեսություն, ժողովրդագրություն, կենցաղ, սովորույթներ:

4-րդ՝ արվեստագիտության և ճարտարապետության մասնաճյուղի առաջին օրվա նիստում բազմաթիվ ուսանողներ կային կոնտրավատորիայի ու գեղարվեստի ակադեմիայի Գյումրու մասնաճյուղերից: Շատերին էին հետաքրքրում Գյումրու 100-ամյա նկարչական դպրոցի պատմությանը, գյումրիաբնակ հայրենադարձ նկարիչների հետագա ճակատագրին, Գարեգին Լևոնյանին, Գ.Տիգրանյանի «Նամուս» օպերային, գյումրիական օրորերգերին վերաբերող հարցերը: Հետաքրքրությամբ լավեցին և քննարկվեցին Տայքի պատմաճարտարապետական հուշարձանների արդի վիճակի, Անի քարանձավային համալիրների նորագույն ուսումնասիրության և այլ հարցեր:

Գիտաժողովի առաջին օրը բազմամարդ էր նաև 5-րդ՝ բանասիրության մասնաճյուղի նիստը: Տոն տվողները գերազանցապես ԳԱԱ լեզվի ինստիտուտի, Շիրակի հայագիտականի գիտաշխատողներն էին, նաև ԵՊՀ հայոց լեզվի և գրականության ամբիոնի լեզվաբանները:

Արդեն ուշ երեկո էր, երբ ավարավեցին վերջին զեկուցումները: Առջևում ևս մեկ աշխատանքային օր կար՝ նայնքան հագեցած, նայնչափ հետաքրքիր: Նախորդ օրվա գրեթե բոլոր զեկուցողները ատելու էին, ավելացել էին նրանք, ովքեր հանդես էին գալու երկրորդ օրվա նիստերին, որտեղ ընդհանուր առմամբ լավեց շուրջ 50 զեկուցում. 9-ը հնագիտության, 14-ը պատմագիտության, 7-ը բանագիտության և թանգարանագիտության, 10-ը բանասիրության գծով: Ունկնդիրների մեջ կրկին շատ էին ուսուցիչները և ուսանողները:

Երեկոյան լիազումար նիստում մասնաճյուղերի համանախագահների կողմից ներկայացվեցին և ամփոփվեցին գիտաժողովի արդյունքները: Իր եզրափակիչ խոսքում Շիրակի հայագիտական կենտրոնի տնօրենը գոհունակությամբ ու դրվատանքով ընդգծեց ներկա-

յացված զեկուցումների մեծագույն մասի բարձր որակը, արդիականությունը, հայագիտությանը զբաղվելու լուրջ հավակնություններ ցուցաբերող երիտասարդների թվի նկատելի աճը, նման գիտաժողովների դերը նրանց գիտական հասունացման ճանապարհին:

Նիստի վերջնամասում տեղի ունեցավ համագործակցության երկու նոր հուշագրերի կնքման արարողություն. Շիրակի հայագիտական համագործակցության հուշագիր վավերացրեց ՌԴ հարավային դաշնային համալսարանի սոցիոլոգիայի և տարածաշրջանային հետազոտությունների ինստիտուտի հայագիտության կենտրոնի և Ղազախստանի գիտության կոմիտեի Ա. Մարգուլանի անվան հնագիտության ինստիտուտի ներկայացուցիչների հետ:


Ս. Հայրապետյան

2022թ. ՀՀ ԳԱԱ Շիրակի հայագիտական հետազոտությունների կենտրոնը կազմակերպել և անցկացրել է հետևյալ գիտական միջոցառումները.




03. 06. 2022

ՀՀ ԳԱԱ Շիրակի հայագիտական հետազոտությունների կենտրոնի նախաձեռնությամբ Գյումրիում անցկացվեց «Եգանյանական ընթերցումներ» հնագիտական երկրորդ հանրապետական գիտաժողովը:



05. 07. 2022

ՀՀ ԳԱԱ Շիրակի հայագիտական հետազոտությունների կենտրոնի, Շիրակի մարզպետարանի և Շիրակի պետական համալսարանի նախաձեռնությամբ կայացան ՀՀ Սահմանադրության օրվան նվիրված «Սահմանադրականության ուղին. մարտահրավերներ և հեռանկարներ» խորագրով գիտական ընթերցումներ:



09. 09. 2022

ՀՀ ԳԱԱ Շիրակի հայագիտական հետազոտությունների կենտրոնի և Շիրակի մարզային գրադարանի նախաձեռնությամբ 2022թ. սեպտեմբերի 9-ին Գյումրիում անցկացվեց միջազգային գիտաժողով նվիրված հայ մեծանուն բանաստեղծ Եղիշե Չարենցի 125-ամյակին:



23-24. 09. 2022

Գյումրիում տեղի ունեցավ «Շիրակի պատմամշակութային ժառանգությունը. հայագիտության արդի հիմնահարցեր» խորագրով միջազգային 11-րդ գիտաժողովը՝ նվիրված ՀՀ ԳԱԱ Շիրակի հայագիտական հետազոտությունների կենտրոնի հիմնադրման 25-ամյակին:



12-13. 11. 2022

Գիտության համաշխարհային օրվա շրջանակներում 2022թ. նոյեմբերի 12-13-ին ՀՀ ԳԱԱ Շիրակի հայագիտական հետազոտությունների կենտրոնի և ԵՊԿ Գյումրու մասնաճյուղի համատեղ ջանքերով Գյումրիում տեղի ունեցավ «Ավինյանական ընդթերցումներ. ավանդական երաժշտության արդի հիմնախնդիրները» խորագրով միջազգային գիտաժողովը՝ նվիրված ԵՊԿ Գյումրու մասնաճյուղի հիմնադրման 25-ամյակին:

ՆՈՐ ՀՐԱՏԱՐԱԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ



2022 թ. մայիսին լույս տեսավ ՀՀ ԳԱԱ Շիրակի հայագիտական հետազոտությունների կենտրոնի «Գիտական աշխատություններ» պարբերականի 25-րդ հատորի առաջին պրակը՝ 14 հրատ. մամուլ ծավալով, բան. գիտ. դոկտոր Մերգո Հայրապետյանի ընդհանուր խմբագրությամբ (ծավալը՝ 236 էջ, տպաքանակը՝ 120, գինը՝ պայմանագրային):

Ժողովածուում տեղ են գտել հայ ազգաբանության, բանագիտության, պատմության, հնագիտության բանասիրության, արվեստագիտության և ճարտարապետության կարևոր հարցերի նվիրված 18 գիտական հոդվածներ, 2-ական հրապարակումներ և հաղորդումներ:

Մեծաքանակ են հատկապես հայոց հին ու նորագույն շրջանների պատմությանը վերաբերող աշխատանքները: Մրանց

կեսից ավելիի հետինակները Շիրակի հայագիտականի գիտաշխատողներն են, որոնց պլանային հոդվածների թեմատիկան անմիջականորեն բխում է կենտրոնում իրականացվող «Շիրակի հնագիտական և պատմագագրական ուսումնասիրություններ-3» ընդհանուր ծրագրից և տվյալ տարվա համար հաստատվում է ու դառնում հետազոտության թեմա կենտրոնի գիտական խորհրդի որոշմամբ:

Պատմ. գիտ. դոկտոր Ս. Պետրոսյանը արդյունավետությամբ շարունակում է աշխատել մեր հնագույն պատմության մի շարք առեղծվածային դրվագների քննության և գիտական մեկնաբանման վրա: Ժողովածուում զետեղված նրա «Մար տ երկրանուր՝ դաշնային պետության անվանում» հոդվածում պատմական տվյալների ու առասպելաբանական իրողությունների հիման վրա առաջադրվում է Ուրարտու (ur-artu-«Սրբազան դաշինք») թագավորության՝ իբրև դաշնային պետական կազմավորում ստեղծված լինելու դրույթը՝ այդպիսի ստուգաբանությունը հիմնավորելով նրանով, որ իրականում էլ Ուրարտու թագավորությունը կյանքի է կոչվել շնորհիվ Շուրա, Բիայնա և Տուշպա երկրների փոխադարձ համաձայնության՝ սրբագործված դաշինքի:

Հետաքրքիր ու ծավալուն պատմա-նարտարապետական տեղեկատվություն է պարունակում համահեղինակներ պ.գ.թ. Ա. Ակոպովի և ճարտ.գ.թ. Դ.Նահատակյանի «Ազորդացվոր գավառի պատմա-նարտարապետական հուշարձանների տեղագրության և արդի վիճակի շուրջ» հոդվածը, որում, իբրև հետազոտության արդյունք, ճշգրտված ներկայացվում է Տայքի Ազորդացվոր գավառի տարածքում առայսօր պահպանվող հուշարձանների՝ եկեղեցիներ, վանքեր, բերդեր ու ամրոցներ, տեղադրությունը, որոնցից շատերը վաղ միջնադարի ծնունդ են և կազմում են հայոց պատմամշակութային ժառանգության անկասկածելի մաս:

Պատմաբան Գ.Այվազյանը, որ ծրագրի շրջանակներում շարունակում է Ալեքսանդր

րապոլի կրթամշակութային կյանքի նոր, անձանոթ էջերի լուսարանումը, այս անգամ ընթերցողներին է ներկայացել «Ալեքսանդրապոլի դպրոցների պատմությունն աշակերտների հիշողություններում» հաղորդմամբ, որով բավականին խառն՝ ներկայացնում է 19-րդ դ. երկրորդ կեսի քաղաքն իր կրթական կյանքի վայրիվերումներով:

Երկրամասի կյանքում բացառիկ կարևոր նշանակություն ունեցավ Անդրկովկասյան երկաթուղու շինարարությունը, որի հայկական հատվածի իրականացմանը նվիրված իր առանձին ուսումնասիրության շրջանակներում պ.գ.թ. դոցենտ Ա. Հայրապետյանը ներկայացել է «Դրվագներ Անդրկովկասյան երկաթուղու շինարարության պատմությունից» գիտական հոդվածը՝ համարելով գիտական գրականության տվյալներ, մեծաթիվ արխիվային վավերագրեր և պարբերական մամուլի հաղորդումներ: Այն նաև սկիզբ է դնում Հայկական երկաթուղու շինարարության ամբողջական պատմության, որ ձեռնարկել է հեղինակը:

Կենտրոնի գիտահետազոտական աշխատանքների հնգամյա ծրագրի շրջանակներում շարունակվում է թուրքական զինակազմի շրջանում Ալեքսանդրապոլի ու գավառի քաղաքական կյանքի պատմության հսկայական վիճակագրական դրույթների նորովի ուսումնաքննությունը, որ ժողովածուում ներկայացված է կենտրոնի ավագ գիտաշխատող, պ.գ.թ. Կ.Ալեքսանյանի «Տեղական իշխանության մարմինների գործունեությունը Ալեքսանդրապոլի գավառում 1918թ. մայիս-դեկտեմբերին» հոդվածով:

Հայ միջնադարյան պատմագրության երևելի ներկայացուցիչներից մեկի՝ Կիրակոս Գանձակեցու Պատմությունը՝ որպես մոնոգրական արշավանքների ուսումնասիրության սկզբնաղբյուր են ներկայացրել և արժևորել համահեղինակներ դոցենտ Ա. Գասպարյանն ու Կ.Մովսեսյանը: «Շիրակն առևտրական ճանապարհների վրա» հոդվածի հեղինակ Վ.Բոյանը, տարածաշրջանից հավաքված դրամագիտական հարուստ նյութի վկայմամբ Շիրակը տարանցիկ ճա-

ճարտարապետական մշակույթի ոճական առանձնահատկություններ:

Երևանի հյուրանոցային ճարտարապետության և շինարվեստի խորհրդային փուլի առանձնահատկություններին է նվիրված Անուշ Մադոյանի հրատարակումը: Իր հոդվածում, որ նվիրված է հայոց ողբերգի ժանրային մի քանի առանձնահատկություններին, Կենտրոնի ավագ գիտաշխատող, արվ. թեկնածու Հասմիկ Հարությունյանը իրավամբ եզրակացնում է, որ այն ակն-

հայտորեն կրում է արխայիկ շերտեր ու արտահայտչաձևեր, թեև հայոց հինավուրց ողբական արարողությունը ժամանակի ընթացքում էսպես փոփոխվել է: Ն. Տիգրանյանի մշակած մուղամների գեղարվեստական բարձր արժեքի մասին է խոսվում Կոնստանդնուպոլիսի ԳՄ դասախոս Կարապետ Շարոյանի հոդվածում:

Ս. Հայրապետյան

Բ ո վ ա ն դ ա կ ու թ յ ու ն

Գ Ր Ա Կ Ա Ն Ա Գ Ի Տ ՈՒ Թ Յ ՈՒ Ն

Գասպարյան Դ. Վ.

Եղիշե Չարենցի գլխավոր սանը՝ գյումրեցի Մկրտիչ Արմեն. «Հոկտեմբեր» (Գյումրի) և «Նոյեմբեր» (Երևան) գրական խմբակցությունների գործունեությունը.....5

Զարգարյան Ա.

Եղիշե Չարենցի «Ես և Իլիչը» պոեմի արդի ժամանակների մեկ ընթերցում.....23

Ավետիսյան Գ.

Գունային մակդիրները Եղ. Չարենցի չափածոյի լեզվում.....34

Բ Ա Ն Ա Հ Յ ՈՒ Մ ՈՒ Թ Յ ՈՒ Ն

Խենյան Մ. Հ.

Շիրակի մի հրաշապատում հեքիաթի տեղը «Կախարդական մատանի» տիպի հեքիաթախմբում.....40

Հովհաննիսյան Ռ. Պ.

Շիրակի արդի երգիծական բանահյուսությունը.....51

Մատիկյան Հ. Հ.

Մտափոխությունը՝ որպես հղիության ցուցիչ (բանահյուսական նյութերի համատեքստում).....59

Լ Ե Չ Վ Ա Բ Ա Ն ՈՒ Թ Յ ՈՒ Ն

Կարապետյան Ն. Գ., Բահարյան Ա. Ա.

Ժամանակակից տերմինաբանության հիմնական լեզվական աղբյուրները.....67

Եղիազարյան Ս. Ե.

Դարձվածքները և դրանց ոճական արժեքը Աբիգ Ավագյանի արձակում.....73

Հ Ն Ա Գ Ի Տ ՈՒ Թ Յ ՈՒ Ն

Քոչարյան Գ. Գ.

Շիրակի պաշտպանական համակարգի ձևավորման գործընթացը.....81

Ավագյան Ի. Է.

«Կումայրի» պատմամշակութային արգելոց-թագարանում պահպանվող

Շիրակավանի պատահական գտածոների շուրջ.....91

Վ Ի Մ Ա Գ Ր ՈՒ Թ Յ ՈՒ Ն

Ղազարյան Ա. Վ.

Ավանի տաճարի 1219 թ. վիմագիրը տնտեսական և

դավանական հարցերի համապատկերում.....100

Ա Ջ Գ Ա Գ Ր Ո Ւ Թ Յ Ո Ւ Ն

Գևորգյան Լ. Պ.
Ազգագրական նյութերի այլընտրանքային օգտագործումը.....113

Մարգարյան Մ.
Բատուլա ծխական պարերգի պարային ավանդույթը122

Այվազյան Է. Չ.
Տոհմիկ զինագործ Չիֆթալարյանների զինագործական գործիքների համալիրը
(ըստ ՀԱԹ-ի «Ազգագրություն և կենցաղ-2» հավաքածուի).....134

Պ Ա Տ Մ Ո Ւ Թ Յ Ո Ւ Ն

Պետրոսյան Ս. Գ.
Խուբուշկիա և Արմիրալի երկրների նույնության ու բնույթի մասին.....145

Պետրոսյան Լ. Ս.
Երվանդ Վերջինի տոհմաբանության շուրջ.....155

Հայրապետյան Ա. Ս.
Ալեքսանդրապոլ-Կարս երկաթգծի շինարարության բանվորների սոցիալական վիճակը.....164

Հովհաննիսյան Հ. Ա.
Սահակ Պարթև՝ մեծագույն տեսանողներից մեկը.....175

Ժ Ո Ղ Ո Վ Ր Դ Ա Գ Ր Ո Ւ Թ Յ Ո Ւ Ն

Բոյաջյան Ա. Գ.
Շիրակի մարզի բնակչության սոցիալական կազմի շարժընթացը (XXդ. վերջ-XXIդ. սկիզբ).....184

Ա Ր Վ Ե Ս Տ Ա Գ Ի Տ Ո Ւ Թ Յ Ո Ւ Ն

Մարգարյան Ա. Վ.
Հետերկրաշարժյան քաղաքի պատկերագիրը. Գրիգոր Նալբանդ.....194

Ասատրյան Ա. Հ.
Գեորգի Տիգրանովը «Նամուս» օպերայի մասին.....201

Հարությունյան Հ. Հ.
Ողբերգի ժանրը Շիրակի արդի երաժշտական բանահյուսության մեջ.....210

Գ Ր Ա Խ Ո Ս Ո Ւ Թ Յ Ո Ւ Ն

Գյուրջինյան Դ.
Ուսումնական արժեքավոր բառարաններ.....221

Գ Ի Տ Ա Կ Ա Ն Լ Ը Ա Տ Ո Ւ228

Содержание

ЛИТЕРАТУРОВЕДЕНИЕ

Гаспарян Д. В.

Главный ученик Егише Чаренца – Мкртыч Армен из Гюмри.

Деятельность литературных фракций «Октябрь» (Гюмри) и «Ноябрь» (Ереван).....5

Заргарян А.

Об одном современном прочтении поэмы Егише Чаренца «Я и Ильич».....23

Аветисян Г.

Характеристика цветных эпитетов в поэтическом языке Егише Чаренца.....34

ФОЛЬКЛОРИСТИКА

Хемчян М. Г.

Место одной волшебной сказки Ширака в группе сказок типа «Волшебное кольцо».....40

Оганнисян Р. П.

Современный сатирический фольклор Ширака.....51

Матикян А. А.

Желание есть как показатель беременности (в контексте фольклорных текстов).....59

ЛИНГВИСТИКА

Каранетян Н., Багарян А.

Основные языковые источники современной терминологии.....67

Егназарян С. Е.

Фразеологизмы и их стилистическое значение в прозе Абига Авагяна.....73

АРХЕОЛОГИЯ

Кочарян Г. Г.

Процесс формирования оборонительной системы Ширака.....81

Авагян И. Э.

О случайных находках из Ширакавана по материалам историко-культурного музея-заповедника "Кумайри".....91

ЛИТОГРАФИЯ

Газарян А. В.

Лapidарная надпись 1219 г. Аванского собора в контексте экономических и догматических вопросов100

ЭТНОГРАФИЯ

Геворгян Л.

Альтернативное использование этнографических материалов.....113

Саргсян М.

Танцевальная традиция ритуальной плясовой песни Батола.....122

Айвазян Э. Д.

Комплекс инструментов династии оружейников

Чифталарян по коллекции «Этнография и быт-2» МЭА.....134

И С Т О Р И Я

Петросян С. Г.

О тождестве и характере стран Хубушкиа и Армиралли145

Петросян Л. С.

К генеологии Ерванда Последнего.....155

Айрапетян А.С.

Социальное положение рабочих на строительстве железной дороги Александрополь-Карс.....164

Оганисян А. А.

Саак Партев один из великих пророков.....175

Д Е М О Г Р А Ф И Я

Бояджян А. Г.

Динамика социального состава населения Ширакского марза (конец XX в. - начало XXI в.).....184

И С К У С С Т В О В Е Д Е Н И Е

Маргарян А. В.

Художник постземлетрясенного города: Григор Налбанд.....194

Асатрян А. О.

Георгий Тигранов об опере «Намус».....201

Арутюнян А. Г.

Жанр скорбной песни в современном музыкальном фольклоре Ширака.....210

Р Е Ц Е Н З И Я

Гюрджисян Д.

Ценные учебные словари221

НА У Ч Н Ы Й В Е С Т Н И К228

Contents

LITERARY STUDIES

Gasparyan D. V.

The Main Student of Yeghishe Charents is Mkrtych Armen from Gyumri.
"October" (Gyumri) and "November" (Yerevan) Literary Factions Activities.....5

Zargaryan A.

One Contemporary Reading of the Poem "Me And Ilyich" by Yeghishe Charents.....23

Avetisyan G.

Characteristics of Colour Epithets in the Poetic Language of Yeghishe Charents.....34

FOLKLORISTICS

Khemchyan M. H.

The Place of a Shirak Magic Folktale in the "Magic Ring" Folktale Type Group.....40

Hovhannisyan R. P.

The Specificity of Satirical Folklore in Shirak51

Matikyan H. H.

Craving as an Index of Pregnancy (in the Context of Folklore Texts).....59

LINGUISTICS

Karapetyan N. I., Baharyan A. A.

The Main Linguistic Sources of Modern Terminology.....67

Yeghiazaryan S. E.

The Phraseological Units and their Stylistic Value in Abig Avagyan's Prose.....73

ARCHEOLOGY

Kocharyan G. G.

The Process of Formation of Shirak Defensive System.....81

Avagyan I. E.

About Random Finds from Shirakavan Stored
in the Historical and Cultural Museum-Preserve "Kumayri".....91

LITHOGRAPHY

Ghazaryan A. V.

The Avan Cathedral's Lapidary Inscription Of 1219 in the Context of Economic and Dogmatic Issues.....100

ETHNOGRAPHY

Gevorgyan L.

Alternative Use of Ethnographic Materials.....113

Sargsyan M.

Dancing Tradition of Batola Ritual Dance Song.....122

Ayvazyan E. D.

The Collection of the Dynastic Gunsmiths
Chiftalaryans Kept in the Armenian Ethnographic Museum.....134

HISTORY

Petrosyan S. G.

About the Identification and Character of the Countries Khubushkia and Armirali145

Petrosyan L. S.

On the Geneology of Yervand the Last.....155

Hayrapetyan A. S.

The Social Condition of the Workers under the Construction of the Alexandrapol-Kars Railway 164

Hovhannisyan H. A.

Sahak Partev as One of the Greatest

Prophets.....175

DEMOGRAPHY

Boyajyan A. G.

Social Structure Movement of the Population of Shirak Region

(The end of XX century - the beginning of XXI century).....184

ART STUDIES

Markaryan A. V.

Grigor Nalband - the Documentarian of the Post-Earthquake City.....194

Asatryan A. H.

Georgi Tigranov on “Namous” Opera.....201

Harutyunyan H. H.

Genre of Lament Song in Modern Musical Folklore of Shirak.....210

BOOK REVIEW

Gyurjinyan D.

Dictionaries of Pedagogical Value.....221

SCIENCE NEWSLETTER228

*Հայաստանի Հանրապետություն
Գիտությունների ազգային ակադեմիա
Շիրակի հայագիտական հետազոտությունների կենտրոն*

ԳԻՏԱԿԱՆ ԱՇԽԱՏՈՒԹՅՈՒՆՆԵՐ. 2 (25) 2022

*Республика Армения
Национальная академия наук
Ширакский центр арменоведческих исследований*

НАУЧНЫЕ ТРУДЫ. 2 (25) 2022

*Republic of Armenia
National Academy of Sciences
Shirak Centre for Armenological Studies*

SCIENTIFIC WORKS. 2 (25) 2022

*Խմբագրու՞մը և սրբագրու՞մը՝ Ռ. Հովհաննիսյանի, Հ. Մատիկյանի, Ա. Ստոպյանի
Համակարգչային և գեղարվեստական ձևավորումը՝ Լ. Կոստանյանի*

Ստորագրված է տպագրության՝ 28. 11. 2022թ.

Ծավալը՝ 244 էջ, թուղթը՝ A4, տպաքանակը՝ 120, գինը՝ պայմանագրային

ՀՀ Գիտությունների ազգային ակադեմիայի
Շիրակի հայագիտական հետազոտությունների կենտրոն
Հայաստան, Գյումրի, Վազգեն Սարգսյանի-5^ա
<http://shirakcenter.sci.am/>. E-mail: scient.works@shirakcenter.sci.am

